Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2213
2214
24580
84
Z-66

178
p 321

ՆՕՏՐ-ՏԱՄ ԲԱՐԻԶԻ

ՆՕԴՐ-ՏԱՄ ԲԱՐԻԶԻ

Ի ՎԻՔԹՕՐ ՀԻՒԿՕՅԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1871

554

7784-57

ՆՕՏՐ-ՏԱՄ ԲԱՐԻԶԻ

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Ա

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԻՆ ԴԱՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԱՆԱՉԱՌ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Խիստ բարեբաստ անձ մ'էր, յամին շնորհաց 1482, ազնըւական այրն (noble homme) Ռօպէր տ'Էսդուդվիլ, ասպետ, պարոն Պէյնի, Իվրիի և Սէնդ-Անտրի ան լա Մարշի սեպուհ, խորհրդական և սենեկապան արքայի, և Բարիզի բարձրագոյն դատաւորութեան պաշտօնաւոր: Շուրջ տասն և եօթ տարի յառաջ, այսինքն 1465 նոյեմբերի 7, գիսաւորի* տարին Բարիզի վերին դատաւորի (prévôt) այս ազնուր պաշտօնն ընդունած էր Թագաւորէն. պաշտօն՝ որ աւելի աւատական իշխանութիւն մ'էր քան թէ դատաւորական իրաւասութիւն մը. «Պատիւ, կ'ըսէ Ժօան Լօէմնօէօս, որ ոչ փոքու քաղաքական իշխանութեամբ, և առաւել արտօնութեամբք և իրաւամբք միացեալ է» Dignitas, quœ cum non exiguâ potestate politiam concernente, atque prœrogativis multis et juribis conjuncta est. Նորա-

---

* Այս գիսաւորս, որու դէմ Գալիքստ բաբը, մօրեղբայր Պօրճիայի, հրապարակական աղօթքներ պատուիրեց, 1835ին երեցածն է:

հրաշ բան մ'էր 82ին՝ թագաւորէն պաշտօն առած ազնուական մը՝
որու կարգման հրովարտակները Լուի ԺԱ.ի բնական (պիտակ) աղ-
ջկան Պուրպօնի պիտակին հետ ամուսնացած ժամանակները կ'ել-
նէին: Մի և նոյն օրն որ Ռօպէր տ'Էսդուդվիլ Բարիզի վերին
դատաւորութեան մէջ Յակոբ տը Վիլլիէի տեղն անցած էր,
վարպետ Ժէհան Տօվէ՝ Խորհրդարանի Ատենի նախագահութեան
մէջ Պարոն Հէլի տը Թօրրէդի կը յաջորդէր, Ժէհան Ժուվ-
նէլ տէզ Իւրսէն՝ Պետրոս տը Մօրվիլլիէն՝ Ֆրանսայի դիւանա-
պետի պաշտօնէն վար կը գլորէր, և Րէնիօ տէ Տօրման՝ Պետ-
րոս Բիյլ արքայի պալատան խնդրագրոց սովորական վերակացուի
(maître des requêtes ordinaire) պաշտօնէն կը նետէր: Արդ՝
Ռօպէր տ'Էսդուդվիլի Բարիզի վերին դատաւորութիւնը ձեռք ան-
ցնելէն 'ի վեր՝ քանի քանի գլուխներու վրայ դեգերած էր
նախագահութիւնը, դիւանապետութիւնը, խնդրագրոց վերակա-
ցութիւնը: Բարիզի վերին դատաւորութիւնը իրեն տրուած էր 'ի
պահպանութիւն (baillée en garde) կ'ըսէին արքունի հրովարտակ-
ները, և իրօք ալ ամեն կերպով լաւ կը պահպանէր զանի Ռօ-
պէր տ'Էսդուդվիլ: Պինդ ու ամուր պատատուած էր այն պաշ-
տօնին, միաւորուած, շաղուած անոր մէջ, և այնչափ լաւ
կերպով անոր հետ նոյնացած էր՝ որ Լուի ԺԱ.ի փոփոխամոլու-
թեան մոլեգնութենէն ազատ մնացած էր միշտ, այն կասկածոտ,
հակառակասէր և աշխատասէր թագաւորին՝ որ ստէպ ստէպ կար-
գելով և հանելով, իր իշխանութեան առաձգութիւնը հաստատ
պահել կը ջանար: Անկէ աւելին կայ. պատուական ասպետն իր
որդւոյն համար հրաման առաւ որ իր մահուընէ վերջը իր վա-
յելած պաշտօնին անցնի, և երկու տարի կար արդէն՝ որ ազ-
նուական այրն Յակոբ տ'Էսդուդվիլ, ասպետ, Բարիզի վերին
դատաւորութեան իրաւասութեան արձանագրի տետրակին գլուխը՝
իր անուան քով նշանակուած էր փառաւորապէս: Ստուգիւ,
մե՛ծ և չնաշխարհիկ շնորհք: Թէև իրաւ է որ Ռօպէր տ'Էսդուդ-
վիլ ընտիր զինուոր մ'էր, հանրական բարւոյ դաշնակցութեան դէմ՝
իր իշխանադրօշը (pennon) պարզած էր հաւատարմութեամբ և

թագուհւոյն՝ շաքարեայ խիստ գեղեցիկ եղջերու մ'ընծայ բերած
էր, անոր Բարիզ մտած օրը 14.....ին: Անկէ զատ՝ Պարոն
Թրիսթան լ'Էրմիդի, «վերին դատաւոր բարձրագոյն պաշտօնա-
տարաց պալատան արքայի» (prévôt des maréchaux de l'hôtel
du roi) մտերիմ բարեկամութիւնն կը վայելէր նա: Խիստ ա-
նոյշ և ախորժ կեանք մ'էր ուրեմն Պարոն Ռօպէրի անցուցածը:
Նախ և յառաջ խիստ պատուական ռոճիկ մը որմէ յարած կը
կախուէին, իբր իր այգիին աւելի ողկոյզներ, վերին դատաւո-
րութեան քաղաքային և եղեռնական դիւաններուն հասերը, նաև
Շադլէի Էմպասի կամ ստորին ատեաններու քաղաքային և ե-
ղեռնական հասերը, առանց հաշուելու Մանթի և Քօրպէյլի կա-
մուրջին վրայ մանր անցարժ մը և Բարիզի Էօկրէնի վրայ երէ-
ական իրաւունքները (tru), վառուելու փայտերը կշռողներու և
աղ չափողներու վրայ ունեցած շահերը: Աս ամենուն վրայ ա-
ւելցուր միանգամայն իր պատերազմական աղուոր հագուստը, զոր
քաղաքի հեծելական այցելութիւններու մէջ պերճութեամբ կը
պարզէր, ոստիկաններու (échevins) և թաղապետներու (quarte-
niers) կէս-կարմիր և կէս-աղաղագոյն (tanné) պատմուճաննե-
րուն վրայ փայլեցնելով զայն. հագուստ մը, որու վրայ դեռ
ևս մինչև ցայսօր Նօրմանտիոյ մէջ Վալմօնի աբբայարանը՝ իր
գերեզմանին վրայ քանդակուած կրնաք սքանչանալ, ինչպէս որ
Մօնլերիի մէջ կրնաք իր բարձրաքանդակներով ծածկուած սա-
ղաւարտին վրայ դիտել: Աս ամեն բաներէ զատ, պղտիկ բան
էր տասն և երկու պահապաններուն վրայ (sergents de la douzaine)
ամեն իրաւասութիւն ունենալ, և հրամայել՝ Շադլէի բարապա-
նին, Շադլէի երկու դատաւորներուն (auditores Castelleti),
տասն և վեց թաղերու տասն և վեց ոստիկանութեան պաշտօնա-
ւորներուն, Շադլէի բանտապանին, չորս աւատական նուիրակ-
ներուն, հարիւր քսան ձիաւոր նուիրակներուն, գիշերա-
պահներու հրամանատարին (chevalier du guet) իր գիշերապահ-
ներովը, իր ստորա-գիշերապահներովը, իր հակա-գիշերա-
պահներովը, իր վերջա-գիշերապահներովը: Պղտիկ բան էր

բարձրագոյն և ստորին դատաւորութիւն վարել, ճախարակելու, կախելու, քաշկռտելու իրաւունք ունենալ, առանց հաշուելու եօթն այնիւ դատաւորութիւններով փառաւորապէս ճոխացած Բարիզի դերակոմսութեան վրայ առաջին կամ բողոքելի խնդրուածոյ (in primâ instatiâ, ինչպէս կ՚ըսեն օրինագիրք) մանր իրաւասութիւնը։ Արդեօք միթէ երևակայուիլ դատ կտրելէ և վճիռներ տալէ աւելի անոյշ բան մը, ինչպէս որ զօրհանապազ կ՚ընէր Պարոն Րօպէր տ՚Էսդուդվիլ, Մեծ-Շադլէի մէջ, Ֆիլիբ-Օկիւսթի լայն և ցած սրակամարներուն ներքև. որմէ ետք՝ ամեն իրիկուն՝ Բալէ-Րուայեալի ցանկին մէջ՝ Գալիլեայ դուռը գտնուած իր չքնաղ տունն երթալով՝ զոր իր կնոջը բամբիշ Ամպրուազ տը Լօրէի կողմէ ստացած էր, խեղճին մէկն Էսքօրշըրիի փողոցի փոքրիկ խցիկը ղրկած ըլլալու աշխատութենէն հանգիստ կ՚առնէր. խցիկ մը՝ «զոր Բարիզի դատաւորք և ոստիկանք սովորութիւն ունէին (souloir) իրենց բանտն ընելու, և որ տասն և մէկ ոտք երկայնութիւն, եօթն ոտք և չորս բթամատ լայնութիւն (lez) և տասն և մէկ ոտք բարձրութիւն ունէր»։*

Եւ ոչ միայն Պարոն Րօպէր տ՚Էսդուդվիլ իբր Բարիզի դերակոմս և վերին դատաւոր՝ իր մասնաւոր դատաւորական իրաւասութիւնն ունէր, այլ նաև արքային դատաւորական մեծ իրաւասութեան մէջ ալ, թէ ներկայութեամբ և թէ գործնականապէս իր մասն ու բաժինն ունէր։ Չկար մեծ գլուխ մը որ դահճին վիճակելէ յառաջ՝ իր ձեռքէն չ՚անցնէր։ Ինքը Պասթիյլ Սէնդ-Անդուան գացած էր՝ Պ. տը Նըմուրն առնել Հալ տանելու համար, ինք դարձեալ գացած էր հոն զՊարոն տը Սէն-Բօլ՝ Կրէվ տանելու համար, մինչդեռ այս վերջինն երեսը խոժոռելով, կը պոռար կը կանչէր, մեծապէս ուրախացնելով զՊարոն վերին դատաւորը որ չէր սիրեր զՊարոն սպարապետը (connétable)։

Ստուգիւ, մարդու մը կեանքը երջանիկ և պանծալի ընելու,

* Հաշուեկշիռք արքունի կալուածոց հողաբարձութեան, 1383։

և անոր անունը Բարիզի վերին դատաւորներու պատմութեան մէջ նշանաւոր հանդիսացնելու համար պէտք եղածէն աւելի բաներ էին ասոնք. հետաքրքրական պատմութիւն՝ ուսկէ կը սորվինք թէ Ուտար տը Վիլնէօվ Պուշըրի դուռը տուն մ՚ունէր, թէ Կիյօմ տը Հանժէստ՝ մեծ ու փոքր Սավուան դնոյ առաւ, թէ Կիյլեօմ Թիպուստ՝ Գլօբէն փողոցի իր տուներն Սէնդ-Ժընըվիէվի կրօնուհիներուն տուաւ, թէ Հիւկ Օպրիօ՝ Բօրք-Էբիքի ապարանը կը բնակէր, և ուրիշ շատ մ՚առտնին բաներ։

Սակայն, կենաց գուարթ համբերութեամբ մը տանելու այնչափ պատճառներ ունենալով հանդերձ՝ Պարոն Րօպէր տ՚Էսդուդվիլ՝ 1482 յունվար 7ի առաւօտը խիստ նեղսիրտ և գժպհի տրամադրութեամբ մ՚արթնցած էր։ Ուսկից կու գար իր այս նեղսրտութիւնը, պատճառը ինքն ալ չէր գիտեր. արդեօք օդը ցուրտ և ամպամած ըլլալուն. իր կաշեայ հին սրագօտոյն (ceinturon) ճարմանդն աղէկ սեղմուած չըլլալով իր վերին դատաւորի գիրութիւնը խիստ գօրս ցատկելուն. արդեօք վասն զի Րիպոններ* չորս առ չորս երթալով, առանց շապիկի բաճկոնակներ հագած, գլուխնին առանց յատակի փեղոյրներ դրած, քովերնին պարկ և գինույ շիշ՝ փողոցէն գնդովին անցնելու ժամանակ՝ պատուհանին տակ քամահած էին զինքը։ Արդեօք տարտամ նախազգացում մ՚էր այն՝ որ գալիք թագաւորը Շարլը Ը. յաջորդ տարին վերին դատաւորութեան հասոյթէն եօթանասուն լիվր, տասն և վեց սու ութն դընիէ պիտի կտրէր։ Ընթերցողը

* Ժ. Գ. դարուն ամենէ նշանաւոր ասպետները ribauds* կը կոչուէին. Ճշմարիտ պատուոյ տիտղոս մ՚էր այն՝ զոր Ֆիլիբ-Օկիւսթ ամենէ աւելի իր վստահութեան արժանացող անձերու կ՚ընծայէր։ Սակայն շատ ժամանակ չ՚անցած՝ սկսան բանակին անպիտան մասին այս անունս տալ, վասն զի նոյն իսկ Ֆիլիբ-Օկիւստի յատկացող զօրագունդերուն մէջ՝ դիմագրաւ և անվեհեր, այլ կարի խառնաղնաց վարքով խումբ մը կը տեսնուէր։ Ribauds բառը հիմա զեղխի, պակշոտի, շաղաշոյտի հետ համանշան է։

Ծ. Թ.

կրնայ ընտրութիւն ընել. խոկ մենք պարզապէս կը կարծենք թէ նեղսրտութիւն ունէր անիկա, վասն զի նեղսրտութիւն ունէր:

Օրն ալ հանդիսի մը հետևեալ օրն էր, որ ամենուն համար տաղտկալի է, նա մանաւանդ դատաւորի մը համար՝ որ պարտաւորութիւն ունի աւլել բոլոր այն աղբերը՝ թէ յատուկ և թէ այլասացիկ նշանակութեամբ՝ որ Բարիզի մէջ հանդէս մը յառաջ կը բերէ միշտ: Անկից զատ մեր վերին դատաւորը Մեծ-Շատլէի մէջ ատեան պիտի կազմէր, և գիտենք որ դատաւորք սովորաբար այնպէս կը կարգադրեն՝ որ իրենց ունկնդրութեան օրը նաև իրենց սրտնեղութեան օրն ըլլայ, որպէս զի թագաւորի, օրէնքի և արդարութեան անունով՝ այն իրենց սրտնեղութիւնը հեշտաւ թափելու համար առջևնին մէկն ունենան:

Սակայն ինք չ'եկած՝ ատեանը սկսած էր, վասն զի քաղաքային, եկեղեցական և մասնաւոր դատերու իր տեղակալներն ըստ սովորութեան՝ իր գործը կը տեսնէին. այնպէս որ առտուան ժամն ութէն՝ քաղաքացիներու և քաղաքացուհիներու խումբ մը՝ Շատլէի Էնպասի դատարանին մէկ մութ խորշը դիզուած ու խռնուած՝ կաղնեայ հաստ փանդակապատի մը և դրան մէջ տեղ՝ քաղաքային ու եկեղեցական դատերու այլազան և հրճուեցուցիչ տեսարանին ներկայ կը գտնուէին: Այն դատերը նայող, դատաստան ընողն էր վարպետ Ֆլօրիան Պարպէտիէն, դատաւոր 'ի Շատլէ, տեղակալ Պ. վերին դատաւորի. խոկ իր գործելու եղանակը՝ խառն 'ի խուռն և բոլորովին ըստ բաղդին բան մը:

Սրահը փոքր էր, խոնարհ, կամարակապ, ներսի կողմը շուշանաձև զարդերով պատած սեղան մը կը տեսնուէր, քանդակուած կաղնեփայտէ մեծ աթոռով մը, որ վերին դատաւորի յատկացած ըլլալով թափուր կը մնար, և ձախ կողմը աթոռակով մը (escabeau) որ վարպետ Ֆլօրիան դատաւորին սահմանուած էր: Անոր վարը դիւանադպիրը կը նստէր, թուղթեր մրոտելով: Դիմացը ժողովուրդն էր, և դրան առջև, սեղանին առջև, վերին դատաւորութեան բազմաթիւ նուիրակներ, սպիտակ խաչեր կրող մանուշակագոյն այծեայ տաբատներով: Քաղաքա-

ւորներու-խօսնարանի (Parloir-aux-Bourgeois) երկու նուիրակներ, Ամենայն Սրբոցի կէս-կարմիր կէս-կապոյտ պարեգօտներին հագած, ներսի կողմէն սեղանին ետևը տեսնուած փակ խոնարհ դրան մ'առջև կ'սպասէին: Կամարանկիւնի միակ պատուհան մը, թանձր պատին մէջ նեղ մը շրջանակուած, յունվարի աժգոյն ճառագայթով մ'երկու անհեթեթ դէմքեր կը լուսաւորէր, որոնց մէկը՝ կամարին վերին կողմն եկեղեցական զամբարի մը ձևով (cul-de-lampe) և ըստ հաճոյս քանդակուած քարեայ սատանան էր, և միւսը՝ շուշանածաղիկներու վրայ սրահին ներսի կողմը բազմող դատաւորը:

Վերին դատաւորական սեղանին առջև, դատաստանագրոց երկու ծրարներու մէջ տեղ, երևակայեցէք վարպետ Ֆլօրիան Պարպէտիէն, դատաւոր 'ի Շատլէ՝ արմուկներուն վրայ կքած՝ ոտքն իր թխագոյն չուխայէ պատմուճանի քղանցքին վրայ դրած՝ և դէմքը՝ ճերմակ ոչխարի մուշտակին մէջ՝ չէկ, խոժոռ, աչքը թարթելով, և կզակին տակ միացող այտերու ճարպը վսեմութեամբ կրելով:

Մեր այս նկարագրած դատաւորին ականջը թէև խուլ (դատաւորի մը համար թեթև պակասութիւն), այլ սակայն իր դատերն անբողոքելի կերպով (sans appel) և պատուականապէս կը տեսնէր: Ստոյգ բան մ'է թէ դատաւորի մը համար մտիկ ընել ձևացընելն խոկ բաւական է, և մեր պատկառելի դատաւորն այս թէութիւնս, քաջ դատաւորութեան համար միակ էական թէութիւն, խիստ լաւ 'ի գործ կը դնէր, ըստ որում իր խլութեան պատճառաւ որ և իցէ ձայն մը լսելու անկարող ըլլալով՝ ուշադրութիւնն ուրիշ կողմ չէր շրջեր բնաւին: Սակայն ատեանին մէջ անոր գործոյն և ընթացից անխնայ խծբծող մը կը գտնուէր, և անիկա ոչ այլ ոք էր, բայց եթէ Ժէհան Ֆրօլլօ Ջաղացքեանց մեր բարեկամը, այն երէկուան փոքր դպրոցականը, այն մեծ թափառաշրջիկը՝ զոր Բարիզի մէջ ամենուրեք կրնայիր տեսնել, 'ի բաց առեալ՝ վարժապետներու բեմին դիմաց:

«Տես, տես, կ'ըսէր մեղմով Րոպէն Բուսբէն իր ընկերին,

որ քանի ինքն աչքին տակ պարզուած տեսարանները կը մեկ-նաբանէր՝ իր քովը կեցած կը խնդար հեգնելով, ահա ժէհան-նըրդօն տը Պիւսիօն, Քաննար-օ-Մարշէ-Նէօֆի աղուորիկ աղ-ջիկը։ — Ճշմարիտ վկայ, ծերը կը դատապարտէ զայն. ինչպէս ակռանց՝ աչք ալ չունի ուրեմն։ Վրան երկու վարդարաններ գտնուելուն համար՝ տասն և հինգ սօլ չորս փարիզեան տընէ. իրաւ որ քիչ մը սուղ է. Lex duri carminis. — Ի՞նչ է այն. Ռօպէն Շիէֆ տը Վիլ, վերտ զրահագործ (haubergier)։ — Նոյն արուեստին ու գաղտնիքին մէջ վարպետ ընդունուած ըլ-լալուն պատճառաւ։ — Իր մուտքի գինն է այն։ — Վա՜յ, այս ասպետներուն մէջ երկու ազնուականներ Էկլէ տը Սուան, Հիւ-գէն տը Մայլէի. իրաւ որ երկու քարձր պարոններ։ Վա՜հ, քուեայ են խաղացեր, ուրեմն համալսարանի մը մեծաւորը երբ պիտի տեսնենք հոս։ Հազար փարիզեան լիվր տուգանք առ Թա-գաւորն։ Լը Պարպէտիէն խուլի մը պէս — ինչպէս և է իսկ — կը զարնէ։ — Իմ եղբօրս նախասարկաւագին տեղն ըլլալ կ՚ու-զեմ, եթէ այս բանս կարգելու ինձ խաղ խաղալէ, զի այսպէս՝ պի-տի խաղամ ցորեկը, պիտի խաղամ գիշերը, պիտի ապրիմ խաղով, պիտի մեռնիմ խաղով, և շապիկս կորսնցնելէ վերջը հոգիս անգամ խաղին պիտի դնեմ։ — Տէ՜ր ողորմեա, այդ քանի՜ աղջիկ-ներ են, մէկ մէկու ետևէ, իմ մաքիներս, իմ հօղիս հատոր-ները։ Ամպրօա՜զ Լէքիյէր, Իզապօ՜ լա Բէյնէդ, Պէրա՜րտ Ժի-րօնէն։ Ամէ՛նքն ալ կը ճանչնամ, ամէ՛նքն ալ. տուգանքի՛, տու-գանքի՛։ Տուգանքն՝ ոսկի գօտիներ դնելու պիտի սորվեցընէ ձե-զի. տասն փարիզեան սօլ, քնքշիկնե՛ր։ — Ո՜հ, դատաւորի հին կնճիթ, խուլ և ապուշ։ Ո՜հ, կո՛շտ և կոպի՜տ Ֆլօրիան։ Ո՜հ, էշ Պարպէտիէն. ատեանի սեղան նստած է նա. դատախազէն կ՚ուտէ, զատէն կ՚ուտէ, կ՚ուտէ, կը ծամէ, կը կլլէ, կը լը-ճողի։ Տուգանք, անտէր մնացած ինչք, սակք, ծախք, թոշակք, շահ և վնաս, տանջանք, բանտ և զնդան և շղթայք ծախուք հանդերձ՝ իրեն համար Ծննդի քաքարներ են և Սուրբ Յով-հաննու տօնի [illegible]։ Դիտէ, դիտէ խոզը։ — Ա՛ռ քեզ

ուրիշ մ՚ալ. դարձեալ տարփաւոր կին մը. Թիպօ-լա-Թիպօտ նոյն ինքն։ — Կլադինեի զուեհէն ելնելուն համար։ — Ո՛վ է այս զուակը։ Ժիէֆրօյ Մապօն, խաչաձև աղեղ 'ի ձեռին։ Հօր Աստուծոյ անունն հայհոյեր է։ — Ի տուգա՜նս լա Թիպօտը, 'ի տուգա՜նս լա Ժիէֆֆրօյ. 'ի տուգանս երկուքն ալ։ Հնամի խու-լը պէտք է որ երկու դատերը խառնած ըլլայ իրարու և գրաւ կը դնեմ որ հայհոյութիւնն աղջկան, իսկ տարփանքն ոստիկանին տուժել պիտի տայ։ — Մտադրութի՛ւն, Ռօպէն Բուսբէն. մէկ շատ նուիրակներ կը տեսնեմ. զո՛վ ներս պիտի խօթեն արդեօք. վոհմակին բոլոր որսական բարակները հո՛ն են. որսորդութեան խոշոր եղէն պիտի ըլլայ այն. վարազ մ՚անշուշտ։ — Իրաւ-ցընէ վարա՜զ մը, Ռօպէն, իրաւցընէ վարա՜զ մը։ — Եւ մե՛ծ վարազ մը։ — Ի՛նչ կը տեսնեմ, մեր երէկուան Թագաւո՛րն է, մեր խենթերու բո՛րն է, մեր զանգակահա՛րը, մեր միականի՛ն, մեր սապատո՛րը, մեր ծամածռութի՛ւնը։ Քուազիմո՛տոն է....։

Իրաւ ալ ան էր։

Քուազիմոտոն էր, փոկերով կապուած, շրջանակուած, սու-ամներով պրկուած, կաշկանդուած և լաւ պահպանութեան տակ։ Շուրջը գտնուող նուիրակներուն մէջ գիշերապահներու հրամա-նատարն անձամբ կը տեսնուէր՝ կուրծքին վրայ Ֆրանսայի զի-նանշանները, և կռնակին վրայ ալ քաղաքին զինանշանները բանուած ունենալով։ Սակայն Քուազիմոտոյի վրայ բաց 'ի իր տձևութենէն՝ այն գեղարդներու ու հրացաններու կազմածն ար-դարացնող բան մը չէր երևեր, վասն զի տխուր, հանդարտ և լռիկ մնջիկ կեցեր էր նա, և ուր ուրեմն իր միակ աչքը՝ զին-քը կապող կապերուն վրայ ծածուկ և ցասկոտ ակնարկ մը կը ձգէր։

Այս մի և նոյն ակնարկը իր շուրջն ևս յածեց, այլ այն-պիսի մեռած, կորած ակնարկ մը՝ որ կանայք կը խնդային վրան զինքը մատնանիշ ցուցնելով մէկ մէկու։

Վարպետ Ֆլօրիան՝ գիւանադպրին իրեն ներկայացնելուն վրայ՝ Քուազիմոտոյի դէմ պատրաստուած ամբաստանութեան պրակը

(dossier) մատղութեամբ մը թղթատեց, և անոնց վրայ ակնարկ մը ձգելէ վերջը՝ պահ մ'ամփոփուեցաւ։ Դատաստանական հարցափորձ մը սկսելէ յառաջ այս ըրած զգուշութեամբ՝ միշտ յառաջուց ամբաստանեալին անունները, հանգամանքը, յանցանքները գիտէր, նախատեսուած պատասխաններու՝ նախատեսուած փոխադարձ պատասխաններ կը պատրաստէր և այսպէս, առանց իր խլութիւնը խիստ յայտնի ընելու, հարցափորձի ամեն մանուածոյներէն ինքզինք կ'ազատէր։ Դատաստանագիրներու պլակն իրեն համար այն էր՝ ինչ որ է շունը կոյրին համար։ Եթէ ըստ գիտցուածի պատահէր որ իր պակասութիւնն անպատեհ յանդիմանութեամբ կամ անհասկանալի հարցումով մը մերթ ընդ մերթ յայտնի ըլլար՝ ոմանց քով այս բանս նրբութեան տեղ կ'անցնէր, ուրիշներու քով ալ՝ անբանութեան։ Ինչ որ ալ ըլլար՝ դատաւորութեան պատիւը հարուած մը չէր կրեր. ըստ որում աւելի աղէկ է որ դատաւոր մ'անբան հուչակուի կամ նրբամիտ, քան թէ խուլ։ Ուստի մեծ հոգ, մեծ խնամք կը տանէր որ ամենուն առջև իր խլութիւնը ծածկէ, պարտկէ. և սովորաբար իր ջանից մէջ այնչափ լաւ կը յաջողէր՝ որ վերջէն ինքզինքն ալ խաբելու եկած էր. բան մ'որ կարծուածէն աւելի դիւրին է։ Կը տեսնես որ ամեն սալատող բարձր 'ի գլուխ կը քալէ, ամեն թոթով կը ճառախօսէ, ամեն խուլ մեղմաձայն կը խօսի։ Իսկ ինքը Փլորիան, առ առաւելն ականջն ուրիշէ քիչ մ'աւելի ծանր կը կարծէր, և իր անկեղծ համարձակութեան և խղճի քննութեան ժամերուն մէջ՝ միակ զիջումն էր այս որ սոյն կէտիս վրայ կ'ընէր հասարակաց կարծեաց։

Ուստի Քուազիմոտոյի գործը լաւ մ'որոճալով, գլուխը դէպ 'ի ետև կախեց, աւելի վեհութեան և աւելի անկողմնասէր անաչառութեան համար աչքն ալ կէս մը գոցելով, անանկ որ սոյն պահուս թէ խուլ էր և թէ կոյր. երկու հանգամանք՝ առանց որոց կատարեալ դատաւոր չըլլար։ Այս դատաւորական դիրքիս մէջ ահա իր հարցափորձն սկսաւ։

«Անունդ»։

Արդ, ահա դէպք մ'որ «օրէնքէն նախատեսուած» չէր. խուլ մ'որ ուրիշ խուլ մը կը հարցափորձէ։

Քուազիմոտո, իրեն բան հարցուիլը հասկցած չըլլալով, դատաւորին անթարթափ աչքերով կը նայէր միշտ և պատասխան չէր տար։ Դատաւորը, որ ինչպէս ըսինք, խուլ էր, և որ ամբաստանեալին խուլ ըլլալէն տեղեկութիւն չունէր, կարծելով թէ իր հարցմանցը պատասխանած է նա, ինչպէս կ'ընեն սովորաբար ամեն ամբաստանեալներ, մեքենական և ապուշ վստահութեամբ մը շարունակեց.

«Լաւ է։ Տարիքդ»։

Քուազիմոտո այս հարցման ալ պատասխան մը չտուաւ. իսկ դատաւորը՝ պատասխանած կարծելով շարունակեց.

«Հիմա, գործդ, արուեստդ»։

Միշտ մի և նոյն լռութիւնը. հանդիսականք կ'սկսէին հծծել, շշնջել և իրարու երես նայիլ։

«Բաւական է, կրկնեց դատաւորն անխռով, երբ ենթադրեց թէ ամբաստանեալն իր երրորդ պատասխանը տուած լմնցուցած էր։ Դու մեր առջև ամբաստանեալ ես հետևեալ յանցանքներով. առաջին՝ գիշերային վրդովում. երկրորդ՝ ցափ կնոջ մ'անձին վրայ — «'ի վնաս պոռնիկի, in prœjudicium meretricis» — անամօթ բռնաբարութիւն. երրորդ՝ վեհափառ Տեառն մերոյ արքայի յատուկ աղեղնաւորներու դէմ՝ հեստութիւն և դաւաճան նենգութիւն։ Բոլոր այս կէտերուս վրայ ըսելիքներդ զրուցէ։ Ատենադպիր, ամբաստանեալին մինչ ցարդ ըսածներն արձանագրեցի՞ր»։

Այս ձախորդ հարցումիս վրայ՝ դիւանէն մինչև ժողովականները՝ այնպիսի բուռն, անչափ, տարափոխիկ և հանրական քրքիջ մը լսուեցաւ՝ որ 'ի վերջոյ երկու խուլերը դիտեցին զայն։ Քուազիմոտո արհամարհանօք իր սապատը թօթուելով ետեւը դարձաւ, իսկ վարպետ Փլորիան անոր պէս զարմացած, և հանդիսականներուն ծիծաղն՝ ամբաստանեալին, որու ուսերը թօթուելը տեսեր էր, մէկ անակնածու պատասխանէն յառաջ եկած ենթադրելով, զայրացին կշտամբեց զանիկա։

«Տուած պատասխանդ, թշուառական, չուանի արժանի է. գիտես միթէ թէ որու հետ կը խօսիս»։

Այս սաստը, որ հանրական զուարթութեան սանձ մը դնելու յարմար չէր ամենևին, այնչափ անհեթեթ և անճահ երևցաւ ամենուն՝ որ անզուսպ ծիծաղը Քաղաքաւորներու–Խօսարանի նուիրակներուն իսկ հաղորդուեցաւ, տեսակ մը նիզակաւոր սպասեակներ որոնց պաշտօնը կարծես թէ իրենց համազգեստին մէկ մասը կը կազմէր։ Քուազիմոտո միայն՝ չորս կողմն անցած դարձածէն բան մը չհասկնալով իր ծանրութիւնը պահեց։ Դատաւորը, երթալով զայրացած՝ մի և նոյն շեշտով շարունակեց ամբաստանեալին ահ պատճառելու մտօք, ահ՝ որ ունկնդրաց վրայ ալ ազդեցութիւն ընելով զանոնք 'ի յարգանս պիտի բերէր։

«Կ'երևի թէ ո՛վ մեծ ապիրատ և բռնաբարիչներու գլուխ, պէտք եղած յարգանօք չես վարուիր Շադլէի դատաւորին հետ, այն պաշտօնաւորին՝ որու յանձնուած է Բարիզի ժողովրդային ապահովութիւնը, և ոճիրներու, և յանցանքներու և վատ գործերու վրայ հետազօտութիւններ ընելու հոգը, ամեն արհեստներու հսկողութիւնը և մենավաճառութիւնն արգիլելու պաշտօնը, սալայատակները մաքուր վիճակի մէջ պահելը, հաւերու և ընտանի ու որսական թռչուններու փերեզակութիւնները խափանելը, վառելու և ուրիշ տեսակ փայտերը չափելը, քաղաքը՝ տիղմերէ և օդը՝ տարափոխիկ հիւանդութիւններէ մաքրելը, մէկ խօսքով անդադար հասարակաց օգտին պատաղելը, առանց վարձու և առանց թոշակի մ'ակնկալութեան։ Գիտես միթէ որ վարպետ Ֆլօրիան Պարպէտիէն կը կոչուիմ ես, յատուկ տեղակալ Պ. վերին դատաւորի, նաև ատենական, նաև խուզարկու, նաև հսկող, նաև քննիչ վերին դատաւորութեան, ատենակալութեան, մուրհակներու և անշարժ գրուածներու պահպանութեան (conservation) և զահերէցական ատենի մէջ (présidial) հաւասար իշխանութեամբ . . .»։

Պատճառ մը չկայ բնաւին որ խուլի մը հետ խօսող խուլ մը կասի խօսելէ։ Ուստի Աստուած գիտէ երբ և ո՛ր կանգ պիտի

առնուր վարպետ Ֆլօրիան, որ բոլոր առապատները պարզելով բարձր պերճախօսութեան ովկիանոսին մէջ էր նետուած, եթէ ներքին կողմի ցած դուռը յանկարծուստ բացուելով Պ. վերին դատաւորն անձամբ ներս չմտնէր։

Վարպետ Ֆլօրիան Պ. վերին դատաւորին գալուն վրայ խօսքը չընդհատեց, այլ կրունկներուն վրայ կէս–շրջան մ'ընելով, և պահ մը յառաջ Քուազիմոտոյի վրայ շանթանման տեղացուցած ճառը յեղակարծում անոր ուղղելով «Տէր, ըսաւ, կը պահանջեմ որ սոյն այս ամբաստանեալիս նկատմամբ, որ դատաւորական ատեանիս դէմ մեծ և ծանր յանցանքի մէջ գտնուեցաւ, ձեր արժան թուած պատիժը սահմանէք»։

Եւ բոլորովին շնչասպառ՝ տեղը նստաւ, ճակատէն հոսող ուլուն ուլուն քրտինքները սրբելով, որոնք իր առջև դրուած թուղթերը, արցունքի նման, կը թրջէին։ Պ. Րօպէր տ'Էսթութվիլ յօնքերը պռստելով Քուազիմոտոյի՝ այնպիսի հրամայական և նշանակելի կերպով մ'ուշադրութեան շարժում մ'ըրաւ, որ խուլը քիչ մը բան կրցաւ հասկնալ։

Վերին դատաւորը խստութեամբ խօսքն անոր ուղղելով,

«Այսպէս արդարութեան ատեանն երևելու համար ի՞նչ ըրիր, անզգամ դու»։

Թշուառն ենթադրելով թէ Պ. վերին դատաւորն իր անունը կը հարցնէր, սովորաբար պահած լռութիւնը խզեց, և խուպոտ (rauque) կոկորդային ձայնով մը պատասխանեց. «Քուազիմոտօ»։

Պատասխանն այնչափ անյարմար էր եղած հարցման, որ անզուսպ ծիծաղը նորէն սրահին չորս կողմը շրջան առաւ, և Պ. Րօպէր՝ բարկութենէ շէկ եղած՝ պոռաց.

«Զի՞ս ալ ծաղր կ'ընես, ապիրատ թշուառական։

— Նօդր–Տամի զանգակահար, պատասխանեց Քուազիմոտօ, կարծելով թէ իր ով ըլլալը դատաւորին բացատրելու ժամանակն եկած էր։

— Զանգակահա՛ր, կրկնեց վերին դատաւորը, որ, ինչպէս վերը տեսանք, արդէն սրտնեղութեամբ արթնցած ըլլալով այս-

պիտի տարօրինակ պատասխաններով իր կատղութիւնը հրահրուելու պէտք չունէր։ Զանգակահար։ Ես ալ Բարիզի բոլոր փողոցներուն վրայ՝ կռնակիդ նուրբ դաւաղաններ վարնել տալով պիտի հնչեցնեմ. կը լսե՞ս, ժանտ դու։

— Եթէ տարիքս կը հարցնէք՝ ըսաւ Քուազիմոտօ, Սէն-Մարթէնի օրը կարծեմ թէ քսան տարեկան պիտի ըլլամ»։

Այս պատասխանս ալ ամեն բան լմնցուց. վերին դատաւորը բոլորովին սրտմտած, փրփրած,

«Ի՞նչ, վերին դատաւորութիւնը կը հեղնե՞ս դու, թշուառական։ Մտրակաւոր նուիրակներ, Կրէվի նշաւականիւը (pilori) պիտի տանիք այս անզգամը, պիտի ծեծէք զան և ժամ մ'ալ պիտի դարձընէք (tourner)։ Ինծի հետ ժպրհութեամբ վարուիլը կը ցուցընեմ ես իրեն, և կ'ուզեմ որ Բարիզի դերակոմսութեան եօթ դղեկապետութեանց մէջ՝ չորս երդուեալ-փողահարներու ձեռքով այս վճիռս հռչակուի»։

Ատենադպիրն իսկ այն տրուած վճիռը գրի առնել սկսաւ.

«Վա՜յ սատանան, ընտիր դատաստան մ'էր այս», պօռաց իր գտնուած խորշէն ժէհան Ֆրօլլօ Ջաղացքեանց փոքր դպրոցականը։

Այս ձայնիս վրայ վ երին դատաւորը դառնալով իր հրացայտ
աչքերը Քուազիմոտօյի յառեց. «կարծեմ թէ անզգամը սատա-
նայի անունով մը հայհ յեց։ Ատենադպիր, հայհոյութեան հա-
մար տասն և երկու բաղ կեան փող տուգանք աւելցուր, և կէսը
Սէնդ-Իւսդաշի եկեղեց ւոյն տրուի։ Սէնդ-Իւսդաշի մասնաւոր
ջերմեռանդութիւն ունիմ եմ»։
դատավճիռը շարագրուեցաւ, որ
Քանի մը վայրկենի մէջ ։ Բարիզի վերին դատաւորութեան
համառօտ էր և իմաստը պարզ. կան օրէնքը (coutume) Թիպօ
և դերակոմսութեան սովորութ մը՝ Թագաւորին փաստաբա-
Պայլէ նախագահէն և Րօժէ Պար հեանարար և ոչ խցուած
եէն, տակաւին քէքրուած չըլլալով և դատաստանական կար-
խափանուած էր այն խաբէութիւններու առէն՝ որով ԺԶ. դա-
գերու թանձրախիտ և բարձրաբերձ անտ.

րուն սկիզբները՝ այս երկու օրէնսգէտները զայն նսեմացուցին։ Ամենայն ինչ, պարզ էր, շուտ (expéditif) և մեկին։ Ուղղակի դէպ 'ի նպատակ կը քալէին մարդիկ և ամեն մէկ արահետի (sentier) ծայր՝ առանց մացառի և առանց պտտուածոյի (détour) իսկ և իսկ ճախարակ, կախաղան կամ պատժանիւ կը տեսնէին։ ըսել է թէ գէթ ուր երթալիքնին գիտէին։

Ատենադպիրը դատավճիռը վերին դատաւորին ներկայացուց, որ իր կնիքը դնելով՝ ատեաններուն մէջ իր ճեմ-այցն (tournée) ընելու համար դուրս ելաւ, այնպիսի մտքի տրամադրութեամբ մ'որ այն օրը Բարիզի բոլոր բանտերը պէտք էր բնակիչներով լեցընել։ Ժէհան Ֆրօլլօ և Րօպէն Բուսբէն քթերնուն տակէ կը խնդային, իսկ Քուազիմոտօ՝ ամեն եղած բաներն անտարբեր և սպուշ եղանակաւ մը կը դիտէր։

Սակայն, այն պահուն որ վարպետ Ֆլօրեան Պարպէտիէն նոյնպէս ստորագրութիւնը դնելու համար դատավճիռը կը կարդար՝ ատենադպիրը թշուառ դատապարտելոյն համար կարեկցութիւն զգալով, և պատեհասի նուազում մը ձեռք ձգելու յուսով կըրցածին չափ դէպ 'ի դատաւորին ականջը մօտեցաւ և Քուազիմոտօն ցուցընելով ըսաւ անոր. «Այս մարդը խուլ է»։

Ատենադպիրը յոյս կ'ընէր որ տկարութեան այս նոյնութիւնը՝ դատապարտելոյն նկատմամբ վարպետ Ֆլօրեանի համակրական գութը պիտի շարժէր։ Բայց նախ՝ տեսանք արդէն թէ վարպետ Ֆլօրեան մտքէն իսկ չէր անցըներ թէ իր խլութիւնն այլք գիտած ըլլան, ամէկց զատ այնչափ ծանր էր ականջը՝ որ ատենադպրին ըսածէն բան մը չլսեց, սակայն լսած ըլլալ ձեւացընել ուզելով «Վա՜յ, վա՜յ, այդ ալ կայ, պատասխանեց. եթէ այդպէս է՝ նշաւականիւին վրայ մէկ ժամ մ'աւելի մնայ թող»։

Եւ վճիռը, այսպէս փոփոխուած, ստորագրեց։

«Շատ աղէկ եղաւ, ըսաւ Րօպէն Բուսբէն որ Քուազիմոտօյի դէմ ոխ ունէր, ասիկա մէկուն մէկալին հետ չարաչար վարուիլը պիտի սորվեցընէ իրեն»։

Բ

ՄԿԱՆՑ-ԾԱԿ

Ներէ մեզ ընթերցողը զինքը Կրէվի հրապարակը դարձընել, զոր երէկ Կրէնկուարի հետ թողուցինք Էզմերալտայի հետեւելու համար։

Առտուան ժամը տասն է. ամեն բան տօնի մը, հանդիսի մը, հետեւեալ օրն ըլլալը կը յայտնէ։ Սալայատակը բոլոր՝ անոր մնացորդներով ծածկուած է. զոր օրինակ ժապաւէններ, քուրջեր, զարդմանակի փետուրներ, ջահերու մոմի շիթեր, հասարակաց կերուխումին փշրանքներ։ Բազմաթիւ քաղաքացիներ հոս հոն կը դեգերին ուրախութեան հուրէն վառուած և մէկ մասն անկէզ մնացած կոճղերն ոտքով դրդելով, շարժելով. Մարդակաշէն-Տան (Maison-aux-Piliers) առջև առջի երիկուն կախուած աղուոր օթոցներու յիշատակով մտովի յափշտակուած մնալով, և այսօր բեռները դիտելով, այն միակ աղուորութիւնները՝ որք նոյն հիաքանչ տեսարանէն մնացած էին։ Մրգօղի և գարեջուր վաճառողները բազմութեան մէջէն իրենց տակառները գլորելով կը տանին. գործի տէր քանի մ'անցորդներ կուգան, կ'երթան. խանութպանները կը խօսակցին և կրպակներու դուռէն իրար կը կանչեն։ Հանդէսը, տեսարանները, Քօբընօլ, խենթերու պապը ամենուն բերանն են. կարծես թէ ամենքն իրարու հետ կը մրցին թէ ով աւելի չարաչար կերպով պիտի մեկնաբանէ և թէ ով աւելի պիտի խնդայ։ Եւ սակայն չորս ձիաւոր նուիրակներ նոյն միջոցին գալով և պատժանիւին չորս կողմերը կայնելով՝ հրապարակին վրայ ցրուած ժողովուրդին (populaire այն առենի լեզուով) մէկ մեծ մասը շուտով մ'իրենց բոլորտիքը ժողվեցին. ժողովուրդ՝ որ պզտիկ գլխատութիւն մը կամ պատիժ մը տեսնելու յուսով՝ ինքզինք կամովին տաղտուկ և ձանձրալի անշարժութեան մը կը դատապարտէ։

Եթէ հիմա ընթերցողը՝ հրապարակին ամեն կողմերը խաղացուած այս աշխոյժ և ժխորալի տեսարանը դիտելէ վերջը՝ իր ակնարկը Րօլան-Աշտարակի այն հնամի կէս-գոթեայ, կէս-ռոման տան վրայ դարձնէ՝ որ քարափին (quai) մօտ՝ արեւմտեան խորշը կը գտնուի, անոր ճակատին անկիւնը՝ ճոխ գունաւորութեամբ հասարակաց խոշոր ժամագիրք մը պիտի տեսնէ, պզտիկ քիւով մ'անձրեւէ պատսպարուած, և երկաթէ վանդակով մ'ալ գողերէ. վանդակ՝ որ սակայն գիրքը թղթատելու արգելք չըլլար։ Այս ժամագրքին քով՝ հրապարակին վրայ նայող լուսանցոյց երդ մը կը տեսնուի՝ խաչաձև երկու երկաթ ձողերով գոցուած։ Այս երդէս միայն կտոր մ'օդ և լոյս կ'առնուր, այն հնամի տան թանձրութեան մէջ՝ գետնայարկի վրայ շինուած անդունդ փոքրիկ խցիկ մը, որ մինչդեռ հասարակաց հրապարակ մը, և այն՝ Բարիզի ամենէ աւելի բազմամարդ և բազմաժխոր հրապարակը՝ իր չորս կողմը կը վխտայ ու կը ճչէ՝ ինք խորունկ անդորրութեան մը, անխուլ լռութեան մը մէջ կը գտնուի։

Բարիզի մէջ անուանի էր այս խցիկս։ Շուրջ երեք դար յառաջ՝ բամբիշ (Madame) Րօլանտ՝ Րօլան-Աշտարակի, իր հօրը՝ որ խաչակրութեան մէջ մեռած էր, կորսնցընելուն վրայ խորունկ սուգի մէջ թաղուած՝ իրեն յատկացած տան պատին մէջ փորել տուած էր զայն, միտքը դնելով որ յաւիտեան անոր մէջ փակուի, ունեցածը չ'ունեցածը Աստուծոյ և աղքատներու տալով, և իր պալատէն՝ այս բնակութիւնս միայն պահելով, որուն դուռն որմուած էր, իսկ երդը՝ ամառ ձմեռ՝ բաց։ Վշտաբեկ բամբիշը քսան տարի շարունակ այս կանխահաս գերեզմանիս մէջ մահն սպասած էր, իր հօրը հոգւոյն համար գիշեր ցորեկ աղօթելով, մոխրի վրայ ննջելով՝ առանց բարձի տեղ քար մ'իսկ ունենալու, սեւ խարազ մը հագած, և անցորդներու՝ իր երդին եզրին վրայ առ գթութեան դրած հացով ու ջրով ապրելով միայն, այնպէս որ ողորմութիւնն ընելէ վերջը՝ հիմա ինքը զայն կ'ընդունէր ուրիշներէ։ Իր մահուան ժամանակը՝ միւս գերեզմանն անցած պահուն՝ մշտնջենաւոր կերպով այս

գերեզմանս այն վշտահար կիներուն, մայր ըլլան այրի կամ աղջիկ, հրիտակ թողած էր, որք իրմէ վերջը՝ ուրիշի կամ իրենց համար անդադար աղօթելու պէտք պիտի ունենային, մեծ թախծութեան մը կամ մեծ ապաշխարութեան մը մէջ կենդանույն թաղուելով։ Իր ժամանակի աղքատներն արտասուօք և օրհնութեամբք լաւ յուղարկաւորութիւն մ՚ըրած էին իրեն, այլ սակայն ցաւելով տեսած էին որ հէք օրիորդը պաշտպաններ չ՚ունենալուն սրբոց ցանկին մէջ անցած չէր։ Մէջերնին քիչ մը ամբարիշտ գտնուողները յուսալով թէ գործն արքայութեան մէջ Հռովմէ աւելի հեշտեաւ պիտի կատարուէր՝ բարին տեղ իրենք աղօթքներ վերառաքած էին առ Աստուած։ Շատերը Րօլանտի յիշատակը սուրբ և նուիրական պահելով՝ անոր ցնցոտիներն իբր մասունք պահած էին։ Նոյնպէս քաղաքը, բամբիշին յիշատակին՝ խղիկին երդին մօտ հասարակաց ժամագիրք մը հաստատուած էր, որպէս զի անցորդք գէթ աղօթելու համար մերթ ընդ մերթ կանգ առնուն հոն, որպէս զի աղօթքն ողորմութիւնը յիշեցընէ և Րօլանտ բամբիշի շիրիմին ժառանգորդ հէք մենուհիներն անօթութենէ և մոռացութենէ չ՚մեռնին հոն սպառսպուռ։

Այս տեսակ գերեզմաններ միջին դարու քաղաքներու մէջ հազուագիւտ չէին։ Ամենէ բանուկ փողոցի մէջ, ամենէ գոյնագոյն և բազմամբոխ վաճառանոցի մէջ, ակներև տեղ մը, ձիերու ոտքին տակ, կերպիւ իւիք սայլերու անիւներուն տակ՝ մառան մը, հոր մը, խցիկ մը կը տեսնուէր շատ անգամ որմուած և երկաթեայ վանդակներով պատած, որու ներսի կողմը մարդկային արարած մը գիշեր ցորեկ կ՚աղօթէր, յաւէրժական աշխարում մը, մեծ ապաշխարումի մը կամակար նուիրելով։ Այն բոլոր խորհրդածութիւններն որ այսպիսի տարօրինակ տեսարան մը մեր մտաց մէջ կը զարթուցանէ․ այս ահռելի խղիկս, տան և գերեզմանի, գերեզմանատան և քաղաքի միջին օղակ․ մարդկային հասարակութենէ քշուած և յետ այսորիկ 'ի կարգս մեռելոց դասուած այս կենդանի արարածս․ մութին մէջ երբ իւղի վերջին շիթը սպառող այս կանթեղս․ փոսի մը մէջ ե-

րերող այս կենդանութեան մնացորդը․ քարեայ տուփի մը մէջ այս շունչը, այս ձայնը, այս աղօթքը․ հանդերձեալ աշխարհի ընդ միշտ դարձած այս դէմքը, ուրիշ արևով մ՚արդէն լուսաւորուած այս աչքը․ գերեզմանի խորը փակչած այս ականջը․ այս մարմնոյս մէջ բանտարկուած հոգին, այս գնդանին մէջ բանտարկուած մարմինը, և մարմնեղէն և կրանիթեայ կրկնակի պատեանի տակ այս տառապեալ հոգիին բզզումը․ այս ամեն բաները և ո՛չ մին ըմբռնուած, խելամտուած, հասկցուած էր այն ժամանակի ժողովուրդէն։ Այն ատեններու բարեպաշտութիւնն որ այնչափ բարակ չէր մտածեր և այնչափ դատողութիւն ալ չ՚ունէր՝ կրօնական գործի մը վրայ այնչափ տարբեր տարբեր երեսակողմեր (facettes) չէր տեսներ։ Իրը համահաղոյն (en bloc) առնելով, զոհը կը յարգէր, կը պատուէր, կը նուիրագործէր իսկ 'ի հարկին, այլ անոր վշտերն ու քաշածները վերլուծել չէր գիտեր և մեծ գութ ալ չէր ցուցըներ։ Թշուառ ապաշխարողին ատեն ատեն օրապահիկ մը կը բերէր, ծակէն կը նայէր որ արդեօք կ՚ապրի՞ տակաւին, և անունն իրեն անծանօթ՝ հազիւ հազ գիտէր թէ քանի՛ տարիէ 'ի վեր մեռնիլ սկսած էր ան, և եթէ օտարական մ՚այն մառանին մէջ փտող նեխող կենդանի կմախքին վրայ դրացիներուն հարցումներ ընէր պատահմամբ՝ եթէ այր մ՚էր այն՝ կ՚ըսէին թէ «մենակեացն է» (le reclus), իսկ եթէ կին՝ թէ «մենուհին է» (la recluse)։

Այն ժամանակներն ամեն բան այս կերպով կը նայէին, առանց բնազանցութեան (métaphysique), առանց չափազանցութեան, առանց խոշորցնող ապակիի, մերկ աչօք։ Մանրացոյցը (microscope) դեռ ևս հնարուած չէր ո՛չ նիւթի առարկաներուն համար, և ո՛չ ալ մտքի առարկաներուն։

Սակայն, թէև ժողովուրդն այնքան մտադրութիւն չ՚ընէր անոնց՝ քաղաքներու մէջ տեղ այս տեսակ վանափակութեան (claustration) օրինակները, ինչպէս որ վերն ըսինք, յոլովակի կը տեսնուէին։ Աղօթից ու ապաշխարութեան այս խղիկները Բարիզի մէջ բաւական շատցած էին և գրեթէ ամենքն ալ իրենց

բնակիչներն ունէին միշտ ։ Սոյդ է թէ կղերն աւելի փափաքող էր որ թափուր չ՚մնան անոնք, ըստ որում հաւատացելոց մէջ թուլութիւն կրնար մակաբերուիլ, և եթէ ապաշաւողի պակսութիւն ըլլար՝ բարոններ կը դրուէին հոն ։ Կրէվի խղիկէն ՚ի զատ, մէկ հատ՝ Մոնֆօքօն կար, մէկ հատ՝ Շարնիէ տեղ Ինոսան, մէկ հատ ալ՝ չզիտեմ ուր, ուրիշներ ևս ուրիշ տեղեր՝ ուր եթէ չէնքը չէ մնացած՝ աւանդութեանց մէջ անոնց հետքը կը գտնուի ։ Համալսարանն ալ իր խղիկներն ունէր ։ Սէնդ-Ժընըվիէվ լերան վրայ միջին դարու տեսակ մը Յոբ՝ ջրամբարի մը խորը, աղբեւի վրայ երսուն տարի շարունակ ապաշխարութեան եօթ սաղմոսներն երգեց, լմնցընելէ վերջը՝ նորէն նորէն սկըսելով, գիշերն աւելի բարձրաձայն սաղմոսերգելով. «Magna voce per umbras (մեծաւ ձայնիւ ընդ ստուերս), և այսօր Խօսուն Հարի (Բրիյ քի Բարլ) փողոցը մտնելու ատեն՝ հնագէտին ականջին այնպէս կու գայ՝ որ անոր ձայնը կը լսէ տակաւին ։

Րօլանտ–Աշտարակի խղիկին գալով՝ կը պարտաւորինք ըսուցել որ երբէք մենաւորներու կողմէ պակսութիւն չկրեց, և Րօլանտ բարերիշի մահուանէն ՚ի վեր՝ քիչ անգամ տարի մը կամ երկու տարի թափուր մնաց ։ Շատ կիներ եկած մինչ ցմահ՝ աղաւններ, սիրականներ, նաև մեղքեր լացած էին հոն ։ Բաղեղան նենգամտութիւնը, որ քիթն ամէն բանի մէջ կը խօթէ, բնաւ իրեն ոչ մէկ կերպով վերաբերութիւն ունեցող բաներու՝ այնպէս կ՚ուզէր հաւատցընել թէ այն խղիկին մէջ ուր ուրիշ այրի կիներ տեսնուած էին ։

Այն ժամանակներու սովորութեան համեմատ՝ պալատին վրայ լատիներէն արձանագրութիւն մը, բանագէտ անցորդին՝ այս խղիկիս ինչ բանի սահմանուած ըլլալը կը յայտնէր ։ Դրան վերեւ գրուած կարճ նշանաբանով մը շէնք մը բացատրելու սովորութիւնը մինչև ԺԶ. դարուն մէջ տեղերը պահուեցաւ ։ Այսպէս՝ Ֆրանսայի մէջ՝ Թուրվիլի իշխանական տան բանտի դռնակին վրայ մինչև ցայսօր կը կարդանք այս բառերս. Sileto et spera) (Լուռ լեր և յուսա)։ Իռլանտայի մէջ Ֆօրդէսքիւյի դղե-

կին մեծ դրան վրայ դանուող զինանշանի վահանին տակ. Forte scutum, salus ducum (Հզօր վահան, փրկութիւն զօրավարաց). Անգղիոյ մէջ՝ Քաուբըր կոմսերուն հիւրընկալ բնակարանին մեծ դրան վրայ. Tuum est (Քոյ է) ։ Վասն զի այն ատեն ամէն կերտ մտածում մ՚էր ։

Որովհետև Րօլանտ–Աշտարակի որմուած խղիկը դուռ չ՚ունէր՝ պատուհանին վրայի կողմը ռոման խոշոր գրերով այս երկու բառերս արձանագրած էին.

TU, ORA
ԴՈ՛Ւ, ԱՂՕԹԵԱ՛

Իսկ ժողովուրդը, որու բնական խելքն իրերու մէջ այնչափ նրբութիւն չ՚տեսներ և Լուդովիկոս Մեծի Սէն-Տընի դուռ կը թարգմանէ մտադիր՝ այս սեւ, մութ և տամուկ խոռոչին Թրու օ Րա (մկանց ծակ) անունը տուած էր. բացատրութիւն մ՚որ թերևս Թրու օրային չափ վսեմ չէր այլ փոխարէն՝ անկէ աւելի ազդու էր ։

Գ

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԽՄՈՐՈՎ ՊԱՔՍԱՄԱՏԻ ՄԸ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պատմութեանս տեղի ունեցած ժամանակները՝ Րօլանտ–Աշտարակի խղիկին մէջ ապաշխարուհի մը կը գտնուէր և եթէ ընթերցողը փափաք կ՚զգայ անոր ով ըլլալը հասկնալու, թող երեք պատուական շաղփաղփուհիներու խօսակցութեան մտ դնէ, որոնք Մկանց–Ծակին վրայ խօսեցած միջոցնուս՝ գետին երկայնութեամբը Շադլէէն դէպ ՚ի Կրէվ ելնելով իրենց քայլերը ձիշդ մի և նոյն կողմը կ՚ուղղէին ։

Այս կիներէս երկուքը Բարիզու ընտիր քաղաքացուհիներու նման հագուած շքուած էին, իրենց սպիտակ նուրբ փողակապը,

ճարմիր և կապոյտ՝ գծաւոր (rayé) հաստ կերպասէ կոճկէնը (jupe), մինչև սրունքը քաշուած և վարի կողմը գոյնզգոյն նկարակերտուած սպիտակ ցանցակերպ գուլպաները, սեաւ ներքաններով չէկ կաշեայ մուճակները, և մանաւանդ իրենց գլխանոցը, որ ժապաւէններով և ճամուկներով ծածկուած ոսկեթիթեղեայ տեսակ մ՚եղջեւր էր, եղջեւր՝ զոր Ռուսի կայսերական պահապան զօրաց կրէնատիէները կը դնեն այսօր. այս ամեն բաներս կը յայտնէին թէ անոնք հասարակ կիներու և հարուստ կիներու մէջ տեղը բռնող ունևոր վաճառուհիներու դասին կը վերաբերէին։ Թէև մատնի կամ ոսկեղէն խաչ չկրէին՝ դիւրաւ կը մակաբերուէր թէ աս բանս աղքատութենէ յառաջ չէր գար, այլ պարզապէս տուգանքի վախէ։ Գրեթէ մի և նոյն կերպով հագուած էր իրենց ընկերուհին ալ, այլ իր վրայ-գլուխին և մարմինը բռնելու կերպին մէջ բան մը կար որ գաւառի նօտարի մը կին կը յայտնէր, և գօտիին գլխուրէն վեր փախլէն՝ ակներև կը տեսնուէր թէ երկար ժամանակէ ՚ի վեր Բարիզ չէր գտնուեր նա։ Աւելցուցէք ասոնց վրայ փոթաւոր (plissé) փողպատ մը, մուճակներուն վրայ երիզներու զարդակապեր, և թէ՝ կոճկէնին գիծերը դէպ ՚ի լայնքն էին և ոչ դէպ ՚ի երկայնքն, և բիւրակերպ ուրիշ պակասութիւններ՝ որք ընտիր ճաշակի խորշում կը պատճառէին։

Առջի երկու կիներն այն քայլափոխով կը քալէին՝ որ Բարիզը՝ գաւառական կիներու ցուցընող բարիզուհիներու յատուկ է։ Գաւառի կինը խոշոր տղեկ մը բռնած էր ձեռքէն. ասոր ալ ձեռքը խոշոր պաքսամատ մը կը գտնուէր։

Կը ցաւինք իմացնել որ տղեկը՝ եղանակին խստութեան պատճառաւ՝ լեղուն՝ թաշկինակ մ՚ըրած էր։ Իր մօրմէն քաշքշուած կը քալէր անիկա, non passibus œquis (ոչ հաւասար գնացիւք), ինչպէս կ՚ըսէ Վիրգիլիոս, և շատ մեծապէս զայրացընելով՝ ամեն վայրկեան կը գթէր, կը սայթաքէր։ Թէև ստոյգ է որ աւելի պաքսամատը կը դիտէր նա քան թէ սալարկը։ Անտարակոյս այն պաքսամատին չխածնելու համար ծանրակշիռ պատճառ

մ՚ըլլալ պէտք էր, ըստ որում գործվածին անոր նայելով գոհ կ՚ըլլար։ Սակայն այն մեծայտ խոշոր տղեկին այսպէս Տանտալոսի պատիժ տալ՝ անգթութիւն էր, և գոնէ հարկ էր որ մայրն այն պաքսիմատին ծանրութիւնը կրէր։

Սակայն երեք կիները (damoiselles)* համանգամայն կը խօսէին։

«Փութանք, տիկին Մահիէդ, կ՚ըսէր երեք կիներէ ամենէ նորահասը, որ ամենէն խոշորն էր, գաւառուհւոյն դառնալով։ Վախնալ կը վախնամ որ ուշ չհասնինք. Շաղէի մէջ մեզ ըսին թէ իսկոյն պատժանիւ պիտի տանին զանիկա։

— Ի՛նչ կ՚ըսես դու ալ, տիկին Ուտարտ Միւսնիէ, կը կըրկնէր միւս բարիզուհին. դեռ շատ աղէկ ժամանակ ունինք, որովհետև յանցաւորն երկու ժամ պատժանիւին վրայ պիտի մնայ.
— Պատժանիւով խայտառակել՝ երբէք տեսած ես, սիրելիդ իմ Մահիէդ։

— Այո՛, Րէյմսի մէջ, ըսաւ գաւառուհին։

— Գնա՛ բանդ. քու Րէյմսի պատժանիւդ ինչ պիտի ըլլայ. չնչին վանդակ մ՚ուր գիւղացիներ կը դարձընեն. ատ ալ բա՞ն մ՚է։

— Գեղացիներ, ըսաւ Մահիէդ, Րէյմսի՛ մէջ, Ասուի-Վաճառանոցը։ Հայր, մայր սպաննող խիստ ընտիր յանցաւորներ տեսած ենք մենք։ Գիւղացինե՛ր մի. մեզ ի՛նչ կը կարծես, Ժերվէզ»։

Յայտնի կ՚երևէր թէ գաւառուհին իր պատժանիւի պատւոյն համար նեղանալու կէտին մէջ էր. բայց բարեբաղդաբար տիկին Ուտարտ Միւսնիէ խօսքը ժամանակին դարձուց խոհեմութեամբ։

«Կեցի՛ր, տի՛կին Մահիէդ, մեր Ֆլաման դեսպաններուն վրայօք ինչ կ՚ըսես. անանկ գեղեցիկ դեսպաններ Րէյմսի մէջ տեսա՞ծ ես երբէք։

---

* Dame անունն այն ժամանակները տոհմիկ կանանց յատկացեալ էր։

— Կը խոստովանիմ որ անոնց նման Փլամաններ՝ Բարիզի մէջ միայն կը տեսնուի, պատասխանեց Մահիէդ :

— Դեսպանութեան մէջ՝ զուլպայավաճառ դեսպանը տեսայ, հարցուց Ուտարտ :

— Այո՛, ըսաւ Մահիէդ. այն դեսպանը Կռնոսի դէմք ունի:

— Իսկ այն յաղթամարդին դեսպա՞նը որու երեսը մեղկ փորի կը նմանի, կրկնեց Ժերվէզ : Իսկ այն մանրուկը որ փոքր աչքեր և եկքանի գլուխի մը նման հերձուած, ակռայ ակռայ եղած (ébarbillonné) կարմիր կոպեր ունի :

— Տեսնելուք բանը՝ իրենց ձիերն է, իրենց երկրին ձևովը զարդարուած, ըսաւ Ուտարտ :

— Ո՛հ, սիրելիս, ընդմիջեց զուարթուհին Մահիէդ ինքն ալ դեր 'ի վերութեան կերպարանք մը դասելով, ի՞նչ պիտի ըսէիք, եթէ՝ 61ին, այսինքն ասկէ տասն և ութ տարի յառաջ, Րէյմի մէջ արքայ–օծութեան հանդիսի օրը, իշխանազուններու և արքայի շքադիրներու ձիերը տեսնէիք : Ամեն տեսակ ծածկոցներ և զարդեր. ոմանք՝ սամոյրեան կզաքիսի մորթով պատած՝ Տամասեայ ազնիւ դիպակէ, ոմանք՝ սպիտակ աքիսի վարագոյրներով պատած. այլք՝ ոսկերչական գործերով և ոսկի ու արծաթ խոշոր ծաղկերով ծածկուած : Ո՛րչափ ծախք գացած էր այս ամեն հանդերձանքներուս. և անոնց վրայ ինչ աղուոր մանկլաւիկներ կը տեսնուէին :

— Սակայն, կրկնեց խստութեամբ տիկին Ուտարտ, Փլամաններն ալ խիստ աղուոր ձիեր ունին, և երէկ վաճառականներու վերին դատաւորին հետ (Քաղաքապետական ատեան) քաղաքատունը հոյակապ ընթրիք մ'ըրին, ուր շաքարամուշեր, կինամոնով համեմեալ գինի, համեմունք և ուրիշ ընտիր ընտիր բաներ հանուեցան անոնց :

— Ի՞նչ կ'ըսես դու ալ, դրացուհիս, գոչեց Ժերվէզ : Պարոն Կարտինալին Փոքր–Պուրպօն ապարանքին մէջ ընթրեցին Փլամանները :

— Ո՛չ. Քաղաքատունը :

— Ո՛չ. Փոքր–Պուրպօնի ապարանքը :

— Շա՛տ աղէկ Քաղաքատունն ընթրեցին, ըսաւ կծուութեամբ մ'Ուտարտ. վարպետ Սքուրապլ լատիներէն ճառախօսութիւն մ'ըրաւ անոնց, որմէ մեծապէս գոհ եղան : Էրիկս խօսեցաւ ինծ որ երդուեալ-գրավաճառ է :

— Ա՛յնչափ աղէկ գիտեմ Փոքր–Պուրպօնի ապարանքն ընթրելնին, պատասխանեց Ժերվէզ համանման աշխուժիւ, որ Պ. Կարտինալի փոխանորդին՝ անոնց մեծարած բաներն ահա՛ խօսիմ. տասն և երկու մար սպիտակ, կարմրագոյն և բոսորագոյն կինամոնով գինի. Լիոնի ոսկեզօծ կրկնակ նշաքաքարի (massepain) քսան և չորս արկղիկներ. հատն երկու լիվրի նոյնպէս քսան և չորս մեղրամոմէ ջահեր. և ընտրելագոյն տեսակէն՝ վեց կէս–փոքր տակառ Պօնի գինի : Եւ այս ամեն ըսածներուս ճըշմարիտ ըլլալուն ապահով եմ, վասն զի էրիկս ինծ խօսեցաւ որ Քաղաքուորներու–Խօսարանը յիսնագլուխ է (cinquantenier) և որ այս առաւօտ Փլաման դեսպանները Փոխատու–Ժանի և Տրապիզոնի կայսեր դեսպաններուն հետ կը բաղդատէր, որոնք վերջին թագաւորին օրով Միջագետքէն Բարիզ եկան և որոնք ականջնին օղեր ունէին :

— Քաղաքատունն ընթրելնին այնչափ ստոյգ է, պատասխանեց Ուտարտ՝ այս թուահամարէս անխռով, որ միսերու և նշաշաքարներու այնպիսի ցեղեցիկ տեսարան մ'եղած բան չէր :

— Ես ալ կ'ըսեմ որ լը Սէք, քաղաքին նուիրակը, անոնց սպասաւորութիւն ըրաւ Փոքր–Պուրպօնի ապարանքին մէջ, և թէ ղքեզ սխալեցնողը աս բանն է :

— Կը պնդեմ թէ Քաղաքատունն ընթրեցին :

— Փոքր–Պուրպօնի ապարանքը, սիրելիս. և մեծ դրան վրայ գրուած Ցոյս բառն ալ մոզական ապակիներով լուսաւորած էին :

— Քաղաքատունն ընթրեցին. և Հիւսօն լը Վուար ալ անոնց սրինգ կ'ածէր :

— Ո՛չ, այդպէս չէ :

— Շա՛տ աղէկ այսպէս է :

— Ո՛չ, այդպէս չէ։

Ցաղթամարմին բարի Ուտարը կը պատրաստուէր պատասխանելու, և թերևս կռիւը սաստիկ պիտի մնար եթէ Մահիէդ չ՚պօռար յանկարծ « Տեսէք, տեսէք սա բազմութիւնն որ հեռուն, կամուրջին ծայրը ժողովուած է։ Մէջ տեղերնին բան մը կայ զոր դիտելու վրայ են։

— Իրօք, ըսաւ Ժերվէզ, թմբուկի ձայն մը կը լսեմ, և կարծեմ փոքր Էզմըրալտան է որ իր այծին հետ ազգի ազգի խաղեր կ՚ընէ։ Շո՛ւտ, շո՛ւտ, Մահիէդ, փութացո՛ւր քայլերդ և տղադ քաշքշելով քալեցո՛ւր։ Դուն Բարիզի հետաքրքրական բաները տեսնելու եկած ես. երէկ Ֆլամանները տեսար. այսօր ալ պէտք է որ Եգիպտուհին տեսնես։

— Եգիպտուհի՛ն. ըսաւ Մահիէդ յանկարծ ետ դառնալով, և իր տղեկին բազուկն ուժգնակի սեղմելով։ Աստուած չ՚ընէ որ Եգիպտուհի տեսնելու երթամ ես. անիկա կրնայ իմ զաւակս գողնալ։ Եկո՛ւր, Էօստաշ »։

Եւ սկսաւ քարափին վրայ դէպ ՚ի Կրէվ ընթանալ, մինչև որ կամուրջն իրմէ շատ ետև ձգեց։ Սակայն տղան, որու ձեռքէն բռնած կը քաշքշէր, ծունկերուն վրայ ինկնալով՝ շնչասպառ կանկ առաւ, որով և Ուտարս ու Ժերվէզ ետևէն հասան։

« Եգիպտուհին քու զաւակդ գողնայ, ըսաւ Ժերվէզ, ինչ անհեթեթ գաղափար։

Մահիէդ մտախոհ կերպարանքով մը գլուխը կը շարժէր։

« Զարմանալին այն է որ, դիտեց Ուտարս, Քրձուհին ալ Եգիպտուհիին վրայ մի և նոյն կարծիքն ունի։

— Ի՞նչ է Քրձուհին, ըսաւ Մահիէդ։

— Ի՞նչ պիտի ըլլայ, քո՛յր Կիւտիւլը, ըսաւ Ուտարս։

— Քո՛յր Կիւտիւլն ո՛վ է, կրկնեց Մահիէդ։

— Ի՞նչպէս Րէյմսէ ըլլալդ կը տեսնուի այս բանս չգիտնալով, պատասխանեց Ուտարս։ Մկանց-Ծակին մենուհին է այն։

— Ի՞նչպէս, հարցուց Մահիէդ, այն խեղճ կինը որու այս պաքսամատը կը տանինք։

Ուտարս՝ գլխովը հաստատական նշան մ՚ըրաւ։

« Այո՛, ան։ Հիմա զինքը՝ Կրէվի վրայ նայող լուսանցոյցէն պիտի տեսնես։ Այս թմբուկ զարնող և ժողովրդեան գուշակութիւններ ընող թափառաշրջիկ Եգիպտացիներուն վրայ՝ նա ալ քեզի պէս կը խորհի, և մարդ չգիտեր թէ գնչուներէ և Եգիպտացիներէ իր այս սոսկումը ինչ բանէ յառաջ կու գայ։ Բայց դո՛ւ, Մահիէդ, դու ինչո՞ւ համար զանոնք տեսնելով միայն՝ այդպէս կը փախչիս։

— Ո՛հ, ըսաւ Մահիէդ, իր տղուն կլոր գլուխն երկու ձեռացը մէջ բռնելով, չեմ ուզեր որ Բաքէդ լա Շանդֆլէօրիի գլուխն եկածը՝ իմ ալ գլուխս գայ։

— Ո՛հ, աղէ, պատմէ մեզ այդ պատմութիւնը, իմ բարի Մահիէդս, ըսաւ Ժերվէզ անոր թևը բռնելով։

— Շա՛տ աղէկ, պատմեմ զայն, պատասխանեց Մահիէդ, այլ ինչպէս Բարիզէն ըլլալնիդ կ՚երևի այս պատմութիւնս չգիտնալով։ Բաքէդ լա Շանդֆլէօրի՝ (այլ գործը պատմելու համար կենալու պէտք չ՚ունինք) ասկէ տասն և ութ տարի յառաջ՝ տասն և ութ տարեկան սիրուն աղջիկ մ՚էր, ինչպէս որ ես իսկ էի այն ժամանակ. և եթէ այսօր ինձի նման՝ մարդու մը և զաւակի մը տէր՝ երեսուն և վեց տարեկան կայտառ և առոյգ մայր մը չէ նա՝ յանցանքն իրն է. թէև տասն և չորս տարեկան՝ թշուառին գործը լմնցած էր...։ Հայրը որ Կիւյպէրդօ կը կոչուէր, Րէյմսի մէջ նաւերու նուագահար՝ (ménestrel) Շարլը Է. ի առջև, անոր օծման օրը, երգած էր, երբ այս վերջինը՝ Սիլլէրիէ մինչև Մուիզօն՝ մեր Վէզլի գետէն վար իջաւ, լա Բիւսէլ դշխոյն իր նաւին մէջ ունենալով։ Ծերունի հօր մեռած ատենը՝ Բաքէդ դեռ բոլորովին պզտիկ աղջիկ մ՚էր, իր մօրը հետ մէկ տեղ՝ քո՛յր Պ. Բրատոնի, որ անցեալ տարի մեռաւ և որ Բարիզի մէջ, Բարէն-Կարլէն զուհը, արուրագործ (dinandinier) և կաթսայագործ վարպետ էր։ Կը տեսնէք որ լաւ ընտանիքէ էր Բաքէդ։ Մայրը պարզ և բարեմիտ կին մ՚ըլլալով դժբաղդաբար՝ Բաքէդի ուրիշ բան չսորվեցուց բայց եթէ քիչ

մ՚ասղնեգործ (doreloterie) և քիչ մ՚ալ մանկական խաղալիկներու վերաբերեալ աշխատութիւններ, որք չկրցան արգելք ըլլալ որ փոքրիկ աղջիկը բարձր հասակ ունենայ և աղքատ մնայ յոյժ։ Երկուքնին ալ Րէյմսի մէջ, գետին երկայնքը Խօլ–Աշխատութեան գուեհը կը բնակէին։ Անիկա նշանակեցէք, վասն զի ես կը կարծեմ որ Բաքէդի դժբաղդութիւն բերողն այս բանս եղաւ։ 64 թուականին, որ Լուի ԺԱ. մեր թագաւորը, զոր Աստուած պահպանէ, կ՚օծուէր հանդիսիւ, Բաքէդ այնչափ զուարթ և այնչափ սիրուն էր, որ ամենուրեք լա Շանդփլէօրի (Երգէ–Ծաղկած) անուն կու տային իրեն․․․։ Հէք աղջիկ․․․։ Սիրուն ակռաներ ունենալով՝ զանոնք ցուցնելու համար խնդալը կը սիրէր։ Արդ, խնդալ սիրող աղջիկը՝ լալու ճամբան կը բռնէ և գեղեցիկ ակռաները գեղեցիկ աչքերու կորստեան պատճառ կ՚ըլլան։ Շանդփլէօրի կ՚անուանուէր ուրեմն Բաքէդ։ Ինքն և իր մայրը նուագահարին մահուանէ վերջը սաստիկ նեղութեան մէջ՝ իրենց օրապահիկը մեծ դժուարութեամբ կը հանէին։ Իրենց ասղնեգործը շաբաթը վեց դահեկէն աւելի չէր բերեր իրենց, որն որ երկու արծաթ լեար իսկ չ՚ըներ։ Ո՞ւր էր այն ժամանակներն որ Կիյոմէրդօ օծման հանդիսի մը մէջ, երգ մ՚երգելով միայն, տասն և երկու բարիզեան սօլ կը վաստկէր։ Ձմեռ մը (մի և նոյն 64 թուականին ձմեռն էր այս), երկու կիները վառելու ո՛չ փայտ և ո՛չ ածուխ ունենալով, և սաստիկ ցուրտ ըլլալով այնպիսի գեղեցիկ գոյներ առաւ Շանդփլէօրի որ մարդիկ կը կանչէին զինքը. Բաքէդ, շատերը կանչեցին զինքը. Բաքըրէդ, և կորստեան թշուառուհին․․․․։ Էօստաշ, պաքսամատը չ՚ուտես․․․։ Կիրակի օր մը, վզէն ոսկի խաչ մը կախած եկեղեցի գալով՝ խեղճն անոր գլխէ եկած ըլլալը մակաբերեցինք։ Խե՛ղճ բան չէ տասն և չո՛րս տարեկան հասակի մէջ։ Նախ և յառաջ Քորմոնդրէօյլ երիտասարդ դերակոմսը, որու զանգակատունը Րէյմսէ չորս մղոն մը հեռուն է, զայն մոլորեցուց. ետքը Պ. Հանրի տը Թրիանքուր, ախտաղետ (chevaucheur) արքայի, ետքը, անկէ վար, Շիար տը Պօլիոն, արարողապետ

պաշտօնատար (sergent d'armes), ետքը միշտ վար իջնալով, Կէրի Օպէրժօն, մայօր պաշտօնատար սեղանոյ արքայի (valet tranchant du roi), ետքը՝ Մասէ տը Ֆրէբիւս, Պարոն Արքայորդւոյն սափրիչը, ետքը՝ Թէվէէն լը Մուան, խոհարար արքայի (queux-le-roi), ետքը՝ միշտ այսպէս, մէկ մէկու ետեէ, երիտասարդէն աւելի ծերին, ազնուականէն աւելի անազնիւին անցնելով Կիյլեօմ Րասինի ձեռքն ինկաւ, անուաւոր ջնարի նուագահար, և անկէց ալ՝ Թիէրրի տը Մերի՝ լապտերագործ։ Այն ժամանակ թշուառ Շանդփլէօրին ոտքէն մինչև գլուխ՝ ամենուն սեպհականութիւնն եղաւ — ողորմելին իր ոսկի դրամին վերջին փուլին հասած էր։ Ի՞նչ կ՚ըսէք, տիկնա՛յք, մի և նոյն 64 օծման տարին ցոփերու տեսուչ–պաշտօնատարին (roi des ribauds) անկողինը նա շտկեց․․․։ Մի և նո՛յն տարին»։

Մահիէդ հառաչեց, աչքերուն մէջ գլորած արցունք մը սրբելով։

«Խիստ սովորական պատմութիւն մը չեմ գտներ այդ, ըսաւ Ժէրվէզ, և ո՛չ ալ մէջը գնչուի կամ տղեկի բան կը տեսնեմ։

— Համբերէ, կրկնեց Մահիէդ, հիմա տղեկին կարգն եկաւ։ ․․․ 66ին, այս ամիս՝ Սուրբ–Պօղոսի տօնին՝ տասն և վեց տարի պիտի ըլլայ, Բաքէդ աղջիկ զաւակ մը ծնաւ, որու համար մեծ խնդութիւն զգաց, ըստ որում շատ ատեններէ՚ի վեր զաւակ մ՚ունենալ կը ցանկար թշուառուհին։ Իր մայրը, բարեմիտ կին մ՚որ միայն աչք գոցելէ, բան չտեսնելէ զատ ուրիշ գործ չէր ըրած, իր մայրը, կ՚ըսեմ, մեռած էր արդէն։ Բաքէդ աշխարհի երեսը չ՚ունէր ալ բան մ՚որ սիրէր, և ո՛չ ալ զինքը սիրող մէկը։ Հինգ տարի էր որ մոլորած էր ինքը, և հինգ տարիէ՚ի վեր կարի հէք և տարաբաղդ արարած մ՚էր եղած։ Մինակ էր, մինա՛կ այս կենցաղիս մէջ, մատնանիշ ցուցուած, փողոցներու մէջ խայտառակուած, նուիրակներէ թակուած, ցնցոտիապատ լակոտներէ այպանուած։ Անկէց զատ, քսան տարին լրացած էր նա, և խառնագնաց կիներու համար՝ քսան տարի ըսելը՝ ծերութիւն ըսել է։ Այլ եւ

խեղճութիւնը կ՚սկսէր շահաբեր չըլլալ իրեն, ինչպէս ժամանակաւ ասղնեգործութիւնը. քանի խորշոմ մը կը գտնար՝ [illegible] մը կը պակսէր. դարձեալ ձմեռը կ՚սկսէր իրեն համար դառն ըլլալ. դարձեալ փայտը կրակարանին մէջ կը պակսէր, հացն ալ բերնին մէջ: Ո՛չ ևս կրնար աշխատիլ հէք աղջիկը, վասն զի հեշտասէր դառնալով ծոյլ դարձած էր, և շատ աւելի կը նեղուէր կը տառապէր, վասն զի ծոյլ դառնալով հեշտասէր դարձած էր: Այսպէս գէթ կը բացատրէ Սէն-Րըմիի Պ. ժողովըրդապետը թէ ինչու այս տեսակ կիները ծերացած ժամանակնին՝ ուրիշ աղքատ կիներէ աւելի կը մսին ու կը քաղցին:

— Շատ աղէկ, գոչեց Ժերվէզ. բայց ո՞ւր են գնչուները պատմութեանդ մէջ:

— Պահ մը համբերութիւն ունեցիր, Ժերվէզ, ըսաւ Ուտարտ որ աւելի երկայնամիտ ուշադրութեամբ Շանդֆլէօրիի պատմութիւնը մտիկ կ՚ընէր: Եթէ ամեն բան սկիզբն ըսուի՝ վերջին ինչ կը մնայ: Աղէ, շարունակէ, Մահիէտ: Խեղճ Շանդֆլէօրի»:

Մահիէտ շարունակեց.

«Կարի տխուր էր ուրեմն հիւրուհին, կարի թշուառ և արտասուքն այտերը կը պեղէր: Բայց իր ամօթապարտ վիճակին մէջ, իր խեղճութեան և լքման մէջ՝ իրեն այնպէս կը թուէր՝ որ եթէ գտնուէր աշխարհիս վրայ բան մը կամ մէկը, զոր սիրէր ինքը, և փոխադարձաբար սիրուէր անկէ, այնչափ ամօթահար, այնչափ խեղճ և այնչափ լքեալ չպիտի մնար: Պէտք էր ուրեմն որ տղեկ մ՚ունենար, վասն զի տղեկ մը միայն իր պարզ անմեղութեամբը կրնար իր տենչն իրացընել . . . : Միայն մէկ մարդ ուզած էր իրեն, և այս՝ գող մ՚էր. զանիկա սիրելու համար ջանքեր ընելէ վերջը՝ քիչ ատեն գիտելով որ նա ևս կ՚արհամարհէր զինքը, այս ճշմարտութեանս սրտովն համոզուած էր . . . : Այս խեղճ կիներուն՝ սիրահար մը կամ զաւակ մ՚անշուշտ հարկ է սրտերնին լեցընելու համար. եթէ ո՛չ՝ յիրաւի կարի դժբաղդ կեանք կ՚անցընեն: Շանդֆլէօրի սիրահար մը չը կրնալով ունենալ, խելքը միտքը զաւակ մ՚ունենալու տուաւ,

և որովհետև միշտ բարեպաշտ էր մնացած՝ այս բանիս համար զԱստուած իր աղօթիցը մէջ աղերսելէ չէր դադրեր: Բարերար Տէրը վերջապէս գթալով իր վիճակին՝ աղջիկ մը տուաւ իրեն: Պատմել զգացած խնդութիւնը՝ կարելի բան չէ. արտասուաց, դուրգուրանաց և համբուրից մոլեգնութիւն մ՚էր այն: Իր զաւակն ինքը դիեցուց, իր անկողնին վրայ մնացած միակ վերմակովը խանձարուրներ շինեց և ալ ո՛չ ցուրտ սկսաւ զգալ, ո՛չ քաղց. գեղեցկութիւնը վերադարձաւ իրեն — վասն զի պառաւ աղջիկը նորահաս մայր կը շինէ — և տարփական հաղորդութիւնք վերստին սկսան. վերստին եկեր ունեցաւ Շանդֆլէօրի, իր ապրանքին նոր նոր գնորդներ գտաւ. և այս դարշ անիչութիւններու շնորհիւ՝ առանց իրեն վերմակ մը գնել խորհելու՝ իր մանկան համար նոր նոր խանձարուրներ, գտակներ, կրծկալներ, ազնիւ բաճկոնակներ և սնդուսէ փոքր գլխանոցներ շինեց . . . : Խօսա՛շ, զաւա՛կս, պաքսամատէն չ՚ուտելու պատուէրս չ՚մոռնաս . . . : Փոքր Անեէսը . . . ասիկա մանկան անունն էր, աւազանի անուն, վասն զի երկար ժամանակներէ ՚ի վեր Շանդֆլէօրի ընտանիքի անուն չ՚ունէր . . . փոքր Անեէսը, կ՚ըսեմ, թագաւորին նորածին աղջիկէն աւելի ժապաւէններով և ասղնեգործութիւններով խանձարուրուած էր. մանաւանդ զոյգ մը պզտի կօշիկներ ունէր, որոնց նմանը թերևս նոյն ինքն Լուի ԺԱ. իր երախայութեան ատեն ունեցած չըլլայ: Մայրն ինքնին կարած և բանած էր զանոնք, իր ասղնագիտի բոլոր նրբութիւնները և Աստուածածնայ հագուստի մը բոլոր պերճ ու ճոխ զարդերն թափելով հոն: Այնպիսի սիրուն վարդագոյն կօշիկներ տեսնուած բան չէր. երկայնութիւննին բթամատիս չափ հազիւ կար, և որպէս զի մէկը հաւատար թէ այն փոքր մանկան ոտքերն անոնց մէջ մտած էին, պէտք էր անոնց՝ կօշիկներէն դուրս ելնելը տեսնէր: Ո՛հ, ինչ մանր, ինչ սիրուն, ինչ վարդագոյն ոտիկներ էին անոնք, կօշիկներուն սնդուսէն ալ աւելի վարդագոյն . . . : Երբ զաւակ ունենաս, Ուտարտ, պիտի տեսնես որ այն ոտիկներուն ու ձեռքերուն նման սիրուն բան չ՚ըլլար:

— Կը կարծես թէ չեմ ուզեր զաւակ ունենալ, ըսաւ Ուտարտ հառաչելով, այլ այս բանիս համար կ'սպասեմ որ Գ. Անտրի Միւզնիէ յօժարութիւն ցուցընէ։

— Ես ալ զրուցեմ, կրկնեց Մաճիէգ, որ Բաքէգի աղջկան միայն ոտքերը չէին սիրուն. չորս ամսուան եղած ատենը՝ զան անգամ մը տեսայ. ո՜հ, հրաշալի մ'էր, և ո՛չ ուրիշ բան։ Աչքերը բերնէն աւելի մեծ էին, և ամենազուտ սեաւ բարակ մազեր արդէն գանգուր դառնալու կ'սկսէին։ Տասն և վեց տարին կոխած ժամանակ՝ ինչ գեղեցիկ թուխ աղջիկ մը պիտի ըլլար նա։ Մայրը, Շանդփլէօրի եւ քան զևս անոր վրայ խելքը կը թռցընէր. անդադար կը գգուէր զանիկա, կը համբուրէր, կը խաղայէր, կը լուար, կը հագուեցընէր, ողջ ողջ ուտելը միայն կը պակսէր։ Ունեցած չափազանց սէրէն վրան խենթութիւն կու գար, և ասոր համար շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ։ Մանաւորապէս մանկան փոքր վարդագոյն ոտներուն վրայ ցուցուցած հիացումն և խնդութիւնը մոլեգին և չտեսնուած բան մ'էր. միշտ շրթունքները յարած էին անոնց վրայ և խելքը միտքն անոնց փոքրութեանը գրաւուած։ Այն մանր կօշիկներուն մէջ կը դնէր զանոնք, ետքը վերստին կը հանէր, կ'զմայլէր, կ'սքանչանար անոնց վրայ, անոնց մէջէն լոյսը կը դիտէր, անկողնին վրայ մէկ մէկու ետեւէ անոնց քալել սորվեցուցած ժամանակը կը մեղքընար վրանին, և եթէ ձեռքէն գար՝ բոլոր կեանքը ծունկի վրայ, Յիսուս-Մանկան ոտներուն նման՝ երախային ոտները կօշիկ դնելով և հանելով պիտի անցընէր։

— Պատմութիւնը դեռ չէ, ըսաւ Ֆերվէգ կէս-ձայնով, բայց ուր են գնչուք անոր մէջ։

— Ահաւասիկ, պատասխանեց Մաճիէգ։ Օրին մէկը տեսակ մը չտեսնուած և նորօրինակ հեծեալներ եկան Րէյմս հասան։ Ասոնք իրենց դուքսէն ու իրենց կոմսերէն առաջնորդուած մուրացիկներ ու գողեր էին, ու քաղաքէ քաղաք կը թափառէին։ Դէմքերնին թխագոյն էր, մազերնին՝ գանգուր, և ականջնին արծաթեայ օղեր անցուցած էին։ Կիներն էրիկ մարդերէ աւելի ժա-

հադէմ էին։ Երեսնին աւելի սեւ էր ու յաւէտ հոլանի, վրանին տեսակ մ'անպիտան ամենակարճ կրկնոցներ (roquets) առած, ուսերնուն վրայ առասաններով հիւսուած սաւան մը ձգած, և մազերնին՝ ձիու պոչի նման ետեւնէն կախուած, իրենց սրունքներէն կախուող երախաները կապիկներու իսկ կրնային ահ պատճառել։ Բանադրեալներու հրոսակ մը, միով բանիւ, որ ուղղակի Սարրին-Եգիպտոսէն Րէյմս կու գար Պոլոնիայի վրայէ։ Կ'ըսուէր թէ Բաբը զանոնք խոստովանեցուցած՝ և իբր ապաշխարանք՝ պատուիրած ըլլար անոնց, առանց անկողին պառկելու՝ եօթ տարի շարունակ աշխարհի վրայ թափառիլ. ասոր համար ապաշաւող անուն կը կրէին և կը հոտէին չարաչար։ Կ'երեւի թէ ատենով Սարակինոսներ եղած ըլլան. այս պատճառաւ՝ Արամազդի կը հաւատային անոնք և ամեն արքեպիսկոպոսներէ, եպիսկոպոսներէ և գաւազանաւոր և խոյրաւոր աբբաներէ տասն Թուրեան դրամ կը պահանջէին, բաբէ մասնաւոր կոնդակով։ Ալճերիոյ թագաւորին և Գերմանիոյ կայսեր անունով՝ Րէյմս կու գային գուշակութիւններ ընելու, և կրնաք երեւակայել թէ այս բաւական պատճառ մ'էր՝ որ քաղաքէն ներս մտնելու թոյլտուութիւն չ'ըլլար անոնց։ Ասոր վրայ բոլոր այն հրոսակը՝ Պրէնի դրան մօտ, հին գաճափոսերու ծակերուն քով, աղօրի մը գտնուող հողակոյտին վրայ բանակեցաւ մնացիր և Րէյմսի մէջ մարդ չ'մնաց որ զանոնք չ'երթայ չ'տեսնէ, և ձեռքն անոնց չ'ցուցընէ, զոր նայելով հիանալի մարգարէութիւններ կ'ընէին. զոր օրինակ՝ Յուդայի կարող էին գուշակել թէ օր մը բաբ պիտի ըլլար։ Սակայն անոնց վրայ դեռ դեռ համբաւներ տարածուած էին թէ տղեկներ կը յափշտակեն, թէ քսակներ կը գողնան, թէ մարդու միս կ'ուտեն. իմաստունները անմիտներուն «Մի՛ երթաք անոնց քով» կ'ըսէին, և մի և նոյն ժամանակ գաղտնի կերպով իրենք կ'երթային։ Զանոնք երթալ տեսնելն ամենուն համար մոլեկան փափաք մ'եղած էր և իրաւն ալ այն է որ կարտինալ մը զարմացընելու չափ բաներ կը խօսէին։ Մարք իրենց զաւակներուն գովեստներն ընելէ չէին դադ-

բեր Եգիպտուհիներէն խրախուսուած՝ որք անոնց ձեռաց մէջ չը գիտեմ ինչ հեթանոս լեզուով գրուած հրաշքներ կարդացած էին ։ Մէկուն զաւակը կայսր պիտի ըլլար, միւսինը՝ բաք մը, ուրիշինը՝ զօրապետ ։ Խե՜ղճ Շանդֆլէօրին ալ հետաքրքրութեամբ բռնուեցաւ . նա ալ ուզեց իր մանկան ինչ ըլլալը չ՚ըլլալը գիտնալ, և հասկընալ թէ արդեօք իր սիրուն փոքրիկ Անեէզն օր մը Հայաստանի* կամ ուրիշ տեղի մը կայսրուհի չ՚պիտի ըլլար, ուստի զանիկա Եգիպտացիներուն տարաւ ։ Եգիպտուհիք վրան հիանալէ, գգուելէ, իրենց սեւ բերաններովը համբուրելէ, և անոր փոքր ձեռքերուն վրայ զմայլելէ չ՚դադրեցան . մանաւորապէս սիրուն փոքրիկ ոտներուն և գեղեցիկ կօշիկներուն վրայ աքանչացած կը մնային . իսկ Շանդֆլէօրին ուրախութիւնը չափ, սահման չ՚ունէր ։ Մանկիկը, որ դեռ մէկ տարեկան չէր իսկ, արդէն թոթովել կ՚սկսէր, մօրը նայելով կը խնդար ու հրեշտակներու և արքայութեան արժանի հազարումէկ սիրուն շարժումներ կ՚ընէր ։ Եգիպտուհիներէն սաստիկ խրտչելով՝ խեղճը սկսաւ լալ, իսկ մայրը՝ աւելի շատ և սրտագին համբոյրներով և գուշակներուն իր Անեէզին վրայ զրուցած աղուոր բաներէն երկինք թռելով, զայն տուն տարաւ ։ Անեէզ հրաշագեղ աննման աղջիկ մը պիտի ըլլար, իր առաքինութեամբը նըշանաւոր, և օր մը թագուհի մ՚ըլլալու սահմանուած էր ։ Խօլ-Աշխատութեան գուեհի իր տնիկը դարձաւ ուրեմն, հետը դշխոյ մը կրելու համար՝ սիրուն օրինաւոր հպարտութեամբ մը փքացած ։ Միւս օրը մանկիկն իր անկողնոյն վրայ քնացած ժամանակը (բստ որում միշտ իր հետը կը պառկեցընէր զանիկա) օ-

* Խե՜ղճ Հայաստանի անունը թէ գրքերու և թէ լրագիրներու մէջ՝ շա՛տ անգամ այսպէս հեգնութեամբ կը քաշքշուի ։ Իր վաղեմի փառքը մերկանալէ և քաղաքական նշանակութիւնն անլուր աղէտներով կորուսելէ վերջը՝ այս տխուր երկիրը կ՚ընդունի ահա իր այսօրուան թշուառ վիճակը, որ օտարներու ակնածութեան վրայ թերևս բազմադիմի խրատներ ունենար . . . . ։

Ծ. Թ.

գուտ քաղեց առիթէն, և դուռը կամացուկ մը կիսաբաց թողլով, Սէշէսըրի գուեհը բնակող դրացուհւոյ մը գնաց պատմելու թէ օրին մէկն իր աղջիկն՝ Անեէզ՝ Անգղիոյ թագաւորէն և Եթովպիոյ արքիդուքսէն սեղանին վրայ սպաս պիտի ընդունէր, և շատ մ՚այսպիսի աքանչելիքներ ։ Ի դարձին՝ սանդուղէն վեր ելած ժամանակը ձայն ձուն չ՚լսելով. « Լաւ, զաւակս կը քնանայ միշտ » ըսաւ ։ Սակայն դուռը թողածէն աւելի բաց գտաւ, և ներս մտնելով՝ եղկելի մայրը դէպ 'ի անկողին վազեց . . . . ։ Անկողինը պարապ էր, զաւակն առած տարած էին անկէ . զաւակէն իբր յետին նշան՝ անոր սիրուն փոքր կօշիկներէն մէկը մնացած էր միայն ։ Սենեակէն դուրս վազեց անդէն, սանդուղէն վար նետուեցաւ և գլուխը պատերուն զարնելով սկսաւ պոռալ. « Զաւա՛կս, ո՛վ առաւ զաւակս, որո՛ւ քով է զաւակս » ։ Գուեհն ամայի էր, տունը մեկուսի, և իր զաւկին վրայ ո՛չ ոք կրցաւ լուր մը տալ իրեն ։ Բոլոր քաղաքը թափառեցաւ, բոլոր գուեհները հետազօտեց, բոլոր օրը հո՛ս վազեց, հո՛ն վազեց մըտաբեկ, մոլորած, ահագին, ձագերը կորսնցնող վայրագ կենդանւոյ մը նման դուռերն ու պատուհանները հոտուըտալով ։ Զայն տեսնողը պիտի զարհուրէր . մազերը թափթփած էին . շունչը հատած . աչքերուն մէջ հուր մը կար որ արցունքները կը չորցընէր ։ Անցորդները կեցընելով՝ « Աղջի՛կս, աղջի՛կս, կը գոչէր, իմ սիրո՛ւն փո՛քր աղջիկս ։ Ո՛վ որ իմ աղջիկս ինձ դարձրնէ՝ անոր աղախինը պիտի ըլլամ . անոր շա՛նն աղախինը, և սիրտս թո՛ղ ուտէ, եթէ կ՚ուզէ » ։ Սէն-Րըմիի ժողովրդապետին հանդիպելով՝ « Պարոն ժողովրդապետ, ըսաւ անոր, եղունգներովս երկիրը կը գործեմ, այլ զաւակս ինծի դարձուցէք » ։ Աղէյօշ ցաւալի տեսարան մ՚էր, Ուտարտ, և խիստ քարսիրտ մէկը տեսայ, վարպետ Բօնս Լաքայլը փաստաբանը, որ 'ի գութ շարժած կ՚արտասուէր ։ Ո՜հ, թշուառ մայր . . . ։ Իրիկունը յուսահատ տուն դառնալով՝ դրացուհի մը պատմեց իրեն թէ իր բացակայութեան ժամանակ՝ երկու Եգիպտուհիներ, թեւերուն տակ ծրար մ՚ունենալով՝ գաղտագողի կերպով սանդուղէն

վեր ելեր էին, յետոյ՝ դուռը գոցելէ վերջը՝ վար իջնելով շտապով փախեր էին, և թէ մեկնելնէն 'ի վեր՝ մանկան ձայնի նըման ձայներ Բաքէդի տան մէջէ կը լսուէին....: Մեծաձայն քրքիջ մը ձգեց մայրը, և որպէս թէ թևեր առած սանդուղէն վեր թռչելով՝ որպէս թէ թնդանօթով մը դուռը տապալեց և մտաւ....: Ահռելի՜ բան մը, Ուտարտ: Իր աղուորիկ, կարմըրայտ և կայտառ Անեէզին տեղ՝ որ բարերարին Աստուծոյ մէկ պարգևն էր, ժանտատեսիլ, կաղ, միականի, տգեղ, տեսակ մը փոքր հրէշ՝ պառալով, կանչուըռտելով տախտակամածին վրայ կը տատանէր: Խե՜ղճ Շանդֆլէօրի սոսկումով աչքերը ծածկելով՝ «Ո՛հ, ըսաւ, արդեօք վհուկներն իմ աղջիկս այս ահարկու կենդանիի՞ն փոխեցին»: Հոն գտնուողները փութացին այն հաշմուտ (pied-bot) մանուկն աչքին առջևէն տանելու, վասն զի զան տեսնելով միայն՝ մայրն իր խելքը պիտի կորսնցընէր: Սատանայի անձնատուր եղած Եգիպտուհւոյ մը հրէշ ծնունդ մ'էր այն, շուրջ չորս տարեկան եղելով, և մարդկային լեզուներէ դուրս լեզու մը խօսելով, վասն զի բերնէն ելած բառերը դժնդակ հնչում մ'ունէին....: Շանդֆլէօրի փոքր կօշիկին վրայ նետուելով, որ աշխարհի վրայ սիրած միակ բանէն մնացած միակ բանն էր, երկար ժամեր անշարժ, անմռունչ և անշունչ անոր վրայ մնաց, այն աստիճան՝ որ զինքը մեռած կարծեցին: Յանկարծ բոլոր մարմնով սարսռեցաւ, իր մասունքին վրայ մոլեգին համբոյրներ տեղացուց, և այնպէս հեծեծանքներ ձգեց՝ որ կարծես թէ սիրտն երկուքի ճեղքուեր էր: Զինքն այն վիճակին մէջ տեսնելով՝ մենք ալ կ'արտասուէինք: «Ո՛հ, իմ աղջիկս, իմ սիրուն փոքրիկ աղջիկս, կ'ըսէր նա, ո՞ւր, ո՞ւր ես». և իր աղիողորմ ձայնը մարդուն աղիքը կը դալարէր: Դեռ մինչև ցայսօր՝ քանի մտքս գայ այս սրտաճմլիկ տեսարանն՝ լացս կը բռնէ. Ինչ պիտի ընես, մեր զաւակները մեր հոգիներուն հատորն են, մեր ոսկրներուն մէջի ծուծը....: Իմ սիրուն Եօստաշս, որչափ ալ աղուոր ես: Եթէ գիտնայիք ինչ աստիճան սիրուն բաներ ունի: Երէկ կ'ըսէր ինծի. «Ոստիկանութեան զի-

նուոր մը պիտի ըլլամ ես»: Ո՛հ, Եօստաշս, ան ինչ աղէտք, ինչ դժբաղդութիւն պիտի ըլլար, եթէ զքեզ կորսնցընէի: Յանկարծ ոտք ելաւ Շանդֆլէօրի, և Ռէյմսի մէջ վազվռտելով ըսկսաւ պոռալ. «Եգիպտացւոց բանակատեղն, Եգիպտացւոց բանակատեղն երթանք: Նուիրակնե՛ր՝ վհուկներն 'ի հուր մատնելու համար»: Եգիպտացիները մեկնած էին արդէն, և խաւար գիշեր ըլլալով՝ անոնց ետևէն իյնալ հնարին չեղաւ: Միւս օրը, Ռէյմսէ երկու մղոն հեռու, Կէօյի և Թիլլօյի մէջ տեղ գտնուող թաւուտի (bruyère) մը մէջ, մեծ կրակի մը հետքեր, Բաքէդի զաւկին վերաբերող քանի մը ժապաւէններ, արեան շիթեր և նոխազի ապաւառ գտնելով՝ և առջի գիշերն ալ ճիշդ շաբաթ գիշեր մ'ըլլալով՝ տարակոյս չ'ունեցան որ Եգիպտացիք այն թաւուտին մէջ իրենց գիւթական ժողովը ըրած էին, և Բէհեղզէբուղի հետ մէկ տեղ աղեկը կերած էին, ինչպէս որ այս բանս տեսակ մ'աղանդաւորներու մէջ կը կատարուի: Այն ինչ Շանդֆլէօրի այս ահռելի բաներս լսեց՝ որ չլացաւ, խօսելու համար շրթունքները շարժեց, այլ չկրցաւ խօսիլ: Միւս օրը՝ մազերն ալեխառն տեսնուեցան, իսկ երրորդ օրը՝ Շանդֆլէօրի աներևոյթ եղած էր, և ո՛ւր գտնուիլը մարդ չէր գիտեր:

— Ստուգիւ սոսկալի պատմութիւն մ'էր այդ, ըսաւ Ուտարտ, որ ամենէ քար-սիրտը յարտօսր պիտի շարժէր:

— Այլ ես չեմ զարմանար, վրայ բերաւ Ժերվէզ, որ Եգիպտացիներու վախն՝ այդ աստիճան ներդ արմատացած ըլլայ:

— Եւ շատ աղէկ ըրիր, կրկնեց Ուտարտ, քիչ մը յառաջ Եօստաշէդ հետ փախչելովդ, վասն զի ասոնք ալ Բոլոնիայէ եկած Եգիպտացիներ են:

— Չէ, այդպէս չէ, ըսաւ Ժերվէզ. կ'ըսուի թէ Սպանիայէ և Գաթալոնիայէ եկած ըլլան անոնք:

— Գաթալոնիա՞. կարելի է, պատասխանեց Ուտարտ: Բոլոնիա, Գաթալոնիա, Վալոնիա, միշտ այս երեք նահանգներս իրարու հետ կը շփոթեմ: Ստոյգն ան է թէ գնչուներ, Եգիպտացիներ են անոնք:

— Նա թէ անտարակոյս՝ տղեկներ ուտելու համար երկար երկար ակռաներ ունենալ պէտք են, յարեց Ծերվէզ։ Ուստի և չկնաի զարմանամ եթէ Էզմերալտան եմ՝ քնքուշ փափկութիւն մը ցուցընելով հանդերձ՝ այս տեսակ կերակուրէ սակայն ինչ ախորժի։ Իր սպիտակ այծն այնչափ նենգամիտ խաղեր ու ձեւեր կ՚ընէ՝ որ անկարելի է տակն ամբարշտութիւն մը չ՚գտնուի »։

Մահիէզ լռիկ մնջիկ կը քալէր, միտքը՝ տխուր պատմութեան մը կերպիւ խիք երկարաձգութիւնը համբուրող մտախոհութեան մը մէջ թաղուած, մտախոհութիւն՝ որ այն ժամանակ միայն կը կտրի, կանկ կ՚առնու՝ երբ՝ ծածանումէ ծածանում՝ սրտին մինչև վերջին բարակ թելերը՝ նոյն պատմութեան սասանումը կը հաղորդէ։ Նոյն միջոցին՝ Ծերվէզ իրեն դառնալով՝ « Իսկ Շանդֆլէօրի ի՞նչ եղաւ » ըսաւ, որու Մահիէզ պատասխան չ՚տալուն՝ Ծերվէզ՝ անոր բազուկը ցնցելով և անունը կանչելով իր հարցումն երկրորդեց։ Մահիէզ իր մտածումներէն արթնցածի պէս՝

« Թէ Շանդֆլէօրի ի՞նչ եղաւ » ըսաւ Մահիէզի խօսքերը բառ առ բառ և մեքենայօրէն կրկնելով, որոնց տպաւորութիւնն իր ականջին մէջ նոր ՚ի նորոյ զգալի եղած էր. յետոյ՝ ուշադրութիւնն այն խօսքերուն իմաստին դարձընելու ճիգ մը թափելով « Հա՛, կրկնեց աշխուժիւ, այդ բանը գիտցող չկայ »։

Լռութենէ մը վերջը յարեց.

« Ոմանք ըսին թէ մութը կոխած ժամանակ՝ Գլէշամպօ դունէն ելնելով՝ Րէյմսէ հեռանալը տեսեր էին. ոմանք ալ՝ թէ առաւ կանուխ՝ Պազէ դունէն ելած գացած ըլլայ նա։ Աղքատին մէկը՝ այն շրջապատին մէջ ուր տօնավաճառը տեղի կ՚ունենայ՝ քարեղէն խաչին վրայ անցուած՝ իր ոսկի խաչը գտեր էր։ Ասիկա իր առաջին տարփածու Քօրմօնդրէօյլ աղուոր գերակոմսին ընծան էր՝ որ 64ին՝ իր կորստեան պատճառ էր եղած։ Բաքէդ՝ իր յետին թշուառութեան մէջ անգամ՝ անոր մեծ կարևորութիւն տալով՝ չ՚ուզած էր երբէք զայն ձեռքէ հանել։ Ուստի՝ երբ այս խաչն այսպէս ձգուած տեսանք՝ ամենքնիս ալ բնականապէս մտադ-

ծեցինք որ անիկա մեռած պէտք է ըլլայ։ Սակայն գտնուեցան նաև այնպիսի անձինք՝ որք հաստատեցին թէ՝ բոկոտն՝ գայլախաղներու վրայ քալելով՝ Բարիզի ճամբան բռնել երթալը տեսեր էին։ Այլ այն ժամանակ հարկ կ՚ըլլայ որ Վէզլի դուռէն ելած ըլլայ անիկա. և զրոյցները չեն յարմարիր մէկ մէկու։ Կամ թէ՝ եթէ աւելի ճիշդը կ՚ուզէք՝ ես տարակոյս չ՚ունիմ որ իրօք Վէզլի դունէն ելած է նա, այլ ելած՝ այս աշխարհէն։

— Խօսքդ չեմ հասկնար, ըսաւ Ծերվէզ։

— Վէզլն գետ մ՚է, մելամաղձ ժպիտով մը պատասխանեց Մահիէզ։

— Խե՜ղճ Շանդֆլէօրին խեղդուած է ուրեմն, ըսաւ Ուստար սարսռալով մը։

— Խեղդուած, կրկնեց Մահիէզ. Կիյոպէրդօ բարի հայրը՝ ջուրին ընթացքին հետևելով՝ և իր նաւակին մէջ երգելով Թէնքէօյի կամուրջէն անցած ժամանակը մտքէն կ՚անցնէ՞ր արդեօք թէ օր մ՚իր սիրելի պզտի Բաքէդն ալ այն կամուրջին տակէն պիտի անցնէր՝ առանց երգի և առանց նաւակի։

— Իսկ փոքր կօշիկը, հարցուց Ծերվէզ։

— Մօրը հետ անհետ եղաւ, պատասխանեց Մահիէզ։

— Մե՜ղք, այն փոքր կօշիկը », ըսաւ Ուստար։

Ուստար, յաղթամարմին և բարի-սիրտ կին մը, Մահիէզի հետ մէկտեղ հառաչելով գոհ պիտի ըլլար, այլ Ծերվէզ՝ աւելի հետաքրքիր՝ իր հարցումները լմնցուցած չէր տակաւին։

« Իսկ հրէ՞շը, ըսաւ յանկարծ Մահիէզ։

— Ի՞նչ հրէշ, հարցուց ասիկա։

— Այն Եգիպտացի փոքր հրէշը՝ զոր գիւթուհիք Շանդֆլէօրի տունը թողուցին իր աղջկանը տեղ։ Ի՞նչ ըրիք զան, հարկաւ դուք ալ զան խեղդեցիք։

— Ոչ, չխեղդեցինք, պատասխանեց Մահիէզ։

— Ի՜նչպէս, չխեղդեցիք. ուրեմն այրեցիք զան, և աւելի աղէկ ըրեր էք. գիւթերու ծնունդ տղեկ մը։

— Ո՛չ այրեցինք և ո՛չ խեղդեցինք, Ծերվէզ։ Պարոն Արքե-

եպիսկոպոսն այն Եգիպտոսի մանկան խնամք ցուցընելով՝ զանիկա օրհնեց, դևէն փրկեց, սատանան փորէն հանեց պղտոշութեամբ, և իբր ընկեցիկ մանուկ՝ Բարիզ ղրկեց զայն, Նօդր-Տամի փայտեայ կաղամածին վրայ դրուելու համար։

— Այս եպիսկոպոսնե՛րն ալ, ըսաւ Ժերվէզ քրթմնջելով. գիտութիւն առնելով՝ գործերնին ուրիշներու նման չեն ուզեր կատարել։ Քե՛զ կը հարցընեմ, Ուտա՛րտ, դևն՝ ընկեցիկ մանուկներուն մէջ դնե՛լ, վասն զի անտարակուսելի կերպիւ՝ այն փոքր հրէշը դևուն ինքն էր։ Եւ Բարիզի մէջ, ինչ ըրին զայն, Մահիէդ։ Տարակոյս չ՚ունիմ որ զան առնող ողորմած մէկը չէ գտնուած։

— Չգիտեմ, պատասխանեց Րէյմուհին. այն ժամանակները էրիկս՝ քաղքէն երկու մղոն հեռու՝ Պերիւի նօտարութիւնը (tabellionage) գնոյ առած ըլլալով՝ հո՛ն գացինք և այս պատմութեան հետամուտ չեղանք ալ. գիտէք թէ Պերիւի առջև Սեռնէյի երկու բարձրաւանդակները կան, որք Րէյմսի մայր եկեղեցւոյն զանգակատուններն անգամ տեսնել կարելի չեն ըներ»։

Այսպէս խօսելով, երեք պատուական քաղաքուհիք Կրէվի հրապարակը հասած էին, և ըստ որում մտքերնին զբաղած՝ Բօլանտ-Աշտարակի հասարակաց ժամագրքին առջևէն անցած ժամանակնին կանգ առած չէին հոն, և մեքենայաբար դէպ 'ի Նշաւակասիւը կ՚ուղղուէին, որու շուրջը բազմութիւնն երթալով աւելնալու վրայ էր։ Հաւանական է որ անտեղի տեսարանը՝ Մկանց-Ծակը, ինչպէս նաև այն դադարիկը (station) զոր այն տեղ պիտի առնուին՝ բոլորովին մոռցընէր իրենց՝ եթէ վեցամեայ խոշոր Էօստաշը, որու Մահիէդ ձեռքէն էր բռնած, յանկարծ անոր առարկան իրենց չյիշեցնէր. «Մա՛յր, ըսաւ նա, որպէս թէ բնազդմամբ մը հասկցած թէ Մկանց-Ծակն իրենց ետին մնացած էր, հիմա խմորեղէնը կրնա՞մ ուտել»։

Եթէ Էօստաշ աւելի վարպետ ըլլար, որ ըսել է այնչափ որկրամոլ չ՚ըլլար, քիչ մ՚եւս պիտի սպասէր, և երբ Համալսարանին մէջ, Մատամ-լա-Վալանս դուռը, Անտրի Մուս-

նիէի տունը հասնէին, այսինքն Սէնի երկու բազուկներուն և Միջնաքաղքի հինգ կամուրջները պաքսամատին ու Մկանց-Ծակին մէջ տեղը մնային, այն ժամանակ միայն այս վեհերոտ հարցումը պէտք էր մէջ տեղ նետէր թէ. «Մա՛յր, հիմա խմորեղէնը կրնա՞մ ուտել»։

Բայց սակայն հարցումը՝ Էօստաշէն անխոհեմ պահու մը մէջ եղած ըլլալով Մահիէդի ուշադրութիւնն արթնցուց.

«Ո՛հ, ինչպէս մոռցանք մենուհին, պօռաց։ Ձեր Մկանց-Ծակը ցուցուցէք ինձ որ պաքսամատն իրեն տանիմ։

— Անմիջապէս, ըսաւ Ուտարտ, վասն զի բարիք մ՚է»։

Սակայն ասիկա Էօստաշի հաշւին չէր գար։

«Ես պաքսամատս կ՚ուզեմ, ըսաւ՝ նախ մէկ ականջը յետոյ միւսն ուսերուն քերելով, գործողութիւն մ՚որ այսպիսի պարագայի մէջ ծայրագոյն դժգոհութիւն կը յայտնէ։

Երեք կիներն ետ դարձան և Բօլանտ-Աշտարակի տան քովը հասնելով՝ Ուտարտ իր ընկերներուն ըսաւ.

«Պէտք չէ երեքնիս մէկ ծակէն ներս նայինք, որպէս զի մենուհին չ՚խրտչեցընենք։ Որովհետև նա զիս քիչ մը կը ճանչնայ՝ լուսանցոյցէն քիթս ներս դրած ժամանակս, դուք ժամագրքին մէջ կարդալու պէս ըրէք։ Ձեզ իմացուցած ժամանակս, դուք ալ կու գաք կը նայիք»։

Ուստի Ուտարտ մինակ երթալով դէպ 'ի լուսանցոյցը՝ երբ անգամ մ՚աչքը դէպ 'ի ներս նետեց՝ իր բոլոր կերպարանքին վրայ խորունկ գթութիւն մը նկարուած տեսնուեցաւ, և իր անկեղծաւոր դէմքը յանկարծ իր գոյնն ու զուարթ բացատրութիւնը կորսնցուց՝ որպէս թէ արեւու ճառագայթէ՝ լուսնի ճառագայթի մ՚անցած ըլլար յեղակարծօրէն. աչքը թրջեցաւ, բերանը կարկամեցաւ՝ ինչպէս կ՚ըլլայ մէկը երբ լալու մօտ կը գտնուի։ Պահ մը վերջը՝ մատը շրթունքներուն վրայ դնելով՝ Մահիէդին նշան ըրաւ որ գայ տեսնէ։

Սրտաթունդ, լռիկ և ոտքերուն մատներուն վրայ քալելով, որպէս թէ օրհասականի մ՚անկողնոյն կը մօտենար, եկաւ Մահիէդ։

Իրօք կարի տխուր տեսարան մը կը ներկայանար երկու կանանց աչքերուն՝ Մկանց–Ծակի վանդակապատ լուսանցոյցէն առանց շարժելու, առանց ձայն մը հանելու ներս նայած ժամանակնին։

Անձուկ էր խցիկը, աւելի լայն քան թէ խորունկ, սրակամար, և դէպ ՚ի ներս նայուած ժամանակն եպիսկոպոսի մեծ խոյրի մը գոգածին կը նմանէր։ Անկիւններէն մէկուն մէջ, գետինը պատող մերկ սալաքարին վրայ, կին մը նստած էր կամ աւելի ճիշդ՝ կքած։ Իր ծունկերուն վրայ, զորս իր երկու խաչաձեւ բազուկները կուրծքին դիմաց կը սեղմէին, կզակը կռթնցուցած էր նա, և այսպէս ինք իր վրայ ժողվուած՝ թխագոյն խարազ մը հագած, որ լայն ծալքերով զինք կը պարուրէր բոլորովին, և իր առջեւի կողմը թափած և երեսին վրայ ու սրունքներէն վար մինչեւ ոտքերը կախուած երկայն ալեխառն մազերով՝ առաջին անգամ տեսնողին՝ խցիկին մթագոյն յատակին վրայ ստուերագրուած այլանդակ ձեւ մը կը ներկայացնէր. տեսակ մը սեւագորշ (noirâtre) եռանկիւնի՝ զոր երդէն եկած լուսոյ ճառագայթը՝ աչքի զարնող կերպով մը մէկ մութ, մէկ լուսաւոր՝ երկու գոյներու կը բաժնէր։ Այն կէս–լոյս, կէս–ստուեր ուրուականներէն էր այն՝ զորս երազներու մէջ կը տեսնէ մէկը, և կամ Կօյայի տարօրինակ գործերուն մէջ՝ աժգոյն, անշարժ, մահագոյժ, գերեզմանի մը վրայ կքած կամ զնդանի մը վանդակներուն կռթնած։ Ո՛չ կին մ'էր նա, ո՛չ մարդ մը, ո՛չ կենդանի արարած մը, ո՛չ որոշ և յայտնի ձեւ մը. պատկեր մ'էր նա, նորօրինակ տեսիլ մ'որու վրայ իրականն ու զանդաչականը, լուսոյ և ստուերի նման՝ իրար կը կցէին։ Հազիւ մինչեւ գետին թափուող մազերուն տակէն նիհար և խստադէմ կիսադէմ մը կ'որոշուէր, հազիւ իր պատմուճանին տակէն մերկ ոտքի մը ծայրը կ'երեւէր՝ կարծր և ցուրտ սալաքարին վրայ կարկամած։ Այն պատմուճանին տակ ընդնշմարուող ձեւն այն աստիճան մարդկային չէր՝ որ սարսուռ կը պատճառէր տեսնողին։

Այս կարծես թէ սալաքարին վրայ բեւեռուած հաստատուած

պատկերը՝ շարժում, մտածում, շունչ ունենալ չէր ցուցներ։ Յունվար ամսուն՝ կտաւէ անօսր քուրձի մը տակ, կրանիթեայ սալայատակի մը վրայ մերկօրէն տարածուած, կրակ չ'ունենալով, զնդանի մը մութին մէջ՝ ուր շեղակի լուսանցոյցը միայն հիւսիսի հովը ներս կ'ընդունէր և երբէք արեւը՝ կարծես թէ չէր նեղուեր նա և ոչ իսկ կ'զգար։ Կրնար ըսուիլ թէ զնդանին հետ՝ քար դարձած էր, եղանակին հետ՝ սառ. ձեռներն իրարու միացած էին, աչքերը սեւեռուած ու անշարժ։ Առաջին տեսնելուդ՝ զայն ճիւաղ մը պիտի կարծէիր. երկրորդ տեսնելուդ՝ արձան մը։

Սակայն՝ ատեն ատեն իր կապուտակ շուրթերը շունչով մը բացուած՝ կը դողդողային, այլ հովէն վանուած տերեւներու նման՝ մեռեալ և մեքենայական կերպով մը։ Իր տխուր և անշարժ աչքերէն հայեցուած մը կ'ելնէր, անբացատրելի հայեցուած մը, խորունկ, ողորմ, անսասան հայեցուած մը, որ խցիկին դէպ ՚ի մէկ անկիւնն՝ որ դուրսէն չէր տեսնուեր՝ սեւեռուած բեւեռուած կը մնար. հայեցուած մը՝ որ այս տառապեալ հոգւոյն ամեն մութ ու տխուր մտածումները չգիտեմ ինչ գաղտնի ու խորհրդաւոր առարկայի մը կը յարէր։

Ա՛յս էր ահա այն արարածը՝ որ իր բնակած վայրէն Ճգնաւոր, Փակեալ (récluse) անունն առած էր, և իր հագած քուրձէն՝ Քրձազգեստ աղաչաւոր կամ պարզապէս Քրձաւոր (sachette)։

Երեք կիներն, քանզի Ժերվէզ ալ Մահիէթին և Ուտարտին քով գացած էր, լուսանցոյցէն կը նայէին. թշուառուհին և ոչ իսկ գիտէր թէ անոնց գլուխներէն՝ խուցին բանտին արդէն աղքատ լոյսն ՚ի սպառ կը խափանուէր։ «Զինքն անհանգիստ չ'ընենք, ըսաւ Ուտարտ՝ մեղմաձայն, քանզի մեքի յափշտակութեան մէջ է, աղօթելու վրայ է նա»։

Մահիէթ՝ այն արեւալէզ, թարշամեալ, հերարձակ գլուխն աճուն անձկութեամբ մը կը դիտէր միշտ, և աչքերն արտասուօք կը լեցուէին. «Կարի զարմանալի պիտի ըլլար այս յիրաւի» կը քրթմնջէր։ Մէկ մ'ալ գլուխը լուսանցոյցին վանդակներէն ներս

խոժելով, կարող եղաւ իր նայուածքը հասցընելու այն խորշին՝ ուր թշուառուհւոյն հայեցուածքն անշարժութեամբ սեւեռուած մնացած էր, և գլուխը լուսանցոյցէն դուրս քաշած ժամանակը, երեսն արցունքներով համակ ողողուած կը տեսնուէր։

«Ի՞նչպէս կ՚անուանէք այս կինս», հարցուց Ուտարտին։

— Քոյր Կիւտիւլ կ՚անուանենք, պատասխանեց ասիկա։

— Իսկ ես, կրկնեց Մահիէդ, Բաքէդ լա Շանդֆլէօրի կ՚անուանեմ զան»։ Եւ մատը բերնին դնելով՝ Ուտարտին նշան ըրաւ որ գլուխը լուսանցոյցէն ներս խօթէ ու դիտէ։

Ուտարտ դիտեց և այն խորշին մէջ՝ ուր մենուհւոյն ակնարկը՝ մտքի այն տխուր յափշտակութեամբ անշարժ հաստատուած էր՝ վարդագոյն սնդուսէ կարմիր կօշիկ մը տեսաւ, ոսկի և արծաթ բիւր զարդերով բանուած։

Ուտարտէն վերջը՝ Ժերվէզ դիտեց, և երեք կիները տարաբաղդ մայրը նայելով սկսան լալ։

Սակայն ո՛չ իրենց հայեցուածքը և ո՛չ իսկ արտասուքը վայրկեան մը մենուհւոյն միտքը չշրջեցին։ Ձեռքերը միացած, շրթունքները մնջիկ, աչքերն անշարժ կը մնային միշտ, և պատմութիւնը գիտցողի մը համար՝ այն փոքրիկ կօշիկն՝ որու այնպէս կը դիտէր նա՝ սրտայօշ և սրտաճմլիկ բան էր։

Երեք կիներն անմռունչ կը մնային, նոյն իսկ մեղմաձայն՝ խօսիլ չ՚իշխելով։ Այս մեծ լռութիւնս, այս մեծ թախծութիւնս, այս մեծ մոռացումն՝ ուր ամեն բան անհետ կ՚ըլլար բաց ՚ի մէկ բանէ՝ Ծնունդի կամ Զատկի աւագ սեղանի մ՚ազդեցութիւնը կ՚ընէր իրենց վրայ։ Մտքերնին կ՚ամփոփէին առանց խօսք մը արտաբերելու և գրեթէ ծնրադրելու պատրաստ էին։ Իրենց այնպէս կը թուէր թէ Աւագ Ուրբաթ օր մ՚եկեղեցի մը մտած ըլլան։

Վերջապէս Ժերվէզ, մէջերնէն ամենէն հետաքրքիրը, և հետեւապէս՝ ամենէ քիչ զգայունը՝ մենուհին խօսեցընելու փորձ փորձեց. «Քո՛յր, քո՛յր Կիւտիւլ»։

Մինչև երեք անգամ, և ամեն անգամուն՝ ձայնը բարձրացընե-

լով այս կոչումս կրկնեց. սակայն մենուհին և ո՛չ իսկ տեղէն շարժեցաւ. ո՛չ բառ մը, ո՛չ ակնարկ մը, ո՛չ հառաչ մը, ո՛չ կենդանութեան նշան մը։

Ուտարտ ալ՝ աւելի գաղձ ու աւելի փաղաքուշ ձայնով մը. «Քո՛յր, ըսաւ, քո՛յր Սուրբ-Կիւտիւլ»։

Մի և նոյն լռութիւն, մի և նոյն անշարժութիւն։

«Զարմանալի՜ կին մը, գոչեց Ժերվէզ, որ թնդանօթի ձայնն անգամ չպիտի լսէ։

— Թերևս խուլ ըլլայ՝, ըսաւ Ուտարտ։

— Թերևս կոյր, յարեց Ժերվէզ։

— Թերևս մեռած», կրկնեց Մահիէդ։

Այս ստոյգ է որ եթէ հոգին տակաւին չէր լքած այս անգործ, թմրած, քնատ (léthargique) մարմինս, գէթ այնպիսի խորութիւններու մէջ քաշուած, քօղուած էր այն՝ ուր արտաքին գործարաններու տպաւորութիւնները ժամանել չէին զօրեր։

«Ուրեմն պիտի պարտաւորինք քաքարը լուսանցոյցին վրայ թողուլ, ըսաւ Ուտարտ, ուր թերևս լակոտ մը կեր ըլլայ։ Ի՞նչպէս ընէինք որ արթնցընէինք զինքը»։

Էօսթաշ մինչ ցայն պահ՝ փոքր կառքով մը զբաղած, որ անկէց կ՚անցնէր յաղթ շունէ մը քաշուելով, դիտեց յանկարծ որ իր երեք առաջնորդուհիները լուսանցոյցէն ներս՝ բան մը նայելու վրայ էին, և իր հետաքրքրութիւնն ալ շարժելով, ոտքին մատին վրայ կայնեցաւ, և իր կարմիր խոշոր երեսը լուսանցոյցին դրան գոչելով. «Մա՛յր, ես ալ կ՚ուզեմ տեսնել»։

Այս մանկան յստակ, առոյգ, ներդաշնակ ձայնը լսելով՝ մենուհին սարսուռ մը զգաց. պողպատ զսպանակի մը չոր և յանկարծական շարժումով գլուխը դարձուց, իր երկայն ու վտիտ երկու ձեռքերը ճակտին վրայէն մազերը մէկդի ըրին, և մանկան վրայ՝ ապշած, դառնալի, յուսահատ աչքեր սեւեռեց։ Փայլակ մ՚եղաւ այս նայուածքը։

«Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, գոչեց յանկարծ գլուխը ծունկերուն մէջ պահելով, և իր խռպոտ ձայնը կարծես թէ

անցած ժամանակը՝ իր կուրծքը կը ճնշէր, կոնէ ուրիշներուն զաւակները մի ցուցըներ ինձ։

—Բարի լոյս, տիկին», ըսաւ մանուկը ծանրութեամբ մը։

Սակայն այս ցնցումը զմնուհին որպէս թէ արթնցուցած էր։ Ոտքէն մինչև գլուխ բոլոր մարմնոյն վրայ երկար սարսուռ մը ունեցաւ. կրճտեցին իր ատամունքը, գլուխը վեր առաւ կխոլէ և արմունկները ծնկներուն վրայ սեղմելով և ոտքերն որպէս թէ տաքցընելու համար իր ձեռացը մէջ առնելով

«Ո՛հ, ինչ սաստիկ ցուրտ կ՚ընէ, ըսաւ։

—Թշուառ կին, ըսաւ Ոստարտ անհնարին գթութեամբ համակուած, քիչ մը կրակ կ՚ուզես»։

Ժխտման ձևով գլուխը թօթուեց մնուհին։

«Ուրեմն, կրկնեց Ոստարտ սրուակ մը ներկայացնելով անոր, ահա քեզ կինամոնով գինի որ ջերմացուցիչ է. խմէ կաթ մը»։

Նորէն գլուխը թօթուելով, անքթիթ աչօք Ոստարտին նայեցաւ և «Ջո՛ւր» պատասխանեց։

Ոստարտ պնդելով «Ո՛չ քոյր իմ, ըսաւ, յունվարի մէջ պէտք չէ ջուր խմել։ Պէտք է որ կինամոնով համեմուած գինիէս խմես քիչ մը, և Եգիպտացորենի խմորով այս պաքսամատս ուտես, զոր քեզի համար եփեցինք»։

Մնուհին Մահիէդի իրեն ընծայած խմորեղէնն ետ մղեց։ «Քիչ մը սև հաց» ըսաւ։

—Կեցի՛ր, ըսաւ Ժերվէզ, ինքն ալ գթութեամբ շարժած, և իր բրդեայ կարճ մեկնոցը հանելով, ահաւասիկ հանդերձ մը որ քուկինէդ քիչ մ՚աւելի տաք կը բռնէ։ Անցո՛ւր վրադ անգամ մը»։

Ինչպէս սրուակը, ինչպէս խմորեղէնը, նոյնպէս մեկնոցն ալ մերժելով՝ պատասխանեց. «Խարա՛զ մը»։

—Բայց հարկ է գիտած ըլլաս, կրկնեց բարեսիրտն Ոստարտ, որ երէկ տօն էր։

—Այո՛, գիտեցի զայն, ըսաւ մնուհին. երկու օրէ ՚ի վեր թակոյկիս մէջ ջուրի կաթիլ չ՚ունենալէս»։ Եւ քիչ մ՚ատեն

լուռ կենալէ վերջը՝ յարեց. «Տօն օր՝ ինձ կը մոռնան և աղէկ կ՚ընեն։ Ես աշխարհի վրայ չեմ մտածեր. ինչու աշխարհ իմ վրաս պիտի մտածէր. մարած ածուխի՝ պաղ մոխիր կը վայլէ»։ Եւ որպէս թէ այսչափ բան խօսելէ յոգնած՝ թողուց գլուխն որ յառաջուան պէս ծունկներուն վրայ իյնայ։ Բարեմիտ և ողորմասիրտ Ոստարտ՝ մնուհւոյն վերջին խօսքերէն կարծելով թէ տակաւին օգնին ցրտութենէ կը տրտնջար, պարզութեամբ մը պատասխանեց անոր. «Ուրեմն, քիչ մը կրակ կ՚ուզես»։

—Կրակ, ըսաւ քրձուհին տարօրինակ շեշտով մը. և քիչ մ՚ալ կրակ պիտի տաս իմ փոքր հէք մանկանս որ տասն և հինգ տարիէ ՚ի վեր հողին տակ կը դողայ»։

Բոլոր իր անդամները կը սարսռային, աչքերը կը շողային, ձայնը կը դողար։ Ծունկներուն վրայ ելած ըլլալով՝ յանկարծ իր ոսկրոտ և նիհար ձեռքը դէպ ՚ի տղեկն երկնցուց, որ զարմացած անոր կը նայէր. «Տարէք այս մանուկս, ըսաւ, հիմա Եգիպտուհին պիտի անցնի»։

Այն ժամանակն երեսն ՚ի վար գետին ինկաւ, և քար մ՚ուրիշ քարի մը զարնուած ատեն հանած ձայնով՝ ճակատը սալաքարին զարկաւ։ Երեք կանայք զինքը մեռած կը կարծէին։ Պահ մը վերջը շարժեցաւ սակայն. և ծունկներուն ու արմունկներուն վրայ սողալով քաշքշուելով՝ փոքր կօշիկին գտնուած անկիւնն ուղղուեցաւ։ Այն ատեն դիտուհիք ալ չ՚իշխեցին դիտելու, ալ զանիկա չ՚տեսան, այլ բիւր համբոյրներ, բիւր հառաչներ լսեցին, աղէյօշ ճիչերով և գլուխը պատին զարնելու նման խուլ հարուածներով խառնուած. յետոյ այս կերպով այնպիսի սաստիկ զարկուած մը լսեցին, որ երեքնին ալ դողացուց, ու ալ բան մը չ՚լսուեցաւ։

«Արդեօք ինքզինքը մեռցո՞ւց, ըսաւ Ժերվէզ գլուխը լուսանցոյցէն ներս խոթելու համարձակութիւն ընելով։ Քո՛յր, քո՛յր Կիւտիւլ։

—Քո՛յր Կիւտիւլ, կրկնեց Ոստարտ։

— Ո՛չ, Տէր Աստուած, կրկնեց Ժերվէզ, ա՛լ չշարժիր, մեռա՛ւ արդեօք։ Կիւտիւլ, Կիւտիւլ»։

Մահիէդ, որու ձայնը բռնուած էր մինչև այն ժամանակ, ճիգ մ՚ընելով «կեցէ՛ք», ըսաւ. յետոյ գլուխը դէպ ՚ի լուսանցոյցն երկնցընելով, «Բաքէդ, ըսաւ, Բաքէդ լա Շանդֆլէօրի»։

Տղայ մը հրալից փամփուշտի մը լաւ մը կրակ չ՚առած պատրոյգին վրայ պարզօրէն փչելով դէպ ՚ի իր երեսը յանկարծ շառաչմամբ պայթեցուցած ժամանակին այն աստիճան ահուդողով չբռնուիր, որչափ Մահիէդ քոյր Կիւտիւլի խղիկին մէջ յեղակարծուստ այս անունս պոռալուն վրայ բռնուեցաւ։

Մենուհին բոլոր մարմինովը դողալով, մերկ ոտքերուն վրայ կանգնեցաւ, և այնպիսի բոցավառ աչքերով դէպ ՚ի լուսանցոյցը ցատկեց՝ որ Մահիէդ և Ուստարս, և միւս կինն ու տղան մինչև քարափին քիւն ետ ետ գացին։

Այն ժամանակ մենուհին իր ահռելի դէմքը լուսանցոյցին վանդակին պինդ մը դիմացընելով «Ո՛հ, ո՛հ, կը գոչէր սոսկալի քրքիջով մը, Եգիպտուհին կը կանչէ զիս»։

Նշաւակագործւոյն վրայ նոյն միջոյին տեղի ունեցած տեսարան մ՚իր խոժոռ աչքը կասեցուց։ Ճակատը սոսկումով կնճռեցաւ, և մի և նոյն ժամանակ իր երկու կմախքի բազուկները խղիկէն դուրս երկնցընելով խորդալու նմանող ձայնով մը պոռաց. «Դո՛ւն ես դարձեալ, Եգիպտոսի աղջիկ. դո՛ւն կը կանչես զիս, դո՛ւն, տղեկներ գողցո՛ղ։ Անիծեա՛լ ըլլաս, անիծեա՛լ, անիծեա՛լ, անիծեա՛լ»։

Դ

ԿԱԹԻԼ ՄԸ ՋՈՒՐԻ ՓՈԽԱՐԷՆ՝ ԱՐՑՈՒՆՔ ՄԸ

Այս խօսքերս որպէս թէ յարակէտ, կցորդակէտ (point de jonction) մ՚էին մինչ ցայն պահ համագիծաբար՝ ամեն մէկն իր մասնաւոր թատրոնին վրայ՝ տեղի ունեցած երկու տեսարաննե-

րու. մէկը, ա՛յն որ վերը պատմեցաւ, Մկանց-Ծակին մէջ. միւսը, որ պիտի պատմուի, նշաւակագործւոյն ելնարանին վրայ։ Առաջին տեսարանին՝ այն երեք կիները հանդիսատես էին գտնուած՝ որոնց հետ ընթերցողը քիչ մը յառաջ ճանչուորութիւն ըրաւ. իսկ երկրորդին՝ բոլոր այն բազմութիւնը՝ որ վերը՝ Կրէվի հրապարակը, և նշաւակասիւին ու կախաղանին բոլորտիքը խմբուած տեսանք։

Այս բազմութիւնս որ առտուան ժամն իննին՝ նշաւակասիւին չորս անկիւններուն վրայ չորս նուիրակներ կեցած տեսնելով, պատժական սանկ նանկ հանդէս մը յուսացած էր, անտարակոյս՝ չէ թէ կախաղանի խեղդ մը, այլ խարազան մը, այլ ականջատութիւն մը (essorillement), բա՛ն մը վերջապէս, այս բազմութիւնս, կ՚ըսեմ, այնչափ քիչ ժամանակի մէջ աճած, սաստկացած էր, որ չորս նուիրակները, ինքզինքնին խիստ մօտէն շրջապատուած տեսնելով, մէկ քանի անգամ պարտաւորած էին մտրակի (boullaye) ու ձիու գաւակի մեծ հարուածներով ցանոնք ետ ետ հրել։

Այս խառնաճաղանճը, պատժական հանդէսներու մարզուած, հրահանգուած՝ կարի մեծ անհամբերութիւն մը չէր յայտներ և նշաւակասիւնը նայելով զա՛հ կ՚ըլլար, տեսակ մը խիստ պարզ կառուցում՝ տասն ոտք մը բարձր և սնամէջ խորանարդ որմածով մը կազմուած։ Անտաշ քարէ ուղղորդ աստիճան մը (այն ժամանակ պատուով échelle կոչուած) վերին տանիքին վրայ կ՚առաջնորդէր, որու վրայ կաղնեփայտէ հորիզոնական անիւ մը կը տեսնուէր։ Յանցաւորն այս անիւին վրայ ահա՛ ծունր դրած և բազուկները դէպ ՚ի կռնակը՝ կը կապէին։ Գերան մ՚այն փոքր շինուածին ներսի կողմը պահուած անուորդով մը շարժման մէջ մէջ դրուելով՝ միշտ հորիզոնական դիրքի մէջ պահուած հոլովում մը կու տար այս անիւին, և այսպէս՝ դատապարտելոյն դէմքը հրապարակին ամեն կողմերը հետզհետէ կը դարձնէր։ Ասիկա կ՚անուանուէր. յանցաւորը դարձնել։

Ինչպէս կը տեսնեն ընթերցողք, Կրէվի նշաւակագործին վա-

Ճառափողոյներու նշաւակագործուոյն աղուորութիւնները չ'ունէր բնաւ ին: Վրան ճարտարապետական բան մը, մեծագործ բան մը չէր տեսնուեր: Ո՛չ երկաթախաչեայ յարկ ունէր այն, ո՛չ ութանկիւնի զմբէթապատ, ո՛չ յարկին եզրն արջաձիրանի (a-canthe) և ծաղիկներու խոյակներով վերջացող նուրբ սիւնակներ, ո՛չ հրէշագլուխ ուրղեր, ո՛չ քանդակակազմած, ո՛չ քարին մէջ խորապէս նուրբ գրօշածոյ:

Հանդիսականը հարկ էր որ անհարթ որմաքարի այս չորս ճակատներով, որու վրայ երկու կողմէն՝ աւելի անհարթ որմ մը կամ քիւ մը բարձրացած էր, գոհ ըլլար, ինչպէս նաև անոր քովը գտնուած, մերկ և նիհար՝ քարեայ անպիտան կախաղանէն աւելի բան մը չփնտռելու պարտաւորութեան մէջ էր:

Գոթական ճարտարապետութեան սիրահարներու համար՝ կոչունքը չնչին էր և աննշան յիրաւի, թէև աս ալ կայ որ միջին դարու պատուական դատարկապորտները՝ մեծագործ բաներու ըննաւ ամենևին հետաքրքրութիւն չ'ունենալով նշաւակներու մ'աղւոր ըլլալը կամ չ'ըլլալը մտքերնէն իսկ չէին անցըներ:

Վերջապէս յանցաւորը՝ սայլի մ'ետևի կողմը կապուած՝ հասնելով երբ միահարթ բարձրաւանդակին վրայ ելաւ, և երբ պատժանիւին վրայ չուաններով և փոկերով զինքը կաշկանդուած տեսան՝ խելքէ մտքէ դուրս այպանաց ճչում մը, խնդումներով և կայթիւններով խառնուած, հրապարակը թնդացուց. պատճառ. ժողովուրդը Քուազիմոտոն ճանչցած էր. Քուազիմոտոն՝ որու բաղդի դարձուածը յիրաւի աչք զարնելու բան էր: Մի և նոյն հրապարակին վրայ՝ Եգիպտոսի դուքսին, Թիւնի թագաւորին և Գալիլէոյ կայսեր ընկերութեամբ՝ մեծարանքներ ընդունելէ և բաբ ու խենթերու իշխան հռչակուելէ վերջը՝ հիմա խայտառակաբար պատժանիւին վրայ երևիլ: Թէև բաղմութեան մէջ չկար միտք մը, և ո՛չ իսկ ինքը՝ որ հետզհետէ յաղթականն ու պատժապարտն եղած էր, որ այս կցումը, բաղդատութիւնն որոշակի ընել կարենար: Կրէնկուար և իր փիլիսոփայութիւնը կը պակսէին այս տեսարանիս:

Նոյն միջոցին՝ Միշէլ Նուարէ, Վեհափառ Տեառն արքայի երդուեալ–փողահար, բազմութեան լռութիւն հրամայելով Պ. վերին դատաւորին անօրինութեան ու պատուէրին համեմատ՝ Քուազիմոտոյի դէմ տրուած վճիռը ծանուցանելէ վերջը՝ համանշան տաւատօններ հագած՝ իր մարդիկներուն հետ՝ սայլին ետևի կողմը քաշուեցաւ:

Քուազիմոտո անսասանելի մնացած՝ յուզում մը չէր ցուցըներ. կապերու ուժգնութիւն և ամրութիւն կոչուած բանով որ և է ընդդիմութիւն անհնարին եղած էր իրեն, վասն զի եղեռնական ատենի դիւանապետութեան յատուկ եղած այս ոճը կը նշանակէր թէ փոկերը և շղթաները հաւանականաբար խեղճին մինչև մսերուն մէջ կը մտնէին: Բանտի և թիավարիկ պատիժի (chiourme) այս աւանդութիւնը՝ մինչև ցայսօր ձեռարգելք (menottes) անկորուստ և անեղծ պահած են մեր մէջ՝ որ (թիապատիժն և կառափնատը մէկ կողմ՝) բարեհամբոյր, մարդասէր և քաղաքակրթեալ ազգ մ'ենք:

Քուազիմոտո թողուց որ զինք տանին, հրեն, վերցընեն, վեր հանեն, կապեն, կապկպեն: Իր դէմքին վրայ՝ տեսնողն ուրիշ բան չէր կրնար գուշակել բայց եթէ վայրենույ մը կամ ապուշի մը զարմացում: Իր խուլ ըլլալը գիտէր ամեն մարդ, այս միջոցին նաև կոյրի տեղ կրնար անցնիլ:

Բոլորակ տախտակին վրայ ծունր դրած զինքը նստեցընելով՝ շապիկն ու բաճկոնակը մինչև մէջքը հանեցին. աս ամեն բաներս թոյլ տուաւ որ ընեն: Նոյնպէս թոյլ տուաւ որ նոր նոր փոկերու ու ճարմանդի սլաքներու տակ պնդեն, փակեն, կրկին կրկին պարաւանդեն զինքը. միայն թէ մերթ ընդ մերթ դղրդալի ձայնով մը կը փչէր նա, ինչպէս որթ մ'որու գլուխը զինքը մորթող մսավաճառի սայլի եզրէն կը կախուի ու կը տարուբերի:

« Ապո՛ւշը, ըսաւ Ժէհան Ֆրոլլօ Ջաղացքեան իր Րօպէն Բուսբէն բարեկամին. (վասն զի երկու դպրոցականք ալ յանցաւորին ետևէն եկած էին, ինչպէս որ արժան էր այսպէս ընել) կը

գլխուն, տուփի մը մէջ փակուած ընդեռ. մ՚աւելի բան չ՚հասկընար եղած բաներէն »։

Անբաւ քրքիջ մը թողուց ժողովուրդը Քուազիմոտոյի մերկ սապատը, անոր ուղտի կուրծքը, և փապարեալ ու թաւամազ ուսերը տեսնելով։ Այս ընդհանուր զուարթութեան միջոցին՝ քաղաքին նշանագրեստը (livrée) հագած կարճահասակ և առոյգ մէկը, հարթ բարձրաւանդակն ելնելով՝ յանցաւորին քով կանգնեցաւ։ Իր անունը բերնէ բերան շրջեցաւ. Պիէռրա Թօրթըրիւն էր նա, Շադլէի երդուեալ-պատժատուն (tourmenteur-juré)։

Նախ և յառաջ՝ նշաւականիւին մէկ անկիւնն աւազէ սև գոյնով ժամացոյց մը դրաւ, որու վերին մասը լի էր կարմիր աւազով մ՚որ ստորին ընդունարանը կը թափէր. յետոյ երկ-մասնեայ գոմաւոր կրկնոցը հանելով՝ փայլուն, հանգուցաւոր, հիւսուած, մետաղեայ ճիրաններ անցուցած, երկայն սպիտակ փոկերով թել թել եղած նուրբ մտրակ մ՚առաւ աջ ձեռքն՝ որու շապիկը ձախ ձեռքով անհոգութեամբ մինչև անութը կը վերցնէր։

Նոյն միջոցին Ժէհան Ֆրօլլօ՝ Րօպէն Բուսբէնի ուսերուն վըրայ ելած՝ խարտեաշ և գանգրահեր գլուխը բազմութենէն վեր բարձրացընելով՝ կը գոչէր. «Եկէք, տեսէք, պարոնայք և տիկնայք, եղբօրս Ժոզասի Պարոն սարկաւագապետին զանգակահար՝ վարպետ Քուազիմոտօն պիտի ձաղկեն հիմա. տեսակ մ՚արևելեան ճարտարապետութիւն՝ իր գմբէթաձև կռնակով և կոր-սիւնակերպ սրունքներով »։

Բազմութիւնը, մանաւանդ տղայք և դեռահաս աղջկունք՝ այս խօսքերուս վրայ կը խնդային։

Հուսկ ուրեմն պատժատու վարպետ Պիէռրա Թօրթըրիւ ոտքովը մէյ մը զարնելով՝ անիւը սկսաւ դառնալ։ Իր կապերուն մէջ շարժեցաւ Քուազիմոտօ և իր տձև երեսին վրայ յանկարծուստ նկարուած ապշութիւնը չորս կողմի քրքիջներն աւելի ևս գըրգռեց։

Յանկարծ՝ այն պահուն որ անիւն իր հոլովումին մէջ Քուա-

զիմոտօյի դերբուկ կռնակը վարպետ Պիէռրայի դարձուց՝ այս վերջինս բազուկը վեր վերցուց և նուրբ փոկերը բուռն մի օձերու նման օդին մէջ սուր ձայնով սուլելով՝ թշուառին ուսերուն վրայ սաստկութեամբ ինկան։

Քուազիմոտօ որ ալ կ՚սկսէր գործերը հասկընալ՝ ընդոստ արթընցածի պէս ինքզինքին վրայ ցատկեցաւ և իր կապերուն մէջ գալարուեցաւ, մի և նոյն ժամանակ երեսին մկանունքներուն վրայ զարմացման և ցաւի բուռն կարկամութիւն մը տեսնուելով. այլ հառաչ մը, ձայն մը չ՚հանեց անիկա։ Միայն թէ ցուլի մը նըման՝ որու կողը՝ գոռեխը կը խածնէ, գլուխը տատանելով՝ ետև, աջ, յետոյ ահեակ դարձուց զայն։

Առաջին հարուածին երկրորդ մը յաջորդեց, ետքը երրորդ մը, ետքն ուրիշ մը, ետքն ուրիշ մը, և այսպէս մինչև վերջը ո՛չ անիւը դառնալէ կը դադրէր, ո՛չ ալ հարուածներն անձրևի նման տեղալէ։ Հատ չ՚անցած՝ արիւնը ցայտեց և հարիւրաւոր առուներով՝ սկսաւ սապատողին սեաւ ուսերուն վրայէն հոսիլ, զոր նուրբ փոկերը, օդին մէջ շչող իրենց շրջանակութեան մէջ՝ կաթիլ կաթիլ բազմութեան վրայ կը սփռէին։

Նախ Քուազիմոտօ լռելեայն և առանց արտաքին մեծ ցնցումի՝ իր կապերը խզելու ջանք ըրած էր. վայրկեան մը՝ աչքը վառուած, բորբոքուած, մկանունքներն ուղղորդցած, անդամներն ամփոփուած էին, և փոկերն ու շղթաները անհնարին մեծ ձգտում մը կրած։ Ըրած ճիգը թէև հուժկու, տոկալի, յուսահատական՝ այլ վերին դատաւորութեան հին կապերը շաչած, կրճած էին միայն ու պինդ ու ամուր մնացած։ Քուազիմոտօ՝ ուժը վատնած, խոնջեցած՝ տար վրայ աւջի անսասան դիրքը ձեռք առնելով՝ դէմքին վրայ՝ դառն և խորունկ վհատութեան զգացում մ՚առաջին ապշութեան յաջորդեց, և իր միակ աչքը գոցելով, և գլուխը կուրծքին վրայ իջեցընելով՝ ինքզինքը մեռած ցուցուց։

Այն վայրկենէն՝ ալ տեղէն չ՚թնդաց նա։ Ո՛չ արիւնը, որ հոսելէ չէր դադրէր, ո՛չ հարուածները, որոնց սաստկութիւնն երթալով կ՚աւելնար, ո՛չ պատժատու պաշտօնատուրին ցասումը,

որ ինքզինքը կը գրգռէր և պատժական գործողութեամբ արբշռիլ կ'երևէր, ոչ այն տուլող շչող ստկալի փոկերն ամենափոքր շարժում մը չ'կորզեցին իրմէ ։

Վերջապէս Շադլէի վարոցաւոր մը, որ սևեր հագուած, և սեաւ ձիու մը վրայ՝ պատժական հանդիսին սկիզբէն 'ի վեր պատժանիւին քով կեցած կ'սպասէր, երեննայ նուրբ գաւազանը դէպ 'ի աւաղէ ժամացոյցն երկնցընելով՝ պատժառուն կանգառաւ. անիւը կանգ առաւ և Քուագիմոտոյի աչքը կամաց կամաց բացուեցաւ ։

Չաղկումը վերջացած ըլլալով երդուեալ-պատժառուին յառակացող երկու ծառաներ յանցաւորին արիւնաղանդ ուսերը լուացին, չգիտեմ ինչ սպեղանիով որ խկոյն բոլոր վէրքերը գոցեց՝ չփեցին, և անոր կռնակին վրայ՝ նափորտի ձևով կտրուած դեղնագոյն կտաւ մը նետեցին ։ Նոյն միջոցին Բիէրրա Թօրթըրիւ փոկերուն վրայ գանուած արիւնները շիթ առ շիթ սալարկին վրայ կը վազցընէր ։

Քուազիմոտոյի համար տակաւին ամեն բան լմնցած չէր. պէտք էր որ նշաւակութեան ժամն ևս կրէր, զոր վարպետ Ֆլօրիան Պարպէտիէն այնչափ լրջութեամբ Պ. Ռօպէր տ'Էսդուդվիլլի դատավճռոյն վրայ աւելցուցած էր, 'ի մեծագոյն պարծանս ժան տը Քիւմէնի մարդակազմական և հոգեբանական բառախաղին. Surdus absurdus (Խուլէ՝ ապլանդակէ) ։

Ուստի աւազէայ ժամացոյցը գլխիվայր դարձընելով՝ սապատողը չոր տախտակին վրայ կապուած թողուցին, որպէս զի մինչև վերջը՝ արդարութիւնը կատարուի ։

Ժողովուրդը, մանաւանդ միջին դարու միջոցներուն՝ այնպէս է ընկերութեան մէջ, ինչ որ է տղայ մը՝ գերդաստանի մէջ ։ Քանի որ նախնական տգիտութեան, բարոյական և մտաւորական կրտսերութեան (minorité) այս վիճակին մէջ կը մնայ, ինչպէս տղու մը համար՝ նոյնպէս իրեն համար ևս կրնայ ըսուիլ.

Բնաւ գութ չ'ունի այս հասակ ։

Cet âge est sans pitié.

Արդէն յայտնած ենք թէ Քուազիմոտօ առ հասարակ ատելի էր ու խորշելի, և այս՝ ստոյգ է՝ մէկ շատ զօրաւոր պատճառներով ։ Նօդր-Տամի ժանտ սապատողէն գանգատելու պատճառ չ'ունեցող կամ ունենալ չկարծող՝ հազիւ թէ հանդիսատես մը կրնար գտնուիլ այս բազմութեան մէջ ։ Ուստի և զանիկա նշաւակարանին վրայ տեսնելով՝ ուրախութիւնն ընդհանուր եղած էր. և կրած սաստիկ պատիժը՝ և հետևած ողորմ վիճակը՝ փոխանակ խաժամուժին սիրտը կակղելու՝ անոր ատելութիւնը զուարթութեան սլաքով մ'ալ զինած ու աւելի անողորմ զործած էին ։

Ուստի անգամ մ'որ հասարակաց վրէժխնդրութիւնը (vindicte publique) գոհ եղաւ, կարգը հազար ու մէկ մասնաւոր վրէժխնդրութեանց եկաւ, և հոս՝ ինչպէս մեծ-սրահին մէջ՝ կանայք աւելի սաստկութեամբ՝ իրենց ցասումն ու դժկամակութիւնը կը յայտնէին ։ Ամենքն անոր դէմ ոխ կը պահէին, ոմանք՝ նենգամտութեանը համար, ոմանք՝ տգեղութեանը ։ Մանաւանդ վերջինները կրակ ու բոց դարձած էին ։

« Ո՛հ, Նեռի՛ դիմակ, կ'ըսէր մէկը ։

— Աւելի կոթի հեծելաւոր*, կը գոչէր ուրիշ մը ։

— Ի՛նչ ողորմ գեղեցիկ ծամածռում, կ'ռռնար երրորդ մը. եթէ այսօր երէկուան օրն ըլլար՝ այս ծամածռումով անպատճառ խենթերու բաբ պիտի հռչակուէր ։

— Քա՛ջ է, կը կրկնէր պառաւ մը. ասիկայ ալ նշաւակարանի ծամածռումն է. հապա կախաղանի ծամածռումն երբ պիտի տեսնենք ։

— Ե՛րբ գետնէն հարիւր ոտք վար՝ խոշոր զանգակդ գլուխդ պիտի անցընես, անիծեա՛լ զանգակահար ։

— Եւ մտածել թէ՝ այս սատանա՛ն է «Հրեշտակ Տեառն»ը զարնողը ։

— Ո՛հ, զարշելի՛ խլականջ, միականի՛, սապատո՛ղ, հրէշ ։

— Ամեն գեղերէ և սրբագեղերէ աւելի՛ յղութիւն մը վիժել տալու յարմա՛ր դէմք » ։

* Կախարդական մեսաակար ժողովներ յաճախող ։ Ծ. Թ.

Եւ երկու գպրոցականք, Ժէհան Ջաղացքեան և Րօպէն Պուսբէն, իրենց բոլոր ոյժովը ժողովրդային հին նաքարաթը կ'երգէին.

Զուա՜ն՝ ժանտին,
Խո՜ւրձ՝ կախարդին։

Հազար ուրիշ նախատինքներ կ'անձրևէին, և այպանալի գոչիւններ, և՛ անէծքներ, և՛ խնդումներ, և՛ հոսկից հոնկից ալ քարեր։

Քուազիմոտօ թէև խուլ՝ բայց լաւ կը տեսնէր հասարակաց մոլեգին զայրոյթն որ ինչպէս խօսից մէջ՝ նոյնպէս դէմքերու վրայ ալ սաստկօրէն նկարուած էր։ Ասկէ զատ՝ նետուած քարերը՝ խնդումի ձայները կը բացատրէին։

Ի սկզբան պինդ և ամուր մնաց նա. այլ սակայն քիչ քիչ իր համբերութիւնն որ պատժատուին խարազանին տակ անսասան կը մնար՝ թուլնալով միջատի բոլոր այս խայթուածներուն տեղի տուաւ։ Գիտենք որ Բիգատօրին (ձիաւոր) յարձակումները հոգ չընող աստուրեան եզը՝ աւելի՝ շուներու և դրօշիկներու (vanderilles) դէմ կը զայրանայ, կը փրփրի։

Նախ և յառաջ բազմութեան վրայ սպառնալեաց նայուած մը յածեց յամրօրէն. սակայն պրկուած, կաշկանդուած վիճակին մէջ՝ իր նայուածովը՝ իր վէրքը խածնող բոլոր այս ճանճերը փախցընելու կարող չ'եղաւ։ Այն ժամանակ կապերուն մէջ շարժելով տատանելով մոլեգին ցնցումներովը նշաւակարդուոյն հնամի անիւն իր հարթ տախտակներուն վրայ շաչեցուց, որով և այպանաց գոչիւններն և հեգնութիւնները չորս կողմէ առաւել սաստկացան։

Այն ժամանակ ողորմելին՝ շղթայուած շլկերէի մը նման որ իր անուրը չկրնար խորտակել, առջի հանդարտութեանը դարձաւ. միայն թէ ատեն ատեն կատղութեան հառաչ մ'իր կուրծքին բոլոր խոռութիւնները կ'ուռեցընէր։ Սակայն իր դէմքին վրայ ոչ պատկառանք կը տեսնուէր և ոչ ամօթ. ըստ որում

ընկերային վիճակէ այնչափ հեռի՝ և բնական վիճակի այնչափ մերձ կը գտնուէր՝ որ ամօթ ըսուած բանը չէր կրնար գիտնալ։ Ասկէ զատ՝ այն աստիճան տձևութեան մը մէջ, խայտառակութիւնը կրնա՞յ զգալի ըլլալ։ Այլ զայրոյթը, ատելութիւնը, յուսահատութիւնը կամաց կամաց այս պժգալի դէմքին վրայ՝ ևս քան զևս մթագին ամպ մը կ'իջեցընէին, կիկլոպին աչքին մէջ բիւր փայլակներով շողացող ելեքտրութեամբ մ'ևս քան զևս ծանրաբեռնած։

Սակայն նոյն միջոցին՝ բազմութեան մէջէն՝ վրան քահանայ մը կրող ջորիի մ'անցնելուն վրայ՝ այս ամպը վայրկեան մը նուազեցաւ, փարատեցաւ։ Հեռուէն՝ այս ջորիին և այս քահանային մօտենալը տեսնելով՝ հէք պատժապարտին դէմքն իսկոյն պայծառացաւ, և զայն կարկամող կատղութեան՝ անսովոր ժպիտ մը յաջորդեց, լի անբացատրելի հեզութեամբ, երանութեամբ և գորովով։ Քանի քահանայն կը մերձենար՝ այս ժպիտն աւելի յայտնի, աւելի որոշ, աւելի զուարթ կ'ըլլար։ Ողորմելին որպէս թէ փրկիչի մը գալուստը կը բարևէր նոյն միջոցին։ Սակայն, երբ ջորին նշաւակարդուոյն մօտ գալով՝ վրան գտնուող հեծեալն որ, ինչպէս ըսինք, քահանայ մ'էր, զպատժաւորը ճանչցաւ, իսկոյն աչքերը վար խոնարհեցընելով՝ երիվարը խըթեց ուժգնակի և ճամբէն ետ դարձաւ, որպէս թէ շտապելով նուաստացուցիչ ձայնատուութիւններէ փախչիլ ազատիլ, առանց այնպիսի ողորմելի վիճակի մը մէջ գտնուող հէքէ մը ճանչցուիլն ու ողջունուիլն իրեն փոյթ ընելու։

Այս քահանան տէր Քլօտ Ֆրօլլօ սարկաւագապետն էր։

Ամպը վերստին և աւելի մթագին՝ Քուազիմոտոյի դէմքին վրայ իջաւ։ Պահ մ'ևս ժպիտը խառնուեցաւ հոն, այլ դառնալի, վհատ և անհնարին տխուր ժպիտ մը։

Այսպէս ահա գրեթէ մէկ ու կէս ժամէ 'ի վեր՝ մորմոքած, թշնամանուած, անողորմաբար ծաղրուած և գրեթէ քարկոծուած՝ հոն կը գտնուէր հէք պատժապարտը։

Յանկարծ յուսահատութեան աճմամբ մ'իր շղթաներուն մէջ

վերստին տարուբերելով, որմէ իր տակը գտնուած բոլոր լանտակերտը սասանեցաւ և դողաց, և մինչ ցայն կէտ պահած կամակոր լռութիւնը խզելով՝ «Ջո՛ւր» գոչեց այնպիսի խռպոտ և մոլեգին ձայնով մ'որ աւելի հաչիւնի մը կը նմանէր քան թէ մարդկային ճչիւնի մը, և որ այպանաց բոլոր գոչիւնները սպառսպուռ խափանեց։

Այս մեծ նեղութեան գոչիւնը, կարեկցութիւնները չշարժելէ զատ՝ աւելի զուարճութեան պատճառ մ'եղաւ Բարիզի բարեմիտ ժողովրդեան համար, որ, կրնանք ըսել թէ՝ միահամուռ և իբր բազմութիւն առնելով՝ այն ժամանակներուն մէջ անգթութեան և ափշութեան մասին՝ պակաս չէր մնար գողցես այն չուառականներու ահարկու ցեղէն, ուր առաջին հատորին մէջ ընթերցողն առաջնորդեցինք, և որ պարզապէս ժողովրդեան ամենաստորին խաւն (couche) էր։ Դժբաղդ պատժաւորին բոլորտիքը ձայն մը, ձիւն մը չ'ելաւ, բայց եթէ զան տանջող ծարաւը ծաղրի նիւթ ընելու համար։ Թէև ստոյգ է թէ իր չէկ և արիւն քրտինք մտած դէմքով, իր մոլոր աչքով, բարկութենէ ու ցաւէ՝ փրփրալի բերանով, և կէս մը դուրս հանած լեզուով աւելի զազիր և ծաղրական քան թէ արգահատելի երևոյթ մը ունէր նա։ Այս ալ կայ որ եթէ խուժանին մէջ՝ այս տառապեալ ողորմելի էակին բաժակ մը ջուր մատակարարելու խիղճ զգացող ողորմասիրտ քաղաքացի մը կամ քաղաքացուհի մը գտնուէր իսկ՝ այն բարի Սամարացին ետ վանելու համար՝ այն ժամանակները նշաւակասիւնին անպատիւ աստիճաններուն շուրջը տիրող ամօթի ու խայտառակութեան նախապաշարումը բաւական էր։

Մէկ քանի վայրկենէն, Քուազիմոտօ բազմութեան վրայ յուսահատական հայեացք մը շրջեցընելով, աւելի աղէկոչ ձայնով մը «Ջո՛ւր» կրկնեց։

Եւ ամենքը կը խնդային։

«Ա՛ռ, խմէ՛ ասիկա, կը գոչէր Րօպէն Բուսբէն ուղխին մէջ թաթխուած սպունգ մ'երեսին նետելով. Ա՛ռ, անպիտան խուլ, վասն զի գիտես թէ պարտապանդ եմ»։

Կին մը գլուխին քար մը կը նետէր։

«Ասիկա՝ զանգակներուդ դժոխային ձայնովը գիշերները զմեզ արթնցընելը՝ պիտի սորվեցընէ քեզի։

— Է՛հ, ինչպէս ես, զաւակ, կը գոչէր անդամալոյծ մը՝ իր ցուպովը անոր հասնելու ջանք ընելով, Նօդր-Տամի աշտարակներէն տակաւին մեր վրայ բժժանքներ պիտի նետես։

— Ահա՛ սկուտեղ մը ջուր խմելու, կը կրկնէր մարդ մ'անոր կուրծքին խորտակուած թակոյկ մ'ուղղելով։ Դո՛ւն միայն առջևէն անցնելովդ՝ պատճառ եղար որ կինս երկգլխի զաւակ մը աշխարհ բերէ։

— Եւ կատո՛ւս ալ վեց-թաթեան ձագ մը, կը ճչէր պառաւ մը թրծուն աղիւս մը նետելով անոր։

— Ջո՛ւր» երրորդ անգամ և ոգեսպառ՝ կրկնեց Քուազիմոտօ։

Այս պահուս տեսաւ որ խաժամուժն անհեթեթ հագուստներ հագած աղջկան մը տեղ կը բանայ որ ձեռքը պաքեան թըմբուկ մը կը կրէր, և որ ոսկի եղջիւրներով սպիտակ փոքր այծ մ'ունէր հետը։

Քուազիմոտօյի աչքը կայծակներ արձակեց առջի իրիկուն յափշտակել ուզած Եգիպտուհին տեսնելով. յանդգնութիւն՝ որու պատճառաւ այս միջոցիս պատժուիլը շփոթ կերպով մը կ'զգար. թէև բանն ասանկ չէր, վասն զի պատժուելուն միակ պատճառը՝ իր խուլ ըլլալն և դիմացը խուլ դատաւոր մ'ունենալն էր։ Ուստի տարակոյս չ'ունեցաւ որ նորատի աղջիկն ևս՝ իր վրէժն առնելու, և ուրիշներու նման իր հարուածը տալու կու գար իրեն։

Իրօք ալ պատուհանին արագ արագ քալելով աստիճաններէն վեր կ'ելնէր։ Քուազիմոտօ բարկութենէ և զայրոյթէ խեղդուած՝ եթէ կարող ըլլար՝ նշաւակագործին հիմն 'ի վեր պիտի կործանէր՝ և իր աչքին փայլակն ալ՝ պիտի շանթահարէր գնչուհին հարթ տախտականին վրայ ժամանելէ յառաջ՝ զայն մոխիր դարձընելով։

Մանկամարդը՝ մինչ պատժաւորն իրմէ փախչելու համար ըն-

գունայն տեղը կը գլորէր, կը ծամծմէր, անմռունչ մօտեցաւ անոր եւ գօտիէն սնամէջ դդում (gourde) մը քակելով՝ զայն թշուառին պապակեալ շուրթերուն մօտեցուց։

Այն ժամանակ, այն չոր եւ բոցակէզ աչքին մէջ՝ խոշոր արցունք մը տեսնուեցաւ որ Քուազիմոյի տձեւ եւ երկար ժամանակ յուսահատութեամբ կարկամուած դէմքէն վար սահեցաւ յամրօրէն։ Թերեւս առաջին արտօսրի շիթն էր՝ որ այն տարաբաղդ էակն իր կենաց մէջ կը հոսեցնէր։ Եւ որովհետեւ խմելը կը մոռնար միշտ՝ Եգիպտուհին անհամբերութեամբ իր շրթունքի փոքրիկ ծռումն ըրաւ, եւ ժպտելով մը դդումին փողիկը Քուազիմոյի ժայռաւոր բերնին կռթնցուց։

Այս վերջինն երկա՜ր երկա՜ր ումպերով խմելէ վերջը, վասն զի իր ծարաւը սոսկալի էր, իրեն օգնութեան եկող այն գեղեցիկ ձեռքն անտարակոյս պագնելու համար իր սեւ շրթունքն երկնցուց։ Այլ անտեխական աղջիկն որ առջի գիշերուան բռուն յարձակումը յիշելով՝ թերեւս վախէ ու կասկածէ ազատ չէր, վայրագ կենդանույ մը խայթէն վախցող մանկան մը նման՝ ահաբեկ շարժումով մ'իր ձեռքը քաշեց։

Այն ատեն հէք խուլը մեղադրանաց եւ անպատում տրտմութեան հայուած մ'աղջկան վրայ սեւեռեց։

Ամէն ուրիշ տեղ՝ անշուշտ սրտաշարժ տեսարան մ'էր՝ տուղյգ, ջինջ, չքնաղ եւ մի եւ նոյն ժամանակ այնչափ տկար այս գեղեցիկ աղջկան՝ այսպէս յօժարակամ այնչափ թշուառութեան, տըձեւութեան եւ ժանտութեան օգնելու վազելը. այլ նշաւակարանին վրայ՝ վսեմ էր այս տեսարանս, այնչափ վսեմ՝ որ այն անզգայ ժողովուրդն անգամ յափշտակուած՝ սկսաւ ծափ զարնել «կեցցէ՛, կեցցէ՛» գոչելով։

Այս պահուս մէջ ահա մենուհին իր ծակին լուսանցոյցէն՝ զԵգիպտուհին նշաւակագործոյն վրայ տեսնելով իր չարագոյժ մաղթանքն ուղղեց. «Անիծեա՛լ ըլլաս, դուստր Եգիպտոսի, անիծեա՛լ, անիծեա՛լ»։

Ե

ՎԵՐՋ ՊԱՔՍԱՄԱՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Եգիպտուհին սժգոյն եւ դողդոջուն՝ նշաւակագործէն վար իջնելէն վերջն ալ՝ մենուհւոյն ձայնը զայն հալածելէ չդադրեցաւ։

«Իջի՛ր, իջի՛ր, գողուհի՛դ Եգիպտոսի. օր մը դու ալ պիտի ելնես հոն»։

— Քրձուհին իր յնորալի վայրկեաններուն մէջ է», ըսաւ ժողովուրդը մրմռալով. այլ այնչափ միայն. վասն զի այս տեսակ կիներ այն ժամանակներն երկիւղալի էին ամենուն առջեւ, ուստի եւ նուիրական։ Գիշեր ցորեկ աղօթողի մը դպչիլ, վնաս հասցընել՝ ո՛չ ոք մտքէն կ'անցընէր։

Քուազիմոտն ետ տանելու ժամն եկած ըլլալով՝ զինքը քակեցին եւ ժողովուրդը ցրուեցաւ։

Մեծ-կամրջին մօտ, Մահիէդ՝ որ իր երկու ընկերներուն հետ տուն կը դառնար, յանկարծ կանգ առնելով՝

«Եօստա՛շ, ըսաւ, ի՞նչ ըրիր պաքսամատը։

— Մա՛յր, ըսաւ տղեկը, այն պահուն՝ որ այն ծակին մէջ գտնուող տիկնոջ հետ կը խօսէիք, մեծ շուն մ'եկաւ պաքսամատէն կտոր մը խածաւ, այն ժամանակ ես ալ կերայ զայն։

— Ի՞նչ կ'ըսես, Եօստա՛շ, կրկնեց կինը, ամենն ալ կերա՞ր։

— Մա՛յր, յանցանքը շանն է։ Ըսի իրեն եւ ինձ մտիկ չըրաւ։ Այն ժամանակ ես ալ խածի եւ պաքսամատին գործը լմնցաւ։

— Սոսկալի տղայ մ'է այս, ըսաւ մայրը մի եւ նոյն ժամանակ ժպտելով ու սաստելով։ Ի՞նչ կ'ըսես, Ուտա՛րտ. մեր Շարլըրանժի պարտէն կեռասենին ինքը մինակ կ'ուտէ կը լմնցընէ. ուստի եւ իր հայրն անոր համար կ'ըսէ թէ օր մը մեծ զօրապետ մը պիտի ըլլայ…։ Մէյ մ'ալ այդպիսի բան չընես, Եօստա՛շ, եթէ ոչ կը պատժեմ քեզ…։ Յա՛ղթ առիւծդ»։

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ա

ԳԱՂՏՆԻՔՆ ԱՅԾԻ ՄԸ ՎՍՏԱՀԵԼՈՒՆ ՎՏԱՆԳԸ

Շատ շաբաթներ սահած անցած և մարտ ամիսը սկսած էր։ Արեւը, զոր Տիւպարդաս, դարձուածաբանութեան (périphrase) այն դասական հնամի հայրը, Ճրագներու մեծ-դուքսը անուանած չէր տակաւին, զուարթ ու պայծառ կը փայլէր։ Գարնան այն ամենաքաղցր ու գեղեցիկ օրերէն մէկն էր՝ զորս բոլոր Բարիզ, հրապարակներու և զբօսավայրերու (promenades) մէջ սփռուած, իբր կիրակի կը տօնախմբէ։ Այս ջինջ, ջերմ և արեւափայլ օրերուն մէջ՝ ժամ մը կայ մասնաւորապէս ուր Նօդր-Տամի մեծ-Ճակատին վրայ երթալ հիանալ արժան է. այս այն ժամն է՝ երբ արեւն արդէն դէպ 'ի արեւմուտք հակած՝ այն մեծ եկեղեցին երես առ երես կը հայի։ Իր ճառագայթները՝ ևս քան զևս հորիզոնական՝ հրապարակին սալարկին վրայէն ծանր ծանր քաշուելով այն ուղղորդ ճակատէն վեր կը բարձրանան, մի և նոյն ժամանակ անոր բիւրաւոր բարձրաքանդակներուն վրայ զարնելով, մինչեւ կենդրոնական բոլորշի մեծ պատուհանը՝ հնոցի ցոլումներով բոցբոցուած կիկղոպի աչքի մը նման՝ կը շողայ և կը փողփողէ։

Այս ժամուս մէջ ահա, վերջալոյսով կարմրած այն բարձրակառոյց եկեղեցին դիմաց, Ճիշդ հրապարակին և Անդաստակի դուռին անկեան վրայ գտնուող գոթական Ճոխ տան մը վրայի կողմը շինուած քարեայ պատշգամի մը մէջ՝ քանի մը դեռահաս գեղեցիկ օրիորդներ՝ ամեն տեսակ յանկուցիչ շնորհքներով և զուարթ կայտառութեամբ՝ իրարու հետ կը խօսէին ու կը խընդային։ Իրենց շղաշասեղին երկարութենէն՝ որ մարգարիտներով

զարդարուած՝ իրենց սրածայր գլխանոցին վրայէն մինչեւ գարշապարնին կ'իջնէր, իրենց ասղնակերտ ներքնակին նրբութենէն՝ որ ուսերնին ծածկած ժամանակը՝ այն ժամանակուան գրաւիչ ձևին համեմատ՝ իրենց կուսական ծոցին սկսած տեղը բաց կը թողուր, իրենց ներքին կաձկէնին ճոխութենէ՝ որք՝ (զարմանաքանչ ճարտարանք) վրայի հագուստէն աւելի պաճուճազարդ էին, այս ամեն բաներուն վրայ գտնուած շղարշէն, մետաքսէն, թաւիշէն, նա մանաւանդ իրենց սպիտակափայլ ձեռքերէն, որք անոնց անգործ և ծոյլ ըլլալը կը յայտնէին, ազնուական և հարուստ ժառանգուհիներ ըլլալնին դիւրին էր մակաբերել։ Եւ յիրաւի այս օրիորդներն էին՝ Ֆլէօր-տը-Լիս բամբիշ (damoiselle) և իր ընկերուհիներն՝ Տիան տը Քրիստէօյլ, Ամըլօտ տը Մօնմիշէլ, Քօլօմպ տը Կայլըֆօնդէն և պզտի տը Շանշէվրիէն, ամենքն ալ տոհմիկ օրիորդներ, ամենքն ալ այս միջոցիս Կոնտըլօրիէ այրի ազնուուհւոյն (dame) տունը հաւաքուած, 'ի պատճառս Պօժէօյի իշխանին և իշխանուհւոյն՝ որք ապրիլ ամսոյն մէջ Բարիզ գալով՝ 'ի պատիւ Մարկըրիդ դշխոյին շքադիր կիներ (accompagneresses d'honneur) պիտի ընտրէին։ Արդ՝ չորս կողմէն՝ մինչեւ երեսուն մղոն հեռուն գտնուող առ հասարակ բոլոր ազնուականներն իրենց դստերացը համար այս մեծ պատիւը ձեռք բերելու հետամուտ ըլլալով, մէջերնէն շատերը զանոնք արդէն Բարիզ բերած կամ ղրկած էին։ Վերը յիշուած այս ծաղկահաս ազնուուհիներն իրենց ծնողաց կողմէ Ալօիզ տը Կոնտըլօրիէ ազնիւ տիկնոջ զգօն և պատկառելի պահպանութեան յանձնուած էին, որ արքայի նետաձիգներու (arbalétriers) վաղեմի վերակացուի մ'այրի կինն էր, իր միածին աղջկանը հետ՝ Բարիզի մէջ, Նօդր-Տամի Անդաստակի հրապարակին իր տունը քաշուած։

Այս աղջիկներուն նստած պատշգամը՝ Ֆլանտրի շիկագոյն մորթով մը ճոխապէս զարդարուած սենեակի մը վրայ կը բացուէր։ Առաստաղը զուգահեռաբար գծող ձողերը՝ նկարեալ և ոսկեզօծ բիւրաւոր անհեթեթ քանդակներով տեսնողին աչքը կը

ղուարճացընէին ։ Դրօշուած մեծ սնտուկներու վրայ, մեծապայծառ գրակոնտիկոններ հոս հոն կը փալփլէին. փառաւոր մըրգեղէններու սեղան մը, որու վրայի կողմը՝ վարագի յախճապակեայ գլուխ մը կը տեսնուէր, իր կրկին ատամնաներովը կը յայտնէր թէ տան տիրուհին դրօշաւոր (banneret) ասպետի մը կին էր ։ Ներսի կողմը, վերէն վար զինանշանեալ բարձր կռակարանի մը քովը, կարմիր թաւիշէ ծոփ թիկնաթոռի մը վրայ, Կոնտլօրիէ բամբիշը բազմած էր, որու յիսուն և հինգ տարուան հասակը ինչպէս իր հագուստներուն՝ նոյնպէս դէմքին վրայ ևս գրուած էր ։ Անոր քովը թէև փառաւոր՝ բայց քիչ մը սնափառ ու պարծուկ կերպարանքով երիտասարդ մը կանգուն կեցած էր. այն ազուար երիտասարդներէն՝ զորս ամեն կանայք միաբերան կը հաւնին, թէև դիմագէտք (physionomistes) և առ հասարակ ծանրագլուխ մարդիկ՝ անոնց համար ուսերնին թօթուեն քամահանօք ։ Այս երիտասարդ պարոնն արքայի յատուկ աղեղնաւորներու հրամանատարի սերճ հագուստը կը կրէր, որ պատմութեանս առաջին գլուխին մէջ տեսնուած Արամազդի հագուստին հետ մեծ նմանութիւն ունենալուն՝ երկրորդ նկարագրութեամբ մը ընթերցողը տաղտկացընել չենք ուզեր ։

Բամբիշներուն մէկ մասը սենեկին մէջ նստած էր, մէկ մասը՝ պատշգամին վրայ, ոմանք՝ ոսկի շրջապատով Ուտրէքթի թաւշեայ բարձերու վրայ, այլք՝ ծաղիկներու և պատկերներու քանդակներով զարդարուած կաղնեփայտէ աթոռակներու վրայ ։ Անոնցմէ ամեն մէկն ասղնակերտ մեծ պաստառի մը (tapisserie) մէկ մասը ծունկերուն վրայ բռնած էր, որու ընկերութեամբ կ'աշխատէին, մինչդեռ անոր ծայրը՝ տախտակամածը ծածկող փսիաթին վրայ երկար մը տարածուած էր ։

Իրարու հետ այն հծծող ձայնով և խեղդուած կէս-քրքիջներով կը խօսէին բամբիշք՝ որ ծաղկահաս օրիորդներու դաւաժողովի (conciliabule) մ'այնչափ հասարակ է, երբ մէջերնին երիտասարդ մը կը գտնուի ։ Երիտասարդը՝ որուն ներկայութիւնը՝ այս բոլոր իգական ինքնասիրութիւնները գրգռելու, երևան

հանելու բաւական կ'ըլլար, ինքն իր կողմէ ըստ երևոյթի մեծ հոգ մը կամ ուշադրութիւն մը չէր ցուցըներ անոնց, և մինչդեռ գեղանի աղջիկներն անոր ուշը գրաւելու մասին իրար գլել կ'աշխատէին՝ անիկա իր այծեամի մորթի թաթպանովը սուսերակամարին ճարմանդի սլաքը փայլեցընելու եռանդ ինկած էր անփոյթ և անտարբեր կերպով մը ։

Ատեն ատեն ծերունի ազնուահին մեղմ ձայնով իրեն խօսքեր կ'ուղղէր, որու անշնորհ և նեղուած տեսակ մը քաղաքավարութեամբ՝ և կրցածին չափ լաւ կերպով՝ պատասխանել կը ջանէր անիկա ։ Ալօիզ բամբիշին ժպիտներէն, համամտութեան փոքր նշաններէն, հրամանատարին հետ յուշիկ խօսեցած ժամանակ՝ իր աղջկանը Ֆլէօր-տը-Լիսի վրայ ձգած աչաց թարթումներէն, դիւրին էր տեսնել թէ մէջ տեղը լմնցած նշանտուք մը, և երիտասարդին ու Ֆլէօր-տը-Լիսին մէջ տեղ անտարակոյս քիչ ատենէն գլուխ հանուելիք ամուսնութիւն մը կար ։ Պաշտօնաւորին ցուրտ և բռնազբօսիկ դիրքէն նոյնպէս դիւրին էր տեսնել հասկընալ թէ՝ գէթ իր անձին նկատմամբ խօսելով այս խնդրին մէջ սէրն ո՛ր և է մաս մը չունէր ։ Բոլոր իր կերպարանքը նեղութեան ու տաղտուկի զգացում մը կը յայտնէր, զոր պահակային ստորակարգ սպայ մ'իր սա խօսքով խիստ լաւ կը բացատրէ. «Ի՛նչ անբերելի բռնաւաստակ (corvée)» ։

Ազնիւ տիկինն իբր բարեմիտ մայր մը՝ իր աղջկան հրապոյրներով զգլխած, կուրցած՝ պաշտօնաւորին պաղ վարմունքը չէր նշմարեր բնաւին, և կ'աշխատէր մեղմով դիտել տալ անոր թէ ինչ աստիճան շնորհքով և վայելչութեամբ՝ Ֆլէօր-տը-Լիս իր ասեղը կը գործածէր կամ կծիկը կը փաթթէր ։

«Տե՛ս, դիտէ, փոքր զարմիկ (cousin), կ'ըսէր անոր ականջին խօսելու համար կամացուկ մը թեզանիքէն քաշելով. դիտէ զինքը հիմա որ գլուխը կախած է ։

— Յիրաւի այդպէս, կը պատասխանէր երիտասարդն և վերստին՝ իր սառն ու թարթափուն (distrait) լռութեանը մէջ կը թաղուէր ։

Պահ մը վերջը՝ միւսանգամ անոր հակել պէտք կ՚ըլլար, և Ալօիզ բամբիշը կ՚ըսէր անոր.

« Նշանածիդ նման սիրուն և գրաւիչ դէմք մը տեսած ես երբէք. անորմէ աւելի սպիտակ, աւելի դեղձան կրնայ մի ըլլալ. ձեռքերը սքանչելի և անհամեմատ չե՞ն միթէ, և ինչ կ՚ըսես, իր վիզը՝ կարապի մը վզին բոլոր ձևերը սխրալի կերպով մ՚առած չէ՞։ Մերթ ընդ մերթ ո՜րչափ կը նախանձիմ վրան, և ո՜րչափ երջանիկ ես այր ըլլալով, չարաճճի սատանա՛կդ։ Ֆլէօր-տը-Լիս պաշտելու չափ չքնաղ է, և դուն խելքդ կը թըռցընես անոր համար, այնպէս չէ՞։

— Անտարակոյս, կը պատասխանէր երիտասարդը՝ մի և նոյն ժամանակ ուրիշ բանի վրայ մտածելով։

— Գնա՛ հետը քիչ մը խօսէ ուրեմն, ըսաւ յանկարծ Ալօիզ բամբիշը զանիկա ուժէն հրելով. բան մը զրուցէ իրեն. կը տեսնեմ թէ վեհերոտ եղեր ես հիմա »։

Կրնանք հաստատել մեր ընթերցողներուն թէ վեհերոտութիւնը հրամանատարին ո՛չ թերութիւնն էր և ո՛չ առաքինութիւնը։ Սակայն ջանաց նա իրմէ ուզուածն ընելու։

« Գեղեցիկ զարմուհիս (cousine), ըսաւ Ֆլէօր-տը-Լիսի մերձենալով, այդ ձեր շինած պաստառին նիւթն ինչ է։

— Գեղեցիկ զարմիկ, պատասխանեց Ֆլէօր-տը-Լիս դժկամակ շեշտով մը, արդէն քեզի երեք անգամ ըսի որ Նեպտունի (Պիսիդոն) քարայրն է »։

Յայտնի կը տեսնուէր թէ Ֆլէօր-տը-Լիս՝ հրամանատարին ցուրտ ու թարթափուն կերպերն իր մօրմէն շատ աւելի աղէկ կը հասկընար։ Հրամանատարը խօսակցութիւն մ՚ընելու պէտքը զգաց։

« Եւ այս նեսլտոնագործն որո՞ւ սահմանուած է, հարցուց։

— Սէնդ-Անդուան տէ Շանի աբբայարանին համար կը շինենք, ըսաւ Ֆլէօր-տը-Լիս, առանց աչքերը վեր ընելու։

Հրամանատարը պաստառին մէկ կողմը ձեռքն առնելով

« Աղէ, գեղեցիկ զարմուհիս, ո՞վ է այն խոշոր ոստիկանութեան զինուորն որ՝ այտերն ուռած՝ փողի մը մէջ կը փչէ։

— Տրիտոնն* է », պատասխանեց օրիորդը։

Ֆլէօր-տը-Լիսի հակիրճ խօսքերուն մէջ՝ միշտ փոքր ինչ դէգ ու դժկամակ շեշտ մը գտնուելով՝ երիտասարդը հասկըցաւ թէ սնոտիաբանութիւն մը, փաղաքշաբանութիւն մը (galanterie), վերջապէս բան մը զրուցել՝ անհրաժեշտ էր։ Ուստի՝ դէպ 'ի օրիորդը ծռելով՝ իր երևակայութեան մէջ աւելի՛ սիրալիր և աւելի՛ մտերիմ բան մը չկրցաւ գտնել բայց եթէ զա՝ « Ինչո՞ւ համար մայրդ Շարլ Է․ի ժամանակի մեր հանիներուն նման՝ զինանշանեալ (armorié) հագուստ մը կը կրէ միշտ։ Չե՞ս խօսիր իրեն, գեղեցիկ զարմուհիս, որ հիմակուան սեթևեթն ուրիշ կերպ է, և թէ իր այսպէս զինանշաններ կրող պատմուճանը՝ կրակարանի ցցուամասի մը (manteau de cheminée) կը նմանի, որ շարժման մէջ է։ Կը հաւատամ քեզ որ ո՛չ այլ ևս հիմա իրենց դրօշանշանին վրայ կը նստին »։

Ֆլէօր-տը-Լիս մեղադրանօք իր գեղեցիկ աչքերը վեր վերցընելով « Ինձ բոլոր հաւաստածդ այդ է » ըսաւ մեղմաձայն։

Միւս կողմէն՝ Ալօիզ բարեմիտ բամբիշը, անոնց ծռելով իրարու հետ գաղտնի խօսելնուն վրայ զմայլած, ուրախացած՝ աղօթագրքին ճարմանդներուն (fermoirs) հետ խաղալով կ՚ըսէր.

« Ի՜նչ սիրոյ սրտառուչ պատկեր »։

Հրամանատարը, ևս քան զևս նեղն ինկած՝ նորէն պաստառին խօսքը բանալով « Յիրաւի, չքնաղ գործ մ՚է այդ », գոչեց։

Այս խօսքիս վրայ՝ Քոլօմպ տը Կայլըֆօնդէն, սպիտակամորթ ուրիշ գեղեցիկ դեղձան մը, խօսքը Ֆլէօր-տը-Լիսի ուղղելով՝ այլ այն յուսով թէ գեղեցիկ հրամանատարը պիտի պատասխանէր իրեն. « Սիրելի՛դ իմ Կոնտըլօրիէ, Ռօշկիյօնի ապարանքին աղնակերտ պաստառները տեսած ես միթէ։

* Որդի Պիսիդոնի և Ամփիդրիդի։ Իր հօրը շքադիրներուն մէջ կը գտնուէր և փողաձև կոնքղի մը մէջ փչելով անոր ներկայութիւնը կը յայտնէր։ Ծ. Թ.

— Ըսածդ այն ապարանքը չէ՞, որու պարտէզը Լուվրի կառավաճառուհւոյն կը վերաբերի, հարցուց ծիծաղելով Տիան մը Քրիստէօյլ, որ աղուոր ակռաներ ունենալով՝ ամեն ատեն ծիծաղիլ կ՚ուզէր։

— Եւ ուր Բարիզի հին պարսպին հին խոշոր աշտարակը կը գտնուի, աւելցուց Ամլօտ մը Մօնմիշէլ, առոյգ ու խոպոպաւոր սիրուն թխուհի (brune) մ՚որ պատճառն ինքն ալ չգիտնալով՝ սովորութիւն ունէր միշտ հառաչելու, ինչպէս միւսը՝ միշտ խնդալու։

— Սիրելի Քօլօմպս, կրկնեց Ալօիզ բամբիշը, այն ապարանքը չէ՞ այն՝ որ Շարլ Զ․ի ժամանակ Պ․ մը Պաքվիլի կը վերաբերէր։ Հոն ի՞նչ չքեղ պաստառներ կան յիրաւի։

— Շա՛րլ Զ․ Շա՛րլ Զ․ քրթմնջեց երիտասարդն իր պեխերն ոլորելով․ այս մեր բարեխիղճ բամբիշը հին օրերու բաներն որչափ լաւ կը յիշէ»։

Տիկին Կօնտլօրիէ կը շարունակէր․ «Իրաւցընէ չքեղ պաստառներ, այնչափ գերազանց կերպով չքեղ՝ որ իրենց տեսակին մէջ աննման համարուած են»։

Այս միջոցին, Պէրանժէր մը Շանշէվրիէ, եօթ տարեկան նրբակազմ (svelte) աղջիկ մ՚որ պատշգամին առուոյտաձեւ զարդերէն հրապարակը կը դիտէր, գոչեց․ «Ո՜հ, գեղեցիկ կնքամայրդ Ֆլէօր-տը-Լիս, տե՛ս, տե՛ս այն սիրուն պարուհին՝ որ գռեհիկ քաղաքացիներու մէջ տեղ թմբուկ զարնելով սալարկին վրայ կը կաքաւէ։

Եւ յիրաւի պասքեան թմբուկի մը ներդաշնակ հնչիւնը մինչեւ պատշգամը կը հասնէր։

«Գնչուհի մ՚է նա, ըսաւ Ֆլէօր-տը-Լիս անփութութեամբ դէպ ՚ի հրապարակը դառնալով։

— Տեսնենք, տեսնենք», գոչեցին աշխուժիւ իր ընկերները, եւ այսպէս ըսելով ամենքն ալ դէպ ՚ի պատշգամին եզրը վազեցին․ Ֆլէօր-տը-Լիս իր նշանածին սառնութեանը վրայ մտախոհ՝ դանդաղօրէն կը հետեւէր անոնց, մինչդեռ այս վերջինը՝

բռնազբօսիկ խօսակցութիւն մը խափանող այս դիպուածէն օգուտ քաղելով՝ սպասարկութենէ փոխուող զինուորի մը գոհունակ կերպարանքով՝ սենեկին դէպ ՚ի ներսի կողմը կը վերադառնար։ Եւ սակայն սիրուն եւ սխրալի բան էր չքնաղագեղ Ֆլէօր-տը-Լիսի սպասարկութիւնը, եւ ժամանակաւ իրեն ալ այնպէս երեւցած էր․ այլ սակայն տակաւ առ տակաւ յափրացած՝ մերձակայ ամուսնութեան մը մտածումը զինքը օր ըստ օրէ ա՛լ աւելի կը պաղեցընէր։ Ասկէ զատ անհաստատ բնաւորութիւն մ՚ունէր հրամանատարը եւ նաեւ, եթէ ներելի է զրուցել, գռեհիկ ու վարնոց ճաշակ մը։ Թէեւ խիստ ազնիւ ազգատոհմէ՝ այլ սակայն զէն ու զարդի տակ՝ հինաւուրց զինուորի մը սովորութիւններէ շատերը զգեցած էր իր վրայ։ Գինետունը հաճելի էր իրեն, եւ ի՛նչ որ անկէ կը հետեւի․ եւ միայն հայհոյութիւններու, զինուորական փաղաքշաբանութիւններու, հեշտին գեղեցկութիւններու եւ հեշտին յաջողութիւններու մէջ ինքզինք ՚ի դիւրի կ՚զգար։ Թէեւ իր ընտանիքէն կրթութիւն եւ ազնիւ կերպեր ընդունած ըլլար՝ մանկական հասակին մէջ այլ եւ այլ տեղեր դեգերած, եւ զինուորական դազար առած ըլլալով՝ իր ազնուականի ընտիր հանդամանքներն ամեն օր զօրավաշտական հրամանատարի սուսերակամարին պինդ շփումովը կը ջնջուէին, կը կորսուէին։ Ամեն ատեն՝ մարդկային նկատումներու տեսակ մը մնացորդով Ֆլէօր-տը-Լիսի այցելութեան գացած ժամանակը՝ կրկնակի նեղուած կ՚զգար ինքզինք անոր․քով․ նախ՝ վասն զի իր սէրն ամեն տեսակ վայրերու մէջ վատնած սպառած ըլլալով՝ անոր համար խիստ քիչ բան մնացած կ՚ըլլար սրտին մէջ․ երկրորդ՝ վասն զի այնչափ խիստ, կոպարատոր եւ քաղաքավար ձեւեր ու կերպեր ունեցող գեղանի կիներու մէջ՝ կը դողար շարունակ որ հայհոյութեանց սովորած իր բերանը յանկարծ ինքզինք մոռնալով եւ ամեն սանձ խորտակելով, գինետան յատուկ խօսքեր չ՚փախցընէ․ վասն զի ի՛նչ դժնդակ տպաւորութիւն պիտի ընէր այն ժամանակ՝ մտածելը դիւրին է։

Սակայն, այս ամեն բաներուս հետ՝ ազնիւ վայելչութեան,

արդ ու զարդի և գեղեցիկ կերպարանքի նկատմամբ՝ ոչ սակաւ մեծամտութիւններ կը ցուցընէր անիկա։ Ընթերցողը թող կըրցածին պէս այս բաներն իրարու հետ համաձայնեցընէ. ես կը պատմեմ միայն։

Քանի մը վայրկեանէ 'ի վեր՝ բանի մը վրայ մտածելով, կամ բան մը չմտածելով լուիկ կրակարանի քանդակուած ծնօտին կըռթընած էր նա, երբ Փլէօր-տը-Լիս, յանկարծ անոր դառնալով սկսաւ խօսիլ — ըստ որում խեղճ աղջիկն իր կամքին հակառակ կը դժգմէր (bouder) անոր։

«Գեղեցի՛կ զարմիկ, ինծ պատմած չե՞ս որ ասկէ երկու ամիս յառաջ, գիշերային հակապահ-պահպանութիւն ըրած ժամանակդ, շատ մը գողերու ձեռքէ փոքրիկ գնչուհի մ'ազատեցիր։

— Կարծեմ թէ այդպիսի բան մ'եղած է, գեղեցի՛կ զարմուհիս, ըսաւ հրամանատարը։

— Ո՞վ գիտէ, ազատած աղջիկդ գուցէ անդաստակին մէջ պարող գնչուհին ըլլայ։ Եկո՛ւ տես անգամ մը կը ճանչնա՞ս զանի, գեղեցի՛կ զարմիկդ Փէպիւս։

Այսպէս իր քովը գալու անոյշ հրաւէրին մէջ՝ ինչպէս նաև անունովը զանիկա կոչելուն՝ հաշտութեան գաղտնի իղձ մը կը տեսնուէր։ Փէպիւս տը Շադօբէր հրամանատարը (վասն զի այս գլուխին սկիզբէն 'ի վեր ընթերցողին աչաց տակ գտնուածն ան է) յամրաքայլ մօտեցաւ պատշգամին։ «Տե՛ս, ըսաւ Փլէօր-տը-Լիս սիրալիր եղանակաւ մը ձեռքն անոր բազուկին վրայ դնելով, դիտէ այն փոքր աղջիկն որ շրջանակին մէջ կը կաքաւէ, միթէ քու գնչուհի՞դ է նա»։

Փէպիւս դիտելով «Այո՛, ան է, իր այծէն կը ճանչնամ», ըսաւ։

— Ո՛հ, ինչ սիրուն պզտի այծ, ըսաւ Ամլօդ հիացմամբ ձեռքերն իրարու միացընելով։

— Արդեօք եղջիւրներն իրաւցընէ ոսկի՞ են», հարցուց Պերանժէր։

Բամիչ Ալօիզ առանց իր թիկնաթոռէն թողլու՝ «Այն

գնչուհիներէն չէ՞ մի, ըսաւ, որք անցեալ տարի Ժիպար դըռնէն եկան։

— Ազնուակա՛ն մայր, ըսաւ անուշութեամբ մը Փլէօր-տը-Լիս, այն դուռն այսօր Դժոխքի դուռ կը կոչուի։

Օրիորդ Կօնտլօրիէ գիտէր թէ իր մօրը խօսելու հին օրինաց ձևերը հրամանատարին ինչ աստիճան անհաճոյ էին. և իրաւցընէ այս վերջինը՝ կ'սկսէր հեգնել ու ակռաներուն մէջէն խընդալ ըսելով. «Ժիպա՛ր դուռ, Ժիպա՛ր դուռ. անշուշտ Շարլ Զ.-ը մէջէն անցընելու համար է։

— Կնքամա՛յր, պոռաց Պերանժէր, որու աչքերը՝ անդադար շարժման մէջ ըլլալով յանկարծ Նօթր-Տամի աշտարակներուն դէպ 'ի կատարը բարձրացած էր. հո՛ն, վե՛րը այն սեւ մարդն ո՞վ է։

Բոլոր օրիորդաց դասն աչքերը դէպ 'ի վեր բարձրացընելով՝ տեսաւ որ իրօք մարդ մը Կրէվի վրայ նայող հիւսիսային աշտարակին ամենաբարձր խաղխամքին վրայ արմուկովը կըթնած կեցած էր։ Հագուստէն որոշակի կը տեսնուէր թէ քահանայ մ'էր նա, և դէմքն իր երկու ձեռքերուն վրայ կըթնցուցած էր։ Այս դիրքին մէջ և աչքը վարը հրապարակին վրայ սևեռուած՝ արձանի նման անշարժ մնացած էր. Ճնճղուկներու բոյն մը գըտնող և գաղտնապէս անոր նայող ցինի՛ մ'անշարժութեան նման բան մը։

«Ժօզասի Պարոն Արքսարկաւագն է, ըսաւ Փլէօր-տը-Լիս։

— Ստուգիւ խիստ սրատես աչքեր ունիս, եթէ հոսկից զանիկա կը ճանչնաս, վրայ բերաւ Կայլըրֆօնդէն օրիորդը։

— Ի՛նչպէս անքթիթ փոքր պարուհին կը հայի, կրկնեց Տիան տը Քրիստէօյ։

— Աչքը չորս բանայ թող Եգիպտուհին, վասն զի Արքսարկաւագը գնչուներու անդիլի ծայր թշնամի է։

— Ափսոսալի բան է որ այս մարդն այսպէս այն խեղճ աղջկան նայի, յաւելց Ամլօդ տը Մօնմիշէլ. ըստ որում հիանալի կերպով մը կը պարէ յիրաւի։

— Գեղեցի՛կ զարմիկդ իմ Փէպիւս, ըսաւ յանկարծ Փլէօր-

տը-Լիս, որովհետև կը ճանչնաս այս փոքրիկ Նշխարուհին, նշմարը ըրէ իրեն որ հոս գայ: Այս բանս պիտի զուարճացընէ մեզի:

— Այո՛, այո՛, պոռաց բոլոր նորահաս օրիորդաց դասը ծափ զարնելով:

— Բայց խենթութիւն մ'է ադ, պատասխանեց Ֆէպիւս, քանզի անտարակոյս զիս մոռցած է նա, իսկ ես՝ անունն անգամ չը գիտեմ: Սակայն, ըստ որում այդպէս կը փափաքիք ամենքնիդ, փորձ մը փորձեմ, նայիմ»: Եւ պատշգամին խաղխաղքին հակելով՝ «Աղջիկ, աղջիկ» սկսաւ պոռալ:

Պարուհին, որ նոյն միջոցին չէր թմբկեր, գլուխը դէպ 'ի ձայնն եկած կողմը դարձուց, և իր շողուն նայուածքը Ֆէպիւսի վրայ բեւեռելով՝ շփոթած մնաց:

«Աղջիկ, կրկնեց հրամանատարը, և մատովը նշան ըրաւ որ վեր գայ:

Մանկամարդը ժամանակ մ'եւս անոր նայելով, այտերուն մէջ բոց մ'ելածի պէս՝ կարմրեցաւ, և թմբկիկը բազկին տակ առնելով՝ ապշած, զմայլած հանդիսականներուն մէջէն դէպ 'ի Ֆէպիւսի կանչած տանն ուղղուեցաւ: Քայլերը դանդաղ էին և երերուն, իսկ նայուածքը՝ օձի մը թովման տակ ինկած թռչնոյ մը նման՝ խռովուած:

Պահ մը վերջը՝ դրան պաստառեայ սրսկապանը վեր վերցընելով գնչուհին սենեկին սեմին վրայ երեւցաւ, շէկ, շփոթած, ոգեսպառ, աչքերը՝ կորակոր, և քայլ մ'առնուլ չիշխելով:

Պերանժէր ուրախութեամբ ձեռքերը զարկաւ:

Սակայն դրան սեմին վրայ անշարժ կը մնար պարուհին, որու ներկայութիւնը նորատի օրիորդներու խումբին վրայ տարօրինակ ազդեցութիւն մ'ունեցած էր: Աներկբայելի իրութիւն մ'է որ աղուոր պաշտօնակալին հաճելի ըլլալու տարտամ և անորոշ փափաք մը համանգամայն կը յուզէր զանոնք, թէ այն փառաւոր համազգեստն անոնց ամենուն պչրանաց (coquetteries) կէտ նպատակին (point de mire) եղած էր, և թէ՝ անոր հոն գըտ-

նուած առաջին վայրկենէն՝ գաղտնի, խուլ ոսոխութիւն (rivalité) մը կը տիրէր մէջերնին. ոսոխութիւն մը՝ զոր հազիւ կ'ըզգային իրենք, և որ սակայն իրենց շարժումներուն և խօսքերուն մէջ ակներև կը տեսնուէր. թէև՝ ամենքնին ալ գրեթէ մի և նոյն աստիճանի գեղութիւն ունենալով՝ հաւասար զէնքերով իրարու հետ կը մրցէին, որով և ամեն մէկը կրնար յաղթութեան մրցանակն իր անձին համար յուսալ: Սակայն գնչուհւոյն ներկայութիւնը յանկարծակի հաւասարակշռութիւնը խզեց, խորտակեց, վասն զի անանկ չնաշխարհիկ գեղեցկութիւն մ'ունէր անիկա որ բնակարանին դրան վրայ երեւցած պահուն՝ կարծես թէ իրեն յատուկ տեսակ մը լոյս իր չորս կողմը սփռած ծաւալած ըլլար: Այս փակուած սենեկին մէջ, պատերուն մութ պաստառակներով (tentures) և տաղձագործական զարդերով շրջանակուած՝ անհամեմատ կերպով աւելի հրաշագեղ և ճաճանչաւոր կ'երեւէր նա, քան հասարակաց հրապարակին մէջ, որպէս թէ՝ կէսօրուան լոյսէն մութին մէջ բերուած ջահ մ'ըլլար, այնչափ պայծառ՝ որ ազնիւ բամբիշներն իրենք ալ շլացած մնացին, և ամեն մէկն իր գեղութեան մէջ կերպիւ իւիք ինքզինք վիրաւորուած զգալով, առանց իրարու խօսք մը զրուցելու, իրենց պատերազմի ճակատը (այս բացատրութեան կերպը թող ներեն մեզ ընթերցողք) իսկոյն, նոյնհետայն փոխեցին: Կանանց բնազդումները մարդուս հանճարէն աւելի շուտ մէկ մէկու կը հասկընան ու կը պատասխանեն, ուստի և օրիորդք մէկ մէկու միտքը՝ հիանալի կերպով հասկըցած էին: Ոսոխուհի մ'եկած էր հոն. այս բանս ամենքնին ալ կ'զգային, հետեւապէս և ամենքնին ալ կը միանային, կը դաշնաւորէին: Ինչպէս բաժակ մը ջուր կարմրելու համար գինւոյ շիթ մը բաւական է, նոյնպէս սիրուն կիներու ամբողջ ակումբ մը տեսակ մը գժպհի տրամադրութեամբ ներկելու համար՝ բաւական է որ աւելի սիրուն կին մը վրայ հասնի..... նա մանաւանդ երբ մէկ էրիկ մարդ միայն կը գտնուի մէջերնին:

Ուստի գնչուհւոյն՝ իրենց կողմէ եղած ընդունելութիւնը՝ խիստ

պաղ եղաւ. գլխէն մինչեւ ոտքը զանիկա դիտեցին, յետոյ մէկ մէկու նայեցան, եւ այս՝ բաւական եղաւ իրարու միտք հասկընալու: Մանկամարդ Եգիպտուհին յուզուած եւ կոպերը վեր առնուլ չիշխելով, կ՚սպասէր որ իրեն խօսին:

Առաջին անգամ լռութիւնը խզողը հրամանատարն եղաւ:

«Ահա՛ ցիրուքի չքնաղագեղ արարած մը, ըսաւ նա ժէժէն անվեհերութեան մը շեշտով: Դու ինչ կ՚ըսես, գեղեցիկդ պարուհի:

Այս դիտողութիւնս, որ աւելի բարակը մտածող մէկը, իր հիացման մէջ՝ դէթ մեղմ ձայնիւ պիտի ընէր, աւելի գրգռեց ոտք հանեց կանացի նախանձութիւնները, որք գնչուհւոյն առջեւ արթուն զգուշութեան մը մէջ կը մնային:

Փլէօր-տը-Լիս ժպտելով եւ շինովի արհամարհանօք մը պատասխանեց հրամանատարին. «Ո՛հ, գէշ չէ»:

Միւս օրիորդներն իրարու հետ կը շշնջէին:

Վերջապէս բամբիշ Ալօիզ, որ իր աղջկանը պատճառաւ ինքն ալ նախանձողներուն կարգը կը գտնուէր, պարուհւոյն դառնալով՝ «Մօտեցիր, աղջիկ», ըսաւ:

— Մօտեցիր, աղջիկ», կրկնեց կատակերգական ծանրութեամբ մը Պէրանժէր, որ պարուհւոյն մինչեւ գօտին կու գար: Եգիպտուհին դէպ 'ի ազնուական տիկինը յառաջացաւ:

«Գեղուհիդ իմ, ըսաւ զօրեղ հնչիւնով մը Փէպիւս, քանի մը քայլ առնելով դէպ 'ի նա, չգիտեմ յիրաւի թէ քեզմէ ճանչցուելու գերագոյն երջանկութիւնն ունիմ...»:

Մանկամարդն անհուն քաղցրութեամբ մը լի ժպտով եւ ակնարկով մ՚ընդմիջեց զանի ըսելով. «Ո՛հ, այո՛»:

— Յիշողութիւնը սուր կ՚երեւի, վրայ բերաւ Փլէօր-տը-Լիս:

— Այն գիշեր ինչպէս ալ փութով կծիկը դրիր. արդեօք քեզ վախ կը պատճառեմ:

— Ո՛հ, ո՛չ», ըսաւ գնչուհին:

Այս ո՛հ, այո՛էն վերջն արտասանուած ո՛հ, ո՛չի շեշտին մէջ այնպիսի անպատմելի բան մը կար՝ որ Փլէօր-տը-Լիսի զչարում պատճառեց:

«Քու տեղդ, գեղուհիդ իմ, խոժոռադէմ, միականի, անշահ սապատող մը թողուցիր, որ կարծեմ եպիսկոպոսին զանգակահարն էր, շարունակեց Փէպիւս, որու լեզուն՝ զուեհներու աղջկան մը խօսեցած ժամանակը կը քակուէր, կը քաշքշանէր: Ինձ ըսին թէ անիկա սարկաւագապետի մը պռնկորդին եղած ըլլայ եւ ծննդով սատանայ: Անունը զուարճալի բան մ՚էր որ չեմ յիշեր. Ծաղկազարդ, Աւագ Ուրբաթ կամ Բարեկենդանի Կիւրակէ*, վերջապէս տօնի մ՚օր, ուր շատ զանգակ կը զարնուի: Ի՛նչ յանդգնութիւն որ քեզ առեւանգելու ելեր էր, որպէս թէ քեզ նման գեղեցիկ աղջիկ մ՚անանկ անպիտաններու համար եղած ըլլար: Այն անշահ բուն ինչ կ՚ուզէր քեզմէ, հէ:

— Չգիտեմ, պատասխանեց աղջիկը:

— Կը տեսնե՞ս լրբութիւնը. զանգակահար մը, իբր թէ գերակոմս մ՚ըլլար, աղջիկ մը յափշտակէ. վարնոց սնկիքոր մը ազնուականներու յատկացեալ երէ մ՚որսալու ժպրհի: Սակայն իր յանդգնութիւնը շատ սուղի նստաւ իրեն: Վարպետ Բիէռա Թօրթըրիւ՝ ապիրատ մը քերող (étriller) ամենէ ձեռքը-ծանր ձիապանն է, եւ որպէս զի մխիթարուիս՝ սա ալ աւելորդ չեմ համարիր իմացընել, թէ զանգակահարիդ կաշին շա՜տ, շա՜տ բաներ քաշեց անոր ձեռքէն:

— Խե՛ղճ մարդը», ըսաւ գնչուհին, Փէպիւսի այս խօսքերով՝ նշաւակարանի տեսարանին յիշատակը միտքը գալով:

Հրամանատարը քահ քահը ձգեց. «Դե՛ւ եւ դժո՛խք, ըսաւ, ահա՛ կարեկցութիւն մ՚որ այնչափ տեղն է՝ որչափ փետուր մը խոզի մը տկպը: Բաբի նման մեծ փոր մ՚ունենամ, եթէ...:

Ցանկարծ կանգ առաւ. «Ներեցէք, տիկիններ, կարծեմ բերնէս անվայել բան մը պիտի փախցընէի:

— Ո՛հ, նողկա՜նք, այդ ինչ տեսակ խօսքեր են, ըսաւ Կայլըֆօնդէն օրիորդը:

---

* Գիտեն ընթերցողք թէ Քուազիմօտօ անունը Զատկի Նոր-Կիւրակին կը նշանակէ: Ծ. Թ.

— Այս աղջկան հետ՝ իրեն յատուկ եղած լեզուն կը խօսի, յարեց կէս ձայնով մը Փլէօր-տը-Լիս, որու զայրոյթը, դժկամակութիւնն եւս քան զեւս կ'աւելնար։ Այս դժկամակութիւնս այս զայրոյթս աւելի բուռն աստիճանի մը հասաւ տեսնելով որ հրամանատարը, գնչուհին և մանաւանդ ինքզինքէն յանչափս գոհ՝ զինուորական թանձր և անարուեստ փաղաքշութեամբ մը կը կրկնէր՝ իր կրունկին վրայ շրջշրջելով (pirouetter). «Գեղանի աղջիկ մը, ճշմարիտ վկայ»։

— Որ վայրենի հագուստ մը կը կրէ», ըսաւ Տիան տը Քրիւգէօյլ, իր գեղեցիկ ակռաները ցուցընող ժպիտովը։

Այս դիտողութիւնս որ Եգիպտուհւոյն տկար կողմն երևան կը հանէր, յուսոյ փայլակ մ'եղաւ միւսներուն համար, որք անոր գեղեցկութեան խածնել չկրնալով, հագուստին վրայ յարձակեցան։

«Իրաւ, աղջիկ, ըսաւ Մօնմիշէլ օրիորդը. առանց փողակալի, առանց վիզդ թաշկինակ մը ծածկելու դուրսները դեգերիլն ո՞ւր սորվեցար։

— Ահա իր կարճութեամբը մարդուս մարմինը փուշ փուշ ընող կոճկէն մը, յարեց Քօլօմպ տը Կայլըֆօնդէն։

— Սիրելիս, շարունակեց Փլէօր-տը-Լիս կծու ձայնով մը, ոստիկանութեան մարդերը՝ դրած ոսկեզօծ գօտիդ համար պիտի բռնեն զքեզ։

— Աղջիկ, կրկնեց Քրիւգէօյլ օրիորդն անողոք ժպիտով մը, եթէ թևերուդ վրայ թեզանիք մ'անցուցած ըլլայիր պարկեշտօրէն՝ արևէն այն աստիճան սևցած պիտի չըլլային անոնք։

Յիրաւի Փէպիւսէ աւելի խելացի հանդիսականի մ'արժանի տեսարան մ'էր այս, տեսնել թէ ինչպէս այս գեղանի աղջիկները, իրենց զայրագին և թունալի լեզուներովը՝ գռեհի պարուհւոյն շուրջն օձանման կը պատէին, կը սողոսկէին, կը գալարէին. անգութ էին անոնք և մի և նոյն ժամանակ քաղաքավար. անոր ոսկի վահանակներով (paillettes) և զանկներով ծածկուած խօլ և աղքատիկ հագուստին ամեն կողմը, խածծելու բան մը գտնելու համար, կը խառնէին ու կը քրքրէին։ Անվերջանալի

խնդումներ, հեգնութիւններ, դառնացուցիչ խօսքեր և եպերանք խեղճ գնչուհւոյն վրայ կը տեղային, ինչպէս նաև մեծամիտ բարեսիրութիւն և չար նայուածներ։ Զանոնք տեսնելով այն հռովմայեցի կիները միտքդ պիտի բերէիր, որոնք աղուոր աղախնոյ մը կուրծքն ոսկի ասեղներ խոթելով կ'զբօսնուին։ Կարծես թէ որսական գեղեցիկ բարակներ էին անոնք, որ իրենց տէրէն յօշ յօշ պատառելու հրաման չունենալով, անտառի խեղճ եղնիկի մը շուրջը՝ ռունգերնին բաց, աչքերնին բոց՝ կը դառնային ու կը դառնային։

Այս բարձրատոհմ օրիորդներուն առջև ի՞նչ պիտի ըլլար վերջապէս հասարակաց հրապարակի խեղճ պարուհի մը։ Ասոր համար անոր ներկայութիւնը բանի մը տեղ չդնելով թէև սիրունիկ՝ այլ աղտեղի և խոտան առարկայի մը վրայ խօսելու պէս՝ անոր վրայ, անոր առջև և անոր կը խօսէին բարձր ձայնիւ։

Գնչուհին այս ասեղի խայթուածներուն անզգայ չէր մնար։ Ատեն ատեն ամօթոյ կարմրութիւն, զայրոյթի փայլակ մ'իր այտերը կամ աչքերը կը բոցավառէին. արհամարհական խօսք մը իր շրթունքներուն վրայ կը դեգևէր, և իրեն սովորական եղած ծուռմը կ'ընէր նա քամահանօք, այլ սակայն եղած տեղն անշարժ կը մնար միշտ, Փէպիւսի վրայ տխուր, անոյշ և համակերպեալ նայուած մը յարելով, որու մէջ երջանկութիւն և գորով ևս խառնուած էր։ Կարծես թէ վռնտուելէ վախնալով ինքզինքը զսպելու ջանք կ'ընէր։

Իսկ Փէպիւս՝ կը խնդար, և ժպրհութեան ու կարեկցութեան խառնուրդով մը գնչուհւոյն կողմը կը բռնէր։

«Թո՛ղ որ խօսին, աղջիկ», կը կրկնէր իր կօշիկներուն ոսկի կարթերը (éperons) հնչեցընելով. թէև ստուգիւ հագուստդ կապուստ դոյղն ինչ անհեթեթ է և վայրենի՝ այլ սակայն քեզ նման չքնաղ աղջկան մը համար ինչ փոյթ ունի այն։

— Ո՛հ, ո՛հ, գոչեց Կայլըֆօնդէն գեղձանուհին դառն ժպիտով իր կարապի պարանոցը վեր կանգնելով, կը տեսնեմ որ

արքայի պալատի Պարոն աղեղնաւորները՝ գեղեցիկ եգիպտական աչքերէ խիստ շուտ կը բորբոքին, կը հրահրուին։

— Եւ ինչու՞ չ՚հրահրուին », ըսաւ Ֆէպիւս։

Ըստ դիպաց նետուած քարի մը նման, որու ո՛ւր իյնալն և ո՛չ իսկ կը գիտէ մարդ, անփոյթ կերպով մը հրամանատարին բերնէն ինկած այս պատասխանիս վրայ՝ Քօլօմպ սկսաւ խնդալ, եւ Տիան, եւ Ամլօտ եւ Ֆլէօր-տը-Լիս, որու աչքերու մէջ մի և նոյն ժամանակ արցունք մը փողփողեց։

Գնչուհին՝ Քօլօմպ տը Կայլըֆօնդէնի խօսքերուն վրայ դէպ 'ի գետին խոնարհեցուցած իր հայուածն ուրախութեամբ և սիգութեամբ շողշողուն՝ վեր վերցընելով միայնակ Ֆէպիւսի վրայ սեւեռեց։ Նոյն միջոցին սոսկալի գեղեցկութիւնը խելքէ մաքէ դուրս բան էր։

Հնամի ազնուուհին, այս տեսարանս դիտելով առանց պատճառը հասկընալու, գչարիկ մը զգացած ժամանակը՝

« Տէ՛ր Աստուած, գոչեց յանկարծակի, ոտքերուս մէջ տեղն ինչ բան է որ կը շարժի. ա՜հ, գարշելի կենդանի։

Գնչուհւոյն այծն էր այն որ իր տիրուհին փնտռելու ելած ու հոն եկած էր, և դէպ 'ի անոր շտապաւ վազած ժամանակ՝ իր եղջիւրներն ազնուական կնոջ հագուստին մէջ խառնած. հագուստ՝ որ նստած ժամանակն այս վերջինին ոտքերուն վրայ լեռնանման կը դիզուէին։

Ամենուն ուշադրութիւնը դէպ 'ի հոն դարձաւ. իսկ գնչուհին առանց բառ մ՚արտաբերելու գնաց իր այծիկն այն հագուստներու կոյտէն ազատեց։

« Ո՜հ, ինչ սիրուն այծիկ, որ ոսկի թաթեր ունի », գոչեց Պերանժէր՝ ուրախութենէ ոստոստելով։

Գնչուհին ծունկերուն վրայ նստելով՝ այծին գգուիչ գլուխն իր այտերուն կռթնցուց։ Կարծես թէ զանիկա այնպէս թողած ըլլալուն՝ թողութիւն կը խնդրէր։

Նոյն միջոցին Տիան՝ Քօլօմպի ականջին ծռելով « Ո՜հ, ինչպէս աւելի կանուխ միտքս չեկաւ. այծի մը հետ ապրող գնչուհին է աս, որու համար կ՚ըսուի թէ վհուկ մ՚է, իսկ իր այծը խիստ հրաշալի ձեւեր ու խաղեր կ՚ընէ եղեր։

— Ուրեմն, ըսաւ Քօլօմպ, հարկ է որ այծը զմեզ ալ զուարճացընէ և մեր առջև հրաշք մը գործէ »։

Տիան և Քօլօմպ աշխուժիւ Եգիպտուհւոյն դառնալով

« Աղջիկ, այծիդ հրաշք մ՚ընել տուր որ տեսնենք։

— Չեմ հասկընար ըսածնիդ, պատասխանեց պարուհին։

— Հրաշք մը, մոգութիւն մը, կախարդութիւն մը վերջապէս։

— Չեմ հասկընար »։ Եւ սկսաւ իր սիրուն կենդանին շոյել կրկնելով. « Ճալի, Ճալի »։

Այս միջոցիս՝ Ֆլէօր-տը-Լիս այծին վզէն կախուած՝ բանուած կաշիէ քսակիկ մը տեսնելով « Ի՞նչ է այս », հարցուց Եգիպտուհւոյն։

Եգիպտուհին իր մեծ աչքերը դէպ 'ի անոր վերցընելով « Այդ իմ գաղտնիքս է », պատասխանեց ծանրութեամբ։

— Գաղտնիքիդ ինչ ըլլալը յոյժ փափաքելի էր ինձ գիտնալ », մտածեց Ֆլէօր-տը-Լիս։

Մ՚յ մ՚ալ՝ բարի բամբիշը սրտնեղութեամբ մ՚ոտք ելնելով « Ինձ նայէ, գնչուհի, ըսաւ, եթէ ո՛չ դու և ո՛չ այծդ չպիտի պարէ՛ք՝ ինչ բան ունիք հոս »։

Գնչուհին, առանց բառ մը պատասխանելու, յամրաքայլ ըսկսաւ դէպ 'ի դուռն երթալ, այլ քանի կը մօտենար անոր՝ որպէս թէ անընդդիմակաց մագնիսէ մը բռնուած, արգիլուած՝ իր քայլերը կը դանդաղէին։ Յանկարծ իր արցունքներով թաթուկ աչքերն Ֆէպիւսի վրայ դարձուց և կանգ առաւ։

« Աղջիկ, գոչեց հրամանատարը, այսպէս երթալդ վայելուչ չէ. դարձիր բան մը խաղա մեզի։ Այս առթիւ, անուշիկ դեղուհիդ, խօսէ նայիմ ինչ է անունդ։

— Էսմերալտա », ըսաւ պարուհին նայուածքն անորմէ չբաժնելով։

Այս տարօրինակ անունն նորահաս բամբիշներուն մէջ մեծ քահքահներու առիթ տուաւ։

«Աղա՛, ըսաւ Տիան, աղջկան մը համար աճարկու անուն մը։

— կախարդ մ՚ըլլալն ինչպէս յայտնի կը տեսնուի, կրկնեց Ամլօդ։

— Սիրելիդ իմ, գոչեց հանդիսիւ տիկին Ալօիզ, ծնողքդ այդ քու անունդ մկրտութեան աւազանին մէջէն գտած չեն անշուշտ»։

Այս միջոցներուս մէջ, Պերանժէր՝ մինչդեռ ո՛չ ոք ուշադրութիւն կ՚ընէր իրեն՝ անուշեղէնով մ՚այծը սենեկին մէկ անկիւնը քաշած՝ և վայրկենի մը մէջ երկուքն ալ լաւ բարեկամուհիներ եղած էին իրարու։ Հետաքրքիր պատանեակն այծին վզէն կախուած քսակիկը քակելով և բանալով՝ անոր պարունակութիւնը՝ որ ուրիշ բան չէր՝ բայց եթէ տուսախտայ պզտիկ փայտիկներու վրայ զատ զատ գրուած այբուբենի տառեր՝ փսիաթին վրայ տարածած էր։ Հազիւ թէ այս խաղալիկները պատանեկին ձեռքով գետինը սփռուած էին՝ և ահա՛, ի՛նչ զարմանք, այծը, որու անտարակոյս հրաշքներէն մին էր այս, իր ոսկի թաթովը քանի մը տառեր դէպ 'ի իրեն քաշեց, և կամացուկ մը հրելով մասնաւոր կարգով մը շարեց զանոնք։ Վայրկենի մը մէջ բառ մը կազմուեցաւ հոն, զոր այծը գրելու վարժուած կ՚երևէր, ըստ որում իր աշխատութեան մէջ ամենափոքր դեդևում մ՚իսկ չէր ցուցուցած, և Պերանժէր՝ հիացմամբ ձեռքերը միացուցած գոչեց յանկարծակի․

«Ֆլէօր-տը-Լիս կնքամայր, եկո՛ւ տես անգամ մը թէ ինչ ըրաւ այծը»։

Ֆլէօր-տը-Լիս վազելով հոն՝ սարսուռ մը զգաց․ ըստ որում տախտակամածին վրայ շարուած գրերն այս բառս յօրինած էին․

Փ է պ ի ւ ս

«Այծը գրեց զայս, հարցուց այլայլած ձայնով մը։

— Այո՛, կնքամայր, պատասխանեց Պերանժէր։

Այծին գրած ըլլալուն տարակոյս չէր մնար, վասն զի մանկիկը գրել չէր գիտեր։

«Աղա՛ գաղտնիքը», մռմռաց Ֆլէօր-տը-Լիս։

Մանկան ձայնէն բոլոր սրահին բազմութիւնն այն կողմը վազած էր, և՛ մայրը, և՛ նորատի բամբիշները, և՛ գնչուհին, և՛ պաշտօնակալը։

Գնչուհին այծին գործած անհնարին վրիպանքը տեսնելով՝ կարմրեցաւ, յետոյ գունատեցաւ և հրամանատարին առջև յանցաւորի մը պէս սկսաւ դողալ․ իսկ այս վերջինը գոհութեան և զարմացման ժպիտով մ՚անոր կը նայէր։

«Ֆէպի՜ւս», կը հծծէին ապշութեամբ նորահաս բամբիշները․ հրամանատարին անունն է այս։

— Յիրաւի կարգէ դուրս հրաշալի յիշողութիւն մ՚ունիս եղեր, ըսաւ Ֆլէօր-տը-Լիս գնչուհւոյն դառնալով որ քարացած մնացած էր, յետոյ հեծկլտանքներ ձգելով «Ո՛հ, թոթովեց ցաւագին՝ գեղեցիկ ձեռքերովը դէմքը ծածկելով, մոգուհի մ՚է այս»։ Եւ մի և նոյն ժամանակ սրտին խորէն դառնալի ձայն մը կը լսէր որ կ՚ըսէր իրեն․ «Ոսոխուհի՛ (rivale) մ՚է այն»։ Եւ անդէն նուաղած ինկաւ։

«Աղջի՛կս, աղջի՛կս, գոչեց մայրը զարհուրանօք։ Կորսուէ՛ գնա՛, գնչուհի՛դ դժոխքի»։

Էզմերալտա 'ի քթթել ական ձախող տառերը ժողվելով և Ճալիին նշան ընելով որ ետևէն գայ՝ դռնէ մը դուրս ելաւ, մինչդեռ ուրիշ դռնէ մը Ֆլէօր-տը-Լիսը կը տանէին։

Ֆէպիւս հրամանատարը, մինակ մնացած, երկու դռներուն մէջ վայրկեան մը դեգևելէ վերջը՝ գնչուհւոյն ետևէն գնաց։

Բ

ԹԷ ՓԻԼԻՍՈՓԱՅ Մ՚ՈՒ ՔԱՀԱՆԱՅ ՄԸ ՏԱՐԲԵՐ ԲԱՆԵՐ ԵՆ

Այն քահանայն՝ զոր ծաղկահաս բամբիշները՝ հիւսիսային աշտարակին գագաթը, հրապարակին վրայ ծռած՝ գնչուհւոյն պա-

րը ո՛չ ի ուշով դիտելու վրայ տեսած էին, իրօք Քլօտ Ֆրօլլօ սարկաւագապետն էր։

Մեր ընթերցողք թերեւս մոռցած չըլլան այն գաղտնածածուկ խուցը՝ զոր նախասարկաւագն այս աշտարակին մէջ իրեն համար յատկացուցած էր։ (Չգիտեմ թէ մի և նոյն խուցն է՞ այն՝ որու՝ մինչեւ ցայսօր քառակուսի երդէ մը՝ ներսի կողմը կը տեսնուի, երբ՝ որ մարդու բարձրութեամբ՝ աշտարակներուն դէպ 'ի վեր խոյացած սանդուղին վրայ, դէպ 'ի արեւելք բացուած է, խուցն մ՚որ հիմա մերկ, թափուր և աւերակ է, և որու անշահ կերպով բռուած որմերը՝ այս վերջին ժամանակներս՝ եկեղեցի-ներու ճակատներ ներկայացընող քանի մ՚անպիտան դեղին գրո-շուածներով հոս հոն զարդարուած են։ Կ՚երեւակայեմ թէ այս ծակին մէջ չղջիկներ և միանգամայն սարդեր կը բնակին, և թէ հետեւաբար՝ ճանճերու դէմ՝ կրկնակի սաստկիչ պատերազմ մը կը մղուի հոն յարատեւ կերպով)։

Ամեն օր, արեւուն մարը մտնելէն ժամ մը յառաջ, նախասար-կաւագն աշտարակին սանդուղէն վեր ելնելով այս խցիկիս մէջ կը փակուէր, ու երբեմն ամբողջ գիշերներ կ՚անցընէր հոն։ Այն օրը, խցիկին ցած դրան առջեւ հասած՝ կղպակին մէջ մանուա-ծոյ փոքր բանալի մը դրած միջոցին՝ զոր իր քովը կախուած մեծ գրպանի մը մէջ կը կրէր միշտ, Անդաստակի հրապարակէն՝ թմբուկի և փայտեայ բամբիռներու ձայն մ՚ականջին գալով՝ և խցիկն ալ, ինչպէս որ արդէն ըսինք, մէկ երդ մը միայն ունե-նալով, որ եկեղեցւոյն ետեւի կողմը կը նայէր, Քլօտ Ֆրօլլօ ա-ճապարանօք բանալին քաշած առած՝ և անդէն աշտարակին կա-տարն ելած էր այն տխուր և մտախոհ դիրքին մէջ՝ ուր բամ-բիշները տեսած էին զանի։

Ծանր կերպարանք մ՚առած էր հոն, անշարժ, և մէկ նայ-ուածի և մէկ մտածումի մէջ թաղուած։ Բոլոր Բարիզ իր ոտից տակ կը գտնուէր իր շէնքերուն բիւրաւոր սարերով, փափկահող բլուրներու բոլորշի հորիզոնով, կամուրջներուն տակէ օձաձեւ հո-սող գետով, փողոցներու մէջ վէտ վէտ ծածանող ժողովրդով,

իր մուխերուն ձեւացուցած ամպով և կրկնակի օղակներով Նօտր-Տամը սեղմող՝ իր յարկերուն գերբուկ շղթայով. բայց սակայն, բոլոր այս քաղաքին մէջ՝ նախասարկաւագը սալարկին մէկ կէ-տը միայն կը դիտէր. Անդաստակի հրապարակը. բոլոր այս բազ-մութեան մէջ մէկ դէմք միայն կը դիտէր. գնչուհւոյնը։

Դժուարին պիտի ըլլար գրուցել թէ ինչ տեսակ բան էր այս նայուածքն և թէ անկէ ցայտած բոցն ինչ բանէ յառաջ կու գար։ Այս նայուածքն անթարթ էր և սակայն խռովուած և ան-հանգիստ։ Եւ իր բոլոր մարմնոյն խորունկ անշարժութենէն, որ հազիւ թէ ատեն ատեն, ինչպէս ծառը հովէն, մեքենական սարսուռով մը կը շարժէր կը դողար, իր կռթնած բազրիքնե-րէն աւելի մարմար՝ իր արմուկներուն պրկումէն, դէմքը կար-կամող քարացած ժպիտէն՝ տեսնողը պիտի կարծէր թէ Քլօտ Ֆրօլլօյի վրայ աչքերէն զատ՝ ուրիշ կենդանի բան մը չէր մնա-ցած։

Գնչուհին կը պարէր. մատին ծայրին վրայ իր թմբկիկը կը դարձնէր և վեր կը նետէր զայն՝ բրովանսական կաքաւներ կա-քաւելով, և արագոտն, թեթեւ և խրախ՝ վերուստ 'ի վայր ուղ-ղակի կերպով իր վրայ ինկած զարհուրելի նայուածքին ծանրու-թիւնը չզգալով։

Բազմութիւնն անոր չորս դին կը վխտար. ատեն ատեն՝ դեղին և կարմիր վարապանակ (casaque) հագած մարդ մը՝ շրջանակը պահել տալու համար ժողովուրդն ետ ետ հրելու ետեւէ կ՚ըլ-լար, և յետոյ պարուհիէն քանի մը քայլ անդին աթոռի մը վը-րայ նստելով՝ այծին գլուխն իր ծունկերուն վրայ կ՚առնուր։ Կ՚երեւէր թէ այս մարդս գնչուհւոյն ընկերն էր, և Քլօտ Ֆրօլ-լօ՝ իր գտնուած բարձր կէտէն՝ անոր դէմքը լաւ մը չէր կրնար որոշել։

Նախասարկաւագը՝ այս անծանօթը նշմարած վայրկենէն՝ իր ուշադրութիւնն անոր և գնչուհւոյն մէջ տեղ բաժնուած. և դէմքն ևս քան զևս մթագնած էր։ Յանկարծ՝ կանգնելով ու բոլոր մարմնովը դողալով՝ «Ես զանիկա միշտ մինակ տեսած էի, ըսաւ

իր ակռաներուն մէջէն, ո՛վ է ուրեմն այն մարդը»։

Ասոր վրայ ոլորածոյ սանդուղին անհարթ կամարին տակ աներևոյթ եղաւ և սկսաւ վար իջնել։ Զանգակներու սենեկին դըրան առջևէն անցած ժամանակը, որ կիսաբաց էր, զարմանալի բան մը տեսաւ. տեսաւ Քուազիմոտօն՝ որ յարկեքարի քիւերուն մէկ բացուածքէն՝ նոյնպէս հրապարակին մէջ կը նայէր, և այն աստիճան խորունկ ուշադրութեամբ մ'որ իր որդեգրական հօրն անկէց անցնիլը չ'իմացաւ։ Իր վայրենի աչքն անօրինակ բացատրութիւն (expression) մ'ունէր. գիւթեալ և անոյշ նայուած մ'էր այն. «Ի՛նչ տարօրինակ բան, մրմռաց Քլօտ, արդեօք զեգիպտուհի՛ն կը դիտէ այսպէս». և շարունակեց իջնելու։ Քանի մը րոպէէն, նախասարկաւագը թախծալի կերպարանքով աշտարակին վարի դռնէն հրապարակին մէջ ելաւ։

«Ինձ նայէ, ի՛նչ եղաւ գնչուհին, ըսաւ թմբկիկին ժողոված բազմութեան մէջ ինքն ալ խառնուելով։

— Չգիտեմ, պատասխանեց մօտ գտնուողներէն մէկը, րոպէ մը չկայ՝ աներևոյթ եղաւ։ Կարծեմ թէ գինացի տունը գնաց, ուսկից կանչեցին զինքը սպանիական կաքաւ մը (fandague) կաքաւելու համար»։

Եգիպտուհւոյն տեղ և այն օթոցին վրայ՝ ուր արաբացի նկարները՝ պահ մը յառաջ՝ անոր կաքաւին քմածին ձևերուն տակ կը կորսուէին, անհետ կ'ըլլային, սարկաւագապետը կարմիր ու դեղին մարդը տեսաւ, որ մինակ մնացած, և ինքն ալ քանի մ'արծաթ փող (testons) վաստկելու համար՝ շրջանակին շուրջը կը դառնար, արմուկները գլխուն վրայ, գլուխը դէպ 'ի ետև, դէմքը շէկ, վիզը կարկառ և ակռաներուն մէջ աթոռ մ'ունենալով։ Այս աթոռին վրայ՝ դրացուհիէ մ'առած կատու մը հաստատած էր որ ահարեկ՝ կը պոռար, կը կանչէր։

«Տէր ողորմեա, գոչեց սարկաւագապետը՝ ձեռնածուն ճանչնալով՝ որ ոլոռն ոլոռն քրտինքներ թափելով՝ իր աթոռի ու կատուի բուրգովը նոյն միջոցին անոր առջևէն կ'անցնէր, այդ ինչ գործի մէջ է վարպետ Պետրոս Կրէնկուարը։

Սարկաւագապետին խիստ ձայնն այնպիսի ցնցում մը պատճառեց հէք չուառականին՝ որ իր բոլոր շէնքին հետ՝ հաւասարակշռութիւնը կորսնցուց, և կատու ու աթոռ խառն 'ի խուռն՝ և այպանաց անվերջանալի ճչի մը մէջ՝ հանդիսականներուն գլուխն ինկան։

Հաւանական է որ վարպետ Պետրոս Կրէնկուար (ըստ որում իրօք ան էր) կատուի տէր դրացուհւոյն, և իր չորս կողմի վիրաւոր ու կեղեքուած դէմքերուն հետ դժնդակ հաշիւ մը պիտի կարգադրէր, եթէ աղմուկէն, աղաղակէն օգուտ չ'քաղելով՝ Քլօտ Ֆրօլլօյի ըրած նշմայրին վրայ՝ անոր ետևէն գացած ու եկեղեցին ապաստանած չ'ըլլար։

Նօդր-Տամ նոյն պահուն արդէն մութ էր ու ամայի, իր կողմնական զուգահեռա-դահլիճները (contre-nefs) խաւարի մէջ էին, և կամարներն այնչափ սևցած՝ որ մատուռներուն կանթեղներն աստղերու նման սկսած էին փողփողիլ։ Միայն ճակատի վարդաձև մեծ պատուհանը, որու երփներանգ գոյները մարը մըտնող արևու մէկ հորիզոնական ճառագայթով թաթխուած էին, խառն 'ի խուռն գրուած անդամանդներու կոյտի մը նման շողալով՝ իր ակնախտիղ ցոլացումը մինչև դահլիճին մէկալ ծայրը կը հասցընէր։

Քանի մը քայլ ընելէ վերջը՝ տէր Քլօտ կռնակը մարդակի մը տալով՝ անթարթափ աչօք Կրէնկուարի նայեցաւ։ Քահանային ակնարկին մէջ ծաղու և հեգնութեան բան մը չկար. ծանր, հանդարտ և թափանցող նայուած մ'էր այն, ուստի և չէ թէ Կրէնկուարի վախցածը, որ մեծարոյ և գիտնական մէկէ մ'այսպիսի խեղկատակ հագուստի մը մէջ բռնուելուն՝ բոլորովին ամօթահար մնացած էր։ Նախասարկաւագը նախ և յառաջ լռութիւնը խզեց։

«Եկո՛ւ նայինք, վարպե՛տ Պետրոս. ինձ շատ բաներ ունիս բացատրելու, և նախ և յառաջ սա ըսէ ինձ թէ ի՛նչ պատճառաւ արդեօք շուրջ երկու ամիսէ 'ի վեր երեսդ չենք տեսներ, և վերջը հրապարակներու մէջ կը գտնենք զքեզ յիրաւի աղուո՛ր

հագուստ մը հագած — Քօտպէքի խնձորի մը նման՝ կէս–դեղին և կէս–կարմիր հագուստ մը ։

— Տէր իմ, ողորմ եղանակաւ մ'ըսաւ Կրէնկուար, վրաս յիբաւի տարօրինակ ձորձեր կը կրեմ, և գլուխը մեծկակ գդում մ'անցուցած կատուէ մ'առելի՝ նեղուած կը տեսնէք զիս ։ Գիտեմ որ շատ գէշ կ'ընեմ ոստիկանութեան զինուորները հրաւիրելով որ այս վարապանակիս տակ Պիւթագորեան փիլիսոփայի մը կռնակի ոսկրը (humerus) զանակոծեն ։ Բայց ինչ ընեմ, արժանապատիւ վարպետ, յանցանքն իմ հին զգեստին (justaucorps) է, որ ձմեռուան սկիզբը զիս վատութեամբ երեսի վրայ թողուց պատառուած բանելով թէ ծուէն ծուէն եղած՝ ցրցլեաժողովի (chiffonnier) կողովին մէջ երթալ հանգստանալու պէտք ունէր ։ Ի՞նչ կրնայի ընել ․ քաղաքակրթութիւնը դեռ այն աստիճան յառաջացած չէ, որ հնամի Դիոգինէսի ուզածին պէս՝ բոլորովին մերկանդամ թափառի մարդ ։ Սա ալ աւելցընեմ թէ խիստ բուռն հով մը կը փչէր, և մարդկութեան այս նոր քայլն առնել տալու համար յունվար ամիսն ընտրել արժան չէ ։ Այս վարապանակն ինքնին ներկայանալով ինձ և իր ծառայութիւնը նուիրելով՝ հագայ զայն իսկոյն, և իմ հին թիկնոցս որ չորս կողմէն ծակեր ունէր և ինձ նման հերմէտեանի (hermétique) մը չէր վայլեր՝ մէկ դի թողուցի ։ Ուստի այս պատճառներով ահա՝ Սուրբ Ծընէսդի նման հագլիտի (histrion) հանդերձով կը տեսնէք զիս ։ Ի՞նչ կրնաք ընել ․ առժամանակեայ խաւարում մ'է այս ։ Ապողոն Ատմէդէս թագաւորին հօտերը չ'արածեց միթէ ։

— Գեղեցիկ արհեստ մ'ընտրեր ես յիրաւի, կրկնեց յառաջասարկաւագը ։

— Կը խոստովանիմ, տէր իմ, որ ընտրելի է փիլիսոփայել և բանաստեղծել, հնոցին մէջ բոց փչել կամ զայն երկնքէն ընդունիլ, քան թէ յաղթանակաւ կատուներ վերցընել ․ և այս պատճառաւ ահա զիս այսպէս կշտամբած ժամանակնիդ՝ շամփրադարձի (tourne-broche) մը դիմաց գտնուող էշի մը նման շուարած մնացի ։ Այլ ինչ ընէի, տէր իմ, մարդս ամեն օր սաբ-

ռելու պէտք ունի, և ամենէ աղուոր աղեքսանդրեան մրմունջներն ակուայի տակ ինկած կտոր մը պանիրի հետ չեն կրնար բաղդատուիլ ։ Արդ, Ֆլանտրի Մարկըրիտ բամբիշին համար շինած առագաստի տաղիս փոխարէն, զոր գիտէք, քաղաքը փող մ'իսկ չ'տուաւ ինձ, պատճառ բռնելով թէ ընտիր շարագրութիւն մը եղած չըլլայ այն, որպէս թէ մարդ՝ չորս [illegible] համար Սոփոկլէսի ողբերգութիւն մը կրնայ գրել ։ Արդ, անօթութենէ մեռնելու վտանգին մէջն էի, ինչպէս որ կը տեսնէք ։ Բարեբաղդաբար ծնօտիս ոյժը լաւ վիճակի մէջ գտնելով ըսի անոր ․ «Ոյժի և համաբերութեան խաղեր ըրէ ․ կերակուրդ դու ինքնին հոգա»․ Ale te ipsem. Մէկ շատ թափառականներ որք պատուական բարեկամներ եղան ինձ, տեսակ տեսակ հերքիւլէսեան խաղեր սովրեցուցին, որով ամեն իրիկուն ակռաներուս կուտամ այն հացը՝ զոր օրուան մէջ ճակտիս քրտինքովը կը վաստըկիմ ։ Ի վերայ այսր ամենայնի, կ'ընդունիմ որ ասիկա տխուր կիրառութիւն մ'է իմ մտաւորական կարողութիւններուս, և թէ մարդս թմբուկ զարնելով և աթոռ խածնելով կեանքը պէտք չէ՛ որ անցընէ ։ Սակայն, արժանապատիւ վարպետ, կեանքն անցընելը միայն բաւական չէ, կեանքը հոգալ ևս պէտք է» ։

Տէր Քլօտ լռութեամբ Կրէնկուարի ճառը մտիկ ընելէ վերջը՝ յանկարծ իր խորասոյզ աչքն այնպիսի կորովի թափանցողութիւն մ'առաւ, որ Կրէնկուար՝ մինչև իր հոգւոյն խորը խուզուիլ հետապօտուիլը զգաց ։

«Շա՛տ աղէկ, վարպետ Պետրոս, թո՛ղ այդ ամենն ըսածիդ պէս ըլլայ, այլ ինչպէս կ'ըլլայ որ այս պարուհւոյն, այս գընչուհւոյն հետ մէկ տեղ կը գտնուիս ։

— Պատճառն այս է որ, ըսաւ Կրէնկուար, իմ կինս է անիկա և ես անոր ամուսինն եմ» ։

Երէցին խաւարին աչքը հրացայտ եղաւ ։

«Ըրի՞ր դու այդ բանը, թշուառական, գոչեց սաստիկ բարկութեամբ մը Կրէնկուարի թևէն բռնելով, և Աստուած այն աստիճան հեռացո՞ւ քեզմէ որ այն աղջկան ձեռք դպցընէիր ։

— Ճշմարիտ վկայ, տէր իմ, պատասխանեց Կրէնկուար բոլոր անդամներովը դողդողալով, ճշմարիտ վկայ որ ձեռք չդըպցուցի իրեն, եթէ այս բանն է որ զձեզ կը խռովէ։

— Ուրեմն ի՞նչ էրիկ կնիկի խօսք կ'ընես », ըսաւ քահանան։

Կրէնկուար փութայ հնար եղածին չափ հակիրճ եղանակաւ պատմել իր գլխէն անցածները, զորս ընթերցողը գիտէ արդէն, իր Հրաշից Ապարանքի արկածը, նաև ջախջախեալ թակոյկով ամուսնութիւնը. ամուսնութիւն՝ որ հետևանք մ'ունեցած չէր տակաւին. ըստ որում գնչուհին ամեն իրիկուն՝ առաջին օրուան նման՝ իր հարսանեաց գիշերն իրմէ գողցած էր հնարիւք։ «Նեղութիւն մ'է այս, ըսաւ խօսքը վերջացընելով, և պատճառը՝ կոյս աղջկան մը հետ կարգուած ըլլալու դժբաղդութիւնս է։

— Ի՞նչ ըսել կ'ուզես այդ խօսքով, հարցուց նախասարկաւագը, որու բարկութիւնն աստիճան աստիճան իջած էր Կրէնկուարի պատմութեամբ։

— Այդ բանը բացատրելը կարի դժուարին է, պատասխանեց պուէտը, վասն զի հիմը սնապաշտութիւն մ'է։ Կինս, հին գողի մը խօսածին նայելով, որ մեր մէջ Եգիպտոսի դուքս կ'անուանուի, ընկեցիկ կամ գտնուկ մանուկ մ'է եղեր, որն որ մի և նոյն բանն ըսել է։ Վիզը բժժանք մը կը կրէ նա, որ իբր թէ օր մ'իր ծնողքը գտնել պիտի տայ եղեր իրեն, և որ սակայն իր ոյժը պիտի կորսնցընէ եղեր եթէ մանկամարդ աղջիկն իր առաքինութիւնը կորսնցընէ։ Անկէց կը հետևի որ երկուքնիս ալ խիստ առաքինի և զգաստ կը մնանք։

— Ուրեմն, կրկնեց Քլօտ, որու ճակատն երթալով կը պայծառանար, կը կարծես, վարպետ Պետրոս, թէ այդ աղջկան մէկը մօտեցած չէ՞ բնաւին։

— Ի՞նչ կ'ուզէք, տէր Քլօտ, որ ընէ մարդ սնապաշտութեան մը հետ՝ որ լաւ մը հաստատուած է աղջկան մտքին մէջ։ Իրաւ է որ նորանշան և զարմանալի բան մ'է այս մարապետի շինովի հաստատութիւնը՝ որ այնչափ հեշտաւ ընտելացող գնչուհի աղջիկներու մէջ տեղ՝ միշտ անընտել կը մնայ։ Այլ սակայն պաշտպանուելու համար երեք բան ունի. Եգիպտոսի դուքսը, որ իր պահպանութեան տակ առած է զայն՝ թերևս տէր և իշխան (damp) աբբայի մը զայն օր մը ծախել յուսալով. իր բոլոր ցեղը՝ որ Աստուածածնայ մը նման՝ մասնաւոր մեծարանք մը կը ցուցընէ անոր, և սիրուն դաշոյն մը՝ զոր կտրիճուհին վերին դատաւորին հրամաններուն հակառակ՝ միշտ իր վրայ կը պահէ, և զոր՝ մէջքը սեղմել ուզած ժամանակդ՝ ձեռքին մէջ կը տեսնես իսկոյն։ Ո՛հ, իշամեղու մ'է այն՝ որ այնչափ կ'ըլլայ»։

Նախասարկաւագը հազար ու մէկ հարցումներ ըրաւ Կրէնկուարի։

Էզմերալտան, Կրէնկուարի դատումով անմեղ ու սիրալի, և բաց 'ի իրեն յատուկ շրթունքներու ծռումէ մը, սիրուն արարած մ'էր. պարզ և խանդավառ աղջիկ մը, ամեն բանէ անգէտ, ամեն բանի վառուող յափշտակուող. մարդու և կնկան մէջ տեղի տարբերութիւնը՝ նոյն իսկ երազի մէջ՝ չգիտցող։ Ահա այսպիսի կազմութեան տէր օրիորդ մ'որ պարի, դղրդիւնի և բաց օդի հոգի կու տար. տեսակ մը մեղու-կին որ ոտքերուն վրայ անտեսանելի թևեր ունէր, և որ յարատև գործունէութեան մը մէջ կ'ապրէր, և որպէս թէ այս բնութիւնս այն թափառական կեանքէն առած ըլլար՝ զոր վարած էր միշտ։ Կրէնկուար հետամուտ ըլլալով կրցած էր իմանալ թէ անիկա խիստ պզտիկ եղած ժամանակը՝ Սպանիա և Քաթալոնիա թափառած է եղեր՝ մինչև Սիկիլիա. կը կարծէր նաև թէ գնչուներու վերաբերելով՝ անոնց մէկ կարաւանովը Ալճերիայի թագաւորութեան մէջ բերուած ըլլայ, որ Աքայիայի մէջ կը գտնուի. երկիր մ'որու մէկ ծայրը փոքր Ալպանիոյ և Յունաստանի կը յարի, ու միւս ծայրը՝ Սիկիլեայց ծովուն, որ Կոստանդնուպօլիս տանող ճամբան է։ Գնչուները, կ'ըսէր Կրէնկուար, իբր սպիտակամորթ Մաւրիտանիկներու ազգին գլուխ՝ Ալճերիոյ թագաւորին իշխանութեան տակ կը գտնուէին։ Անտարակուսելի իրողութիւնն այս էր որ Էզմերալտա, խիստ մատղաշ հասակի մէջ, Հունգարիոյ ճամբով Ֆրանսա եկած և բոլոր այս երկիրներէն աղաւաղեալ այլանդակ լեզուներու հատակտորներ, երգեր և տարօրինակ գաղափարներ

բնըած էր, որք իր կէս-բարիզեան, կէս-ափրիկեան հագուստին նման՝ իր լեզուն ալ խայտախառն կը գործէին։ Սակայն և այսպէս յաճախած թաղերուն բնակիչներն իր զուարթութեանը, իր շնորհալի գեղեցկութեանը, իր աշխոյժ գնացքին, իր պարերուն և երգերուն սպասնառու կը սիրէին զինքը։ Բոլոր քաղաքին մէջ երկու անձեր միայն խորշուած կը կարծէր ինքզինք, որոնց վրայ շատ անգամ ահուդողով կը խօսէր. Ռօլանտ-Աշտարակի քրձուհին, վատշուէր մենուհի մ'որ յայտնի չէ թէ գնչուհիներու դէմ ինչ ոխ ունէր, և որ պհէք պարուհին՝ իր երդին առջևէն անցած ատենը՝ կ'անիծէր հանապազ, և քահանայ մ'որ իրեն հանդիպած ժամանակը՝ ամեն անգամ զինքն ահաբեկող նայուածք մը և խօսք մը կը նետէր իրեն։ Այս վերջին պարագաս, առանց Կրէնկուարը գիտելու, սարկաւագապետը մեծապէս խռովեց. անփոյթ պուէտն երկու ամսուան մէջ մոռցեր էր բոլորովին Եգիպտուհւոյն հանդիպած գիշերին զարմանալի պարագաները, ինչպէս նաև անոնց մէջ՝ սարկաւագապետին ներկայութիւնը։ Այս երկուքէն զատ, ուրիշ, նորատի պարուհին բանէ մը չէր վախնար. և գուշակութիւններ ալ ընելու ետևէ չ'ըլլալով՝ գնչուհիներու դէմ այնչափ յոլովակի բացուած կախարդութեան դատերէ ազատ կը մնար։ Թէ՛ Կրէնկուար եթէ ոչ ամուսնոյ՝ եղբօր տեղ կը բռնէր իրեն, թէ՛ փիլիսոփայն մեծ համբերութեամբ այս տեսակ մը պղատոնական ամուսնութեան կը ժուժայր. ըստ որում գոնէ դադար ու հաց գտած էր։ Ամեն առաւօտ՝ շատ անգամ Եգիպտուհին իրեն հետ ունենալով՝ Զռուականներու որջ'ն կը մեկնէր. հրապարակներու մէջ մեծ ու պզտիկ դրամներ ժողվելու կ'օգնէր անոր, և ամեն իրիկուն անոր հետ 'ի միասին մի և նոյն յարկին տակ դառնալով՝ կը թողուր զայն ազատ որ իր խցիկը քաշուելով պարզունակով փակուի, և արդարի նինջով կը քնանար։ Վերջապէս ամեն հաշիւ ընելով, խիստ անոյշ կեանք մը, կ'ըսէր, նաև խիստ յարմար մտախոհութեան։ Թէ՛ այս ալ կար որ փիլիսոփայն, իր հոգւոյն ու խղճմտանքին մէջ՝ գնչուհւոյն վրայ մոլե-

գին սիրահարութիւն մ'ունենալուն համոզուած չէր, և գրեթէ նոյն չափով անոր այծն ալ կը սիրէր. սիրալի, հեզ, խելացի, ուշիմ կենդանի մը, վարժ ու մարզ առած այծ մը։ Միջին դարու մէջ խիստ հասարակ էին այս հրահանգուած այծերը՝ որոնց վրայ ժողովուրդը կը հիանար կը մնար, և որք շատ անգամ իրենց մարզիչները փայտակոյտին վրայ կը հանէին։ Սակայն ոսկեթաթ այծիկին կախարդութիւնները խիստ անմեղ խաղեր էին։ Կրէնկուար նախասարկաւագին բացատրեց զանոնք մի առ մի. խսկ այս վերջինն այս ամեն մանրամասն պարագաներուն մեծ մտադրութեամբ կը յուցընէր։ Շատ անգամ փափաքուած գործողութիւնն այծին ընել տալու համար՝ այս ինչ կամ այն ինչ ձևով թմբկին անոր ներկայացընելը բաւական էր։ Թէ այս ամեն բաներուս մարզն ու հրահանգը գնչուհին տուած էր անոր. և թէ այս տեսակ վարպետութիւններու այնչափ զարմանալի տաղանդ մ'ունէր նա որ՝ այծին երկու ամսուան միջոցի մէջ՝ շարժուն տառերով Ֆէպիւս բառը գրել սորվեցուցած էր։

« Ֆէպիւս, ըսաւ քահանայն, և ինչու համար Ֆէպիւս։

— Զգիտեմ, պատասխանեց Կրէնկուար. գուցէ մոգական զաւնի զօրութիւն մ'ունեցող բառ մը կարծած ըլլայ զայն, բառ մը զոր ինքզինք մինակ գտած ժամանակը՝ շատ անգամ կէս-ձայնով կը կրկնէ։

— Ապահո՞վ ես, կրկնեց Քլօտ իր թափանցող նայուածքով, թէ բառ մ'է այդ, և թէ անուն չէ։

— Որո՞ւ անունը կ'ուզես որ ըլլայ, ըսաւ պուէտը։

— Ի՞նչ գիտնամ, ըսաւ քահանայն։

— Բան մը կը մտածեմ ես. այս գնչուները կրակապաշտ են և արևու երկրպագութիւն ունին. Ֆէպիւսն ալ է յառաջ եկած պիտի ըլլայ։

— Անիկա՝ ինձ այնչափ յայտնի ու մեկին չ'երևիր, որչափ քեզի, վարպետ Պետրոս։

— Ի՞նչ փոյթս. ուզածին չափ իր Ֆէպիւսը մրմնջէ թող։ Գէթ սա ապահովութիւնն ունիմ, որ Ճալի արդէն անոր չափ կը սիրէ զիս։

— Ո՞վ է այդ ձայլի ըսածդ ։

— Այծն է » ։

Սարկաւագապետը կզակը ձեռքին վրայ դրած՝ վայրկեան մը մտախոհ երեւցէ վերջ՝ յանկարծ Կրէնկուարի դառնալով՝

« Եւ կ՚երդնու՞ս ինձ, ըսաւ, որ ձեռք չդպցուցիր անոր ։

— Որո՞ւ, ըսաւ Կրէնկուար, այծի՞ն ։

— Ո՛չ, այն կնկան ։

— Ի՞մ կնկանս. կ՚երդնում թէ ո՛չ ։

— Եւ շատ անգամ մինակ կը մնա՞ս անոր հետ ։

— Ամե՛ն իրիկուն, ամբողջ ժամ մը » ։

Տէր Քլօտ յօնքերը պռստեց ։

« Ո՛հ, ո՛հ, « Միակ միայնակ ընդ աղջկանն՝ ո՛չ խորհիցեն յաղօթս կանխել խօսելով Հայր Մեր » . Solus cum sola non cogitabunter orare Pater Noster.

— Ճշմարիտ վկայ, կ՚ըսեմ Հայր Մերը, Հաւատով Խոստովանիմը և Հաւատամք յԱստուած 'ի Հայրն ամենակալն ամբողջ խօսիլ, և անիկա՝ աւելի ուշադրութիւն չպիտի ընէ ինձ՝ որչափ հաւ մը կ՚ընէ եկեղեցւոյ ։

— Երդուի՛ր ինձ մօրդ արգանդին վրայ, կրկնեց նախասարկաւագն ուժգին, որ մատիդ ծայրովը իսկ չդպցար այդ կնկան ։

— Հօրս գլխին վրայ ալ կ՚ընամ երդնուլ այդ, վասն զի այդ երկու բաները կարծուածէն աւելի մեծ յարաբերութիւններ ունին իրարու հետ ։ Բայց, արժանապատիւ վարպետ, ներեցէք ինձ որ ես ալ հարցում մ՚ընեմ ձեզ ։

— Խօսէ ։

— Ձեզի ինչ հոգ այս բանս » ։

Սարկաւագապետին աժգոյն դէմքը նորահաս աղջկան մ՚այտին նման կարմիր դարձաւ ։ Վայրկեան մ՚առանց պատասխանի մնաց վերջ՝ յայտնի շփոթութեամբ մ՚ըսաւ.

« Մտիկ ըրէ, վարպետ Պետրոս Կրէնկուար ։ Ձեր կարծեմ որ հոգիդ կորսուած ըլլայ տակաւին, և որովհետև քու աղէկութիւնդ կ՚ուզեմ ու զքեզ կը սիրեմ, կ՚իմացընեմ քեզ որ այն

ամբարիշտ Եգիպտուհւոյն ամենափոքր հպումդ անգամ՝ զքեզ Սատանայի արբանեակ պիտի ընէ ։ Գիտես թէ հոգին կորսնցընողը՝ միշտ մարմինը կ՚ըլլայ, ուստի վա՜յ քեզ եթէ այդ կնկան մերձենաս ։ Ահա՛ այս է բոլոր իմ հոգս ։

— Անգամ մը, և այս առաջին օրն էր, փորձ մը փորձեցի, ըսաւ Կրէնկուար ականջը քերելով, այլ խայթուեցայ ։

— Ունեցա՞ր այդ ժպրհութիւնը, վարպետ Պետրոս » ։ Եւ քահանային դէմքը վերստին ամպոտեցաւ ։

« Ուրիշ անգամ մը, յարեց պոէտը ժպտելով, պառկելէս յառաջ փականքին ծակէն նայելով՝ զայն մէկ շապիկով տեսայ, և յիրաւի՝ իր մերկ ոտքովն անկողնոյն փոկը շառաչել տուած ժամանակը՝ ամենէ գեղեցիկ, ամենէ հրապուրալի կինն էր այն՝ որ կենացս մէջ տեսած եմ երբեք ։

— Կորսուէ աչքիս առջևէն », գոչեց երէցն ահարկու նայուածով մը, և Կրէնկուարն ուսերէն ուժգնակի հրելով՝ շուտ շուտ քայլերով Նօդր-Տամի ամենէ մթագին կամարներուն տակ՝ մտաւ կորսուեցաւ ։

Գ

ԶԱՆԳԱԿՆԵՐԸ

Պատժանիւի առաւօտէն 'ի վեր, Նօդր-Տամի շրջակայ բնակիչները կը դիտէին որ Քուազիմոտօյի զանգակահարական եռանդը կարի յոյժ նուազած էր ։ Յառաջագոյն միշտ և ամեն վայրկեան զանգակներու միահամուռ ձայներ կը լսուէին. առաջին կանոնական աղօթներու ժամէն ինչուան հանգստեան ժամը տևող երկար այգանուագներ (aubades), ձայնաւոր պատարագի մը համար մեծ-զանգակի հնչիւններ, ամուսնութեան մը, մկրտութեան մը համար փոքր զանգակիկներուն վրայ վեր վար յածող ճոխ ձայնաշարեր (gammes)՝ որք ամեն տեսակ ձայներու զմայլելի ասղնեգործի մը նման՝ օդին մէջ իրար կը խառնուէին ։

Հինաւուրց եկեղեցին, համակ ծփին և համակ հնչական՝ զանգակներու մշտատև ուրախութեան մը մէջ էր, և կարծես թէ մարդ՝ դղրդիւնի ու քմահաճութեան ոգւոյ մը ներկայութիւնը կ'զգար հոն, որ բոլոր այն պղնձի բերաններով կ'երգէր շարունակ: Հիմա այս ոգիս կարծես թէ անհետացած էր, և մայր եկեղեցին տրտում ու տխուր՝ լռութիւն կը պահէր մտադիւր. տօներն ու թաղումներն իրենց պարզ, չոր և մերկ զանգակահարութիւնները կ'ունենային, ճիշդ այնչափ՝ որչափ ծիսագիրքը (rituel) կը պահանջէր, ո՛չ աւելի. եկեղեցւոյ մ'ըրած ժխորէն՝ ներսէն երգեհոն, դուրսէն զանգակ՝ երգեհոնը կը մնար միայն: Այնպէս մը կ'երևէր թէ զանգակատուններուն մէջ նուագածու մը չէր մնացած: Սակայն Քուազիմոտոն հոն էր միշտ. ուրեմն ի՞նչ բան պատահած էր իրեն. արդեօք նշաւականիւին ամօթն ու յուսահատութիւնն իր սրտին ներսի դին կը շարունակէր միշտ, արդեօք պատժատուին խարազանի զարկուածներն անվերջանալի կերպով կ'անդրադառնայի՞ն իր հոգւոյն մէջ, և թէ այս դէպքին տխրութիւնն իր ներսի դին ամեն բան մարած էր, նոյն իսկ զանգակներու համար ունեցած խանդն ու եռանդը, և կամ արդեօք Մարիամ՝ Նօդր-Տամի զանգակահարին սրտին մէջ հակառակորդ մ'ունեցած էր, և յաղթ զանգակն և իր չորեքտասան քորքն աւելի սիրելի ու աւելի աղուոր բանի մը համար բարձ 'ի թողի՞ եղած էին միթէ:

Նոյն 1482 տարուն թուականին մէջ Աւետումը մարտ 25 երեքշաբթի օր մը դիպեցաւ. և որովհետև նոյն օրը ջինջ ու պայծառ օդ մ'ընէր՝ Քուազիմոտօ իր զանգակներուն սէրը սրտին մէջ վերստին արծարծուած զգաց և Հիւսիսային աշտարակն ելաւ, մինչդեռ վարէն ժամկոչն եկեղեցւոյն դուներն երեսի վրայ կը բանար, որոնք կարծր փայտէ ահագին տախտակներ էին այն ժամանակ, կաշեպատ, երկաթ գամերով եզերած և քանդակներով շրջանակուած, որք «խիստ վարպետօրէն բանուած էին»:

Զանգակահարական բարձր վանդակը հասնելով Քուազիմոտօ գլխի տխուր ցնցիւնով ժամանակ մը վեց փոքրիկ զանգակատուն-

ները դիտեց, որպէս թէ իր սրտին և անոնց մէջ տեղ օտար բան մը մտած ըլլալուն ցաւելով: Այլ երբ զանոնք հնչեցընել սկսաւ, երբ այն զանգակներու բոլոր բազմութեան իր ձեռքին տակ երերալը զգաց, երբ տեսաւ ոստ ցատկող թռչնոյ մը նման ձայնական թրթրակ աստիճաններուն՝ հնչական յաջորդութեամբ վեր վար ելնել իջնելը տեսաւ, վասն զի չէր լսեր ողորմելին, երբ Երաժշտութիւն սատանան, այն դեւ՝ որ վարատանտաղներու (strettes), գեղգեղներու (trilles), մէկ մէկու ետևէ շուտ շուտ զարնուած դաշնակութիւններու այն կայծակնացայտ տրցակը կը թօթուէ, հէք խուլին վրայ իր ազդեցութիւնը տարածեց՝ այն ատեն նորէն երջանիկ եղաւ անիկա, և ամեն բան մոռնալով՝ սիրտը պարզուեցաւ, դէմքը զուարթացաւ:

Տեսնել պէտք էր զինքը թէ ինչպէ՛ս կ'երթար ու կու գար. ձեռքերը կը զարնէր, մէկ չուանէ միւսը կը վազէր, ու ձայնով ու շարժումով վեց երգիչները կը խրախուսէր, ինչպէս երաժըշտապետ մը (chef d'orchestre) ճարտար նուագահարներ խթելով յառաջ կը վարէ:

«Օ՜ն, Կապրիէլ, յառա՛ջ, կ'ըսէր, բոլոր ժխորդ թափէ տեսնեմ հրապարակին վրայ, վասն զի տօն է այսօր...: Թիպօ, ծուլութիւն պէտք չէ, կը տեսնեմ թէ կը թուլնաս կը դանդաղիս, օ՛ն, օ՛ն, յառա՛ջ. ի՛նչ, ժանգոտեցա՞ր միթէ, հեղգդ. ...: Քա՜ջ է. շո՛ւտ, շո՛ւտ, զարնող ուրը չտեսնուի իսկ: Ինձ նման՝ ամենուն ականջը խլացո՛ւր....: Այդպէս աղէ՛, Թիպօ, այդպէս. արիաբա՛ր...: Կիյլեօ՛մ, Կիյլեօ՛մ, դու ամենէն խոշորը պիտի ըլլաս, իսկ Բասքիէն ամենէն փոքրն է, ու Բասքիէն ամենէ լաւ գործ կը տեսնէ: Գրաւ դնենք, եթէ կ'ուզես, թէ աւելի՛ անոր ձայնը կը լսուի քան թէ քուկդ...: Քա՜ջ է; քա՜ջ է, Կապրիէլս, ուժգի՛ն, ուժգի՛ն ևս....: Է՜հ, ի՛նչ կ'ընէք դուք հոդ, ճնճղուկք. ամենափոքր ձայն մը հանելնիդ իսկ չեմ տեսներ...: Ի՞նչ կը նշանակեն այն պղնձի կտուցները որ յօրանջելու պէս կ'ընեն, երբ երգել հարկ է...: Հա՛, տեսնեմ, թնդացէք, աշխատեցէք. Աւետում է այսօր: Գեղեցիկ արև մը կայ

դուրսը, գեղեցիկ հնչիւն մը պէտք է․․․։ Խե՛ղճ Կիյլեօմ, գքեզ բոլորովին շնչասպառ կը տեսնեմ, յա՛ղթ առիւծդ»։

Այսպէս ահա Քուազիմոտօ կը խօսէր, կը գրգռէր շարունակ իր զանգակներն որք կարծես թէ զիրար գլելով վեցերնին ալ կ'ոստոստէին և իրենց պղնձաջուն գաւակները կը թօթուէին, լծուած սպանիական ժխորալի ջորիներու նման՝ զորս կառավարին (sagal) մեծասաստ ձայնը մերթ ընդ մերթ կը խթէ ու կը գրգռէ յառաջ։

Յանկարծ՝ զանգակատան ուղղորդ որմը մինչև մէկ բարձրութիւն ծածկող՝ յարկաքարեայ քանդակազարդերու մէջէն նայելով՝ հրապարակին վրայ անհեթեթ վրայ—գլուխով մանկահասակ աղջիկ մը տեսաւ, որ կանկ կ'առնուր գետինն օթոց մը սփռելով, որու վրայ փոքրիկ այծ մ'եկաւ կայնեցաւ․ մի և նոյն ժամանակ հանդիսականներու խումբ մ'ալ անոր չորս կողմը կը հաւքուէր ու շրջանակ մը կը կազմէր։ Այս տեսարանս յեղակարծում Քուազիմոտօյի տեսիլներուն ընթացքը փոխեց, անոր երաժշտական աւիւնը սառեցնելով, ինչպէս հովի շունչ մը հալած ռետինը կը սառեցընէ։ Կանկ առաւ անդէն, և կռնակը զանգակներուն դարձընելով յարկաքարի քիւին ետևովը կքեցաւ, պարուհւոյն վրայ մտախոհ, խանդակաթ և անոյշ հայեցուած մը սևեռելով․ հայեցուած՝ որ արդէն անգամ մը զարմացուցած էր զսարկաւագապետը։ Այս կերպով զանգակները զանց եղած, մոռցուած՝ միահամուռ լռեցին յեղակարծում 'ի մեծ զարմացում և դժկամակութիւն զանգակահարութենէ ախորժող հետամուտներու, որոնք Շանժի կամուրջին վրայէն ուշի ուշով միտ կը դնէին, և որք ապշած ձգեցին գացին անկէ, ինչպէս շուն մ'որու ոսկոր կը ցուցընեն, ու յետոյ անոր տեղ քար մը կու տան։

Դ

ΑΝΑΓΚΗ

Այս մի և նոյն մարտ ամսոյն մէկ առաւօտը, 29ն էր, կար-

ծեմ, շաբաթ օր մը, տօն սրբոյն Եւստաքէոսի, մեր դեռահաս բարեկամ Ժեհան Ֆրօլլօ Ջաղացքեան դպրոցականը՝ հագուելու ժամանակ դիտեց որ իր սռնապանը, ուր իր քսակը կը գտնուէր, մետաղի որ և իցէ հնչում՝ մը չէր հաներ։ «Խե՛ղճ քսակ, ըսաւ գրպանէն հանելով զայն, ի՛նչ, ամենափոքր բարիզեան փող մ'իսկ չ'գտնուի՛․ ինչպէս քուեայները, գարեջուրի գաւաթներն և Աստղիկ՝ անխնայաբար պարպեր են զքեզ, ինչպէս թոյլ, թափուր և փոթ փոթ ես եղեր․ այդ վիճակիդ մէջ՝ ծիշդ ընդղայի (furie) մը վզին կը նմանիս, հէքդ։ Կը հարցընեմ ձեզ, Պարո՛ն Կիկերոն և Պարո՛ն Սենեքա, որոնց գրքերը բոլորովին կարկամ՝ տախտակամածին վրայ ցրուած կը տեսնեմ, ի՛նչ կը ծառայէ ինծ Փողերական ատենի խորհրդականէ (général des monnaies) կամ Լումայափոխներու կամուրջի հրէայէ մ'աւելի՝ ոսկի և արծաթ, մեծ ու պզտիկ դրամներու իւրաքանչիւրին արժէքն և մէկ մէկու հետ ունեցած տարբերութիւնները գիտցած, հասկըցած ըլլալս, երբ խաղին դնելու համար սև բնիոն մ'անգամ չ'ունիմ։ Ո՛հ, Կիկերո՛ն հիւպատոսդ, այնպիսի դժբաղդութիւն մը չէ աս՝ որմէ դարձուածաբանութիւններով, quemadmodum և verumenimveroներով ([illegible]) ազատի մարդ։

Տրտում տխուր հագուեցաւ դպրոցականը։ Կիսակօշիկներուն (bottines) կապերը կապած ժամանակը՝ միտքը խորհուրդ մ'ինկաւ, զոր առջի բերան մերժեց․ սակայն նոյն խորհուրդը միւսանգամ դարձաւ ներկայացաւ մտքին, և՝ ներքին մեծ պատերազմի մ'ակներև նշան՝ իր ներքնակը (gilet) ներհակ կողմէն հագաւ։ Վերջապէս գդակը սաստկութեամբ գետին նետելով պոռաց․ «Այդպէս ընեմ, ինչ կ'ուզէ թո՛ղ ըլլայ, եղբօրս մօտ երթամ․ քարոզ մը պիտի ընդունիմ, իրաւ է, այլ սակայն սկուդ մ'ալ պիտի ընդունիմ»։ Այս ըսելով իր մորթապատ վարապանակը շտապաւ հագաւ, և գդակը գետնէն առնելով յուսահատութեամբ դառնացած՝ դուրս ելաւ և Հարբի գռեհին վրայէ՝ դէպ 'ի Միջնաքաղաքն իջաւ։ Հիւշէդի գռեհին առջևէն անցած ժամանակը՝ հոն տեղ անդուլ անդադար դարձող այն սքանչելի շամփուրնե-

բուն հոտն իր հոտոտողական զգայարանքը կարի խայտեցընելով սիրագին ակնարկ մը ձգեց այն կիկղոպեան խորովատան (rôtisserie)՝ որ օր մը Քալաղածիրօն Փրանկիսկեան կրօնաւորին այս բուն բացագանչութեանն առիթ տուաւ. Veramente, queste rotisserie sono cosa stupenda! (Յիրաւի, այդ խորովատունք սքանչելի բան է)։ Սակայն Ժեհան որչափ որ այն հոտերէն հրապուրուած՝ ինչպէս որ գիտենք՝ նախաճաշի ստակ չ՚ունենալով խորունկ հառաչանօք մը Փոքր-Շաթլէի դրան տակէն անցաւ. հոծ աշտարակներու ահագին կրկնակ-առոյծազարդ՝ ուսկից Միջնաքաղաքը կը մտնուէր։ Անցած ժամանակը՝ և ո՛չ իսկ մըտքըն անցաւ, ինչպէս որ սովորութիւն էր, Բիրինէ Լըքլէրքի արձանին քար մը նետելու. Թշուառական մ՚որ Շարլ Զ.ի ատեն՝ Բարիզն Անգղիացւոց մատներ էր, և որ իր քամմելի ոճիրն երեք դար շարունակ քաւեց՝ իր տղմաթաթաւ և քարերով դիմաճմլեալ պատկերը՝ Հարբի և Պիւսիի գռեհներուն անկիւնը, իբր 'ի յաւէժական նշաւակարանի՝ դրուած մնալով։

Փոքր-Կամուրջէն անցնելով և Սէնդ-Ժընըվիէվ գռեհն ետին ձգելով, Նօդր-Տամի դիմաց գտնուեցաւ Ժեհան Ջաղացքեանց։ Այն ժամանակ վարանքն ու տատամսութիւնք նորէն առաւ զինքը և Պ. Գորշախայտի արձանին շուրջը պահ մը թափառեցաւ, անձկութեամբ կրկնելով ինքնովի. «Քարոզն աներկբայ է, սխալն երկբայելի»։

Նոյն միջոցին մենարանէն ելնող դաւաղանակիր սպասաւոր մը տեսաւ և կեցընելով «Ո՞ւր է Ժօզասի Պարոն Սարկաւագապետը», հարցուց։

— Կարծեմ իր աշտարակի թաքստոցն (cachette) է, ըսաւ սպասաւորը, և պէտք չէ որ երթաք զինքն անհանգիստ ընէք հոն, բայց միայն՝ եթէ Բաբին կամ Պարոն թագաւորին կողմէ կու գաք»։ Ժեհան ձեռքերը զարնելով. «Ո՛հ, պատուական, ըսաւ, ահա՛ սքանչելի առիթ մը կախարդութեանց խցիկն երթալ տեսնելու»։

Այս խորհրդածութեամբ որոշումն ըրած, փոքր սեաւ դրան

տակէն անվեհեր անցաւ, և Սէն-Ժիլ սանդուղքէն՝ սկսաւ դէպ 'ի աշտարակին վերի յարկերն ելնել։ «Պիտի տեսնեմ հիմա այն խցիկը, կ՚ըսէր քանի՛ կը յառաջանար. որչափ հետաքըքրական բան պէտք է եղած ըլլայ՝ որ իմ արժանապատիւ եղբայրս այնչափ խնամով ամեն աչքերէ կը պահէ զայն։ Կ՚ըսուի թէ դժոխքի խահարաններ կը վառէ հոն և թէ մեծ կրակով փիլիսոփայական քարը կ՚եփէ։ Թէև փիլիսոփայական քարին դայլախաղէ մ՚աւելի արժէք չեմ տար, և ընտրելի կը սեպեմ իր հնոցին վրայ՝ ճարպով եփուած Զատկի հաւկիթներու ձուաղեղ մը գտնել, քան թէ աշխարհի ամենէ մեծ փիլիսոփայական քարը»։

Փոքր սիւներու գաւիթը հասնելով՝ վայրկեան մը շունչ առաւ և այն անվերջանալի սանդուղքին դէմ չգիտեմ քանի՛ անէծքներ ու հայհոյութիւններ թափելէն վերջը՝ հիւսիսային աշտարակի նեղ դռնէն, որ այսօր ժողովրդեան գոց է, նորէն վեր ելնել սկսաւ։ Զանգակներու վանդակէն քիչ մ՚անցնելով՝ սանդուղքին գլուխն և կողմնակի խորութեան մը մէջ փոքրիկ գաւիթ մը հանդիպեցաւ, ինչպէս նաև կամարին տակ սրակամար խոնարհ դուռ մը, որու ահագին փականքն և երկաթեայ հուժկու պահանգը՝ սանդուղքին բոլորշի պատին մէջ դիմացի կողմը բացուած ծակէ մը կրցաւ նշմարել։ Այս դուռս տեսնելու հետաքրքրութիւն ունեցող անձերը՝ սեաւ որմին մէջ սպիտակ տառերով քանդակուած այն արձանագրութենէն կրնան ճանչնալ զայն. ԿԸ ՊԱՇՏԵՄ ՔՕՐԱԼԻՆ. 1823, ՍՏՈՐԱԳՐԵԱԼ ԻՒԺԷՆ։ Ստորագրեալը բնագրին մէջ է։

«Ո՛ւֆ, ըսաւ դպրոցականը. անտարակոյս հոս եղած պիտի ըլլայ եղբօրս գաղտնի խցիկը»։ Բանալին փականքին մէջ էր, դուռը՝ իր դիմաց՝ գոց. մեղմիկ զայն հրելով՝ գլուխը բացուածքէն ներս խոթեց։

Ընթերցողը՝ Րէմպրանտի, այն պատկերահանութեան Շէյքսբիրըին՝ հիանալի գործերը թերևս տեսած ըլլայ։ Այնչափ հիանալի պատկերներու մէջ՝ կայ հատ մ՚որ ըստ կարծեաց՝ Ֆաուստ գիտնականը կը ներկայացընէ, և զոր անհնարին է առանց շլա-

ցութեան նկատել ։ Մթագին խղիկ մ՚է այն, որու մէջ տեղը սեղան մը կը տեսնուի զազրատեսիլ առարկաներով ծածկուած․ զոր օրինակ մեռած մարդու գլուխներ, երկնագունտեր, մղիչ գործիներ, կարկիններ, խորհրդագիր մագաղաթներ ։ Գիտութեանց անյագ տենչը ներկայացընող այն մտածին անխոնջ աշխատաւորն այս սեղանին առջև կեցած է իր հաստ լօդիկը (houppelande) հագած և իր մաշկեկապատ գդակը մինչև յօնքերն իջեցուցած ։ Իր ահագին թիկնաթոռէն կիսովին ելած կանգնած է․ իր կարկամ բուռերը սեղանին վրայ կը կռթնին, և հետաքրքրութեամբ ու ահով՝ լուսեղէն շրջանակ մը կը դիտէ՝ մոգական տառերով ձևացած՝ որն որ ներսի պատին վրայ կը շողշողայ այնպէս՝ ինչպէս արևու՝ իրարմէ անջատուած ճառագայթներուն երևոյթը (spectre solaire) տեսարանական մանրացոլակ տուփի (chambre noire) հայելոյն վրայ կը փողփողի ։ Այս քապալեան արևն աչքի կը դողդողայ և աժգոյն խղիկն իր խորհրդալի ճառագայթումով կը լեցընէ ։ Ահարկու տեսարան մ՚է այս, միանգամայն և գեղեցիկ ։

Գրեթէ Ֆաուստի խղիկին նման բան մը՝ դրան բացուածքէն գլուխը ներս խոթած ժամանակը՝ Ժէհանի աչաց ներկայացաւ ։ Անոր նման մթագին և հազիւ լուսաւորուած խուց մ՚էր այն, որու մէջ նոյնպէս կը տեսնուէր մեծ թիկնաթոռ մ՚և մեծ սեղան մը, կարկիններ, մղիչ գործիներ, ձեղունէն կախուած կենդանիներու կմախքներ, տախտակամածին վրայ գլորած երկնագունդեր, ձիագլուխներ (hippocéphales) լայնաբերան շիշերու հետ խառն ՚ի խուռն, որոնց մէջ ոսկի թերթեր կը թռթռային, դէմքերով և գիրերով ծածկուած բարակ մագաղաթներ՝ վրանին մեռելի գլուխներով, բայց և մէկ մէկու վրայ դիզուած հաստ ձեռագիրներ, առանց մագաղաթին դիւրաբեկ անկիւններուն հոգ կամ գութ ցոյց տրուելու․ միով բանիւ՝ գիտութեան բոլոր աղտեղութիւնները, և այս ամեն բաներուս վրայ ու ամեն տեղ՝ փոշի և սարդի ոստայններ, այլ լուսաւոր տառերու շրջանակ չէր տեսնուէր հոն, և ոչ ալ՝ արծուոյն արեգակը նայելուն նման՝ բոցա-

ճաճանչ տեսիլը դիտելու վրայ գիտնական մը՝ հիացական յափշտակութեան մէջ ։

Սակայն խցիկը թափուր չէր․ թիկնաթոռին վրայ մարդ մը նստած էր դէպ ՚ի սեղանը ծռած ։ Թէև Ժէհան անոր ետևը գտնուելով՝ միայն ուսերը և գանկին ետևի կողմը կրնար տեսնել՝ սակայն դժուարութիւն չ՚ունեցաւ այն կունտ գլուխը ճանչնալու, որու բնութիւնը յաւէրժական գերծում մ՚ըրած էր, որպէս թէ այս արտաքին նշանով՝ նախասարկաւագին կղերական անդիմադրելի կոչումը յայտնել, նշանակել ուզելով ։

Ժէհան իր եղբայրը ճանչցաւ ուրեմն, այլ սակայն դուռն այնքան մեղմով բացուած էր՝ որ տէր Քլօտ ոչ մէկ կերպով մ՚անոր ներկայութիւնը չ՚իմացաւ ։ Հետաքրքիր դպրոցականն եղբօրը չդիտելէն օգուտ քաղելով՝ ժամանակ մ՚ուզածին պէս խցիկը քննեց, զննեց ։ Ընդարձակ հնոց մը, զոր առջի բերան չէր դիտած, թիկնաթոռին ձախ կողմը՝ լուսանցոյցին տակով կը տեսնուէր ։ Այս բացուածքէն մտնող լուսոյ ճառագայթը բոլորշի սարդի ոստայնի մը մէջէ կ՚անցնէր, որ իր վարդաձև փափուկ զարդը լուսանցոյցի սրակամարին մէջ ճաշակով կը ծրագրէր, և որու կեդրոնը ճարտարապետ միջատն անշարժ կը կենար, որպէս թէ այս ասղնեգործ ճախարակին միջնանիւն (moyeu) եղած ըլլար ինքը ։ Հնոցին վրայ ամեն տեսակ ամաններ, խճաքարէ սրուակներ, ապակեայ գնդածայր խողովակներ, և երկայնափող անօթներ խառն ՚ի խուռն դիզուած էին ։ Ժէհան դիտեց հառաչելով, թէ փոքրիկ տապակ մ՚իսկ չկար ։ « Եւ սակայն խոհանոցի անօթները բաւական նոր են », մտածեց անիկա ։

Հնոցին մէջ կրակ չկար, և կ՚երևէր թէ երկար ժամանակներէ ՚ի վեր ալ վառուած չէր ։ Ապակեայ դիմակ մը, զոր Ժէհան ալքիմիական սպասներուն մէջ դիտեց, և որ անտարակոյս՝ վնասակար գոյացութիւն մը յարդարած պատրաստած ժամանակը՝ նախասարկաւագին դէմքը պահպանելու կը ծառայէր, փոշեթաթաւ և իբր մոռցուած՝ մէկ անկիւն մը թողուած էր ։ Անոր քով փուք մ՚ինկած մնացած էր, ոչ նուազ փոշելի վիճակի մէջ, ո-

րու վերին երեսը՝ պղնձի տառերով փակցուած՝ այս արձանագրութիւնս կը կրէր. SPIRA, SPERA (ՇՆՉԵԱ՛, ՅՈՒՍԱ՛:

Ոսկերիչներու սովորութեան համեմատ՝ ուրիշ շատ մ'արձանագրութիւններ որմին վրայ գրուած էին. ոմանք մելանով գծուած, այլք մետաղեայ գործիքով: Գոթական տառեր, եբրայական տառեր, յունական տառեր և հռովմէական տառեր, ամենքն ալ խառն 'ի խուռն. արձանագրութիւնք՝ ըստ բաղդի՝ մէկը միւսին վրայ գալով, աւելի նորերն աւելի հիները սրբելով, ուրելով, և ամենքն ալ՝ մայրի ոստերուն նման, պատերազմի նիզակներու նման՝ մէկ մէկու մէջ մտած խառնուած: Եւ յիրաւի, մարդկային բոլոր փիլիսոփայութիւններու, բոլոր մտախոհութիւններու, բոլոր իմաստութիւններու խառնաշփոթ պատերազմ մ'էր այն: Հոս հոն այն արձանագրութիւններէն մին՝ միւսներուն վրայ կը շողշողար, ինչպէս դրօշակ մը՝ տէգերու երկաթեայ ծայրերուն մէջ տեղ: Մէջերնէն շատերը լատին կամ յոյն լեզուով առակաւոր հակիրճ խօսքեր էին, Միջին դարու յատուկ եղած ճարտարութեամբ մը ձեւուած, շարադրուած. զոր օրինակ. Unde? inde? — Homo homini monstrum. — Astra, castra, nomen, numen. — Μέγα βιβλίον, μέγα κακόν. — Sapere aude. — Flat ubi vult. (Ուստի՞. անտի՞: — Մարդիկ գազանք են մարդկէ: — Աստղ, բանակներ, անուն, աստուածութիւն: — Մատեան մեծ՝ չար մեծ: — Ճաշակելու [illegible]: — Շունչ ուր կամի. — և այլն). Երբեմն ըստ երեւոյթին բնաւ իմաստ չունեցող բառ մը, ինչպէս. 'Αναγκοφαγία. — Սնունդ բռնի. — որ թերեւս վանական կառավարութեան դառն ակնարկութիւն մ'էր. վերջապէս երբեմն կանոնաւոր վեցաչափով (héxamètre) գրուած կղերական հրահանգի պարզ վճիռ մը, ինչպէս. Cœlestem dominum, terrestrem dicito domnum. (Կարդացէք առ երկնային աստուած, աստուած երկրային): Նաև եբրայական լեզուով գիւթական ժաժմուկներ (grimoires) կային, որոնցմէ Ժեհան, որ յունարէն իսկ խիստ քիչ գիտէր, բան մը չէր հասկընար, և ամենուրեք ու ամենուն վրայ աստղեր, մարդու կամ կենդանիի պատկերներ կը տեսնուէին, նաև զիրար

կտրող եռանկիւնիներ, որոնք խղկկին մրոտուած պատին այնպիսի թուղթի մը կերպարանք կու տային՝ որու վրայ կապիկ մը մելանաթաթաւ գրիչ մը յածած ըլլայ:

Խղիկն ընդհանրապէս՝ լքման և տակնուվրայութեան տեսարան մը կը ներկայացընէր, և գործիքներուն յոռի վիճակն ալ ներև կը ցուցընէր որ վարպետն ուրիշ զբաղումներով երկար ժամանակէ 'ի վեր իր աշխատութիւններն երեսի վրայ թողած ըլլայ:

Այս վարպետը սակայն, անհեթեթ պատկերներով զարդարուած ընդարձակ ձեռագրի մը վրայ ծռած, կարծես թէ տեսիլով մը կը տանջուէր, կը չարչարուէր. տեսիլ՝ որ կու գար իր խոկումներուն (méditations) կը խառնուէր անդադար: Գէթ այսպէս ենթադրեց Ժեհան անոր ձայնը լսելով, որ բարձրաձայն մտածող ցնորամիտի մը խոհուն ընդհատումներով կը գոչէր.

«Այո՛, Մանու կ'ըսէ զայն և Զրադաշտ մի և նոյն բանը կը սորվեցընէր, արեւը կրակէն կը ծնի, լուսինն արեւէն. կրակը տիեզերքին հոգին է. իր տարրական հիւղէներն անբաւ հոսանքներով անդուլ անդադար աշխարհի վրայ կը զեղուն ու կը վտականան: Երկնից մէջ ուր որ այս հոսանքները զիրար կտրեն՝ լոյս յառաջ կը բերեն, իսկ երկրիս մէջ ուր որ կտրեն՝ ոսկի. . . .: Լոյս, ոսկի մի և նոյն բանն է. . . .: Թանձրացեալ վիճակի մէջ կրակ. . . .: Տեսանելիի ու շօշափելիի տարբերութիւն, մի և նոյն նիւթին համար՝ հաստատունի ու հոսանուտի տարբերութիւն, շոգիի ու սառի տարբերութիւն, ոչ աւելի. . . .: Ասոնք երազ չեն. . . բնութեան ընդհանուր օրէնքն է այս. . . .: Այլ այս ընդհանուր օրէնքիս գաղտնիքը գիտութեան մէջ թափելու համար ինչ ընելու է: Ի՞նչ. այս մի և նոյն հիւղէներն այս ինչ օրէնքով ընդլայնելով՝ ձեռքս ողողող այս լոյսն ոսկի կ'ըլլայ, միայն թէ այն ինչ ուրիշ օրէնքով նոքէն խտացընես զանոնք. . . .: Ինչպէ՞ս պէտք է ընել. . . .: Ոմանք երեւակայեցին թէ արեւու ճառագայթ մը հողին տակ թաղել պէտք է: Ավերրոէս. . . այո, Ավերրոէսն է. . . . Ավերրոէս Կորտուայի մեծ մզկիթին

մէջ, Քօրանի սրբավայրի առաջին ձախ հեծանին տակ այս մըտքով արեւու ճառագայթ մը թաղեց. սակայն գործողութեան յաջողած ըլլալը տեսնելու համար՝ ութ հազար տարիէն վերջը պէտք է նկուղը բանալ:

— Ո՛հ, ըսաւ ժեհան ինքնիրեն, ոսկւոյ մը սպասելու համար խիստ շատ ժամանակ մ'է այդ.

— . . . Այլք մտածեցին, յարեց նախասարկաւագը միշտ մտախոհ՝ թէ Շնիկ աստեղ ճառագայթի մը վրայ գործողութիւն ընելը լաւագոյն էր: Այլ սակայն եկու տես որ Շնիկի անարատ ճառագայթ մ'ունենալ դժուարին է, վասն զի միւս աստղերու լոյսերն ալ յարաժամ կը խառնուին անոր մէջ: Ֆլամել կը կարծէ թէ երկրի հուրին վրայ գործողութիւն ընելը՝ աւելի պարզ ճամբայ մ'է . . . Ֆլամե՛լ. ինչ նախասահմանեալ անուն, flamma! (բոց) . . . : Այո՛, կրակը, ո՛չ ուրիշ բան . . . : Ադամանդն ածուխին մէջ է, իսկ ոսկին՝ կրակին մէջ . . . : Այլ սակայն ինչ կէ ինչպէս հանել ոսկին . . . : Մաժիստրի կը հաստատէ թէ կան կնկան անուններ, որք այնպիսի քաղցր և գաղտնի հրապոյր մը, մոգական ոյժ մ'ունին որ գործողութեան միջոցին զանոնք արտասանելը բաւական է . . . : Կարդանք Մանուի ըսածը. «Ո՛ւր կանայք 'ի պատուի են՝ աստուածութիւնք կը հրճուին. ուր անարգուած՝ Աստուծոյ աղօթելն անօգուտ է: — Կնկան բերանը միշտ սուրբ է ու մաքուր. հոսուն ջուր մ'է, արեւու ճառագայթ մ'է այն: — Կնկան մ'անունը պէտք է գեղեցիկ ըլլալ, անոյշ և հաճելի, պէտք է երկար ձայնաւորներով վերջանալ և օրհնութեան բառերու նմանիլ . . . .»: Այո՛, իմաստունն իրաւունք ունի. Մարիա, Սօֆիա, Իզմիրալ . . . : Անէ՛ծք, միշտ նո՛յն մտածումը»:

Եւ գիրքն ուժով մը գոցեց ու մի և նոյն ժամանակ ձեռքովը սկսաւ ճակատը շփել, որպէս թէ զայն պատող պաշարող տեսիլը վանելու համար. ետքը սեղանին վրայէն սեպ մ'առաւ ու փոքր մուրճ մ'որու կոթը քսպալեան հետաքրքրաշարժ տառերով նկարուած էր:

«Ժամանակէ մ'ի վեր, ըսաւ դառնալի ժպիտով մը, իմ բոլոր փորձերուս մէջ 'ի դերև կ'ելնեմ. տիրող գաղափար մը գրաւած է գլուխս, որ խարանի մը նման ուղեղս կը կիզու: Քասիոտօրի գաղտնիքն անգամ կարող չ'եղայ գտնել, որու կանթեղն առանց իւղի ու առանց պատրոյգի կը վառէր. թէև պարզ բան մ'ըլլալ այն:

— Ի՛նչ խենթ ու խելառ խօսքեր, ըսաւ ժեհան քթին տակէն:

— . . . Ուրեմն, շարունակեց քահանայն, մէկ հնչին մտածում միայն զմարդ տկար ու յիմար գործելու բաւական է: Ո՛հ, Քլօտ Փերնել՝ որ գնիքօլա Ֆլամել վայր կեան մը մեծ գործոյն (grand-œuvre)* հետազօտութենէն չկրցաւ ետ կեցընել, ո՛րչափ պիտի ծիծաղէր վրաս: Ի՞նչ. Եզեկիէլի մոգական մուրճը ձեռքիս մէ՛ջ ունիմ ես. ամեն անգամ որ ահաւոր ռաբբին իր խղիկին մէջէն այս մուրճով սոյն սեպին կը զարնէր, իր դատապարտած թըշնամին, նաև երկու հազար մղոն հեռուն ալ գտնուէր, կանգուն մը հողին մէջ կը թաղուէր ու կը լափուէր անկէ: Ֆրանսայի թագաւո՛րն իսկ, գիշեր մ'անխելքութեամբ այն հրաշագործին դուռը զարկած ըլլալով, իր Փարիզի սալարկին մէջ մինչև ծունկերը խորասուզեցաւ . . . : Այս դէպքս շուրջ երեք դար յառաջ պատահած է . . . : Ա՛րդ, այն մուրճն ու այն սեպն ունիմ ես, այլ իմ ձեռքս՝ դարբինի մը հերիւնէ աւելի ահարկու գործիքներ չե՛ն անոնք: Դժուարութիւնը սակայն, սեպին վրայ զարկած ժամանակն Եզեկիէլի արտասանած մոգական բառը գըտնելուն վրայ է:

— Ի՛նչ հ՛ըլլալիք բան, մտածեց ժեհան:

— Օ՛ն, փորձե՛նք, կրկնեց սարկաւագապետն աշխուժիւ: Եթէ յաջողիմ՝ սեպին գլխէն կապոյտ կայծի մը ցայտելը պիտի տեսնեմ . . . : Էտէն-Հէլլան, Էտէն-Հէլլան . . . : Աս չէ . . . : Սիժէան, Սիժէան . . . : Թո՛ղ այս սեպը Ֆէպիւս անուն կրողին գերեզմա-

* Մեծ գործը, ալքիմիայի մէջ, փիլիսոփայական քարն էր, ոսկի շինելու կարծեցեալ արհեստը: Ծ. Թ.

նը բանայ․․․ ։ Անէծք, մի՛շտ, դարձեա՛լ, յաւիտեա՛ն նոյն գաղափարը »։

Եւ բարկութեամբ մը մուրճը վար նետելով՝ Թիկնաթուին ու սեղանին վրայ այնպէս մը կքեցաւ՝ որ աՀագին յենարանին ետեւէն՝ ալ Ժեհան չկրցաւ զինքը դիտել ու քանի մը վայրկեան գրքի մը վրայ կարկամած ձեռքը տեսաւ միայն ։ Յանկարծ տէր Քլօտ ոտք ելնելով՝ կարկին մ՚առաւ և գլխագիր տառերով պատին վրայ սոյն այս բառս քանդակեց․

ΑΝΑΓΚΗ

«Եղբայրս փախցուցեր է, ըսաւ Ժէհան ինքնովի, շատ աւելի պարզ կ՚ըլլար Fatum (բաղդ, Ճակատագիր) գրել․ ամէն մարդ ո՛չ յունարէն գիտէ, և ո՛չ ալ գիտնալու ստիպուած է»։ Սարկաւագապետը վերստին իր Թիկնաթուին վրայ բազմեցաւ՝ գլուխն իր երկու ձեռացը մէջ դնելով, ինչպէս հիւանդ մ՚որու գլուխը ծանր է ու հրաշէգ ։

Դպրոցականը զարմացմամբ եղբայրը կը դիտէր ։ Ինքը՝ որ միշտ սիրտը հովին բացած էր, և աշխարհի մէջ մի միայն բնութեան օրէնքը կը պահէր․ ինքն որ կը թողուր՝ որ իր կիրքերն իրենց բնական միտումով հոսին ու գոհանան, և որու մեծ յուզումներու լիճը միշտ չոր էր, ըստ որում ամէն առաւօտ նորանոր և մեծամեծ ջրմուղներ կը բանար անոր, չէր գիտեր, չէր երևակայեր թէ ինչ աստիճան մոլեգին սաստկութեամբ մարդկային կրքերու ծովը՝ երբ ամէն ելք, ամէն Ճամբայ գոցուած ժամանակը՝ կ՚եռայ ու կը բորբոքի․ ինչպէս կը կուտակուի, ինչպէս կ՚ուռի, ինչպէս կը զեղանի, ինչպէս սիրտը կը պեղէ․ ինչպէս ներքին հառաչանքներով և խուլ ցնցումներով (convulsions) կը պայթի, մինչև որ թումբերը պատռէ ու փոսը Ճաթեցընէ ։ Քլօտ Ֆրոլլօյի խիստ և սառն պատեանն, այս սեպաձև և անմատոյց առաքինութեան ցուրտ երևոյթը՝ զԺեհան խաբած էր միշտ ։ Զուարթ դպրոցականը չէր մտածած երբեք թէ Եթ-

նայի ձիւնեղէն Ճակատին տակ՝ ինչ եռացող, մոլեգին և խառունկ լաւա մը կը գտնուէր, և չգիտեմք իսկ թէ այս տեսակ խորհուրդ մը յանկարծ Ժեհանի մտքէն անցաւ թէ ո՛չ․ այլ ո՛րչափ որ անխորհուրդ ու թեթևամիտ մէկը՝ հասկըցաւ նա թէ դիտածը պէտք չէր դիտած ըլլալ, թէ եղբօրը հոգին՝ իր ամենածածուկ վիճակներէն մէկուն մէջ տեսած էր բաղդովի, և թէ պէտք չէր որ Քլօտ այս բանս իմանայ ։ Ուստի սարկաւագապետն իր առաջին անշարժութեան դարձած տեսնելով՝ խիստ մեղմով մը իր գլուխն ետ քաշեց, և դրան ետևէն ձայն մը հանեց, ինչպէս նոր ժամանած մէկն որ իր գալուստը կ՚իմացընէ ։

«Մտի՛ր, գոչեց նախասարկաւագը խցիկին ներսէն, ես ալ քեզ կ՚սպասէի, և այս պատՃառով աՀա բանալին դրան վրայ թողուցի․ մտի՛ր, Ժա՛ք վարպետ»։

Դպրոցականը ներս մտաւ անվեհեր, իսկ նախասարկաւագը՝ որ այսպիսի տեղ մ՚այսպիսի այցելութենէ սաստիկ կը նեղուէր՝ իր Թիկնաթուին վրայ սարսռալով՝ «Ի՞նչ, դո՛ւն ես, Ժեհան։

— Միշտ Ժ մ՚է եկողը», ըսաւ դպրոցականն իր շէկ, Ժպիրհ և զուարթ դէմքովը ։

Տէր Քլօտի կերպարանքն իր խիստ հովն առած էր վերստին։

«Ի՞նչ ընելու եկար հոս ։

— Եղբա՛յր իմ, պատասխանեց դպրոցականը խեղճ, ողորմ և համեստ կերպարանք մ՚առնուլ աշխատելով, և անմեղ եղանակաւ մը գլխարկը ձեռացը մէջ դարձընելով, եկայ ձեզմէ խընդրելու․․․ ։

— Ի՞նչ բան ։

— Քիչ մը բարոյական խրատներ, որու մեծ հարկաւորութիւն ունիմ․ չ՚իշխեց Ժեհան աւելցընել բարձրաձայն․ «Եւ քիչ մը դրամ, որու աւելի ևս բուռն հարկաւորութիւն ունիմ։ Իր խօսքին այս մասը բերնին մէջ մնաց ։

— Ժեհա՛ն, ըսաւ սարկաւագապետը ցուրտ եղանակաւ մը, քեզմէ կարի դժգոհ եմ։

— Աւա՜ղ», հառաչեց դպրոցականը ։

Տէր Քլօտ թիկնաթոռովը քառորդ շրջանակ մը գծելով և անթարթափ աչօք Ժեհանի նայելով «Քեզ տեսնելուս գոհ եմ», ըսաւ։

Ահաւոր յառաջաբան մ'էր այս, և Ժեհան խիստ բախումի մը սպասեց։

«Ժեհա՛ն, քու վրայօքդ ամեն օր գանգատներ կը հասնին ինծի։ Ի՞նչ է այն ծեծկռտուքը՝ որու մէջ Ալպէրդ տը Ռամօնշան ըսուած փոքր դերակոմս մը բրածեծ վիրաւորեր ես…։

— Ո՛հ, ըսաւ Ժեհան, երիտասարդ անպիտան մանկլաւիկ (page) մ'որ իր ձին վազցընելով՝ դպրոցի աշակերտները տըղմոտել (escailbotter) կ'ուզէր։

— Եւ ի՞նչ է այս Մահիէ Ֆարկէլի գործը, որու պարեգօտն ես խզեր. «Պարեգօտ պատառեալ» Tunicam dechiraverunt, կ'ըսէ գանգատագիրը։

— Ո՛հ, աւար խօսքը մի՛ կ'ըլլայ. Մօնդէկիւի անշահ կնգղաւոր թիկնոց մը. աս չէ՞ մի։

— Գանգատագիրը tunicam կ'ըսէ և ո՛չ cappettam. Լատիներէն գիտե՞ս»։

Ժեհան պատասխան չտուաւ։

«Այո՛, շարայրեց քահանայն գլուխը ցնցելով. ահա՛ ուսմունք և դպրութիւնք այսօր ո՛ւր հասած են։ Լատիներէնը հազիւ ուրեմն հասկցողներ կը գտնուին, ասորերէնը՝ անծանօթ մնացած է, իսկ յունարէնն այնչափ ատելի եղած՝ որ մեծահմուտ գիտնականներու համար իսկ տգիտութիւն չհամարուիր առանց կարդալու յունարէն բառի մը վրայէ ցատկելը։ «Յունական է բառդ, ուստի և ո՛չ ընթեռնլի» Græcum est, non legitur, կ'ըսեն առանց ամչնալու։

Դպրոցականն անվեհեր աչքերը վեր վերցընելով «Արժանապատիւ իմ եղբայր, կ'ուզե՞ք որ պատին վրայ գրուած այն յունարէն բառը ձեզ թարգմանեմ։

— Ի՞նչ բառ։

— ΑΝΑΓΚΗ»։

Թեթև կարմրութիւն մը սարկաւագապետին ամպափխակ (pommelé) այտերուն վրայ եկաւ սփռուեցաւ, ինչպէս մուխի յանկարծական շեղջ մ'որ հրաբուղխի մը գաղտնարուն ցնցումները դուրս կը յայտնէ։ Դպրոցականը հազիւ այն կարմրութիւնը դիտեց։

«Է՛հ, խօսէ նայիմ, Ժեհա՛ն, ձգում մը թոթովեց անդրանիկ եղբայրը, ինչ կը նշանակէ այս խօսքս։

— ԲԱԽՏ, ՃԱԿԱՏԱԳԻՐ»։

Տէր Քլօտ միւսանգամ տժգունեցաւ, իսկ դպրոցականն անփութութեամբ մը շարունակեց. «Իսկ այն բառն որ մի և նոյն ձեռքով քանդակուած՝ անոր տակը կը գտնուի, Ἀναγνεία. անօրէնութիւն, պղծութիւն, կը նշանակէ. կը տեսնէք թէ յունարէն գիտեմ»։

Սարկաւագապետը, այս յունարէն դասին վրայ մտածումի գինքն առած՝ լուռ ու մունջ կը կենար, իսկ փոքրիկ Ժեհանն որ երես առած տղու մը բոլոր նրբութիւններն ունէր, իր խնդիրը յառաջ քշելու ժամանակն եկած սեպելով կարի անոյշ ձայնով մը սկսաւ.

«Բարի եղբա՛յրդ իմ, այս աստիճա՛ն ատելի՞ եմ ձեզ որ ինձ խոժոռ աչքով նայիք այն պատճառով որ ծեծի օրէնքներու համեմատ քանի մը խեղճ ապտակներ և կռուփներ (pugnalades) իջեցուցի չգիտեմ ինչ ծառաներու և լակոտներու. quibusdam marmosetis։ Կը տեսնէ՞ք, Քլօտ բարի եղբայր, որ լատիներէնս գիտեմ»։

Սակայն բոլոր այս փաղաքուշ շողոմութիւնս անողոք մեծ եղբօր վրայ իր սովորական ներգործութիւնը չ'ունեցաւ։ Կերբերոս մեղրի կարկանդակը չխածաւ։ Նախասարկաւագին ճակատը մէկ խորշոմն՞ իսկ չկորսնցուց։

«Միտքդ ինչ է, գործն ո՞ւր բերել կ'ուզես, ըսաւ չոր շեշտով մը։

— Ահա՛ միտքս, ահա՛ գործը, պատասխանեց Ժեհան աներկիւղ. Ստակի պէտք ունիմ»։

Այս անպատկառ զրուցածիս վրայ՝ սարկաւագապետին դէմքը բոլորովին հայրական և վարժապետական յայտարարութիւն (expression) մը զգեցաւ։

«Գիտես, Պարոն Ժեհան, որ Թիրշաբի մեր աւատը՝ քսան և մէկ տուներուն հողային տուրքն (cens) և հասերն վրայ վրայի հաշուելով՝ մի միայն երեսուն և ինն լիվր տասն և մէկ սու վեց բարիզեան տընէ կը բերէ։ Բաքլէ եղբարց ժամանակի բերածէն մէկ երրորդ աւելի է, այլ շատ բան մը չէ։

— Ստակի պէտք ունիմ, ըսաւ Ժեհան ստոյկութեամբ։

— Գիտես թէ եպիսկոպոսին կողմէ դրուած դատաւորը (official) վճռեց որ մեր քսան և մէկ տուներն եպիսկոպոսին իշխանութեան տակ կը գտնուին, և թէ այս հպատակութեան հարկէն (hommage) ազատելու համար կը պարտաւորինք գերապատիւ եպիսկոպոսին ոսկեզօծ արծաթի երկու մարկ (marcs) վճարել, իւրաքանչիւրը վեց բարիզեան լիվրէ գնով։ Արդ, այս երկու մարկերը տակաւին չկրցայ մէկ տեղ բերել։ Այս բաներս գիտես բոլոր։

— Ես այս գիտեմ որ ստակի պէտք ունիմ, երրորդ անգամ կրկնեց Ժեհան։

— Եւ ինչ պիտի ընես ստակը»։

Այս հարցման վրայ՝ յուսոյ նշոյլ մը Ժեհանի աչաց մէջ շողաց, և իր կատուի շինովի անոյշ կերպարանքն առնելով

«Սիրելի եղբայրդ իմ Գլօտ, ըսաւ, պէշ դիտաւորութեամբ մը չեմ դիմեր ձեզի։ Միտքս ձեր տալիք ստակով գինետուններու մէջ մեծութիւն ծախել չէ, և ոչ Բարիզի փողոցներուն մէջ ոսկեպաճոյճ ձիերու վրայ նստիլ, ետեւէս սպասաւորս ձգած, cum mea laquasio։ Ոչ է, եղբայրդ իմ, չէ, բարեգործութեան մը համար է այն։

— Ինչ բարեգործութիւն, հարցուց Գլօտ սակաւ ինչ զարմացած։

— Երկու բարեկամներ կը փափաքին Հօտրիեան հէք այրի կնոջ մը մանկան համար խանձարուր մը գնել․ ողորմասիրութիւն

մ՚է այս։ Եւ որովհետեւ երեք ֆիօրին պէտք կ՚ըլլայ խանձարուրը գնելու՝ կը փափաքիմ որ մէկ ֆիօրինն ալ ես դնեմ։

— Ի՞նչպէս կը կոչուին այդ երկու բարեկամները։

— Պետրոս-Սպաննող և Մկրտիչ-Սագակող։

— Հըմ, ըսաւ սարկաւագապետը, այդ անուններն այնպէս կը վայլեն բարեգործութեան մը, ինչպէս մեծ թնդանօթ մ՚աւագ սեղանին վրայ կը վայլէ»։

Յայտնի է թէ Ժեհան իր երկու բարեկամի անուններն խիստ ձախող ընտրած էր։ Ասոր այսպէս ըլլալը զգաց ինքն ալ, այլ կարի ուշ։

«Եւ յետոյ զգաս, շարունակեց Գլօտ լրջաբար, ինչ տեսակ խանձարուր է այդ որ երեք ֆիօրին արժէ, և այն՝ Հօտրիեան այրիի մը մանկան համար։ Ո՞րչափ ժամանակէ ՚ի վեր Հօտրիեան այրիք խանձարուրի մէջ երախաներ կ՚ունենան։

Ժեհան նորէն յանդգնութիւնը ձեռք առաւ։

«Շատ աղէկ ուրեմն, ձեզմէ ստակ կ՚ուզեմ Վալ-տ՚Ամուրի (Հովիտ-Սիրոյ) մէջ՝ այս գիշեր Իզապօ լա Թիէրրին տեսնելու համար։

— Պի՛ղծ թշուառական, գոչեց երէցը։

— Ἀναγνεία (անսրբութիւն)», ըսաւ Ժեհան։

Այս վկայութիւնս՝ զոր դպրոցականը թերեւս նենգամտաբար խղիկլին որմէն կ՚առնուր, քահանային վրայ տարօրինակ ներգործութիւն մ՚ունեցաւ։ Պրկունքը խածաւ անիկա, և իր զայրոյթը կարմրութեանը մէջ խափանուեցաւ։

«Գնա՛ սատկիր, ըսաւ այն ատեն Ժեհանի։ Մարդ կ՚սպասեմ։

— Եղբայր Գլօտ, գէթ պզտի փող մը տուր ինծի հաց գնելու համար։

— Կրատիանի օրէնսգրքին ո՞ր մասը հասար, հարցուց տէր Գլօտ։

— Տետրակներս կորսնցուցի։

— Նախնմաստասիրական լատին ուսումներդ (humanités) ինչ վիճակի մէջ են։

— Ովրատիոսի գիրքս գողցուցի։

— Արիստոտէլի ո՞ր տեղերն ես ։

— Ո՛հ, եղբա՛յր, ի՛նչ է այն Հայրապետին անունն որ կ՚ըսէ թէ հերետիկոսներու մոլորութիւնները՝ ամեն ժամանակ Արիստոտէլի բնագանցութեան մացառներն իրենց որջ ունեցած են ։ Կորսուի՛ Արիստոտէլը. ես անոր բնագանցութիւնովը կրօնքս խըրգտել, վիրաւորել չեմ ուզեր ։

— Պատանի՛, կրկնեց նախասարկաւագը, Թագաւորին վերջին անգամ Բարիզ մտած ժամանակը՝ հետն ազնուական մը կար Ֆիլիբ տը Քօմին կոչուած, որ իր ձիուն գաւակը ծածկող պաստառին վրայ իր նշանաբանը նկարակիտել տուած էր, որու վրայ լաւ մ'որոճալդ կը խրատեմ քեզ. «Որ ո՛չ կամիցի գործել, և կերիցէ մի՛». Qui non laborat non manducet» ։

Դպրոցականը՝ ձեռքն ականջին, աչքը գետին յառած և դէմքը զայրագին՝ պահ մը լուռ կենալէ վերջը՝ յանկարծ խաղտանիկի (hoche-queue) մ'աշխոյժ շութափութեամբ Քլօտի դառնալով՝

«Այսպէս, բարի՛ եղբայրս, քաքարապործէ կեղև մ'իսկ գնելու համար՝ փող մը տալու կը մերժես ինձ ։

— Որ ո՛չ կամիցի գործել, և կերիցէ մի՛» ։

Անողոք սարկաւագապետին այս պատասխանին վրայ, Ժեհան՝ հեծկլտող կնոջ մը նման՝ գլուխը ձեռքերուն մէջ առնելով՝ յուսահատութեան ձայնով մը գոչեց. Ο τοτοτοτοτοι!

— Ի՛նչ կը նշանակէ այս, Ժեհա՛ն, հարցուց Քլօտ այս ծըպըրհութեան վրայ զարմացած ։

— Ի՞նչ պիտի նշանակէ», ըսաւ դպրոցականը, և մի և նոյն ժամանակ Քլօտի վրայ անպատկառ աչքեր կը վերցընէր, որոնց մէջ իր բուռերը խոթած էր, որպէս զի լալէն կարմրած ցուցընէ զանոնք ։ «Յունարէն է այս, Էշիլի ոտանաւորի մէկ՛ ոտքն է որ տրտմութիւն կը յայտնէ կատարելապէս» ։

Եւ այսպէս ըսելով այնպիսի խեղկատակ և մեծաձայն քահքահ մը ձգեց՝ որ նախասարկաւագը ժպտեցաւ ։ Եւ յանցանքն ալ ստուգիւ Քլօտինն էր. ինչու այն տղեկին այնչափ երես տուած ըլլար ։

«Ո՛հ, Քլօտ բարի՛ եղբայր, կրկնեց Ժեհան, այս ժպիտով համարձակութիւն առած, տեսէ՛ք անգամ մի կօշիկներս ։ Աշխարհիս մէջ կա՞յ միթէ բան մ'որ այնչափ ցաւալի ըլլայ՝ ո՛րչափ կօշիկ մ'որու ներբանի կաշին այսպէս կախուած է» ։

Նախասարկաւագն որ իր առաջին խստութեան դարձած էր, «Քեզ նոր կօշիկ կը ղրկեմ, այլ ստակ՝ բնա՛ւ» ։

— Բարիզեան աղքատին փոքրիկ փո՛ղ մը միայն, եղբա՛յր, շարունակեց Ժեհան պաղատանօք ։ Կրադիէնը գոց պիտի սորվիմ, Աստուծոյ մեծ հաւատք պիտի ունենամ, գիտութեան և առաքինութեան ճշմարիտ Պիւթագորաս մը պիտի ըլլամ ։ Այլ աղէ՛ փոքր փող մը տուէք ինձ ։ Կ'ուզէ՞ք միթէ որ սովը յօշոտէ զիս իր սոսկալի որկորով, որ հո՛ն, առջևս, բացուած է, աւելի՛ սև, աւելի՛ նեխոտ, աւելի՛ խորունկ քան Տարտարոսը, քան կրօնաւորի մը քիթը» ։

Տէր Քլօտ իր փոթ փոթ գլուխը ցնցեց. «Որ ո՛չ կամիցի...» ։

Ժեհան չթողլով որ իր խօսքը լմնցընէ՝

«Լա՛ւ ուրեմն, գոչեց, սատանայութիւնը ձեռք պիտի առնում՝ կեցցէ՛ զուարթութիւն ։ Գինետունը պիտի երթամ, պիտի ծեծկուիմ, ծախքեր պիտի ընեմ, պոռնիկներ պիտի տեսնեմ» ։

Աս ըսելով՝ գլխարկը դէպ 'ի պատը նետեց և սկսաւ մատներով փայտեայ բամբիռի նման ձայներ հանել ։ Իսկ նախասարկաւագը տխուր դէմքով զինքը կը դիտէր ։

«Ժեհա՛ն, դու հոգի չունիս բնաւ ։

— Ուրեմն, ըստ Եպիկուրոսի հաւատանք՝ անուն չունեցող բանէ մ'եղած՝ չգիտեմ ի՛նչ բան մը չ'ունիմ ես ։

— Ժեհա՛ն, պէտք է ինքզինքդ ուղղելու աշխատիս ։

— Զրուցեցէ՛ք ինձ, եղբա՛յր, գոչեց դպրոցականը հեռազննեալ եղբայրն ու հնոցի մէկէ գործիները դիտելով, ամեն բան ծուռումո՞ւռ է հոս միթէ, թէ գաղափարնե՞րը և թէ շիշե՞րը ։

— Ժեհա՛ն, կարի լպրծուն (glissant) ճամբու մը մէջ ես ։ Գիտե՞ս թէ ու՛ր կ'երթաս ։

— Կապելայ (cabaret) կ'երթամ, ըսաւ Ժեհան ։

— Կապելայն դէպ 'ի նշաւակագործին կը տանի։

— Այդ ալ ուրիշ կանթեղներու նման կանթեղ մ'է, և թերևս աւով Դիոգինէս իր փնտռած մարդը կարենար գտնել։

— Նշաւակագործին կախաղան կը տանի։

— Կախաղանը կշիռ մ'է՝ որու մէկ ծայրը մարդ մը կը գտնուի, իսկ միւս ծայրը՝ բոլոր երկիրը։ Գէշ բան չէ մարդն ըլլալը։

— Կախաղանը դժոխք կը տանի։

— Մեծ կրակ մ'է այդ։

— Ժեհա՛ն, Ժեհա՛ն, վերջը գէշ պիտի ըլլայ։

— Անիրաւ աղէկ է սակայն»։

Նոյն միջոցին սանդուղին վրայ մարդու մը քալելու ձայնը լսուելով՝

«Լո՛ւռ», ըսաւ նախասարկաւագը մատը բերնին տանելով, ահա՛ վարպետ Ժաք եկաւ։ Մտի՛կ ըրէ, Ժեհան, աւելցուց ցած ձայնով, հոս տեսածդ ու լսածդ մարդու չ'պիտի խօսիս։ Շո՛ւտ սա հնոցին տակը պահուըտէ և ամենափոքր ձայն մ'իսկ չ'հանես»։

Դպրոցականը հնոցին մէջ մտաւ կծկուեցաւ, այլ հո՛ն բեղմնաւոր գաղափար մը ծագեցաւ մտքին մէջ։

«Շա՛տ աղէկ, եղբայր Կլօտ, ձայն ձուն չեմ հաներ, այլ փոխարէ՛ն ֆլօրին մը տուէք ինծի։

— Լո՛ւռ. խօսք կու տամ։

— Խօսք մի՛ տար, այլ տուէք ֆլօրինը։

— Ա՛ռ», ըսաւ նախասարկաւագը բարկութեամբ իր խոշոր քսակը նետելով անոր։ Ժեհան հնոցին տակը մտած էր՝ և ահա դուռը բացուեցաւ։

Ե

ԵՐԿՈՒ ՍԵՒԱԶԳԵՍՏ ՄԱՐԴԵՐԸ

Եկող մարդը սև պատմուճան և տխուր դէմք մ'ունէր։ Մեր

բարեկամ Ժեհանի առաջին անգամ աչքին զարկածը (ընթերցողն երևակայած է անշուշտ թէ նորատի հանածվարածն այնպէս մ'իր խորշին մէջ տեղաւորուեցաւ՝ որ ամեն բան ուզածին պէս տեսնէ ու լսէ) այցելուին համակ տխուր հագուստն ու համակ տխուր դէմքն էր. դէմք մ'որու վրայ սակայն հեզութիւն մը կար սփռուած, կատուի կամ դատաւորի հեզութիւն, այսինքն շինովի հեզութիւն։ Վաթսուն տարին կը կոխէր նա, դէմքը խորշոմած էր, մազերը յոյժ ալեխառն. Թարթող աչք, սպիտակ յօնք, կախ շրթունք և խոշոր ձեռքեր ունէր։ Երբ Ժեհան տեսաւ անոր ինչ ըլլալը, այսինքն անպատճառ՝ բժիշկ մը կամ ատենակալ մը, երբ նաև տեսաւ թէ՝ ափշութեան նշան՝ մարդուն քիթը խիստ հեռի էր բերնէն, այսպիսի անհանգիստ դիրքի մ'և անշահ ընկերութեան մը մէջ չգիտեմ որչափ ժամանակ անցընել պարտաւոր ըլլալուն յուսահատած՝ իր ծակին մէջ կըրցածին չափ լաւ կերպով կծկուեցաւ։

Սարկաւագապետն այցելուին ներս մտած ժամանակն առանց ոտք ելնելու՝ նշան ըրաւ անոր որ դրան մօտ գտնուող աթոռակի մը վրայ նստի և քանի մը վայրկեան լռութիւն պահելէ վերջը՝ լռութիւն որ կարծես թէ նախաւոր (antérieur) մտածութիւն մը կը շարունակէր, և մեծութեան կերպարանքով մ'ըսաւ անոր. «Բարի լո՛յս, վարպե՛տ Յակոբ։

— Ծառայ եմ, վարպե՛տ», պատասխանեց սևազգեստ մարդը։

Մէկ կողմէն՝ վարպետ Յակոբ, և միւս կողմէն պատուով մը՝ վարպետ արտասանուելու կերպին մէջ՝ սովորական գործածութեամբ՝ տէրը և պարոնը կամ ֆրանսերէն monseigneur և monsieurի տարբերութիւնը կար։ Յայտնապէս՝ վարժապետին՝ զաշակերտն ընդունիլն էր այս։

«Ի՛հ, ինչ լուր, կրկնեց նախասարկաւագը նոր լռութենէ մը վերջը, զոր չխռովեց վարպետ Յակոբ, կը յաջողի՞ս միթէ։

— Բա՛րէ, վարպե՛տ, ըսաւ միւսը տխուր ժպիտով մը, փչել կը փչեմ, այլ ոսկիի կայծ մ'անգամ չեմ տեսներ, իսկ մոխիր՝ ուզածիդ չափ»։

Տէր Քլօտ անհամբերութեան շարժում մ՚ընելով. «Այդ բանին վրայ չէ հարցումս, վարպետ Ցակոբ Շարմօլիւ, այլ մօգին, կախարդին պատառմանին վրայ։ Կարծեմ Մարք Սընէն էր անունը, հաշուեկալութեան սենեկի մատակարար։ Է՛հ, ինչպէ՞ս է, կը խոստովանի՞ մինթէ իր մողութիւնը. տանջանքը յաջողութիւն գտա՞ւ մի։

— Աւա՜ղ, ո՛չ, պատասխանեց վարպետ Ցակոբ, միշտ իր տըխուր ժպիտովը, այդ մխիթարութիւնը չունինք դժբաղդաբար։ Այդ մարդը կատարեալ վէմ մ՚է ոչ ուրիշ բան, Մարշէ-օ-Բուրսօյի՝ եռացող ջրով զինքը խաշենք իսկ՝ բերնէն բառ մը չ՚պիտի հանէ։ Սակայն ճշմարտութիւնն երեւան հանելու համար բանի մը չեմք խնայեր. ոսկորները բոլորովին տեղէն խախտուած են, ըստ որում անոր համար՝ Սուրբ Ցովհաննու տօնախմբութեան բոլոր խոտերը (հուրերը) կը դնեմք, ինչպէս կ՚ըսէ հին կատակաբանն Բլօդ,

Հանդէպ բրոց, հրաշիկաց երկաթոց, խաչից, շղթայից,
Փոկաց կաշեայց, երկաթեայց, բանդից, ձեռարգելից, յոտս
[և 'ի վիզ՝ երկաթոց։
Advorsum stimulos, laminas, crucesque, compedesque,
Nervos, catenas, carceres, numellas, pedicas, boias.

Այլ բան մ՚օգուտ չըներ. սոսկալի մարդ մ՚է այն, որուն վըրայ բոլոր աշխատութիւններս փուճ կ՚երթան։

— Իր տան մէջ նոր բան մը չգտա՞ր։

— Այո՛, այս մագաղաթս գտայ, ըսաւ վարպետ Ցակոբ իր գըրպանին մէջ փնտռելով զայն։ Վրան անանկ բառեր կայ՝ որոնցմէ բան մը չեմք հասկընար, թէեւ եղեռնական ատենի փաստաբան՝ Ֆիլիբ Լէօլիէն Եբրայեցերէն քիչ մը գիտէ, զոր՝ Պրիւքսէլի մէջ Քանդիրսդէն դուեհի հրէաներուն գործին մէջ սորվեցաւ»։

Այսպէս խօսելով վարպետ Ցակոբ դալարուած մագաղաթը

* Բարիզի մէջ տանջանաց կայաններէն մին։ Ծ. Թ.

կը բանար։ «Տո՛ւր նայիմ», ըսաւ սարկաւագապետը, և աչքը գրին վրայ ձգելով՝ «Զո՛ւտ մողութիւն, վարպետ Ցակոբ, գոչեց։ Էմէն-Հէտան. կախարդական ժողովը հասած ժամանակնին՝ վհուկներու պօռացածն է այս։ Պէր իփսում, էթ քում իփսօ, էթ ին իփսօ. (Per ipsum, et cum ipso, et in ipso!) ասիկա սատանան դժոխքի մէջ կապող կաշկանդող հրամանն է. Հաքս, Փաքս, Մաքս. աս բժշկական բան է, կատղած շուներու խայթուածին դէմ շարադրած (formule) մ՚է։ Վարպետ Ցակոբ, դուն արքայի փոխանորդն ես յատենի Եկեղեցւոյ, և քեզ կ՚իմացընեմ որ այս մագաղաթս սոսկ ամբարշտութիւն կը բուրէ։

— Ուրեմն մարդը միւսանգամ տանջանքի կը դնենք։ Ահա՛ Մարք Սընէի տունը գտնուած ուրիշ բան մ՚ես», աւելցուց վարպետ Ցակոբ, նորէն գրպանը խառնելով։

Ասիկա տէր Քլօտի հնոցին մէջ դէգաղէգ կոտրուած անօթներուն նման բան մ՚էր. «Ո՛հ, ալքիմիայի հալոց մը, ըսաւ սարկաւագապետը։

— Ի՞նչ մեղքս պահեմ, կրկնեց վարպետ Ցակոբ իր վեհերոտ և անշնորհ ժպիտովը, հնոցին վրայ փորձեցի զայն, այլ իմ հալոցէս աւելի՝ արդիւնք մը չցուցուց»։

Սարկաւագապետն ամանը զննել սկսելով՝ «Աս ինչ գրեր է հալոցին վրայ, ըսաւ. Օ՛շ, օ՛շ, լուերը փախցընող բառը։ Այս Մարք Սընէնը տգէտ անբանին մէկն է եղեր։ Յայտնի է թէ ասով ոսկի չ՚շինուիր. և ամառը պառկելու սենեակդ դրուելու կը ծառայէ միայն, ոչ ուրիշ բանի։

— Ըստ որում խօսքերնիս մոլորութեանց վրայ է, ըսաւ արքայի փոխանորդը, բան մը հարցընեմ ձեզ։ Վեր ելնելէս յառաջ Եկեղեցւոյն Ճակատը լաւ մը զննեցի, քննեցի. Ձեր Արժանապատուութիւնը հաստատ է մինթէ որ բնական փիլիսոփայութեան մատենին բացուածքը դէպ 'ի Հօտէլ-Տիէօ (աղքատաց հիւանդանոց) նկարուած է, և թէ՝ Աստուածածնայ ոտքերուն տակ գտնուած եօթ պատկերներուն մէջ՝ դարշապարներուն վրայ թեւեր ունեցողը՝ Հերմէսն է։

— Այո՛, պատասխանեց քահանայն, այսպէս գրած է Օկիւստէն Նիֆօ իտալացի գիտնականը, որու մօրուեղ սատանայ մ'ամէն բան կը սովրեցրնէր: Ի՛նչ և է, հիմա վար կ'իջնենք, և բնագրին վրայ այս բաներս կը բացատրեմ քեզ:

— Շնորհակալ եմ, վարպե՛տ, ըսաւ Շարմօլիւ մինչև գետին ծռելով....: Ո՛հ, ինչպէս կը մոռնայի. երբ կ'ուզէք որ փոքրիկ մոգուհին բռնել տամ:

— Ո՞ր մոգուհին:

— Այն գնչուհին զոր կը ճանչնաք, վասն զի եկեղեցական դատաւորի դրած արգելքին հակառակ կու գայ ամէն օր անդաստակին վրայ կը պարէ, կը կաքաւէ, ու այսահար այծ մ'ունի, որու եղջիւրները դիւական են, որ կարդալ, գրել, Բիքադրիքսի չափ մաթեմաթիքս գիտէ, և որ բոլոր գնչուներու ազգը կախել տալու բաւական է: Դատը պատրաստ է բոլորովին, և քիչ ատենէն պիտի բացուի: Սակայն, Աստուած վկա՛յ, սիրուն արարած մ'է այն պարուհին. անոր աչքերուն նման սև գեղեցիկ աչքեր տեսնուած բան չէ. երկու եգիպտական կարկեհաններ (escarboucles) յիրաւի: Ե՞րբ կը հաճիք որ սկսինք»:

Սարկաւագապետը, որ անհնարին գունատած էր՝ «Ե՛րբ ըսկսուելիքը կը խօսիմ քեզի», թոթովեց հազիւ յօդաւոր ձայնով մը. յետոյ ինքզինքին վրայ ճիգ ընելով կրկնեց. «Մարք Սընէնի հոգ տար:

— Հանգիստ եղիք, ըսաւ Շարմօլիւ ժպտելով, դարձած ատենս զանիկա միւսանգամ կաշեայ անկողնին վրայ պիտի աղխեմ: Սակայն ի՛նչ սոսկալի մարդ որ Բիէրրա Թօրթըրիւն իսկ կը խոնջեցընէ, Բիէրրա Թօրթըրիւն՝ որ ինձմէ աւելի խոշոր ձեռքեր ունի: Ինչպէս կ'ըսէ միշտ այն պատուական Բլօղը.

«Յորժամ կապեալդ ես ոտք ընդ ոտից՝ հարիւր լտերբք, ակլատ լինիս»:

Nudus vinctus, centum pondo es quando pendes per pedes.

Վերամբարձիկ-գլանի (treuil) տանջանքն ունեցած ամենէ ընտիր բաներնիս է: Այս անգամ զայն պիտի փորձեմ»:

Տէր Քլօտ որ տխուր յածանքի (distraction) մը մէջ թարթափուն կ'երևէր՝ Շարմօլիւի դառնալով

«Վարպե՛տ Բիէրրա... վարպե՛տ Յակոբ ըսել կ'ուզեմ, Մարք Սընէնի հոգ տար:

— Այո՛, այո՛, տէ՛ր Քլօտ: Խե՜ղճ մարդ, Միւմմօլի չափ տանջանքներ պիտի քաշէ ձեռքէս: Ի՛նչ խելք, կախարդներու ժողովին երթա՛լ, Հաշուեկալութեան Ատենէի մատակարար մ'որ Շարլըմանի բնագիրը ճանչնալ պէտք էր, «Վհուկ կամ դիմակաւոր» (Stryga vel masca)....: Իսկ այն մանկահասակ աղջիկը... Էզմերալտան, ինչպէս կ'անուանեն զինքը, բռնել տալու համար ձեր հրամանին պիտի սպասեմ...: Ի՛նչպէս կը մոռնայի, Նօդր-Տամի մեծ դրան տակէն անցած ատեննիս՝ պիտի բացատրէք ինծի նաև թէ ի՛նչ կը նշանակէ այն հարթանկար (plate peinture) պարտիզպանը՝ որ եկեղեցին մտած ժամանակդ կը տեսնես: Սերմնացանը չէ՞ ան...: Վարպե՛տ, ի՛նչ բանի վրայ այդպէս կը մտածէք»:

Տէ՛ր Քլօտ՝ իր մտածումներուն մէջ թաղուած՝ Շարմօլիւի խօսքերը չէր լսեր անգամ. այս վերջինը՝ անոր նայուածքին ուղղութեանը հետևելով տեսաւ որ լուսանցոյցէն կախուած մեծ սարդի ոստայնի մը մեքենայաբար յառած էր այն: Այս միջոցիս, անզգոյշ ճանճ մը, մարտի արևը փնտռելով եկաւ այս բարակ ցանցին մէջ բռնուեցաւ, որու սասանելէն՝ ահագին սարդն իր կեդրոնական բջիջէն յախուռն շարժում մ'ընելով, մէկ ոստում ճանճին վրայ ինկաւ, զոր իր առջևի միջատ-եղջիւրներով (antennes) երկուքի ծռեց, միւս կողմէն՝ իր ժանտ կնճիթովը (trompe) անոր գլուխը պեղելով: «Խե՜ղճ ճանճ», ըսաւ արքայի փոխանորդը, և զայն ազատելու համար ձեռքը վեր վերցուց: Նախասարկաւագը, իբր ընդոստ արթնցած՝ ջղաձիգ ուժգնութեամբ մ'անոր թևէն բռնեց:

«Վարպե՛տ Յակոբ, գոչեց, թո՛ղ որ ճակատագիրն իր գործը կատարէ»:

Արքայի փոխանորդը՝ որու այնպէս մ՚եկած էր թէ երկաթեայ ունելիք մ՚իր թեւը բռնած ըլլայ՝ ահաբեկած երեսը դարձուց։ Երէցին աչքն անթարթ էր, խոժոռ, հրացայտ, և ճանճին և սարդին վրայ յառած կը մնար միշտ։

«Ո՜հ, այո՛, շարունակեց քահանայն այնպիսի ձայնով մ՚որ կարծես թէ աղիքներէն կ՚ելնէր, ահա՛ խորհրդաւոր օրինակ մը, նշանակ մ՚ամեն բանի։ Կը տեսնես ճանճն որ այն ինչ ծնած՝ ուրախ զուարթ թռթռալով՝ գարուն, բաց օդ, ազատութիւն կը փնտռէ. բայց սակայն թող զարնուի մէջ մը բոլորշի աղէտաւոր ցանցին, և ահա՛ սարդը դուրս կ՚ելնէ, այն ժանտատեսիլ սարդը։ Հէ՜ք պարուհի, հէ՜ք ճանճիկ նախասահմանեալ։ Վարպե՛տ Ցակոբ, թո՛ղ, թո՛ղ զայն իր ընթացքին. ճակատագի՛րն է այն...։ Ա՜հ, Քլօտ, սարդն ես դու. Քլօտ, միանգամայն և ճա՛նճն ես....։ Դու դէպ ՚ի գիտութիւն, լոյս և արև կը թռչէիր. միայն բաց օդը, յաւէրժական ճշմարտութեան պայծառ լոյսը հասնիլ կը մտածէիր, բայց սակայն ակնախտիղ լուսանցոյցին վրայ նետուած ատենդ՝ լուսանցոյց՝ որ միւս աշխարհին վրայ կը հայի, պայծառութեան, մտքի՛ և գիտութեան աշխարհ, կո՛յր ճանճդ, անմի՛տ գիտնականդ, բաղդին ձեռքով քու և լոյսին մէջ տեղը ձգուած այն սարդի նուրբ ոստայնը չնշմարեցիր, և՝ ողորմելի՛ բախած, յախուռն նետուեցար անոր վրայ, և հիմա գլուխդ ջախջախուած, թեւերդ խլուած, խորտակուած՝ ճակատագրի երկաթի եղջիւրներուն մէջ կը յուզուիս, կը ծփիս...։ Վարպե՛տ Ցակոբ, վարպե՛տ Ցակոբ, թո՛ղ որ ճակատագիրն իր գործը կատարէ։

— Ճշմարի՛տ վկայ, ըսաւ Շարմօլիւ, որ առանց սարկաւագապետին խօսքերը հասկընալու՝ կը դիտէր զանիկա, չեմ դպչիր ես անոր, այլ՝ ա՛ղէ, վարպե՛տ, թողէ՛ք բազուկս. աքցանի նման ձեռք մ՚ունիք»։

Սարկաւագապետը չէր լսեր անոր։ «Ո՜հ, անմիտդ, կրկնեց առանց աչքը լուսանցոյցին վրայէ բաժնելու, և ինչ կը կարծես միթէ. մժղուկի թեւերովդ եթէ այն ահարկու ցանցը ցրու-

ուէիր իսկ՝ կարող պիտի ըլլայիր արդեօք լոյսին ժամանել։ Բա՛րէ, և ի՛նչպէս պիտի կտրէիր անցնէիր աւելի անդին գտնուող ապակին, այն թափանցիկ արգելքը, այն ակնվանեայ պատը՝ պղնձէ աւելի կարծր՝ որ բոլոր փիլիսոփայութիւնները ճշմարտութենէ կը բաժնէ։ Ո՜հ, ունայնութի՜ւն գիտութեան. քանի՛ քանի՛ իմաստուններ խիստ հեռուներէն թռչելով կու գան և գլուխնին կը խորտակեն հոն։ Քանի՛ քանի՛ խառն ՚ի խուռն դրութիւններ բզզալով այս յաւէրժական ապակիին կը զարնուին»։

Լուիզ Քլօտ։ Այս վերջին տեսիլներով՝ որք զայն անզգալի կերպով մ՚ինքզինքին, գիտութեան դարձուցած էին, դոյզն ինչ հանդարտած կ՚երևէր. իսկ Ցակոբ Շարմօլիւ բոլորովին իրութեան զգայումին դարձուց զինքն՝ այս հարցումն ուղղելով. «Ուրեմն, վարպետդ, երբ պիտի գաք ինձ օգնել ոսկի շինելու. յաջողելու մեծ իղձ ունիմ ես»։

Սարկաւագապետը դառնալի ժպիտով մը գլուխը ցնցելով՝ «Վարպե՛տ Ցակոբ, կարդա՛ Միքայէլ Բսելլոսը, «Տրամախօսութիւն ներգործութեան և գործոց դիւաց». Dialogus de energia et operatione dæmonum։ Ըրածնիս բոլորովին անմեղ բան չէ։

— Աւելի մեղմ ձայնով, վարպե՛տ. այդ բանն իմ ալ միտքս կ՚անցնի, ըսաւ Շարմօլիւ։ Բայց սակայն հարկ է անշուշտ դոյզն ինչ ոսկեփոխութեան պատաղիլ երբ մարդ տարեկան երեսուն սկուդ վարձքով արքայի փոխանորդ մ՚է միայն յատենի եկեղեցւոյ։ Միայն թէ մեղմաձայն խօսինք»։

Այս միջոցիս, հնոցին տակէն եկող ծնօտի ու ծամելու ձայն մը Շարմօլիւի ականջը զարնելով՝ անոր անհանգստութիւն պատճառեց։

«Ի՞նչ է այս», հարցուց։

Ժեհան դպրոցականն էր այն, որ իր թաքստոցին մէջ անհնարին նեղուած ու տաղտկացած՝ հուսկ ուրեմն հացի չոր կեղև մը ու բորբոսած պանրի կտոր մը գտնելով՝ առանց ո՛ր և է կերպի ու ձևի՝ իւր մխիթարանք և նախաճաշ՝ ուտելու սկսած էր, և որովհետև փորը սաստիկ անօթի՝ կերած ժամանակը մեծ աղմուկ

կը հանէր, ու ամեն մէկ պատառը սաստիկ կերպով կը շեշտէր. աս բանս ալ փոխանորդին թուղթ պատճառած և ուշադրութիւնը գրաւած էր։

«Իմ կատուս է, ըսաւ աշխուժիւ նախասարկաւագը, որ հոն վարը, մուկ մը բռնած պիտի ըլլայ»։

Այս բացատրութիւնս Շարմօլիւն գոհ ընելով «Յիրաւի վարպետ, պատասխանեց ակնածական ժպիտով մը, ամենէ մեծ փիլիսոփաներն իրենց ընտանի կենդանին ունեցած են։ Գիտէք թէ ինչ կ'ըսէ Սերվիուս. «Չիք ինչ տեղի առանց պաշտպանութեան». (Nullus enim locus sine genio est)».

Նոյն միջոցին տէր Քլօտ, որ Ժեհանի մէկ նոր անխոհեմութենէն կը վախնար, իր պատուական աշակերտին յիշեցընելով թէ 'ի միասին մեծ դրան մէկ քանի պատկերները պիտի քննէին՝ երկուքն եւս խցիկէն ելան, 'ի մեծ [illegible] դպրոցականին, որ առանց կատակի կ'սկսէր վախնալ՝ որ ծունկը կզակին նշանը չ'առնու։

Զ

ԲԱՑ ՕԴԻ ՄԷՋ ԵՕԹ ՀԱՅՀՈՅՈՒԹԻՒՆՔ Ի՛ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹԻ՛Ն ԿՐՆԱ՛Ն ՈՒՆԵՆԱԼ։

«Զքեզ Աստուած գովաբանեմք» (Te Deum laudamus) գոչեց վարպետ Ժեհան իր ծակէն դուրս ելնելով, վերջապէս այն երկու գիշերադէմ բուերը դուրս ելան։ Օ՛չ, ճ՛չ, Հա՛քս, բա՛քս, մա՛քս, լո՛ւ, կատղած շո՛ւն, դե՛ւ. ո՛հ, տաղտկացայ անոնց խօսքերէն և գլուխս զանգակատան մը պէս կը թնդայ, ասոնց վրայ աւելցուր նաև բորբոսած պանիր։ Հայդէ՛, իջնենք, մեծ եղբօր տուած քսակն առնենք, և բոլոր մէջի դրամները գինւոյ շիշերու փոխենք»։

Այն պատուական քսակին պարունակութեանը վրայ խանդադատանաց և հիացման ակնարկ մը ձգեց, վրայ-գլուխը շտկեց, կօշիկները շփեց, սրբեց. իր թեզանիքներուն վրայ լեցուած փո-

շիները խոզանակեց, եղանակ մը սուլեց, կրունկներուն վրայ մէյ մը դարձաւ, քննեց գիտեց թէ խցիկին մէջ վերցընելու բան մը կը գտնուէր արդեօք, հնոցին վրայէն քանի մ'ապակեայ բըժժանքներ գրպանը նետեց, որք իբր գոհար՝ Իզապօ լա Թիէրրիին տրուելու կրնային յարմար գալ, իր եղբօր՝ յետին ներողամտութեամբ մը բաց թողած դուռը հրեց՝ և իր կողմէ յետին նենգամտութեամբ մը բաց թողլով զայն, թռչնիկի մը նման ոստոստելով բոլորշի սանդուղէն սկսաւ վար իջնել։

Ոլորածոյ մութ աստիճաններուն մէջ՝ յանկարծ մէկու մը զարնուեցաւ որ մռմռալով մէկ կողմ քաշուեցաւ։ Գուշակեց թէ Քուազիմոտօն պէտք էր ըլլար նա, և այս բանս իրեն այնչափ զուարճալի երևցաւ՝ որ մինչև սանդուղքէն բոլորովին վար իջնելը խնդումէն երկու կողերը բռնած էր, և հրապարակին վըրայ ելած էր արդէն, ու տակաւին կը խնդար։

Ինքզինքը հողին վրայ գտած կէտին՝ ոտքովն անգամ մը գետին զարնելով «Ո՛հ, ըսաւ, պատուակա՛ն և պատուելի՛ սալարկ Փարիզի. Յակոբի սանդուղքին հրեշտակներն իսկ շնչասպառ ընող անիծեալ սանդուղք։ Ի՛նչ խելքով գացի այն մինչև երկինք բարձրացող քարեղէն պտուտակին մէջ խօթուեցայ. ինչ. անճոռնի պանիր մ'ուտելու և լուսանցոյցէ մը Փարիզի բոլոր զանգակատուները դիտելու համար»։

Քանի մը քայլ ընելով՝ երկու բուերն այսինքն տէր Քլօտն և վարպետ Յակոբ Շարմօլիւն տեսաւ, որք մեծ դրան մէկ քանդակը դիտելու վրայ էին, և ոտքին մատներուն վրայ՝ անոնց մօտենալով, սարկաւագապետին ձայնը լսեց որ Շարմօլիւի կ'ըսէր յուշիկ. «Լազուարթի (lapis-lazuli) գոյնով և եղերքներն ոսկեզօծ այս վէմիս վրայ Յոբ մը քանդակել տուողը՝ Փարիզի Կիյլըօմն եղած է։ Յոբ՝ փիլիսոփայական քարը կը ներկայացընէ, որ կատարեալ ըլլալու համար՝ պէտք է որ նոյնպէս փորձուի ու տանջուի, ինչպէս կ'ըսէ Րայմոն Լիւլ. «Ընդ պահպանութեամբ տեսակարար հանգամանաց ոգի կատարեալ». Sub conservatione formœ specificœ salva anima.

— Ի՞նչ կ՚ուզէ թող ըլլայ, ըսաւ Ժէհան, ես քսակը ձեռք անցուցի ա՛» ։

Այս միջոցիս զօրեղ և հնչական ձայն մը լսեց ետևէն՝ որ հայհոյութիւններու սոսկալի շար մը կը յօդէր․ «Անո՛ւն բաժի, անո՛ւն գլխի, դե՛ւ ու դժո՛խք, բի՛ւր անէծք, անէծք ու շանթ, շանթ ու ժանտ, շանթ ու կայծա՛կ ։

— Ո՛հ, ճշմարիտ, գոչեց Ժէհան, իմ բարեկամս հրամանատար Փէպիւսը միայն կրնայ ըլլալ այս հայհոյողը» ։

Այս Փէպիւս անունը սարկաւագապետին ականջին զարկաւ, այն միջոցին՝ որ արքայի փոխանորդին՝ տաշտի մը մէջ պոչը պահող վիշապը կը բացատրէր․ տաշտ՝ ուսկից մուխ և արքայի գլուխ մ՚ելնելու վրայ էր ։ Տէր Քլօտ սարսուռ մը զգաց, և ՚ի մեծ ապշութիւն Շարմօլիւի՝ խօսքն ընդմիջելով՝ երեսը դարձուց և իր եղբայրը Ժէհանը տեսաւ որ Կոնսալօրիէ օթեանին դրան առջև մեծ պաշտօնաւորի մը կը մօտենար ։

Եւ իրօք ալ Պ․ Փէպիւս տը Շադօբէր հրամանատարն էր, որ իր նշանածին տան անկեան կռթնած՝ սոսկալի կերպով կը հայհոյէր ։

«Ցիրուփ, հրամանատար Փէպիւս, սքանչելի ոճով մը կը հայհոյես ։

— Հո՛ւր ու շանթ, պատասխանեց հրամանատարը ։

— Հուր ու շանթ գլուխդ, կրկնեց դպրոցականը ։ Այս դեղեցիկ գեղեցիկ խօսքերը բերնէդ թափելուդ պատճառն ի՞նչ է, ազնիւ հրամանատար ։

— Ներէ, պատուական ընկե՛րդ Ժէհան, գոչեց Փէպիւս անոր ձեռքը թօթուելով, վազող ձի մը յանկարծակի չկասիր․ արդ՝ ես ալ սրարշաւ կը հայհոյէի, և պատճառն ալ այս էր որ համեստութիւն, զգօնութիւն ծախող կեղծ կիներու քովէ կու գայի․ քանի այն կիներուն ընկերութիւնը թողում՝ բերանս հայհոյութիւններով լեցուն կ՚ըլլայ միշտ, զորս հարկ է որ, դե՛ւ և դժո՛խք, դուրս պոռթկամ, եթէ ո՛չ կը խեղդուիմ ։

— Հետս գալ խմել կ՚ուզե՞ս, հարցուց դպրոցականը ։

Հրամանատարն այս առաջարկութեան վրայ հանդարտած՝ «Կ՚ուզեմ մտադիւր, այլ փող չունիմ, ըսաւ ։

— Ե՛ս ունիմ ։

— Բա՛․ ցուցո՛ւր տեսնեմ» ։

Ժէհան վսեմ պարզութեամբ մ՚եղբօրը տուած սպակի քսակը հրամանատարին ցուցուց, մինչդեռ սարկաւագապետը Շարմօլիւն հո՛ն իր ապշութեանը մէջ թողլով մօտ եկած և քանի մը քայլ անդին կեցած՝ ուշադիր կը դիտէր զանոնք ։ Իսկ երիտասարդ բարեկամները՝ քսակին հայեցողութեամբ զբաղած սաստիկ յոյժ, և ո՛չ իսկ դիտեցին զինքը ։

«Քսա՛կ մը գրպանիդ մէջ, Ժէհա՛ն, գոչեց Փէպիւս ; ջրոյ դոյլի մը մէջ երևցող լուսինի մը կը նմանի, զոր թէև մէջը կը տեսնես, այլ իրօք հոն չէ, և անոր շուքը միայն կը գտնուի հոն ։ Ի՞նչ որ կ՚ուզես գրաւ կը դնեմ որ մէջինները քարի կտորուանք են ։

— Ահա՛ գրպանս լեցուցած քարի կտորուանքներս» , ըսաւ Ժէհան անփութութեամբ, և առանց ուրիշ բառ մ՚աւելցնելու՝ մօտակայ տան մ՚առջև գտնուած անջրպետի խոշոր քարի մը վրայ՝ հայրենիքն ազատող Հռովմայեցւոյ մը կերպարանքով քսակը պարպեց ։

«Տէր Աստուած, քրթմնջեց Փէպիւս, ասպարաւոր դահեկաններ, մեծ-ճերմակներ, փոքր-ճերմակներ, պղնձեայ դրամներ, բարիզեան դրամներ, ճշմարիտ արծուաւոր փողեր ։ Ո՛հ, աչք խտղտեցընող բան է այս» ։

Իսկ Ժէհան ծանր և անտարբեր կը կենար ։ Քանի մ՚արծուաւոր փողեր տղմին մէջ գլորած ըլլալով՝ հրամանատարը, իր հիացումին մէջ, ծռեցաւ որ ժողվէ․ Ժէհան արգիլելով զայն՝ «Բո՛ւհ, Փէպիւս տը Շադօբէր հրամանատար» , ըսաւ ։

Փէպիւս դրամները համրեց, և հանդիսաւոր կերպով մը դէպ ՚ի Ժէհան դառնալով «Գիտե՞ս, Ժէհա՛ն, թէ քսան երեք բարիզեան —— կայ հոս ։ Ըսէ՛ տեսնեմ, Քուբ-Կէօլ գուեհը զո՞վ կողոպտեցիր այս գիշեր» ։

Ժեհան իր խարտեաշ և խոպոպաւոր գլուխը դէպ 'ի ետև ձգելով և աչքերն արհամարհանօք մը կիսովին գոցելով ըսաւ.

«Զգիտեմ թէ նախասարկաւագ և անմիտ եղբայր մ'ունիմ:

— Կրօնք ու շուտիկ, գոչեց Փէպիւս. պատուական մարդ մը յիրաւի:

— Երթանք Թուշէնթ, ըսաւ Ժեհան:

— Ո՞ւր պիտի երթանք. Բօս տ'Էնղը (Խնձոր Եւայի):

— Զէ, հրամանատար, Վինյըն Սէնօ (Հին-Գինութիւն) երթանք: Վինյը տէ մէ Քան տօ (պատուական մ'որ Ճարխանդ կը սղոցէ). երկդիմաբանութիւն մ'է աս, զոր սիրած եմ:

— Երկդիմաբանութիւններն ինչ ընեմ ես, Բօս տ'Էվ ընտրելագոյն է գինին. և ասկէց զատ՝ դրան քով արևուն տակ որթատունկ մը կայ՝ որ խմած ժամանակս կը զուարթացընէ զիս:

— Լաւ ուրեմն, Եւան ու իր խնձորն ըլլայ մեր երթալիք տեղը», ըսաւ դպրոցականը. և Փէպիւսի թևը մտնելով «Ի՛նձ նայէ, սիրելի հրամանատար, քիչ մը յառաջ Քօքօ-Լիէօր (որկոր-կտրող) գուեհն ըսիր. ատիկա խիստ յոռի խօսիլ է. այդպիսի խուժդուժ լեզու մը չէին գործածեր հիմա, և կ'ըսեն Քօքօ-Կօրժ (Պարանոց-կտրող) գուեհ»:

Երկու բարեկամք սակնին ժողվելէ վերջը՝ Բօս տ'Էվ Ճամբայ ինկան. իսկ նախասարկաւագը տխուր ու դժգոհ անոնց ետևէն կ'երթար: Արդեօք այն Փէպիւսն էր այս՝ որու անիծեալ անունը, Կրէնկուարի հետ ունեցած տեսութենէն 'ի վեր, իր մտածութիւններուն կը խառնուէր յարաժամ. ինքն իսկ չէր գիտեր, այլ վերջապէս Փէպիւս մ'էր միշտ, և այս մոգական անունն կը բաւէր յիրաւի որպէս զի նախասարկաւագն անձայն քայլերով երկու անփոյթ ընկերներուն ետևէն իյնայ, անոնց խօսքերը լսելով, և ուշադիր անձկութեամբ մ'անոնց ամենափոքր շարժումները դիտելով: Թէև՝ անցորդներուն իրենց զաղտնիքները լսել իմանալէն ամենևին փոյթ չ'ընելով՝ այնչափ բարձրաձայն կը խօսէին անոնք՝ որ զրոյցներնին լսելու պէս հեշտին բան չկար. մենամարտութեանց, աղջիկներու, գինւոյ կուժերու, խենթութիւններու զրոյցներ:

Փողոցի մը դարձած աստեննին, մօտակայ քառուղիէ մը յանկարծ թմբուկի ձայն մ'ականջնուն գալով՝ տէր Քլօտ՝ պաշտօնակալին ձայնը լսեց որ կ'ըսէր դպրոցականին.

«Շա՛նթ ու կայծա՛կ. քայլերնիս փութացընե՛նք:

— Եւ ինչո՞ւ, Փէպիւս:

— Կը վախնամ որ գնչուհին զիս չ'տեսնէ:

— Ո՞ր գնչուհին:

— Այն որ այծ մ'ունի:

— Էզմերալտան:

— Այո՛, ան. ես ալ միշտ այդ անունը կը մոռնամ: Շուտ քալենք, Ժեհա՛ն, որ չ'տեսնէ զիս. չեմ ուզեր որ այն աղջիկը փողոցի մէջ ինձ մօտենայ:

— Կը ճանչնա՞ս դու զայն, Փէպիւս»:

Հոս սարկաւագապետը՝ Փէպիւսի հեգնական ժպիտով մը Ժեհանի դէպ 'ի ականջը ծռելն և մեղմաձայն անոր քանի մը խօսք խօսիլը տեսաւ, որմէ ետք Փէպիւս քահ քահ մը ձգեց և յաղթական կերպով մը գլուխը թօթուեց:

«Իրա՛ւ, ըսաւ Ժեհան:

— Աստուա՛ծ վկայ, ըսաւ Փէպիւս:

— Ա՞յս գիշեր:

— Այս գիշեր:

— Ապահո՞վ ես թէ պիտի գայ:

— Խե՞նթ ես, Ժեհան, այսպիսի բաներու վրայ տարակուսիլ արժա՞ն է:

— Հրամանատա՛ր Փէպիւս, բաղդաւո՛ր զինուորական մ'ես դու»:

Սարկաւագապետը բոլոր այս խօսակցութիւնս լսած ըլլալով՝ ակռաները կրճտեցին, և սարսուռ մը զգալի կերպով բոլոր մարմնոյն հաղորդուեցաւ: Պահ մը կանգ առնելով՝ գինովի մը նման պատին կռթնելէ վերջը, վերստին երկու զուարթ սրիկաներուն հետքը բռնեց. այլ անոնց մօտ հասած ժամանակը՝ խօսակցութիւնն արդէն փոխած էին, և իրենց բոլոր ոյժովը հին երգի մը նաքարաթը կ'երգէին.

Բըղի-Քարօ թաղի մանկտին
Ձերթ հօրթ կախել տան ինքզինքնին ։

Է

ՈՒՐՈՒԱԿԱՆ-ԿՐՕՆԱՒՈՐԸ

Բօմ տ'Էվէի գերահռչակ կապելայն Համալսարանի մէջ, Րօնտել փողոցին և Պաղօնիէ փողոցին անկիւնը կը գտնուէր։ Գետնայարկի վրայ բաւական ընդարձակ ու խիստ ցած սրահ մ'էր այն, որու կամարի կեդրոնական պարանոցը դեղնանէրկ խոշոր հեծանի մը կը կռթնէր. ամենուրեք սեղաններ, գինիով լեցուն՝ սպատէն կախուած անագեայ փայլուն կուժեր, շատ մը խմողներ, ուղածիդ չափ աղջիկներ, դրան առջև որթատունկ մը, իսկ այս դրան վրայ՝ խնձորով ու կինով գունաւորուած և անձրևէ ժանգոտած աչքի զարնող երկաթաթիթեղ տախտակ մը, երկաթեայ ցաւաղանի մը վրայ՝ հովին ուղղութեամբը դառնալով։ Սալարկը դիտող այս տեսակ մը հողմացոյց դրօշը կապելային նշանատախտակն (enseigne) էր։

Գիշերը կոխելու վրայ էր և քառուղին մութ. կապելայն՝ որու մէջ շատ մը ճրագներ վառուած էին՝ հեռուանց դարբնի հնոցի մը նման կը փողփողէր։ Պատուհաններուն կոտրուած ապակիներէն՝ գաւաթներու, շուայտութեանց, հայհոյութեանց, կռիւներու ձայները դուրսէն կրնար լսել մարդ։ Սրահին ջերմութեան պատճառաւ ապակեայ առաջակողման (devanture) վրայ սփռուած մառախուղին մէջէն՝ հարիւրաւոր շփոթ դէմքեր կը տեսնուէին, մերթ ընդ մերթ՝ հնչական քահ քահի շունչներ ձգելով։ Իրենց բանին գործին գացող անցորդները՝ առանց ակնարկ մը ձգելու, այս գղրդալի ապակին կը քերէին կ'անցնէին. միայն, ատեն ատեն ցնցոտապղեստ փոքր մանուկ մ'ոտքերու մատներուն վրայ՝ տեսնելու չափ բարձրութեամբ՝ ցցուելով, դէպ 'ի ներս այն ծաղրածու այպանական դոչիւնը կը ձգէր, որով

այն ժամանակներն արբշիռները կը հալածէին. «Aux Houls, saouls, saouls, saouls!»։

Մարդ մը սակայն այն ժխորալի գինետան առջևէն կ'անցնէր կը դառնար շարունակ, անդադար ներս նայելով, և ինչպէս նիզակաւոր մ'իր խուղէն (guérite)՝ բնաւ չ'հեռանալով անկէ։ Մինչև քիթը՝ Բօմ տ'Էվէի մօտերը բնակող հնավաճառէ (fripier) մը գնած մէկ կրկնոցովը պարուրուած էր, անտարակոյս՝ մարտի գիշերուան մը զովութիւններէ պատսպարուելու համար, և թերևս՝ իր հագուստը ծածկելու նպատակաւ։ Ատեն ատեն՝ պատուհաններուն պղտոր ապակիներուն առջև կանգ առնելով՝ որք կապարեայ օղակներով պատսպարուած էին՝ միտ կը դնէր, կը դիտէր և ոտքովը գետնին կը զարնէր։

Սպասածը կ'երևէր թէ դրան բացուիլն էր, վերջապէս բացուեցաւ այն և երկու խմողներ (buveurs) դուրս ելան, դռնէն ելնող լուսոյ ճառագայթէ մը՝ շէն և խրախ դէմքերնին շառագունութիւն մ'առնելով։ Կրկնոցաւոր մարդը փողոցին միւս կողմը դաւիթի մը տակ մտաւ և սկսաւ դիտել։

«Ժամն 'ի վերայ, ըսաւ խմողներէն մէկը, հիմա ժամն եօթը պիտի զարնէ, որ որոշած ժամերնիս է։

— Ես կ'ըսեմ քեզ, կը կրկնէր իր ընկերը ծանրացած լեզուով մը, որ Յուլի-Ձրոյցներու փողոցը չեմ բնակիր, «Անարժան ոք է այն՝ որ կայ մնայ 'ի բանս չարս». Indignus qui inter mala verba habitat։ Իմ բնակարանս Ժան-Բէն-Մօլէ փողոցը կը գտնուի, և մեղջերուէ մ'աւելի մեծ եղջիւր մ'ունիս դու եթէ հակառակը պնդես։ Ամենուն յայտնի բան մ'է թէ ով որ արջի մը վրայ անգամ մը հեծնէ՝ վախ ըսուած բանը չունենար ալ. այլ սակայն քիթդ համագամ կերակուրի մը դարձած է, Սէն-Ժաք-տը-լ'Օբիդալի պէս։

— Ժեհան, բարեկամս, գինովցեր ես դու», կ'ըսէր միւսը։

Ժեհան երերալով մը պատասխանեց. «Դու այդպէս կ'ուզես ըսել, Ֆէպիւս, այլ սակայն հաստատուած բան է թէ որսական շան մը կիսադէմն ունէր Պղատոն»։

Ընթերցողք՝ մեր երկու պատուական բարեկամներն, Հրամանատարն ու դպրոցականն ըսել կ'ուզեմ, ճանչցան անշուշտ։ Կ'երեւի թէ զանոնք գիտող լրտեսող մարդն ալ նոյնպէս ճանչցած էր զանոնք, ըստ որում դանդաղ քայլերով ինքն ալ կը հետեւէր այն ամեն ոլորածոյ շրջաններուն՝ զորս դպրոցականը Հրամանատարին ընել կու տար։ Անօգուտ է զրուցել որ Ֆէյլիս՝ իբր աւելի քաջ ու տոկուն խման մը՝ իր բոլոր անխռովութիւնը կարող եղած էր պահել։ Կրկնոցաւոր մարդն ուշադրութեամբ անոնց մտիկ ընելով՝ հետեւեալ հետաքրքրաշարժ խօսակցութիւնն ամբողջապէս կրցաւ լսել։

«Շա՛նթ ու ժա՛նտ. շիտակ քալէ տեսնեմ, պարո՛ն առաջին ատիճանաւոր (bachelier). գիտես թէ քեզմէ բաժնուիլս հարկ է, վասն զի ժամն եօթն է ու կնոջ մը հետ ժամադրութիւն ունիմ։

— Թո՛ղ ինձ հանդարտ։ Աստղեր և հրեղէն նիզակներ կը տեսնեմ։ Տամմարդէնի դղեկին կը նմանիս դու, որ խնդալէ կը ճաթի։

— Մեծ-մօրս երեսի կոծիծներուն վրայ կ'երդնում, Ժեհա՛ն, որ անդլի ծայր ափեղցփեղութիւններ կը խօսիս։ Ի՛նձ նայէ, Ժեհա՛ն, քովդ ստակ չմնա՞ց ալ։

— Պարո՛ն մեծաւոր Համալսարանի, յանցանքն իմս չէ. «Փոքր սպանդանոցն». Parva boucheria։

— Ժեհա՛ն, բարեկամդ իմ Ժեհան, գիտես որ այն դեռահաս աղջկան հետ խօսք առած տուած եմ Սէն-Միշէլի կամուրջին ծայրը գտնուելու, գիտես նաև թէ Ֆալուրտէլի, կամուրջին պառաւ կնոջ, տունը միայն կրնամ տանիլ զայն, և թէ ատոր համար սենեակին վարձքը վճարել պէտք է։ Սպիտակապեխ կաւատուհին ինձ ապառիկ չվճարեր։ Ժեհա՛ն, աղէ, զրուցէ. միթէ կարդաւորին բոլոր քսակը խմեցինք. մէջը բարիզեան փող մ'իսկ չմնա՞ց արդեօք։

— Մեր միւս ժամերը գործելի կերպով անցուցած ըլլալնուս գիտակցութիւնը սեղանի ընտիր ու ախորժելի համեմ մ'է։

— Դե՛ւ և անէծք. բարբաջանքներն ու բաջաղանքները մէկ դի թո՛ղ։ Ըսէ ինձ, կրողին երթալիք անիծից արմատ Ժեհա՛ն, քովդ ստակ մնացա՞ծ է միթէ։ Տո՛ւր, տնաշէ՛ն, եթէ ոչ՝ վրադ գլուխդ պիտի փնտռեմ, նոյն իսկ եթէ Յոբի նման բորոտ, Կեսարու նման քոսոտ եղած ըլլաս։

— Պարո՛ն, Կալիաշ գռեհը՝ գռեհ մ'է, որու մէկ ծայրն Ապակեգործութեան գռեհը կը գտնուի, իսկ միւսը՝ Կտաւագործութեան (Tixeranderie) գռեհը։

— Լա՛ւ է, քա՛ջ է, իրաւունք ունիս, իմ պատուական բարեկամս Ժեհան, իմ բարեսիրտ ընկերս, այո՛, Կալիաշ գռեհն, աղէկ, շա՛տ աղէկ։ Այլ յանո՛ւն Աստուծոյ, ինքզինքիդ եկո՛ւր. գո՛նէ գոնէ մէկ բարիզեան փողի պէտք ունիմ ես, և այս՝ ժամն եօթնին։

— Լռութի՛ւն շուրջանակի և մտադրութի՛ւն սա նաքարաթին.

Ապաւառներն օր մի ուտեն երբ միներ՝
Արաս քաղքի՝ արքայն պիտի ըլլայ տէր.
Եւ ծովըն երբ՝ մեծատարած, ընդարձակ՝
Ամառուան մէջ սառոյց բռնէ բովանդակ՝
Բընակիչներն Արաս քաղքի այն ատեն
Սառին վրայէ պիտի չուեն քաղաքնէն։

— Ո՛հ, Սադայէլի դպրոցական, ո՛հ, լցի՛ւ թէ մօրդ աղիքներովը խղդե՛ն քեզի, այո՛, խղդե՛ն, գոչեց Ֆէյլիս, և սաստկութեամբ մը հրեց գինով դպրոցականը, որ պատին դիմաց սահելով՝ Ֆիլիպ-Օկիւստի քարայատակին վրայ ինկաւ։ Եւ որովհետև խմանի մը սրտէն եղբայրական գթութիւնը չ'ելներ բոլորովին՝ Ֆէյլիս Ժեհանն ոտքովը գլորելով մինչև չուառներու բարձի մը տարաւ, բարձ՝ զոր Նախախնամութիւնը Բարիզի ամեն անջրպետի քարերուն ծայրը պատրաստ կը պահէ, և զոր մեծատունք՝ արհամարհանօք մը՝ աղբակոյտ անունով կը նշանակեն։ Հրամանատարը՝ Ժեհանի գլուխը կաղամբի կոճղերու (trognons) հակ մակարդակի (plan incliné) մը վրայ տեղաւորեց, ուր դըպ-

բոցականը սուտար պատուական վերնաբամբով (basse-taille) մը անդէն սկսաւ խորդալ։ Սակայն հրամանատարին սրտին մէջ ամէն ոխ, ամէն քէն մարած չըլլալով «Հոգս անգամ չէ՝ եթէ սատանային սայլը՝ անցած ժամանակը՝ զքեզ ժողովէ տանի», ըսաւ հէք ուսումնաւորին (clerc), և հեռացաւ։

Կրկնոցաւոր մարդն որ անոր ետևէն երթալէ դադրած էր, գետինն ինկած տարածուած դպրոցականին առջև՝ իբր վարանքի, ծփանքի մը մէջ յուզուած՝ պահ մը կանգ առաւ. որմէ ետք՝ խորունկ հառաչանք մը հանելով՝ ինքն ալ նոյնպէս հեռացաւ անկէց՝ հրամանատարին ետևէն երթալով։

Ինչպէս Ֆէլիքս ու կրկնոցաւոր մարդը՝ մենք ևս՝ թողլով որ Ժեհան բաց երկնքի բարեսէր հայեցուածին տակ նիրհէ՝ անոնց ետևէն պիտի երթանք, եթէ ընթերցողը կը հաճի։

Սէնդ-Անտրէ տէզ Արքի փողոցն ելած ատեն՝ Ֆէլիքս հրամանատարը դիտեց որ մէկն ետևէն ինկած էր և գլխուածով աչքերը դարձընելով՝ տեսակ մ'ուրուական նշմարեց որ իր ետևէն պատերուն երկայնութեամբը կը սողար։ Կանգ առաւ՝ ուրուականն ալ կեցաւ, քալեց՝ նոյնպէս ան ալ քալեց. սակայն հոգն անգամ չըրաւ. «Ի՛նչ կայ մտածելիք, ըսաւ ինքնովի, վրաս փուլ մ'իսկ չունիմ»։

Միշտ ուրուականն ետևէն ունենալով Օդէօնի դպրոցին առջև դադարեցաւ։ Այս դպրոցիս մէջ իբր թէ առած ուսումներուն առաջին պտղաստութիւնը կատարած ըլլալով խեւ դպրոցականի մը սովորութեամբ՝ զոր դեռ մոռցած չէր, երբէք անոր առջևէ չէր անցներ, առանց մեծ դրան աջ կողմը քանդակուած Պետրոս Պերդրան կարտինալի արձանին այն տեսակ մը թշնամանքն ընելու, որու վրայ Ովրատիասի երգիծանութեան մէջ Բրիապէ այնչափ դառնագաւն կը գանգատի, «Բուն թզենույ էի երբեմն. Olim truncus eram ficulnus. և այնչափ ետևէն ինկած էր՝ որ «Eduensis episcopus» արձանագրութիւնը վրայէն սրբուած ջնջուած էր գրեթէ։ Ուստի, դուեհը բոլորովին անցի ըլլալով բառ սովորականի արձանին առջև կասեցաւ, և

այն պահուն՝ որ իր ծոպերը կը կապէր միւսանգամ՝ տեսաւ որ ուրուականը յամր քայլերով իրեն կը մօտենար, այնչափ յամր՝ որ այն ուրուականին կրկնոց մ'ու գլխարկ մ'ունենալը կրցաւ լաւ մը դիտել. իր քովը հասնելով, կանգ առաւ այն ու Պերդրան կարտինալին արձանէն աւելի անշարժ կեցաւ եղած տեղը. սակայն աչքերն անքթիթ Ֆէլիքսի վրայ յառած էին, որոնց մէջ գիշերային կատուի մը բիբէն ելած լուսոյ նման լոյս մը կը շողար։

Հրամանատարը կտրիճ էր և սուսեր 'ի ձեռին՝ գողէ մը վախ ինչ է չգիտէր զգար։ Այլ այս արձանն որ կը քալէր, այս քարացեալ մարդը՝ իրեն արհաւիրք պատճառեցին։ Այն ժամանակները Բարիզի դուեհներուն մէջ գիշերային թափառող ուրուական-կրօնաւորի մը վրայ լսուած չգիտեմ ինչ պատմութիւններ՝ շփոթ և խառն 'ի խուռն կերպով մ'իր միտքն իյնալով քանի մը վայրկեան ափշած շուարած մնալէ վերջը՝ ծիծաղելու գուն գործելով հուսկ ուրեմն լռութիւնը խզեց։

«Պարո՛ն, եթէ գող մ'ես, ինչպէս որ կը յուսամ, ընկոյզի կեղևի մը վրայ յարձակող ծովա-ճայի (héron) մը պէս կ'երևիս ինձ։ Թէև տոհմիկ՝ այլ կործանուած մէկն եմ, սիրելիս, և եթէ կ'ուզես ինձ մտիկ ընել՝ առանց ինձ դպչելու քովի՝ սա դպրոցի մատրան մէջ մտիր, ուր արծաթի սպասներու մէջ զետեղուած ճշմարիտ կենաց-փայտ կը գտնուի»։

Ուրուականին ձեռքը կրկնոցին տակէն ելնելով՝ արծուի մը մագիլի ծանրութեամբ Ֆէլիքսի թևին վրայ ինկաւ։ Մի և նոյն ժամանակ ուրուականը խօսեցաւ.

« Հրամանատա՛ր Ֆէլիքս տը Շադօբեր։

— Ի՛նչ զարմանք, ըսաւ Ֆէլիքս, անունս գիտե՞ս։

— Միայն անունդ չե՛մ գիտեր, կրկնեց կրկնոցաւոր մարդն իր գերեզմանական ձայնով։ Այս գիշեր ժամադրութիւն մ'ունիս։

— Այնպէս է, պատասխանեց Ֆէլիքս յապուշ կրթեալ։

— Ժամն եօթնին։

— Ասկէ քառորդէ մը։

— Փալուրտել կնոջ տունը։

— Ճիշդ այդպէս։

— Սուրբ-Միքայէլ կամուրջի պառաւին։

— Սուրբ-Միքայէլ հրեշտակապետ, ինչպէս որ սովրած մէկ աղօթքս կ՚ըսէ։

— Ամբարիշտ, քրթմնջեց ուրուականը։ Կնոջ մը հետ։

— Ըսածիդ պէս։

— Եւ ի՞նչ է այդ կնոջ անունը։

— Էսմերալտա», ըսաւ Փէպիւս զուարթօրէն. ըստ որում իր բոլոր անհոգութիւնը գտած էր աստիճանաբար։

Այս անունիս վրայ՝ ուրուականին ճիրանը՝ Փէպիւսի բազուկը բուռն սաստկութեամբ մը թօթուեց։

«Հրամանատա՛ր Փէպիւս տը Շադօբէր, կը ստես»։

Ո՛վ որ այս միջոցիս տեսնէր հրամանատարին վառուած բորբոքած դէմքը, դէպ 'ի ետև ըրած բուռն ոստումը, որով զինքը բռնող աքցանէն ինքզինքը կորզեց ազատեց, այն գոռոզ կերպարանքը՝ որով ձեռքը սուրին դաստապանին տարաւ, և այս զայրոյթին, այս սրտմտութեան առջև՝ կրկնոցաւոր մարդուն խոժոռադէմ անշարժութիւնը, ո՛վ որ աս ամեն բանը տեսնէր՝ կ՚ըսեմ, յիրաւի սարսափած պիտի մնար։ Տօն Ժուանի ու արձանի պատերազմին նմանող բա՛ն մը կար այս տեսարանիս մէջ։

«Դե՛ւ և դժո՛խք, գոչեց հրամանատարը. Շադօբէրի մ՚ականջը դուն ուրեք այսպիսի խօսք մը կը լսէ, խօսք մը՝ զոր կրկնելու չպիտի իշխես։

— Կը ստե՛ս», ըսաւ ուրուականն անխռով։

Հրամանատարին ակռաները կրճտեց։ Ուրուական-կրօնաւոր, ոգի, նախապաշարմունք ամեն բան մոռցած՝ ա՛լ ուրիշ բան չէր տեսներ բայց եթէ մարդ ու թշնամանք մը։ «Ո՜հ, ո՜հ, աղէ՛կ, շա՛տ աղէ՛կ», թոթովեց կատղութենէ հեղձամղձուկ ձայնով մը։ Սուրը քաշեց, և կակազելով մը — ըստ որում բարկութիւնն ալ երկիւղի նման մարդու դող կը պատճառէ —. «Հո՛ս, իսկո՛յն, հիմա, թուրե՛րը, թուրե՛րը, արիւն այս սալաքարերուն վրայ»։

Սակայն միւսն որ տեղէն իսկ չէր թնդար՝ երբ իր հակառակորդն ամեն կերպով պատրաստ տեսաւ սուսերամարտի՝

«Հրամանատա՛ր Փէպիւս, ըսաւ դառնալի շեշտով մը, կը մոռնաս ժամադրութիւնդ»։

Փէպիւսի կարգը գտնուող մարդերու յոյզքը՝ եռացող կաթի կը նմանի, զոր պաղ ջուրի շիթ մ՚իսկոյն կը նստեցընէ։ Այս պարզ խօսքս՝ հրամանատարին ձեռքը շողացող թուրը վար իջեցուց։

«Հրամանատա՛ր, շարունակեց մարդը, վաղը, մէկալ օր, ամսէ մը, տասը տարիէն զլուխդ մարմնէդ բաժնելու զիս պատրաստ պիտի գտնես։ Սակայն ժամադրութեանդ գնա՛ նախ։

— Յիրաւի, ըսաւ Փէպիւս, ինքզինքին հետ իբր իրաւախոհ ըլլալ ուզելով, սուր և աղջիկ՝ ժամադրութեան մը մէջ երկու խիստ աղուոր բաներ են, սակայն երկուքն ալ ունենալ կարող եղած ժամանակս՝ մէկուն համար միւսը կորսնցընելու պատճառ մը չեմ տեսներ»։ Այս ըսելով սուրը պատեանը դրաւ։

«Գնա՛ ժամադրութեանդ։

— Պարո՛ն, պատասխանեց Փէպիւս դժուարութեամբ մը. կարի շնորհակալ եմ մարդավարութենէդ։ Կը մտածեմ որ վաղը ժամանակ կրնանք ունենալ Ադամ հօր բաճկոնակը (pourpoint)՝ մեր իւրաքանչիւրին վրայ՝ իր երկայնութեամբը խզտելու և կոճակի տեղեր բանալու։ Շնորհապարտ եմ քեզ որ ախորժելի ժամ մ՚ևս անցընելու թոյլ կու տաս ինձ։ Յոյս մեծ ունէի որ զքեզ փողոցի ուղիին մէջ տարածելէ վերջը՝ դեռ ևս իմ գեղուհւոյս երթալու ժամանակ պիտի ունենայի, մանաւանդ որ այսպիսի պարագայի մէջ կին մը սակաւ ինչ սպասցընելն աւելի ազնիւ ու շնորհքով բան է։ Սակայն առոյգ և յանդուգն մէկը կ՚երևիս ինձ. և այս պատճառով՝ գործը վաղուան թողուլը՝ աւելի ապահով բան պիտի ըլլայ։ Ուստի հիմա իմ ժամադրութեանս կ՚երթամ, որ ժամն եօթնին որոշուած է, ինչպէս որ գիտես»։ Հոս Փէպիւս ականջը քերելով «Ո՜հ, անիծի՛ց արմատ, կը մոռնայի թէ սենեկին վարձքը վճարելու փող չ՚ունիմ, և պառաւ

կուսատուհին տակը կանխիկ պիտի ուզէ, վասն զի վրաս վստահութիւն չունի բնաւ։

— Ահա՛ քեզի դրամ»։

Աս ըսելով՝ օտարականը Ֆէպլիւսի ձեռքին մէջ խոշոր դահեկան մը դրաւ, զոր ասիկա առաւ՝ իրեն պարգև ընող ցուրտ ձեռքը սրտագին սեղմել չմոռնալով։

«Ճշմարիտ վկայ, գոչեց, ընտի՛ր մարդ մ'ես դու։

— Պայման մ'ունիմ, ըսաւ մարդը։ Ցոյց տուր ինձ որ սխալումն իմ կողմս էր, և թէ ճշմարիտը կը խօսէիր։ Զիս անկիւն մը պահէ, ուսկից կարենամ տեսնել թէ այն կինը ստուգիւ անունը տուած կինդ է։

— Ո՛հ, պատասխանեց Ֆէպլիւս, այդ ինձ համար մի և նոյն բանն է, ու կ'ընդունիմ։ Ի միասին Սուրբ-Մարթայի սենեակը կ'առնումք, և քովի եղած շնորջէն (chenil) հեշտեաւ կրնաս տեսնել։

— Երթա՛նք ուրեմն, կրկնեց օտարականը։

— Շա՛տ լաւ. քեզ ծառայելու պատրաստ եմ, ըսաւ հրամանատարը։ Չգիտեմ, թերևս նոյն ինքն Պարոն Դեւն եղած ըլլաս, այլ այս գիշեր լաւ բարեկամներ ըլլանք, վաղը քսակի ու թուրի բոլոր պարտքերս կը հատուցանեմ քեզի»։

Շուտ շուտ քալելու սկսան ու քիչ ատենէն գետին ձայնն իմացուց իրենց թէ Սուրբ-Միքայէլի կամրջին վրայ էին, որ այն ժամանակները տուներով ծածկուած էր։

«Նախ և յառաջ քեզ տունը պիտի տանիմ, ըսաւ Ֆէպլիւս իր ընկերին, անկէ ետքը պիտի երթամ աղջիկս գտնելու, որ Փոքր-Շադլէի մօտ ինձ պիտի սպասէ»։

Ընկերը՝ որ քալելու սկսելնէն 'ի վեր բառ մը չէր հանած բերնէն՝ այս խօսքերուս ալ պատասխան չտուաւ։ Նոյն միջոցին Ֆէպլիւս ցած դրան մ'առջև կանգ առնելով՝ ուժգնութեամբ մը զարկաւ, դրան պատառուածներէն լոյս մ'երևցաւ։

«Ո՞վ է ան, պոռաց ժառատ ձայն մը։

— Շա՛նթ ու ժանտախտ, շա՛նթ ու անէծք, շա՛նթ ու կայ-

ծակ», պատասխանեց հրամանատարը։ Եւ դուռն իսկոյն բացուելով՝ պառաւ կին մ'ու պառաւ կանթեղ մ'երևցան, որոնց երկուքն ալ կ'երերային, կը դողդողային։ Պառաւն երկու ծռուած էր, ցնցոտազգեստ և գլուխը ճօճուն. մանր աչքեր ունէր նա, գլուխը ջնջան մը փաթթած, և ամեն կողմը խորշոմած՝ ձեռքերը, դէմքը, վիզը։ Շրթունքները ներս ներս երթալով լինդերուն տակ կը մտնէին, և բերնին շուրջը ճերմակ մազերու տրցակներ ունէր՝ որք կատուի պեխաւոր ու կեղծաւոր կերպարանք մը կու տային իրեն։ Բնակարանին ներսի կողմն իր աւերակ վիճակովն անորմէ վար չէր մնար. կաւիճէ պատեր, առաստաղին վրայ սև սև մարդակներ, կործանած կրակետեղ (cheminée) մը, ամեն կողմը սարդի ոստայններ. մէջ տեղը՝ կաղ աթոռակներու ու սեղաններու երերուն բազմութիւն մը, աճիւններուն մէջ աղտոտ տղեկ մը, և ներսի կողմը՝ սանդուղք մը կամ աւելի ճիշդ՝ փայտէ ելնարան մ'որ ձեղունին վրայ կափարիչի ձևով դրան մը կը յանգէր։ Ֆէպլիւսի անծանօթ ընկերը՝ այս որջիս մէջ մտած ժամանակը՝ իր կրկնոցը մինչև աչքերը բարձրացուց։ Նոյն միջոցին հրամանատարը՝ մէկ կողմէ հայհոյութիւններ թափթփած ժամանակ՝ առանց ատեն կորսնցընելու սկուդը հանեց և պառաւին տալով՝ «Սուրբ-Մարթայի սենեակը» ըսաւ։

Կուսատուհին «մեծապատիւ տէր» ով սկսաւ խօսիլ անոր հետ, և սկուդը՝ որ սեւակրկնոց մարդուն Ֆէպլիւսի տուածն էր՝ դարանի մը մէջ պահեց. և մինչդեռ կռնակը դարձուցած չէր նայեր հոն՝ կապերտազգեստ և երկայնահեր տղեկը՝ որ մոխիրներուն մէջ կը խաղար՝ գնաց ճարպիկութեամբ մը դարանին մօտեցաւ, և սկուդն առնելով՝ տեղը չոր տերև մը դրաւ, զոր ոստերու տրցակէ մը քաղած էր։

Պառաւը՝ երկու սեպուհներուն (gentilshommes), ինչպէս որ կ'անուանէր զանոնք, նշան ընելով որ ետևէն գան՝ անոնց առջևն անցած սկսաւ ելնարանէն ելնել, և վերին յարկը հասած ժամանակը՝ կանթեղը սնտուկի մը վրայ դրաւ. իսկ Ֆէպլիւս, իբր տան ընտելացեալ յաճախորդ՝ մթին աղախուցի (bouge) մը

դուռը բանալով՝ «Հո՛ս մտիր, սիրելիդ իմ», ըսաւ ընկերին։ Կրկնոցաւոր մարդն առանց բառ մը պատասխանելու ցուցուած տեղը մտնելով դուռը վրայէն գոցուեցաւ, զոր Փէպիւս դրսէն աղխելէ (verrouiller) վերջը՝ պառաւին հետ սանդուղքէն վար իջաւ. աս վերջինը կանթեղը հետն առած էր։

Ը

ԳԵՏԻՆ ՎՐԱՅ ԲԱՑՈՒՈՂ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՈՒ ՊԻՏԱՆՈՒԹԻՒՆԸ

Քլոտ Ֆռոլլօ (ըստ որում կ'ենթադրեմք թէ ընթերցողը՝ Փէպիւսէ աւելի ուշիմ՝ բոլոր այս արկածին մէջ նախասարկաւագէն ուրիշ ուրուական-կրօնաւոր մը տեսած չէ), Քլոտ Ֆրոլլօ քանի մը վայրկեան հրամանատարին զինքը փակած խաւարչտին խորշին մէջ առ խարխափ գնաց, խորշ՝ զոր ճարտարապետք յարկին և կռթնելու չափ բարձր պատին իրար միացած տեղն երբեմնակի կը թողուն։ Փէպիւսի կողմէ խիստ իրաւացի կերպով շնորջ կոչուած այս խուցին ուղղորդ կտրումը (coupe)՝ եռանկիւնի մը պիտի ձևացընէր. ո՛չ երդ ո՛չ պատուհան կը տեսնուէր հոն, և յարկին ծռութեանը պատճառաւ ոտքի վրայ կանգնելու անկարելութիւն ըլլալով Քլոտ փոշիներու և իր ոտքերուն տակը կոտրտուող որմի փլածներու մէջ պարտաւորեցաւ կքուած նստիլ։ Ձեռքերովը չորս կողմը խառնելով գետնէն կոտրուած ապակիի կտոր մը գտաւ, զոր ճակտին կռթնցընելով (ըստ որում գլուխը կրակի նման կ'այրէր) անոր տուած զովութենէն կտոր մ'օգուտ տեսաւ։

Թէ նախասարկաւագին մութ հոգւոյն մէջ ինչեր կ'անցնէր այս ժամուս՝ ինքն և Աստուած միայն կարող էին այս բանս գիտնալ։

Ի՞նչ աղէտաւոր կարգով մտքին մէջ կը շարէր՝ կը կազմէր

նա Էզմերալտան, Փէպիւսը, Յակոբ Շարմօլիւն, իր սիրական մատղաշ եղբայրը՝ զոր տղմին մէջ թողած էր, իր յառաջասարկաւագի պճղնաւորը, քաշքշուելով թերևս Ֆալուրտելի տունն հասած իր հռչակը — բոլոր այս տեսիլները — բոլոր այս արկածները։ Ես որչափ որ կարող չեմ գրել՝ այլ սակայն յայտնի է թէ բոլոր այս մտածումները մտքին մէջ համախումբ սոսկալի կոյտ մը կը կազմէին։

Քառորդէ մ'ի վեր սպասելու վրայ էր, և դարու մը չափ ծերացած կ'զգար ինքզինք։ Յանկարծ փայտեայ սանդուղքէն վեր ելնող մէկու մ'ոտքին ձայնը լսեց. կափարչեայ դուռը բացուելով ու վերստին լոյս մ'երևնալով խուռչին որդնահար դրան վրայ գտնուած մեծկակ ճեղքուածէ մ'երեսը փակցուց, այնպէս որ մերձակայ սենեկին մէջ բոլոր անցած դարձածները տեսնելու կարող եղաւ։ Կատուադէմ պառաւը նախ կափարիչ-դուռէն դուրս ելաւ կանթեղ 'ի ձեռին. յետոյ Փէպիւս՝ պեխերն ոլորելով, յետոյ երրորդ անձ մը, չքնաղ և շնորհագեղ Էզմերալտան։ Քահանայն ակնախտիղ երևոյթի մը նման անոր գետնէն ելնելը տեսնելով սարսուռ մը զգաց, աչացը վրայ ամպ մը ձգուեցաւ, իր շնչերակներն ուժգին զարնել սկսան. իր շուրջը՝ ամեն բան կը շաչէր ու կը դառնար. ա՛լ ո՛չ աչքերը կը տեսնէին, ո՛չ ականջները կը լսէին։

Երբ վերջապէս ինքզինքին եկաւ՝ Փէպիւս և Էզմերալտա միմինակ մնացած էին, փայտեայ սնտուկին վրայ նստած, կանթեղին մօտ՝ որու լոյսով սարկաւագապետն այս երկու աշխոյժ դէմքերն և սենեկին ներսի դին՝ գձուձ խշտեակ մը կը տեսնէր։

Խշտիկին մօտ պատուհան մը կար, որու ապակին, վրան անձրև իկած սարդի ոստայնի մը նման, կոտրտուած պայթած էր, և իր ծակերէն՝ երկնքին մէկ խորշը, և հեռուն՝ կակուղ ամպերու բարձի մը վրայ հանգչած լուսինը կը ցուցընէր։

Անկամարդ աղջիկը խռոված էր, դողդոջուն և երեսները կարմրած. վայրահակ երկար արտևանունքն իր ծիրանի այտերուն հովանի կ'ընէին։ Պաշտօնակալն, որու վրայ աչքերը վեր-

կրնելու չէր ժանր, ուրախութեամբ կը փայփայր։ Մեքենայաբար և անբռնականութեան սիրուն շարժումով մը՝ մատին նայելով անոր ծայրով փայտեայ նստարանին վրայ կցկտուր գիծեր կը գծէր. իսկ ոտքը՝ վրան այծը նստած ըլլալուն՝ չէր տեսնուեր։

Հրամանատարը խիստ աղուոր հագուած կապուած էր. վզին և ձեռքի դաստակներուն վրայ նկարակերտ տրցակներ ունէր, որ այն ատեններու մեծ սնթևեթն էր։

Տէր Գլօտ՝ քունքերուն մէջ եռացող արեան բզզիւնին մէջ իրարու ըսած խօսքերնին մեծ դժուարութեամբ կը լսէր. (թէև երկու սիրողներու խօսքերը հասարակ և սովորական բաներ են միշտ, և յաւիտենական կը [illegible] մը վրայ կը դառնան ու կը դառնան. երաժշտական պիտաութիւն մ'որ անտարբեր մաիկ ընողներու խիստ մերկ և խիստ անհամ կ'երևի, երբ [illegible] մը (fioriture) զարդարուած չըլլայ. այլ Գլօտ իբր անտարբեր մաիկ չէր ըներ)։

«Ո՛հ, կ'ըսէր գեռաբոյս աղջիկն առանց աչքերը վեր վերցընելու, զիս մի՛ արհամարհէք, տէր Ֆէպիւս։ — Կ'զգամ թէ ըրածս գէշ բան է։

— Քե՛զ արհամարհեմ, գեղեցիկ աղջիկ, կը պատասխանէր հրամանատարը բարձր և ազնիւ տարփածութեան (galanterie) ձևով մը, քե՛զ արհամարհեմ. տէ՛ր ողորմեա, և ինչու։

— Քու ետևէդ գալուս համար։

— Այս կէտիս մէջ, գեղուհի՛դ իմ, իրարու չեմք համաձայնիր։ Քեզ արհամարհել պէտք չէի ես, այլ ատել»։

Մանկամարդը սարսափով մ'անոր նայեցաւ։

«Ատե՛լ զիս. և ինչու. ի՞նչ ըրի։

— Ինձ այնչափ աղերսել, թախանձել տալուդ համար։

— Բա՛յց, ըսաւ աղջիկը.... պատճառն այս է որ ուխտ մը կը դրժեմ....։ Պիտի չկրնամ հայրս, մայրս գտնել, զորս կորուսած եմ... բժժանքն իր ոյժը պիտի կորսնցընէ։ Այլ ինչ փոյթ. հօր, մօր ինչ պէտք ունիմ ես հիմա»։

Այսպէս խօսելով ուրախութեամբ և գորովանօք տամուկ՝ իր սևու մեծ աչքերը հրամանատարին վրայ կը յառէր։

«Կրնա՞մ տանի զիս եթէ խօսքերէդ բան մը կը հասկընամ», գոչեց Ֆէպիւս։

Էզմերալտա պահ մը լուռ մնալէ ետքը՝ արցունք մ'աչքերէն ելաւ, ժպիտ մը շուրթերէն ու ըսաւ. «Ո՛հ, տէր իմ, կը սիրե՛մ զքեզ»։

Մանկահասակ աղջկան շուրջն այնպիսի սուրբ զգաստութեան հով մը կար, առաքինութեան այնպիսի հմայք մ'որ Ֆէպիւս անոր քով ինքզինք լիովին 'ի դիւրի չէր զգար. սակայն այս խօսքս իրեն սիրտ և ոյժ տալով՝ «Կը սիրե՛ս զիս, ըսաւ յափշտակութեամբ մը, և իր թևն Եգիպտուհւոյն մէջքին շուրջը բոլորեց, որուն համար այսպիսի պատեհ առթի մը միայն կ'սպասէր։

Քահանայն եղած տեղէն Ֆէպիւսի ըրածը տեսնելով կուրծքին մէջ պահած դաշոյնի մը ծայրը մատովը փորձեց։

«Ֆէպիւս, շարունակեց գնչուհին հրամանատարին պինդ մը փակած ձեռքերը մէջքէն զատելով, դու բարի ես, դու վեհանձն ես, դու գեղեցիկ ես. ես որ խե՛ղճ կորսուած աղջիկ մ'եմ, ազատեցիր զիս։ Երկար ժամանակ կայ որ զիս ազատող պաշտօնակալ մը կ'երազեմ. զքեզ ճանչնալէ յառաջ՝ զքեզ կ'երազէի, ո՛ իմս Ֆէպիւս. երազիս մէջ քուկինիդ նման աղուոր նշանազգեստ մը կը տեսնէի, վեհ կերպարանք մը, թուր մը. Ֆէպիւս անունդ ալ գեղեցիկ անուն է, կը սիրե՛մ ես այդ անունը, կը սիրե՛մ այդ քու թուրդ։ Քաշէ անգամ մը թուրդ, Ֆէպիւս, որ տեսնեմ։

— Տղա՛յ», ըսաւ հրամանատարն և ժպտելով իր մեծ թուրը պատեանէն հանեց։

Եգիպտուհին սուրին երկաթը, դաստապանն և անոր վրայ գտնուած իրարու հետ հիւսուած խառնուած անուան գլխագիրները պաշտելի հետաքրքրութեամբ մը զննել. քննելէ վերջը՝ թուրը համբուրելով ըսաւ. «Կարիճի մը թո՛ւրն ես դու, և ես կը սիրեմ այն կտրիճը»։

Փէպիւս դարձեալ պատեհութենէն օգուտ քաղելով՝ անոր խոնարհած գեղեցիկ պարանոցին համբոյր մը տուաւ, որու վրայ մանկամարդը կեռասի մը նման կարմրցած՝ գլուխը վեր վերցուց։ Իսկ քահանայն՝ միշտ իր տեղէն՝ ակռաները կրճտեց զայս տեսնելով։

«Փէպի՛ւս, ըսաւ Եգիպտուհին, թո՛յլ տո՛ւր ինձ որ քեզի հետ խօսիմ։ Քալէ՛ նայիմ անգամ մը որպէս զի բարձր հասակդ տեսնեմ, և կօշկի կարթերուդ հնչիւնը լսեմ։ Ո՛հ, ո՜րչափ աղուոր ես»։

Հրամանատարն անոր հաճելի ըլլալու համար ոտք ելաւ, գոհունակութեան ժպիտով մը զան սաստելով.

«Ի՛նչ տղայական բաներ կը խօսիս։ Գէթ պաշտօնական տաուատկով (hoqueton) տեսած ես զիս, գեղուհի՛դ իմ։

— Ո՛հ, ո՛չ, պատասխանեց աղջիկը։

— Գեղեցիկն այն է սակայն»։

Փէպիւս եկաւ քովը նստեցաւ, այլ յառաջուանէ շատ աւելի մօտ։

«Մտի՛կ ըրէ, սի՛րելիդ իմ․․․»։

Եգիպտուհին՝ տղայական խօլ, զուարթ ու սիրալի ձևով մը անոր բերնին իր սիրուն ձեռքովը քանի մ'անգամ զարկաւ։

«Ո՛չ, ո՛չ, մտիկ չեմ ըներ քեզ։ Կը սիրե՞ս զիս, այս կ'ուզեմ գիտնալ. կ'ուզեմ որ խօսիս ինձ թէ կը սիրե՞ս զիս։

— Կը սիրե՛մ մի․ իմ անուշակ հրեշտակս, գոչեց հրամանատարը կէս-ծունր դնելով անոր առջև։ Մարմինս, արիւնս, հոգիս, ամէն բան քուկդ է, ամէն բան քեզի համար է։ Կը սիրեմ զքեզ, և քեզմէ զատ ուրիշ մէկը սիրած չեմ»։

Հրամանատարն այսպիսի պարագաներու մէջ այս խօսքերս ա՛յնչափ կրկնած էր, որ եռևէ եռև և առանց ընդհատութեան խօսեցաւ, առանց բառ մը մոռնալու կամ շփոթելու։ Այս խանդավառ յայտարարութեանս վրայ՝ Եգիպտուհին երկնքի տեղ բռնող աղտոտ ձեղունին վրայ հրեշտակային երանութեամբ լի նայուածք մը վերցընելով՝ «Ո՛հ, մրմռաց, ահա այն կէտը՝ ուր

պէտք է մեռնի՛ մարդ»։ Փէպիւս «կէտը» յարմար գտնելով անորմէ նոր համբոյր մ'ևս քաղեց, որ գնաց՝ իր կծկուած խորշին մէջ՝ թշուառ սարկաւագապետը տանջելու։

«Մեռնի՛լ, կրկնեց հրամանատարը սիրատենչիկ շեշտով մը․ ի՜նչ կ'ըսես, չքնաղագեղդ հրեշտակ։ Հիմա է ճիշդ ապրելու կէտը՝ ուր Արամազդ յոփ և շաղաշոյտ մէկը կը դառնայ․ այսպիսի անոյշ բանի մը սկիզբ եղած չեղած մեռնի՛լ։ Հո՛ւր ու շա՛նթ, ի՜նչ տեսակ կատակ է այդ․․․․։ Այդպէս չէ․․․։ Մտի՛կ ըրէ, սիրելի՛դ իմ Սիմիլար․․․ Էզմենարտա․․․։ Ներէ՛ ինձ, այնպիսի տարօրինակ անուն մ'ունիս՝ որ զայն հնչել չեմ կարող, ու մացառի մը նման՝ մէջը կը բռնուիմ։

— Ո՛հ, ըսաւ հէք աղջիկը, ես ալ իր նորանշանութեանը համար՝ գեղեցիկ անուն մը կը կարծէի զայն․ այլ որովհետև անհաճոյ է քեզ՝ կ'ուզեմ ուրիշ անուն մ'առնուլ. Կողօն կոչուի՛մ, կ'ուզե՞ս։

— Ո՛հ, այդպիսի չնչին նիւթի մը վրայ հոգ չընե՛նք, սիրուհիս․ անունիդ վերջապէս կը վարժուիմ ու ամեն դժուարութիւն կը վերցուի․ բաւական է որ անգամ մը գոց սորվիմ զայն։ Մտի՛կ ըրէ ուրեմն, սիրելի՛դ իմ Սիմիլար․ քեզ կալթուցին սիրով կը սիրեմ, զքեզ ա՛յնչափ կը սիրեմ՝ որ յիրաւի զարմանալի ու չտեսնուած բան է։ Աղջիկ մը կը ճանչնամ նորահաս, որ բարկութենէն կը ճաթի․․․»։

Նախանձոտ Եգիպտուհին ընդմիջեց զայն։

«Եւ ո՞վ, ըսաւ։

— Մեզ ի՞նչ փոյթ, ըսաւ Փէպիւս․ կը սիրե՞ս զիս։

— Ո՛հ․․․ ըսաւ աղջիկը։

— Այդ բաւական է․ պիտի տեսնես թէ ես ալ ո՜րչափ կը սիրեմ զքեզ․ թո՛ղ մեծ սատանայն Նեպտունոս իր երեք-ժանիով խոցէ զիս՝ եթէ զքեզ աշխարհի ամենէ բարեբաստիկ արարածը չընեմ։ Տեղ մը սիրուն փոքրիկ բնակարան մը պիտի ունենանք, ուր պատուհաններուն առջև աղեղնաւորներս 'ի հանդէս պիտի հանեմ։ Ամենքն ալ ձիաւոր են և հրամանատար

Մինեօնի գնտաւորներն իսկ կը գերազանցեն։ Մէջերնին սակրաւորներ (voulguiers) կան, բաղխստրաւորներ (cranequiniers) և թնդանօթաձիգներ (coulevriniers)։ Քեզ. Բիւլլիի դաշտին մէջ՝ բարիզցիներու զինուորական մեծ հանդէսներուն (monstres) պիտի տանիմ, որ սոսկալի փառաւոր բան է։ Ութսուն հազար ըսպառազէն մարդեր, երեսուն հազար սպիտակ զէն ու զարդեր, վերտ զրահներ (jaques) կամ պրիկանտիններ, արհեստներու վաթսուն և վեց նշանները, խորհրդարանին, հաշուեկալութեան սենեկին, փողերական խորհրդականներու դիւանին (trésor des généraux), հարկաժողով ատենին (aides des monnaies) դրօշակները. խելքէ մտքէ դուրս կազմած մը, պատրաստութիւն մը (arroi) վերջապէս։ Նաև Թագաւորի-Պալատին Առիւծները պիտի տանիմ ցուցնեմ քեզ, որք շինկերէներ են, և ամեն կին զանոնք տեսնել կ'ախորժի»։

Ժամանակէ մ'ի վեր գեղափթիթ աղջիկը, իր սխրալի մտածումներուն մէջ թաղուած՝ առանց Փէպիւսի խօսքերուն ուշ դնելու՝ անոր ձայնովը մտախոհ կ'ըլլար։

«Ո՛հ, գերերջանիկ պիտի ըլլաս դու», շարունակեց հրամանատարը, և մի և նոյն ժամանակ մեղմով մ'Եղիպտուհւոյն գօտիին ճարմանդի սլաքը կը քակէր։

«Ի՞նչ կ'ընես այդպէս», ըսաւ աղջիկն աշխուժիւ. այս [illegible] խաղն իր մտախոհութենէ արթնցուցած էր զինքը։

— Ոչի՛նչ, պատասխանեց Փէպիւս. միայն կ'ըսէի թէ այդ գռեհէ գռեհ վազվռտելու անհեթեթ հագուստդ պէտք է մերկանաս, երբ ինծի հետ ես։

— Երբ քեզի հետ եմ, Փէպիւսդ իմ», ըսաւ մանկամարդն անհնարին գորովանօք, և միւսանգամ իր լռին մտախոհութեանը մէջ սուզուեցաւ, թաղուեցաւ։

Հրամանատարը, անոր մեղմութենէ սիրտ առած՝ մէջքէն բռնեց և տեսնելով թէ ո՛չ այլ ևս կ'ընդդիմանայ՝ սկսաւ կամացուկ մը հէք աղջկան պատմուճանին իրանի մասը (corsage) քակել և անոր փողն ու կուրծքը ծածկող ծփուն հանդերձանքն (gorge-

rette) այն աստիճան տեղէն խախտեց՝ որ քահանայն՝ շունչը բռնուած՝ շղարշին (gaze) տակէն գնչուհւոյն չքնաղ ուսին ելնելը տեսաւ՝ կլոր և թուխ՝ ինչպէս միգապատ հորիզոնի մը մէջ ելնող լուսինը։

Ծաղկափթիթ աղջիկը՝ Փէպիւսն ազատ կը թողուր։ Կարծես թէ անոր ըրածը չէր գիտեր կամ չէր զգար իսկ, մինչդեռ յանդուգն հրամանատարին շողշողուն աչքերը հուր ու բոց կ'արձակէին։

Ցանկարծ պատանուհին անոր դառնալով՝ «Փէպիւս, ըսաւ անհուն սիրոյ բացատրութեամբ մը, սորվեցո՛ւր ինծի քու կրօնքդ։

— Կրօ՞նքս, գոչեց հրամանատարն ահագին քահ քահ մը ձգելով. շա՛նթ ու ժա՛նտ, ինչ պիտի ընես կրօնքս։

— Կարգուելու համար», պատասխանեց մանկամարդը։

Այս խօսքիս վրայ՝ հրամանատարին դէմքը՝ զարմացման, արհամարհութեան, անփութութեան և վաւաշ ցանկութեան բացատրութիւն մ'առնելով համանգամայն՝ «Բա՛, ըսաւ, կարգուիլն ինչ պիտի ըլլայ»։

Գնչուհւոյն գոյնը նետեց և գլուխը կուրծքին վրայ ինկաւ։

«Գեղեցի՛կդ իմ սիրուհի, կրկնեց խանդակաթ շեշտով մը Փէպիւս, ինչ խենթ ու խելառ բաներ են անոնք։ Ի՞նչ պիտի ըլլայ ամուսնութիւնը. քահանայի մը կրպակին մէջ մէկ շատ գրաբառներ չկարդացուելուն պատճառաւ՝ մէկ մէկու ունեցած սէրերնիս միթէ աւելի նուա՞զ, աւելի տկա՞ր պիտի ըլլայ»։ Իր ամենադաշն ձայնով այսպէս ահա խօսելով՝ հրամանատարը՝ Եգիպտուհւոյն բոլորովին կը մօտենար, և իր ձեռքերը գգուանօք այն նուրբ ու փափուկ մէջքին շուրջն իրենց առջի տեղն առնելով և աչքը դամ քան զգամ վառելով՝ յայտնի կ'երեւէր թէ այնպիսի վայրկենի մը հպելու կէտին մէջ կը գտնուէր՝ ուր նոյն ինքն Արամազդ այնչափ խենթ ու մենթ ու անպարկեշտ գործեր կ'ընէ՝ որ բարեմիտն Հոմերոս կը հարկադրուի ամպ մը իրեն օգնութեան կոչել։

Սակայն տէր Քլօտ՝ դրան բոլորովին փտած տախտակներուն

մէջէն՝ որք իր երէ-որսակ թռչնոյ (oiseau de proie) նայուածքին՝ լայն լայն բացուածքներ կը ներկայացընէր, ամեն բան կը դիտէր, ամեն բան կը տեսնէր։ Մինչև այն ժամանակ վանական կուսակրօն խիստ վարուց դատապարտուած այս թխամորթ և լայնուս քահանայն՝ այս սիրոյ և գիշերային հեշտութեան տեսարանիս առջև կը սարսռէր ու կ՚եռար, և այն կրակոտ երիտասարդին յանձնուած ծաղկահաս և գեղանի աղջկան տեսքն իր երակներուն մէջ հալած կապար կը քալեցընէր։ Իր ներսի կողմը տարօրինակ յուզմունքներ կ՚անցնէին ու իր աչքը վերուստ 'ի վայր՝ վաւաշոտ նախանձով մ՚այն քակուած ասեղներուն տակովը կը նայէր։ Ո՛վ որ այս պահուս թշուառին՝ որդնահար վանդակներուն յարած դէմքը տեսնէր՝ պիտի կարծէր թէ վագր մը կը տեսնէ՝ որ իր վանդակին խորէն շնագայլի մը վիթ մը յօշոտելը կը դիտէ։ Դրան ճեղքուածներուն մէջէն՝ իր բիբը ճրագի մը նման կը շողար։

Յանկարծ Ֆէպլիւս Եգիպտուհւոյն փողի ու կուրծքի ծածկոյթն արագ շարժումով մը մէկ դի առնելով՝ հէք աղջիկն որ տժգոյն ու մտախոհ մնացած էր, իբր ընդոստ՝ արթնցաւ, և ձեռներէց պաշտօնակալէն վաղվաղակի հեռանալով՝ իր մերկ կուրծքին և ուսերուն վրայ ակնարկ մը ձգեց՝ շառագոյն, ակնկոր, և ամօթէն լեզուն բռնուած՝ կուրծքը ծածկելու համար՝ իր երկու չքնաղ բազուկներն անոր վրայ խաչաձև բռնեց։ Եթէ իր այտերը վառող բոցը չըլլար՝ զինքն այսպէս լուռ և անշարժ տեսնողը՝ Ամօթխածութեան արձան մը պիտի կարծէր։ Իր աչքերը միշտ դէպ 'ի վար հակած կը մնային։

Հրամանատարն ըրած շարժումով աղջկան վզէն կախուած խորհրդաւոր բժժանքն երևան հանած ըլլալով՝ «Ի՞նչ է այս, հարցուց, շրտեցուցած գեղուհւոյն մօտենալու համար այս պատրուակս բռնելով։

— Մի՛ դպնար, պատասխանեց աղջիկն աշխուժիւ, իմ պահապանս է այն ու ընտանիքս գտնել պիտի տայ ինձ եթէ արժանի մնամ։ Ո՛հ, թո՛ղ ինձ, պարո՛ն հրամանատար. մա՛յրս, իմ հէք

մայրս, ո՛ւր ես, օգնութեա՛ն հասիր։ Շնո՛րհք, պարո՛ն Ֆէպլիւս, ետ դարձուցէ՛ք կուրծքիս ծածկոյթը»։

Ֆէպլիւս ընկրկելով՝ պաղ ձայնով մը՝ «Ո՛հ, օրիո՛րդ, ըսաւ, ո՛րչափ յայտնի կը տեսնեմ թէ չես սիրեր զիս։

— Չե՛մ սիրեր զա՛ն, գոչեց տարաբաղդ աղջիկը, և մի և նոյն ժամանակ հրամանատարին վզէն կախուելով՝ զան իր քովը նըստեցուց։ Չե՛մ սիրեր զքեզ, իմս Ֆէպլիւս. սիրտս յօշոտելու համար այդ ի՛նչ խօսք զրուցեցիր։ Ո՛հ, եկո՛ւր, ա՛ռ զիս, ա՛ռ ամեն բան. ինձ հետ ինչ որ կ՚ուզես՝ ըրէ. ես քո՛ւկդ եմ։ Ի՞նչ փոյթ բժժանքը. ի՛նչ փոյթ մայրս. մայրս դո՛ւ ես, որովհետև կը սիրեմ քեզի։ Ֆէպլի՛ւս, սիրեցեա՛լդ իմ Ֆէպլիւս, կը տեսնե՞ս զիս. ե՛ս եմ, նայէ՛ ինձի. այն փոքր աղջիկն եմ ես՝ որ կու գայ, կու գա՛յ ինքնին զքեզ գտնելու, և զոր բարեսրտութեամբ կը հաճիս ընդունիլ, չմերժել։ Հոգիս, կեանքս, մարմինս, բովանդակ անձս քո՛ւկդ է, քե՛զ կը վերաբերի, իմ սիրելի՛ հրամանատարս։ Լա՛ւ ուրեմն. չկարգուինք, որովհետև կը խորշիս կարգուելէ. և ասկէ զատ, ի՛նչ եմ ես. գռեհի խե՛ղճ ողորմելի աղջիկ մը. մինչդեռ դու, Ֆէպլի՛ւսդ իմ, տոհմի՛կ մ՚ես, ազնուակա՛ն մ՚ես, սեպո՛ւհ մ՚ես։ Ի՛նչ արժանաւոր բան կ՚ըլլար ստուգիւ որ պարուհի մը բարձր պաշտօնակալի մը հետ ամուսնանայ. ես խենթ էի։ Ո՛չ, Ֆէպլիւս, ո՛չ. քու տարփուհիդ պիտի ըլլամ ես, քու զբօսանքդ, քու զուարճութիւնդ՝ երբ որ ուզես. վերջապէս աղջիկ մ՚որ քո՛ւկդ է ամեն կերպով։ Այդ բանին համա՛ր եղած եմ ես — արատուած, քամահրուած, անպատիւ, այլ ի՛նչ փոյթ, քանի որ սիրուած եմ։ Կիներէն ամենէն հպարտն ու ամենէն նախանձոտը պիտի ըլլամ։ Եւ երբ ծերանամ կամ տգեղնամ, Ֆէպլիւս, երբ զքեզ սիրելու յարմար չըլլամ ա՛լ, սեպո՛ւհ, զիս ծառայութեանդ պիտի ընդունիս, այնպէս չէ՞։ Ուրիշները քեզ երիզներ պիտի բանին, իսկ ես, աղախինս, հոգ պիտի տանիմ անոնց։ Պիտի թողուս ինձ, այնպէս չէ՞, որ խթաններդ փայլեցընեմ, տաւատակդ խոզանակեմ, ձիու կօշիկներդ մաքրեմ. այս գթասրտութիւնս պիտի ունենաս, այն-

պէս չէ՞։ Առ այժմ, ա՛ռ զիս, ա՛ռ, Փէպլիս, բոլոր անձս քուկդ է. սիրէ զիս միայն։ Մեզ, Եգիպտուհեացս, ա՛ս միայն պէտք է. ազատ օդ և սէր»։

Այսպէս խօսելով բազուկները պաշտօնակալին վզին շուրջը կը բոլորէր, և պաղատալի ու արտասուախառն գեղեցիկ ժպիտով մը վարէն վեր կը նայէր անոր։ Իր փափուկ վիզն անոր չուխայէ բաճկոնակին և կարծր աղնեկխութեանց կը քսուէր, և իր կիսամերկ աղուոր մարմինն երիտասարդին ծունկերուն վրայ կը գալարէր։ Հրամանատարն ինքզինքէն ելած՝ իր հրատապ շրթունքներն այն ափրիկեան շքեղ ուսերուն պինդ մը յարեց. մինչդեռ մատղաշ աղջիկը՝ դէպ ՚ի ետև կախուած և աչքերը ձեղունին վրայ հաստատուած, այս համբոյրիս տակ կը սարսռէր, կը տրոփէր։

Այս կէտիս՝ յանկարծ Փէպլիսի գլխուն վրայօքն ուրիշ գլուխ մը տեսաւ. դժոխքի նայուածքով՝ կապուտակ, կանանչ, ջղաձիգ դէմք մը, իսկ այս դէմքին մօտ՝ դաշոյնով զինուած ձեռք մը կ'երևէր։ Քահանային դէմքն ու ձեռքն էր այն, որ իր թաքըստոցին դուռը խորտակելով հոն կը գտնուէր. իսկ Փէպլիս չէր տեսներ զան։ Պատանուհին այն զարհուրելի երևոյթին ներգործութեան տակ՝ անշարժ, սառած և անշշունչ մնաց — ինչպէս՝ կլոր-աչուեան ծովարծիւի (orfraie)՝ իր բոյնին մէջ նայած ժամանակը՝ աչքերը վեր վերցընող աղաւնի մը — և ձայն մ'իսկ չկրցաւ հանել, երբ նոյն դաշոյնին Փէպլիսի վրայ իջնելն և ծխաշունչ վեր ելնելը տեսաւ սարսափով։

«Անէծք», ըսաւ հրամանատարն և ինկաւ գետին։

Իսկ գնչուհին նուաղեցաւ։ Այն կէտին՝ որ աչքերը կը գոցուէին և որ և է զգացում կը կորսնցընէր՝ իրեն այնպէս թուեցաւ թէ հրոյ հպում մը, դահիճի հրաշէկ երկաթէն աւելի ջերմակէզ համբոյր մ'իր շրթանցը վրայ կը դրոշմուէր։

Երբ վերջապէս սթափեցաւ՝ գիշերապահ զինուորներէ ինքզինքը պաշարուած գտաւ, մինչդեռ միւս կողմէն հրամանատարը՝ արիւնաթաթաւ վիճակի մէջ՝ վերցուցած կը տանէին. իսկ քահա-

նայն աներևոյթ եղած էր. գետին վրայ նայող սենեկին խորի պատուհանն երեսի վրայ բաց կը տեսնուէր, և գետնէն կրկնոց մը գտած էին, որ ըստ կարծեաց՝ պաշտօնակալինն եղած ըլլար։ Իր շուրջը ձայներ կը լսէր որք կ'ըսէին.

«Վհուկ մ'է նա որ դաշոյնով հրամանատար մը վիրաւորեց»։

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Ա

ԶՈՐ ՏԵՐԵՒԻ ՓՈԽՈՒԱԾ ՍԿՈՒԴԸ

Կրէնկուար ու բոլոր Հրաշից Ապարանքն անհնարին անձկութեան մը մէջ կը գտնուէին, վասն զի ամբողջ ամսէ մ'ի վեր ոչ ոք գիտէր թէ ինչ եղած էր Էզմերալտան, և աս բանս կարի յոյժ կը տխրեցընէր Եգիպտոսի դուքսն ու իր բարեկամ չուառականները, նոյնպէս թէ ինչ եղած էր անոր այծը, և այս դժբաղդութիւնս Կրէնկուարի տխրութիւնը կը կրկնապատկէր։ Իրիկուն մ'Եգիպտուհին աներևոյթ էր եղած, և անկէ 'ի վեր կենդանութեան նշան մը չէր տուած, ու իր վրայ ամեն խուզարկութիւն 'ի դերև ելած էր։ Քանի մը լլկիչներ՝ Կրէնկուարը բարկացընելու համար՝ նոյն իրիկունը Սուրբ-Միքայէլ կամուրջին կողմերը՝ գեղադէմ պաշտօնակալի մը հետ տեսած ըլլալնին կ'ըսէին իրեն։ Սակայն գնչուներու եղանակաւ այս ամուսինը՝ թերահաւատ փիլիսոփայ մ'էր, և ասկէ զատ՝ իր կնոջ ինչ աստիճան կոյս ըլլալն ամենէն աւելի գիտէր ու փորձած էր։ Եգիպտուհւոյն առաքինութեանն ու բժժանքին զօրութեան իրարու հետ զուգուելէն, խառնուելէն ինչ տեսակ անվկանդ պատկառանք մը յառաջ եկած ըլլալուն լաւ մը հասու եղած՝ իրեն հաւասար արտադրիչով մը բազմապատկուած այս ողջախոհութեան (chasteté à la seconde puissance) ընդդիմադարձ ոյժը մաթեմաթիքաբար հաշուած էր նա, ուստի և այս կողմէն հանդարտ էր բոլորովին։

Սակայն և այսպէս ինքը Կրէնկուար ևս այս անհետումս չէր կրնար բացատրել, որ մեծ ցաւ մ'էր իր սրտին, և ասոր հա-

մար՝ եթէ աւելի նիհարնալ կարելի ըլլար՝ ստուգիւ պիտի նիհարնար։ Աս պատճառաւ ամեն ինչ մոռցած, բարձ 'ի թողի ըրած էր մեր պոէտը, մինչև իսկ իր գրական եռանդը, մինչև իսկ իր մեծ գործը «Զկանոնաւոր և զանկանոն ձեւոց» De figuris regularibus et irregularibus, զոր առաջին անգամ ստակ ձեռք անցընելուն տպել տալ որոշած էր։ (Վասն զի Վենտըլէն տը Սբիրի հաշակաւոր տառերով տպագրուած Հիւկ տը Սէն Վիքթօրի Տիտասքալիքոնը տեսնելէն 'ի վեր՝ գիշեր ցորեկ ուրիշ բան չէր երազեր՝ բայց եթէ տպարան)։

Օր մը՝ եղեռնական խորհրդարանին առջևէն տրտում տխուր անցած ժամանակը՝ Արդարութեան-Պալատին դռներէն մէկուն մէկուն առջև բազմութիւն տեսնելով «Ի՞նչ է այս, հարցուց երիտասարդի մ'որ այն ինչ կ'ելնէր անկէց։

— Չգիտեմ, պարո՛ն, պատասխանեց երիտասարդը։ Կ'ըսուի թէ կին մը կը դատեն որ հրամանատար մը մեռցուցած ըլլայ, և որովհետև ըստ երևութին աս սպանութեան տակ կախարդութիւն կայ եղեր, ուստի եպիսկոպոսն և անորմէ կարգուած եկեղեցական դատաւորը գործին մէջ մտեր են, և իմ եղբայրս, որ Ժօզասի սարկաւագապետն է, ոտքով գլխով այս բանին ետևէն ինկած է։ Կ'ուզէի անգամ մը տեսնել զինքը, այլ բազմութեան պատճառաւ չկրցայ մինչև իրեն հասնիլ, և այս բանս սիրտս շատ կը նեղացընէ, ըստ որում ստակի մեծ պէտք ունիմ։

— Ափսո՜ս, պարոն, ըսաւ Կրէնկուար, երանի թէ քեզ քիչ մը դրամ փոխ տալու կարող ըլլայի. այլ սակայն եթէ սոնապանս ծակուած է՝ դահեկաններէ չէ այն, հաւատա՛ եղիր»։

Սակայն չիշխեց ըսել երիտասարդին թէ անոր սարկաւագապետ եղբայրը կը ճանչնար, վասն զի եկեղեցւոյն տեսարանէն 'ի վեր զան գացած տեսած չըլլալուն՝ ամօթով էր։

Դպրոցականը ճամբան շարունակեց, իսկ Կրէնկուար մեծ սենեկի սանդուղքէն վեր ելնող բազմութեան ետևէն գնաց։ Կը մտածէր նա թէ դատաւորներու անբանութիւնը սովորաբար այն աստիճան զուարճալի էր՝ որ տխրութիւն մը փարատելու հա-

մար՝ եղեռնական դատի մը տեսարանին նման բան չէր կրնար գտնուիլ։ Մութ փողի մը տակէ անցնելէ վերջը, փող՝ որ պալատին մէջ օձաձև կը կամակորէր իբր թէ այն հնամի շէնքին ընդերական խողովակն եղած ըլլար՝ ցած դրան մ'առջև հասաւ, որ սրահի մը վրայ կը բացուէր։

Կրէնկուար իր բարձր հասակովը՝ խուժանին ալեծուփ գլուխներուն վրայէն կրցաւ դիտել զննել այս սրահն որ լայնանիստ էր և մութ, և որ այս վերջին պարագայովս՝ լայնանիստ ևս կ'երևէր։ Օրը կը տարաժամէր և սրակամար երկայն պատուհաններէն տժգոյն լոյս մը միայն ներս մտնելով՝ կամարին չհասած կը շիջանէր. կամար՝ որ քանդակեալ փայտերու վանդակափեղկ-գործ մ'էր, որու հազար ու մէկ պատկերները մութին մէջ կարծես թէ խառն 'ի խուռն կը շարժէին։ Հօս հոն սեղաններու վրայ արդէն շատ մը ճրագներ վառուած կը տեսնուէին, որք շատ մը մրոտուած թուղթերու մէջ կքուած ատենադպիրներու գլուխներուն վրայ կը շողային։ Սրահին առջևի մասը ժողովուրդը բռնած էր. աջ և ձախ կողմերը՝ երկար հագուստներ հագած մարդեր ու սեղաններ. վարի կողմը, բարձրաւանդակի մը վրայ՝ բազմութիւն դատաւորներու՝ որոնց յետին կարգերը մութին մէջ կը կորսուէին — անշարժ և աղէտագոյժ դէմքեր։ Պատերն անթիւ անհամար շուշանածաղիկներով ծածկուած էին. իսկ դատաւորներուն գլխուն վրայովը՝ Քրիստոսի մեծ պատկեր մը տարտամ կերպով կ'որոշուէր։ Ամեն ուրեք նիզակներ և գեղարդներ, որոնց՝ ճրագներուն լոյսը հրեղէն ծայրեր տուած էր։

«Պարո՛ն, հարցուց Կրէնկուար իրեն մօտ գտնուողներէն մէկուն, ո՞վ են հո՛ն, վա՛րը տեսնուող անձերը, որք այնպէս շարուած են՝ որպէս թէ սինհոդոսի մէջ բազմող եպիսկոպոսներ եղած ըլլային։

— Պարո՛ն, պատասխանեց անծանօթը, աջ կողմը՝ մեծ-սենեկի խորհրդականներն են, իսկ ձախ կողմը՝ հարցափորձի խորհրդականները, սեւ-պատմուճան վարպետները, շէկ-պատմուճանի պարոնները։

— Հո՛ն, անոնց վրայովը, ո՞վ է այն արեան քրտինք մտած խոշոր կարմիր մարդը, կրկնեց Կրէնկուար։

— Պարոն նախագահն է։

— Իսկ անոր ետի գիրուկ խաշները, շարունակեց Կրէնկուար, որ, ինչպէս ըսած ենք, դատաւորները չէր սիրեր, թերևս իր թատերախաղին պատահած ձախորդ արկածէն 'ի վեր՝ Արդարութեան-Պալատին դէմ ոխ պահած ըլլալուն պատճառաւ։

— Արքայի Պալատան հարցափորձի վարպետներն են։

— Իսկ անոր առջև գտնուող այն վարազը։

— Խորհրդարանի ատենի ատենադպիրն է։

— Իսկ աջ կողմը, այն կոկորդիլո՞սը։

— Վարպետ Ֆիլիփ Լէօլիէ, արքայի մասնաւոր փաստաբան։

— Իսկ ձախ կողմը, այն սեւ յաղթ կատո՞ւն։

— Վարպետ Յակոբ Շարմօլիւ, փոխանորդ արքայի յատենի եկեղեցւոյ, եկեղեցական դատաւորներուն հետ։

— Եւ ի՞նչ կ'ընեն բոլոր այս մարդերը, ըսաւ Կրէնկուար։

— Կը դատեն։

— Զո՞վ կը դատեն. ամբաստանեալը չեմ տեսներ ես։

— Ամբաստանեալը կին մ'է, պարոն, և զայն չէք կրնար տեսնել, վասն զի կռնակը մեզ դարձուցած է ու ժողովուրդէն ծածկուած։ Տեսէք, հո՛ն է, մանգաղ-նիզակաւոր (pertuisaniers) խումբ մը տեսնուած տեղը։

— Իսկ ո՞վ է այն ամբաստանեալ կինը, հարցուց Կրէնկուար, գիտէք միթէ անունը։

— Ո՛չ, պարո՛ն, ես ալ այն ինչ եկայ։ Միայն կը գուշակեմ թէ կախարդութեան վերաբերեալ դատ մ'է, վասն զի եպիսկոպոսի փոխանորդ-դատաւորը ներկայ կը գտնուի։

— Ուրեմն, ըսաւ մեր փիլիսոփայն, բոլոր այս դատաւորներուն մարդու միս ծամել, ուտելը պիտի տեսնենք, և այս ալ տեսարան մ'է։

— Պարո՛ն, ըսաւ դրացին, ձեզ ինչպէս կը թուի. վարպետ Յակոբ Շարմօլիւ ամենահեզ կերպարանք մը չունի։

— Հըմ, պատասխանեց Կրէնկուար ։ Ես կը տարակուսիմ այնպիսի հեզութեան մը վրայ՝ որ ձմլուած ռունգեր և բարակ շուրթեր ունի »։

Հոս՝ մօտ գտնուողք՝ երկու խօսողները լռութեան հրաւիրեցին, վասն զի կարևոր վկայութիւն մը կը տրուէր ատեանին ։

« Տեա՛րք իմ, կ'ըսէ՛ր՝ սրահին մէջ տեղէն՝ պառաւ մ'որու դէմքն այն ատրիճան հագուստներուն տակ ծածկուած էր որ տեսնողը՝ գնայուն ցնցոտիներու կոյտ մը պիտի կարծէր. տեա՛րք իմ, գործն այնչափ ճշմարիտ է՝ որչափ ճշմարիտ է թէ ես եմ քառասուն տարիէ 'ի վեր Սուրբ-Միքայէլ կամուրջին վրայ հաստատուած, և հարկ, բաժ, հողատուրք ճշդիւ վճարող Փալուրտել կինը. դուռս՝ Թասէն-Քայլեար ներկարարին տան դիմաց, որ գետին վերնակողմը կը բնակի ։ Հիմա ողորմելի պառաւ մը, տեա՛րք իմ, այլ սիրուն աղջիկ մը ժամանակաւ ։ Քանի մ'օրէ 'ի վեր « Փալուրտել կին, կ'ըսէին ինծի, ճախարակովդ գիշերները մի՛ բանիր. սատանայն իր եղջիւրներովը պառաւ կիներու « վուշը գզել կը սիրէ ։ Հաստատուած բան մ'է թէ ուրուական « -կրօնաւորն որ անցեալ տարի Թամբլի կողմերը կը թափառէր՝ « հիմա Միջնաքաղքին մէջ կը թափառի. ուստի զգուշացի՛ր որ « քու դուռդ չ'զարնէ » ։ Իրիկուն մինչ անուակս կը դարձընէի, մէյ մ'ալ յանկարծ դուռս կը զարնեն. կը հարցընեմ թէ ո՛վ է. պատասխանի տեղ՝ հայհոյութիւնք կը լսեմ, և դուռը կը բանամ ։ Երկու հոգի, սևազգեստ մէկը վայելչադէմ պաշտօնակալի մը հետ ներս կը մտնեն ։ Սևազգեստ մարդուն միայն աչքերը կը տեսնուէին, երկու վառ կրակներ. մնացածը՝ գլխարկ էր ու կրկնոց ։ « Սուրբ-Մարթայի սենեակը », կ'ըսեն ինծի, իմ վերի սենեակս է այն, տեա՛րք իմ, ամենամաքուր սենեակս, և սկուդ մը կու տան, զոր դարանիս մէջ կը պահեմ ըսելով. « Վաղը այս ստակով Կլօրիէդի ընտարանէն փորոտիք ծախու « կ'առնում », և կ'ելնենք վեր ։ Երեքնիս մէկ վերի սենեակս հասնելով մինչ ես կռնակս դարձուցեր էի՝ սևադէմ մարդը յանկարծ աներևոյթ կ'ըլլայ, ինծի քիչ զարմացում չպատճառելով ։

Իսկ պաշտօնակալը, որ մեծ սեպուհի մը պէս գեղեցիկ էր, ինծի հետ վար իջնելով կը ձգէ կ'երթայ, և մէկ քառորդ կարժ մանելու չափ ատեն անցած չանցած՝ ծաղկահաս գեղեցիկ աղջկան մը հետ կը դառնայ. աղջիկ մ'որ եթէ մազերը շտկուած ըլլային՝ արեւու մը նման պիտի փայլէր, շողշողար ։ Հետը նոխազ մ'ունէր նա, մեծ նոխազ մը, ճերմակ թէ սև՝ չեմ յիշեր ։ Աս բանս ինծի մտմտուք կը պատճառէ ։ Աղջիկը՝ ատիկայ իմ խառնուելու բանս չէ, այլ նոխազը... ։ Այս կենդանին իր մօրուքին ու եղջիւրներուն պատճառաւ չեմ սիրեր ես ։ Մարդու նմանութիւն կը կրէ, և ասկէ զատ կախարդական ժողով կը բուրէ ։ Սակայն և այսպէս ձայն չեմ հաներ, վասն զի սկուդ մը շահած էի. ասիկա իրաւացի է, այնպէս չէ՞, պարո՛ն դատաւոր ։ Աղջիկն ու հրամանատարը վերի սենեակը կը հանեմ, ու զանոնք առանձին կը թողում, այսինքն նոխազին հետ.... ։ Պէտք եմ զրուցել թէ տունս գետնայարկ մ'ունի և առաջին յարկ մը. կամուրջի միւս տուներուն նման՝ ետևի կողմէ գետին վրայ կը հայի այն, և գետնայարկին պատուհանն ինչպէս նաև առաջին յարկին պատուհանը հոսուն ջուրին վրայ կը բացուի.... ։ Ուստի մանելու վրայ էի ես և չգիտեմ ինչո՛՝ ուրուական-կրօնաւորին վրայ կը մտածէի՝ զոր նոխազը միտքս ձգած էր — ասկէ զատ՝ պէտք եմ զրուցել թէ գեղանի աղջիկն ալ քիչ մը տարօրինակ կերպով հագուած, շքուած էր ։ Յանկարծ վերէն ձայն մը, գետնին վրայ բան մ'իյնալն և պատուհանին բացուիլը կը լսեմ ։ Ես ալ անոր տակովը գտնուող իմ պատուհանիս կը վազեմ, և աչքերուս առջևէն սեւ զանգուածի մ'անցնիլն ու ջուրն իյնալը կը տեսնեմ. և որովհետև լուսին կար՝ շատ աղէկ կրցայ որոշել որ քահանայի հագուստով ուրուական մ'էր, և դէպ 'ի Միջնաքաղքին կողմը կը լողար ։ Այն ժամանակ ահ ու դողի մէջ գիշերապահները կը կանչեմ ։ Տան և երկու պահապանները կուգան կը հասնին, և որովհետև քիչ մը քաշած էին՝ առջի բերան պատճառը չգիտնալով զիս լաւ մը ծեծեցին ։ Գործն անոնց կը հասկցընեմ. և վեր ելնելով ինչ կը տեսնենք,, իմ խեղճ

սենեակս արիւնաթաթաւ, հրամանատարը վիզը դաշոյն մը՝ գետնին վրայ տարածուած, աղջիկն որ ինքզինքը մեռած կը ձեւացնէր, իսկ նոխազը՝ շրջած և ահաբեկ: « Աղէկ գործ, կ՚ըսեմ, տասն և հինգ օր շարունակ և դուցէ աւելի ես չետինը « լուալու պէտք պիտի ունենամ: Քերել ես հարկ պիտի ըլլայ, « որ սոսկալի աշխատութիւն մ՚է »: Պաշտօնակալը, խե՛ղճ երիտասարդ, վերցուցին տարին, ինչպէս նաև աղջիկը՝ մերկալանջ ...: Այլ կեցէք, այս ամէն բաներէս յոռեգոյնն աս է որ այն ինչ փորոտիք գնելու համար սկուդն առնուլ ուզեցի՝ տեղը չոր տերև մը գտայ »:

Պառաւը լռեց, և սոսկումի քրթմնջիւն մը բոլոր ատեանին մէջ շրջան առաւ: « Այս ուրուականը, այս նոխազը, այս ամէն բաները մոգութիւն կը բուրեն, ըսաւ Կրէնկուարի մօտ գտնուողներէն մէկը: — Իսկ չո՛ր տերևը, յարեց ուրիշ մը: — Յայտնի կը տեսնուի, կրկնեց երրորդ մը, թէ վհուկ մ՚է այն աղջիկն որ պաշտօնակալներ կապտելու, կողոպտելու համար ուրուական-կրօնաւորին հետ յարաբերութիւններ կը պահէ »: Նոյն ինքն Կրէնկուար այս ամէն բանս համանգամայն հաւանական և ահռելի կը գտնէր:

« Փալուրտէլ կին, ըսաւ Պարոն նախագահը վսեմ ծանրութեամբ մը, արդարութեան ուրիշ բան չ՚ունիս զրուցելու:

— Ո՛չ, վսեմապատիւ տէր, պատասխանեց պառաւը, բայց միայն սա՝ որ տեղեկագրին մէջ իմ տունիս համար՝ ծուռ ու մուռ, ժահահոտ՝ հին ու անշահ բնակարան մ՚ըսուած է, որն որ թշնամական խօսք է. կամուրջի տուները թէև ստոյգ է թէ մեծ տեսք մը չ՚ունին, վասն զի շատ բազմութիւն կայ հոն, այսու ամենայնիւ մսավաճառներն այն կողմը կը բնակին համախումբ, որոնք հարուստ մարդիկ են՝ ամենամաքուր գեղանի կիներու հետ ամուսնացած »:

Կրէնկուարի կոկորդիլոսի մը պէս երևցող դատաւորն ոտք ելնելով՝

« Լռութիւն, ըսաւ: Կ՚աղաչեմ ձեզ, պարոններ, որ ամբաս-

տանեալին վրայ դաշոյն մը գտնուած ըլլալը մտքերնուդ մէջ ունենաք միշտ: Փալուրտէլ կին, դևին քեզ տուած սկուդը, որ չոր տերևի փոխուեցաւ, բերած ես հետդ:

— Այո՛, տէր, պատասխանեց պառաւը. գտայ զայն, ահա՛»:

Նուիրակ մը մեռած տերևը կոկորդիլոսին բերաւ, զոր տխկա՝ գլխի տխուր շարժումով մը՝ նախագահին մատոյց. նախագահն ալ եկեղեցոյ ատենին մէջ՝ արքայի փոխանորդին ղրկեց զայն, որ այսպէս սրահին չորս կողմը շրջան առած գտնուեցաւ:

« Ցարասիի (bouleau) տերև մ՚է այս, ըսաւ վարպետ Ցակոբ Շարմօլիւ. նո՛ր ապացոյց մ՚ևս կախարդութեան »:

Խորհրդական մ՚այն ժամանակ խօսիլ սկսաւ. « Վկա՛յ, մի և նոյն ժամանակ երկու մարդ մտաւ տունդ: Սևազգեստ մարդը, որ յանկարծ աներևոյթ եղաւ, և որու՝ ետքը քահանայի զգեստով Սէնի մէջ լողալը տեսեր ես, և պաշտօնակալը: Երկուքէն ո՞վ սկուդը տուաւ քեզ »:

Պառաւը պահ մը խորհելէ վերջը՝ « Պաշտօնակալը », ըսաւ:

Բազմութեան մէջ շշուկ մը լսուեցաւ:

« Ա՛հ, մտաբերեց Կրէնկուար, համոզումս դեղևել կու տայ այդ պարագան »:

Ասոր վրայ՝ վարպետ Ֆիլիբ Լէօլիէ, արքայի արտաքոյ կարգի փաստաբանը նորէն մէջ մտաւ:

« Կը յիշեցընեմ յարգապատիւ տեարցդ՝ որ վիրաւորուած պաշտօնակալը՝ իր պառկած տեղը գրի առնուած վկայութեան մէջ կը յայտնէր թէ սևազգեստ մարդուն իրեն մօտեցած կէտին՝ անոր ուրուական-կրօնաւորն ըլլալուն նկատմամբ տարտամ մտածում մ՚ունեցած էր, և կ՚աւելցընէր թէ ձիւաղը զինքը փութացուցած ըլլայ որ երթայ ամբաստանեալը գտնէ, և իրեն՝ հրամանատարին՝ դիտողութեանը վրայ թէ ստակ չունէր՝ իրեն տուած ըլլայ այն սկուդը՝ որով յիշեալ պաշտօնատարը Փալուրտէլ կինը վճարեց: Ուրեմն, սկուդը դժոխքի դահեկան մ՚է »:

Այս համոզիչ դիտողութեանս վրայ՝ Կրէնկուար և ատեանին բոլոր սկեպտիկեաններն իրենց կասկածները փարատած երևցան:

« Տեարք , աւելցուց Թագաւորին փաստաբանը՝ նստելով , վկայութեանց պրակը ձեռքերնիդ է . կրնաք Ֆէպիւս տը Շադոբերի ըսածներն աչքէ անցընել » :

Այս անուան արտասանուելուն վրայ՝ ամբաստանեալն ոտք ելնելով գլուխը բազմութենէ վեր՝ Կրէնկուար ահ ու դողով Եղմերալտան ճանչցաւ :

Տժգոյն էր նա . իր վարսերը՝ որոնք ժամանակներ այնչափ սիրուն կերպով հիւսուած ու հոս հոն վենետկեան ոսկիներով զարդարուած՝ տակն ու վրայ դէպ 'ի վար կախուած էին , շրթերը կապուտակ , իր խորասոյզ աչքերը , աւա՜ղ , սոսկում կը պատճառէին :

« Ֆէպիւս , ըսաւ մոլորագին , ո՞ւր է Ֆէպիւսը : Ո՛ տեարք . գիս սպաննելէ յառաջ , գթացէք վրաս ու զրուցեցէք թէ սակաւին կ'ապրի Ֆէպիւս :

— Լռէ , կին դու , պատասխանեց նախագահը , այդ մեր գործը չէ :

— Ո՛հ , առ գթութեան , խօսեցէք ինձ , թէ կենդանի՞ է նա , կրկնեց իր նիհար գեղեցիկ ձեռքերն իրար միացընելով , և մի և նոյն ժամանակ իր հագուստին բոլոր երկայնութեամբը՝ շղթաներուն ձայները կը լսուէր :

— Լա՜ւ , խօսինք , ըսաւ խստութեամբ արքայի փաստաբանը , հոգեվարքի մէջ է . գո՞հ ես հիմա » :

Թշուառուհին իր աթոռակին (sellette) վրայ նստաւ , առանց ձայնի , առանց արտօսրի , մոմէ պատկերի մը նման սպիտակ :

Նախագահն իր ոտից տակ կեցած մարդու մը ծռելով , որ ոսկեհուռ գդակ , սեաւ պատմուճան , վիզը շղթայ մ'ու ձեռքը գաւազան մ'ունէր :

« Նուիրակ , երկրորդ ամբաստանեալը ներս մտցուր » , ըսաւ :

Բոլոր աչքերը դէպ 'ի պզտի դուռ մը դարձան , որ բացուելով ոսկեղջիւրեայ և ոսկեթաթ սիրուն այծ մը , 'ի մեծ թունդ Կրէնկուարի՝ ներս մտաւ : Վայելչագեղ կենդանին՝ վիզը կարկառած՝ պահ մը կեցաւ դրան սեմին վրայ , որպէս թէ ժայռի

մը ծայրը դադարած՝ իր աչաց տակ անբաւ հորիզոն մ'ունեցած ըլլար : Ցանկարծ գնչուհին նշմարելով , սեղանին և ատենադպրի մը գլխին վրայէն ցատկեց աշխուժիւ , և երկու ոտուըով իր տիրուհւոյն ծունկերուն առջև գտնուեցաւ , որու ոտքերուն վրայ սիրուն կերպով մը գլորելով թաւալելով , անորմէ բառ մը կամ գգուանք մը կը հայցէր . այլ սակայն ամբաստանեալն անշարժ կը մնար միշտ , և խեղճ Ճալին իսկ նայուածք մը չունեցաւ :

« Ո՛հ , ո՛հ , ա՛ն է . . . իմ տեսած զարշելի կենդանիս է , ըսաւ պառաւ Ֆալուրտել . երկուքնին ալ խիստ լաւ կը ճանչնամ » :

Ցակոբ Շարմօլիւ միջամուխ ըլլալով « Տեարք , ըսաւ , եթէ հաճելի է ձեզ , այծին հարցափորձը պիտի սկսինք » :

Իրօք իսկ այծն էր երկրորդ ամբաստանեալը : Այն ժամանակներն այսպէս կենդանւոյ մը դէմ դատ բանալու նման սովորական բան չկար : Ի մէջ այլոց , 1466ի վերին դատաւորութեան հաշիւներուն մէջ՝ « Ի Քորպէյլ իրենց անարժան գործոց պատճառաւ մահու դատուած » Ժիլլէ Սուլարի և իր մատակ խոզին դատաստանական ծախուց վերաբերեալ՝ հետաքրքրական մանրամասն յիշատակութիւն մը կը գտնենք : Ամեն բան կատարեալ է հոն . խոզը մէջը դնելու համար փոսի ծախք , կալճ ու բարակ ոստերու հինգ հարիւր խուրձ՝ Մօրսանի նաւամատոյցէն առնուած , երեք չափ գինի և հաց , մահապարտին վերջին կերակուրն՝ որու դահիճն եղբայրաբար մասնակից էր եղած , մինչև անգամ խոզին պահպանութեան ու սնունդին համար տասն և մէկ օրուան ծախք , օրը՝ ութ բարիզեան տէնիէի վրայ : Երբեմն կենդանիներէ աւելի հեռուն ալ կ'երթային — Շարլըմանեըի և Հեզահամբոյր Լուիի կանոնագիրերն (capitulaires) օդի մէջ երևնալ իշխող հրեղէն ոգիներու դէմ ծանրածանր պատիժներ սահմանած են :

Սակայն եկեղեցւոյ ատենի մէջ արքայի փոխանորդը նաև սա խօսքերը զրուցած էր . « Եթէ այս այծին փորը գտնուող դևը , զինքը վանելու համար 'ի գործ դրուած ամեն միջոցներուն

հակառակ՝ իր վնասակար դիւթութեանց մէջ հաստատուն մնայ և անմոցմով առեւանն աշխարհէ՝ կ՚իմացընենք իրեն՝ թէ կախաղանի կամ փայտակոյտի վրայ ելնելը պիտի պահանջեմք »։

Այս խօսքերը լսելով պաղ պաղ քրտինքներ թափեց Կրէնկուար։ Շարմօլիւ գնչուհւոյն դափը սեղանի մը վրայէն առնելով և մանաւոր կերպով մ՚այծին ներկայացընելով « Ժամը քանի՞ն է », հարցուց։

Այծն ուշիմ աչքով մ՚անոր նայելէ վերջը՝ իր ոսկեզօծ թաթը վեր վերցուց և եօթն անգամ զարկաւ։ Իրօք ալ ժամն եօթն էր։ Ժողովուրդն ահաբեկած մնաց, իսկ Կրէնկուար չդիմանալով « Ինքն իր կորստեան պատճառ կ՚ըլլայ », գոչեց բարձրաձայն. կը տեսնէք որ ըրածը չգիտեր։

— Սրահին ծայրը գտնուող ժողովուրդը (manants) լռէթող », ըսաւ նուիրակը կծուութեամբ։

Յակոբ Շարմօլիւ՝ թմբկիկի մի և նոյն վարժութիւններով որ օրն ըլլալուն, տարւոյն որ ամսին ըլլալուն և այլն վերաբերեալ ուրիշ շատ խաղեր ընել տուաւ այծին՝ զորս արդէն ընթերցողը կը ճանչնայ։ Եւ դատաստանական պայքարներու յատուկ եղած տեսական խաբով մը՝ այն հանդիսականները՝ որք շատ և շատ անգամներ հրապարակներու մէջ ճալիի անմեղ խաղերուն ծափ զարկած էին, հիմա՝ Արդարութեան-Պալատի կամարներուն տակ՝ այն մի և նոյն խաղերէն ահաբեկ կը սարսռային, և այծին սատանայ մ՚ըլլալուն տարակոյս չէր մնար։

Գործերը յուսկոյն կերպարանք մ՚առին երբ արքայի փոխանորդը՝ ճալիի վզէն կախուած ու շարժական տառերով լեցուն կաշեայ քսակ մը տախտակամածին վրայ պարպելով՝ այծը թաթովը՝ ամենուն աչաց առջև՝ ցրուած այբուբէնէն Ֆէպիւս անունը քաղեց։ Հրամանատարին ենթարկուած հմայութիւնները բացայայտ և անժխտելի կերպիւ ապացուցուած համարուեցան, և գնչու աղջիկը, այն հրաշագեղ պարուհին, որ իր սիրուն հրապոյրներովն անցորդներուն այնչափ հիացում, այնչափ սքանչացում պատճառած էր, հիմա ամենուն համար սոսկալի վհուկ մ՚եղաւ։

Եղկելին կենդանութեան նշան մը չէր տար. ո՛չ ճալիի սիրուն շարժումները, ո՛չ խորհրդականաց սպառնալիքը, ո՛չ ժողովականաց խուլ չարամաղթութիւններն իր վրայ ազդեցութիւն մը չէին ըներ. այնպէս որ սթափ գալու համար՝ հարկ եղաւ որ նուիրակ մ՚անգութ կերպով զինքը ցնցէ, և նախագահն ալ միւս կողմէ հանդիսաւոր կերպով ձայնը բարձրացընէ.

« Աղջիկ, գնչուհի ցեղէ ես դուն, և վնասակար հմայութեանց հետեւող։ Դուն՝ նոյնպէս դատի տակ ինկած կախարդեալ այծին հետ մեղսակից դաւաճանութեամբ, խաւարի իշխանութիւններուն հետ կատարեալ համաձայնութեամբ, և հմայքներու ու գաղտնի միջոցներու օգնութեամբ՝ վերջին մարտ ամսոյն 29ի գիշերը, Ֆէպիւս տը Շադօբէր ըսուած արքայի սեպհական աղեղնաւորներու հրամանատարը վիրաւորեցիր և դաշունեցիր։ Կ՚ուրանա՞ս միշտ գործած այս մեծ յանցանքդ։

— Ո՛հ, սոսկո՜ւմ, գոչեց անտխական աղջիկը՝ երեսը ձեռքերուն մէջ պահելով։ Իմ Ֆէպիւսս. ո՜հ, ի՛նչ դժոխային զըրպարտութիւն։

— Կ՚ուրանա՞ս միշտ, հարցուց նախագահը ցրտութեամբ։

— Կը հարցընէք թէ կ՚ուրանա՞մ », ըսաւ ահարկու շեշտով մը, և մի և նոյն ժամանակ բոցաճաճանչ աչքերով ոտք ելաւ։

Նախագահը շարունակեց անխռով.

« Ուրեմն քու վրադ ծանրացած յանցանքներն ի՞նչպէս կը բացատրես »։

Գնչուհին ընդմիջահատ ձայնով մը պատասխանեց.

« Ըսի արդէն։ Չգիտեմ։ Ոճիրը գործողը քահանայ մ՚է. քահանայ մը, զոր չեմ ճանչնար. դժոխային քահանայ մ՚որ զիս կը հալածէ միշտ։

— Ճիշդ ա՛ն է, կրկնեց դատաւորը, ուրուական-կրօնաւորը։

— Ո՛ տեարք իմ, գթացէք վրաս, խե՜ղճ աղջիկ մ՚եմ ես...։

— Եգիպտոսի աղջիկ մը », ըսաւ դատաւորը։

Վարպետ Յակոբ Շարմօլիւ սկսաւ քաղցրութեամբ խօսիլ։

« Տեսնելով ամբաստանելոյն ցաւալի յամառութիւնը, կը խնդրեմ որ տանջանքի տակ դրուի նա։

— Ո՛յդպէս թող ըլլայ », ըսաւ նախագահը։

Թշուառուհին թէև բոլոր մարմնովը սարսռաց՝ այլ սակայն գեղարդաւորներու հրամանին վրայ ոտք ելնելով՝ հաստատուն քայլերով սկսաւ քալել՝ առջևէն Շարմօլիւն և եկեղեցական դատաւորներն ունենալով դէպ 'ի միջնադուռ (porte bâtarde) մ'որ յանկարծուստ բացուելով՝ նորէն ինքզինքին վրայ փակեցաւ, զխեղճուհին այն ինչ լափող ահռելի կոկորդի մը տխուր ազդեցութիւնն ընելով Կրէնկուարի վրայ։

Երբ անհետ եղաւ՝ ողորմ բառաչիւն մը լսուեցաւ. փոքրիկ այծին ձայնն էր այն որ կու լար։

Ատեանին նիստն առ ժամանակ մի դադրեցաւ։ Խորհրդականներէն մէկը դիտողութիւն ընելով թէ յարգապատիւ տեարց խոնջեցած ըլլալուն պատճառաւ՝ մինչև տանջանքին վերջը սպասելը խիստ երկար պիտի ըլլար՝ նախագահը պատասխանեց թէ դատաւոր մը պէտք է ինքզինքն իր պարտաւորութեան զոհելու սովորած ըլլայ։

« Ի՛նչ տաղտուկ և դժկամակ անզգամուհի », ըսաւ ալևոր դատաւոր մը, որ ինքզինքը տանջանքի գնել կու տայ երբ ընթրիքնիս ըրած չենք տակաւին »։

Բ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՉՈՐ ՏԵՐԵՒԻ ՓՈԽՈՒԱԾ ՍԿՈՒԴԻՆ

Մթագին փողերու մէջէ, այնչափ մթագին՝ որ ցորեկ ատեն կանթեղներով հարկ կ'ըլլար լուսաւորել զանոնք՝ քանի մ'աստիճան ելնել իջնելէ վերջը՝ Էզմէրալտան՝ միշտ իր տխրադէմ չքադիրներով շրջապատուած՝ պալատին նուիրակներէն չարաշուք սենեկի մը մէջ հրուեցաւ։ Այս բոլորաձև սենեակը խոշոր աշտարակներէն մէկուն գետնայարկը կը գտնուէր. աշտարակներ՝ որք մեր դարուն մէջ՝ այն նորանոր շէնքերու խաւէն վեր կը բար-

ձրանան՝ որով արդի Բարիզը զհին Բարիզը ծածկած է համակ։ Այս նկուղը պատուհան մը, բացուածք մը չունէր. բայց եթէ երկաթեայ ահագին դրան մը խոնարհ մուտքը, որու սեամն անց ու դարձէ մաշուած էր բոլորովին։ Սակայն լոյսի պակսութիւն մը չէր տեսնուեր հոն. ըստ որում պատին թանձրութեամբը բացուած հնոցի մը մէջ ահագին կրակ մը վառուած էր, որ իր կարմիր ցոլումներով նկուղը կը լուսաւորէր՝ սենեկին մէկ անկիւնը դրուած խեղճ ճրագ մ'ամէն ճառագայթումէ մերկացնելով։ Հնոցը փակելու ծառայող երկաթեայ տեսակ մը խոշոր վանդակը (herse)՝ մթագին պատն իր փողփողումներով լուսաւորող հրավառ երդի բերնին վրայ՝ սեաւ, սուր, հեռադիր ակռաներու կարգի մը նման՝ իր ցոլերուն վարի ծայրը կը ցուցընէր, որով և հնոցը՝ հին առասպելախառն պատմութիւններու մէջ բոցեր արձակող վիշապներու բերանի մը նմանութիւնը կ'առնուր։ Անկէ ելած լոյսէն՝ բանտարկելուհին սենեկին չորս կողմն ահռելի գործիքներ տեսաւ, որոնց գործածութիւնն անծանօթ էր իրեն։ Մէջ տեղը գրեթէ գետնին դպչող կաշեայ անկողին մը կը տեսնուէր, որու վրայէն ճարմանդաւոր փոկ մը կախուած էր՝ կամարին մէջ տեղը քանդակուած տափաքիթ հրէշի մ'ակռաներուն մէջ գտնուող պղնձեայ օղի մ'անցուած։ Աքցաններ, ունելիներ, մեծամեծ խոփեր փուռին մէջ խռնուած էին, և խարոյկին վրայ խառն 'ի խուռն դրուած՝ կը կարմրնային։ Հնոցին արիւնային լոյսով սոսկալի բաներու կոյտ մը միայն կը տեսնուէր բոլոր սենեակին մէջ։

Այս Տարտարոսը պարզապէս տանջանաց սենեակ կ'անուանուէր։

Անկողնոյն վրայ Բիէրրա Թօրթրիւ երդուեալ-պատժապետն նստած էր անփութօրէն։ Իր արբանեակները (valets) կաշէ-ղընջակ, կոռավարտիք, քառակուսադէմ երկու պարիկներ, ածուխներուն վրայ երկաթեայ կազմածները կը տատանէին։

Հէք աղջիկը՝ որչափ որ արիութիւնը չկորսնցընելու կը ճգնէր՝ այս սենեակս մտած ժամանակն ահն և սոսկումը չկրցաւ զսպել։

Պալատի դատաւորին նուիրակները մէկ կողմ շարուեցան, եկեղեցական դատաւորութեան քահանաները՝ միւս կողմը. սենեկին մէկ անկիւնը՝ ատենադպիր մը կը տեսնուէր, կաղամար մ'և սեղան մը։ Վարպետ Յակոբ Շարմօլիւ ամենահեզ ժպիտով մ'Եգիպտուհւոյն մօտենալով

« Սիրելի աղջիկս, կը շարունակես ուրանալ, ըսաւ։

— Այո՛, պատասխանեց արդէն մարած ձայնով մը։

— Այս ուրեմն, կրկնեց Շարմօլիւ, ցաւով պիտի պարտաւորիմք ուզածնէս աւելի ստիպողական կերպով զքեզ հարցափորձի տակ խօթել․․․։ Որչափ որ նեղութիւն է քեզ՝ հաճէ սա անկողնոյն վրայ բազմելու․․․։ Վարպետ Բիէրրա, օրիորդին տեղ բաց և դուռը գոցէ »։

Բիէրրա մռմռալով մ'ոտք ելաւ.

« Եթէ դուռը գոցեմ, քրթմնջեց, կրակը պիտի մարի։

— Ուրեմն, սիրելիս, պատասխանեց Շարմօլիւ, բաց թող զայն »։

Էսմերալտա՝ այս կաշեայ անկողնէս, որու վրայ այնչափ չուառներ գալարուած էին, ահաբեկած՝ ոտքի վրայ կը մնար։ Ահը մինչև ոսկորներուն ծուծը կը սառեցրնէր զինքը և խելքը գլխէն կ'առնուր։ Շարմօլիւի ըրած մէկ նշանին վրայ՝ երկու արբանեակք զինքը բռնեցին և նստած անկողնին վրայ դրին։ Թէև ասիկա ըրած ժամանակնին աղջկան մէկ կողմը չցաւցուցին, այլ նա՝ այս մարդիկներուն իրեն դպնալուն, այս կաշիին իրեն դըպնալուն վրայ՝ իր բոլոր արեան դէպ 'ի սիրտը վեղուլը զգաց։ Սենեակին չուրջը մոլոր նայուած մը ձգելով իրեն այնպէս մը երևցաւ թէ իր մարմնոյն վրայ մագլելով ելնելու, զինքը խածնելու, զինքը խայթելու նպատակաւ՝ բոլոր այն տանջանաց տձև կազմածներն ամեն կողմերէ շարժելով խլրտելով դէպ 'ի իրեն կը քալէին. կազմածներ՝ որք մինչ ցայն կէտ տեսած ամէն տեսակ գործիքներուն մէջ այնպէս էին՝ ինչպէս են չղջիկները, օձասանդրերն և սարդերը՝ միջատներու և թռչուններու մէջ։

« Բժիշկն ո՞ւր է, հարցուց Շարմօլիւ։

— Հոս, պատասխանեց սեւ պատմուճան մը՝ զոր Եգիպտուհին տակաւին դիտած չէր, և զոր տեսնելով խեղճը սարսուռ մը զգաց։

— Օրիո՛րդ, կրկնեց արքայի փոխանորդին փաղաքուշ ձայնը, երրորդ անգամ կը հարցընեմ քեզ, կը շարունակես քու վրադ դրուած յանցանքներն ուրանալու »։

Այս անգամ գնչուհին գլխի նշան մը միայն կրցաւ ընել. ձայնը պակսեցաւ իրեն։

« Կը յամառիս միշտ, ըսաւ Յակոբ Շարմօլիւ։ Այն ժամանակ, թէև մեծ կսկիծով կը հարկադրուիմ պաշտօնիս պարտաւորութիւնն 'ի գործ դնելու։

— Պարո՛ն փոխանորդ արքայի, ըսաւ յանկարծ Բիէրրա, ուսկից պիտի սկսիմք »։

Շարմօլիւ՝ յանգ մը փնտռող պուէտի մ'երկդիմի ծամծմուքեամբ պահ մը դեգերելէ վերջը՝

« Ոլոքակոճղէն (brodequin) », ըսաւ վերջապէս։

Տարաբաղդ աղջիկն ինքզինքն այն ատեն Աստուծմէ և մարդիկներէ լքուած զգաց՝ որ գլուխը՝ իր մէջ ոյժ չունեցող անշարժ բանի մը նման՝ կուրծքին վրայ ինկաւ։

Պատժատուն և բժիշկը մի և նոյն ժամանակ իրեն մօտեցան, մինչդեռ միւս կողմէն երկու սպասաւորք՝ իրենց ժանտատեսիլ զինարանին մէջ խուզարկութիւններ ընել կ'սկսէին։ Այն երկաթի սոսկալի կազմածներուն շաչիւնը շառաչիւնն ականջին գալով կալվանացած մեռեալ գորտի մը նման դողդողաց։ « Ո՛հ, քրթմնջեց մէկէ մը չլսուելու չափ մեղմ ձայնով, ո՛հ, իմ Փեբո՛ս », և նորէն իր անշարժութեան և մարմարի լռութեան մէջ ինկաւ, թաղուեցաւ։ Այս տեսարանս դատաւորի սրտէ զատ ուրիշ ո՛ր և է սիրտ՝ յօշելու, ճմլելու կարող պիտի ըլլար. կարծես թէ դժոխքի չէկ դռնակին տակ՝ Սատանայէն հարցափորձուած մեղաւոր հէք հոգի մ'էր այն։ Այն թշուառ մարմինը՝ որու չուրջն այն սղոցներու, ճախարակներու և գելոցներու սոսկալի կոյտը պիտի պատատուէր, այն արարածը՝ զոր դահիճնե-

րու և աքցաններու այն կոշտ ու դաժան ձեռքերն ամեն կողմ պիտի շրջապէին՝ այն անոյշ, սպիտակաթոյր և դիւրաբեկ արարածն էր ուրեմն — կորեակի փոքր հատիկ՝ զոր մարդկային արդարութիւնը տանջանքներու զարհուրելի երկանաքարերուն կը յանձնէր, որպէս զի լեռուի, մանրուի չարաչար :

Բիէրրա Թօրթըրիւի արբանեակներուն փապարեալ ձեռքերն արդէն կոշտութեամբ մերկացուցած էին այն չքնաղ սրունքը, այն պզտի ոտքը՝ որք իրենց վայելչութեամբն ու գեղեցկութեամբը՝ Բարիզի հրապարակներուն մէջ՝ այնչափ և այնչափ անգամներ տեսնողները հիացուցած էին :

«Մե՛ղք պիտի ըլլան յիրաւի», քրթմնջեց պատժապետն այն շնորհալեղ և քնքուշ ձևերը դիտելով :

Եթէ նախասարկաւագն այս կէտիս ներկայ գտնուէր՝ իր սարդի ու ճանճի խորհրդաւոր նշանակը պիտի յիշէր անտարակոյս: Մէյ մ՚ալ աննման աղջիկը՝ իր աչաց վրայ տարածուող ամպի մը մէջէն՝ ոլորակոճղին մօտենալը՝ և իր ոտքերուն՝ երկաթապատ տախտակներուն մէջ ագուցուելով՝ այն ահուելի կազմածին տակ աներևոյթ ըլլալը տեսաւ, և ահէն ու սարսափէն իր ոյժը վրան եկած զգալով

«Հանեցէք, առէք զայս մէկ դի, գոչեց զայրոյթով մը, և հերարձակ ոտք ելնելով «Շնո՛րհք» :

Արքայի փոխանորդին ոտքերն իյնալու համար անկողնէն դուրս նետուեցաւ, այլ իր սրունքը կաղնիի ու երկաթ կազմածներու ծանր հատորին տակ բռնուած ըլլալով՝ թևին վրայ կապար ունեցող մեղուէ մ՚աւելի ուժաթափ՝ ոլորակոճղին վրայ կքեցաւ :

Շարմօլիւ նշան մ՚ընելով՝ թշուառ աղջիկը նորէն անկողնին վրայ դրին, և երկու խոշոր ձեռքեր կամարէն կախուած փոկն անոր մէջքին կապեցին :

«Վերջին անգամ կը հարցընեմ քեզ, կը խոստովանիս դատին պարագաները, հարցուց Շարմօլիւ իր անսասանելի մարդասիրութեամբը :

— Անմեղ եմ :

— Ապա ուրեմն, օրիո՛րդ, դու վրադ ծանրացած հանգամանքները ինչպէս կը բացատրես :

— Աւա՛ղ, տէր իմ, չգիտեմ :

— Կ՚ուրանաս ուրեմն :

— Ամէ՛ն բան :

— Յառա՛ջ», ըսաւ Շարմօլիւ Բիէրրայի դառնալով :

Բիէրրա պտուտակը դարձուց, և ոլորակոճղը սեղմուելով՝ չուառուհին այն սոսկալի ձայներէն մէկը հանեց՝ որոնք ո՛ր և է մարդկային լեզուի մէջ ուղղագրութիւն չունին :

«Կեցի՛ր, ըսաւ Շարմօլիւ՝ Բիէրրային: — Կը խոստովանիս, ըսաւ Եգիպտուհւոյն դառնալով:

— Այո՛ այո՛, գոչեց տարաբաղդ աղջիկը: Կը խոստովանիմ, շնո՛րհք» :

Տանջանքը քամահելով՝ իր ոյժը կշռած չէր հէք աղջիկն, որ մինչև այն ժամանակ զուարթ, հեզ և անոյշ կեանք մ՚անցուցած՝ առաջին ցաւէն այսպէս կը յաղթուէր :

«Մարդասիրութիւնը կը հարկադրէ ինձ զրուցել, ըսաւ արքայի փոխանորդը, թէ այդպէս յանցանքդ խոստովանելով՝ մահ միայն կրնաս սպասել :

— Ես ալ մեծ յոյս ունիմ՝ ատոր», ըսաւ աղջիկը, և երկուքի ծռած ու օրհասական՝ կաշեայ անկողնոյն վրայ ինկաւ, կուրծքին վրայ ճարմանդուած փոկէն կախուելով :

«Հապա՛, աղջի՛կ, կանգնէ քիչ մը, ըսաւ վարպետ Բիէրրա զանիկա ոտքի վրայ կայնեցընելով: Այդ վիճակիդ մէջ՝ Պուրկօնեի արքայազունին վզէն կախուած խաշնին կը նմանիս» :

Ցակոբ Շարմօլիւ ձայնը բարձրացուց.

«Ատենադպի՛ր, գրէ... : Ծաղկահասակ գնչուհիդ, ողիներու, ուրուականներու և վհուկներու հետ մէկ տեղ՝ ագապներու, կախարդական փառակար ժողովներու և փառակար հմայութեանց մասնակցութիւն ունենալդ կը խոստովանիս :

— Այո՛, ըսաւ, այն աստիճան ցած ձայնով՝ որ իր խօսքը շունչին մէջ կը կորսուէր :

— Կախարդական ժողովը գումարելու համար՝ Բեհեղզէբուղի ամպերու մէջ երեւցուցած խոյը, զոր դիւթք միայն կը տեսնեն, տեսած ըլլալդ կը խոստովանիս ։

— Այո՛ ։

— Պօփօմէդի գլուխները, Տաճարականներու այն զազիր կուռքերը պաշտած ըլլալդ կը խոստովանիս ։

— Այո՛ ։

— Կը խոստովանիս դատի տակ գտնուող ընտանի այծի մը կերպարանքին տակ՝ սատանայի հետ հանապազօրեայ առնչութիւններ ունենալդ ։

— Այո՛ ։

— Վերջապէս, կը վկայես ու կը խոստովանիս, վերջին մարտ ամսոյն քսան և իններորդ գիշերը՝ դիւի և ռամկօրէն ուրուական-կրօնաւորը կոչուած ոգիին օգնութեամբ՝ Ֆէպիւս տը Շադօբեր անուն հրամանատար մը վիրաւորած և դաշունած ըլլալդ» ։

Գնչուհին իր անթարթ մեծ աչքերը դատաւորին բարձրացընելով առանց ցնցումի, առանց յնցումի և որպէս թէ մեքենայօրէն. «Այո՛», պատասխանեց ։ Ակներեւ կը տեսնուէր թէ խեղճին բովանդակ էութիւնը ջախջախուած, խորտակուած էր բոլորովին ։

«Գրէ՛, ատենադպի՛ր», ըսաւ Շարմօլիւ ։ Եւ տանջատուներուն դառնալով «Կալանուհին քակեցէք և ատեանը բերէք» ։

Երբ ոլորակոճը հանուեցաւ՝ արքայի փոխանորդը յանուն Եկեղեցւոյ՝ կալանուհւոյն ցաւէն դեռ եւս ընդարմացած ոտքը քննելով. «Սիրտ առ, մեծ վնաս մը չկայ, ըսաւ ։ Ժամանակին պոռացիր, եթէ ո՛չ կրնայիր դեռ եւս ցատկոտել, աղջի՛կդ» ։ Ապա եկեղեցական դատաւորութեան իր արբանեակներուն դառնալով «Վերջապէս արդարութիւնը լուսաւորուեցաւ, և այս, տեարք, յիրաւի մխիթարութիւն մ՚է ։ Օրիորդը կրնայ վկայել թէ իրեն հետ հնար եղած ամէն քաղցրութեամբ ու մարդասիրութեամբ վարուեցանք» ։

Գ.

ՎԵՐՋ ՉՈՐ ՏԵՐԵՒԻ ՓՈԽՈՒԱԾ ՍԿՈՒԴԻՆ

Թշուառ աղջիկը տմոյն և կաղն 'ի կաղ՝ ատեանը մտած կէտին՝ գոհունակութեան ընդհանուր քրթմնջիւն մը լսուեցաւ ։ Պատճառը՝ ունկնդիրներու կողմէ այն գոհունակութեան զգացումն էր՝ զոր հետաքրքիր հանդիսականք կ՚զգան թատրոնի մէջ՝ երբ խաղին վերջին միջարարը լմննալով՝ վարագոյրը վեր կը վերցուի և յետին մասը կ՚սկսի. իսկ դատաւորներու կողմէ՝ ալ քիչ ժամանակէն իրենց ընթրիքն ընելու յոյսն էր ։ Փոքրիկ այծն եւս ուրախութենէն բառաչելով ուզեց դէպ 'ի իր տիրուհին սրանալ, այլ խեղճ կենդանին նստարանին պինդ մը կապած էին ։

Գիշերը բոլորովին կոխած ըլլալով՝ ջրագները, որոնց թիւն աւելցուցած չէին, այնչափ քիչ լոյս կու տային՝ որ սրահին որմերը չէին տեսնուեր ։ Խաւարը տեսակ մը մառախուղով ամէն առարկայ կը պարուրէր. և ուր ուրեմն դատաւորներու քանի մը անտարբեր ու անզգայ դէմքեր տեսանելի կ՚ըլլային ։ Իրենց դիմաց՝ և երկայնաձև սրահին ծայրը՝ մութ յատակին վրայ երևցած ճերմակ անորոշ կէտ մը կրնային նշմարել, որ ամբաստանեալն էր և որ սողալով իր տեղն եկած կեցած էր ։

Երբ Շարմօլիւ ևս իր առջի տեղը հասաւ, պահ մը նստելէ վերջ՝ ոտք ելնելով՝ իր յաջողութեան վրայ առանց մեծ պարծանք մը ցուցընելու՝ ըսաւ. «Յանցաւորն ամէն բան խոստովանեցաւ ։

— Գնչուհի աղջիկ, կրկնեց նախագահը, Ֆէպիւս տը Շադօբերի վրայ ըրած բոլոր կախարդութեան, շնութեան և սպանութեան գործքերդ խոստովանեցա՞ր» ։

Եղկելոյն սիրտը յուզուած թունդ ելած՝ սկսաւ մութին մէջ հեծկլտալ ։

«Ամէն ինչ որ կ՚ուզէք, կը խոստովանիմ, պատասխանեց նուաղուն ձայնով մը, այլ տակայն շուտ սպաննեցէք զիս ։

— Պարո՛ն փոխանորդ արքայի յատենի Եկեղեցւոյ, ըսաւ նա-խագահը, ժողովը պատրաստ է ձեզ մտիկ ընելու »։

Վարպետ Շարմօլիւ ահռելի անտրակ մը հանելով սխսւ ծայրայեղ շարժումներով և դատաստանական չափազանցեալ ճեշտամամբ՝ լատիներէն ճառ մը կարդալ՝ ուր դատին բոլոր ապացոյցները կիկերոնեան շրջաբանութիւններու վրայ կը կռթնէին, մէկ քանի վկայութիւններ ալ՝ զուարճախօս Պլօդէ առնուած, որ իր սիրած հեղինակն էր։ Կը ցաւինք որ չենք կրնար այս նշանաւոր հատուածս մեր ընթերցողներուն առջև դնել։ Ատենախօսը զարմանալի եռանդով ու մէկ քանի մարմնոյ շարժումներով կը կարդար զայն, այնպէս որ յառաջաբանը չլմնցուցած՝ արդէն քրտինքը ճակատէն դուրս կը ցայտէր, աչքերն ալ՝ գլուխէն։ Յանկարծ, պարբերութեան մը ճիշդ մէջ տեղն իր ճառն ընդմիջելով և իր սովորաբար հեզ և անբան նայուածն՝ ահագին եղած՝ « Պարոնայք, գոչեց (այս անգամ՝ ֆրանսերէն, վասն զի տետրին մէջ չէր գտնուեր), Սատանայն այն աստիճան խառնուած է այս գործին մէջ, որ ահա մեր խորհուրդներուն ներկայ կը գտնուի, և անոնց վեհութիւնը լրբօրէն խեղկատակութեան կը հանէ։ Տեսէք »։ Այսպէս խօսելով՝ ձեռքովը փոքրիկ այծը կը ցուցնէր, որ Շարմօլիւի շարժումները տեսնելով և կարծելով թէ ինքն ալ նոյնպէս ընելու ժամանակն էր, իր գաւակին վրայ նստած՝ առջևի թաթերովը և հերաշատ գլուխովը՝ Եկեղեցւոյ ատենի մէջ արքայի փոխանորդի կարեւոր մնջկատակը (pantomime) ըստ կարի լաւ կերպով կը նմանցնէր։ Կը յիշեն ընթերցողք թէ իր ամենէ սիրուն ձևերէն մէկն էր ասիկա։ Սակայն այս վերջին դէպքը, այս վերջին ապացոյց ըսել կ'ուզենք, ամենուն վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ, և որու հետևութիւնն եղաւ խեղճ այծին թաթերուն կապուիլը։ Իսկ փոխանորդն իր երկար ու պերճախօս ճառին շարունակութիւնը մոռանալով ձեռք առնելով՝ հուսկ ուրեմն վերջաբանին հասաւ որ իր տետրակին մէջ սքանչելի բան մ'էր։ Ահաւասիկ վերջին պարբերութիւնը. ընթերցողք վարպետ Շարմօլիւի քաշուած ձայնն և ողեսպառ շար-

ժուածը թո՛ղ վրան աւելցրնէ. — « Իսկ արդ, մեծաշուք տեա՛րք,
« կախարդութիւն ապացուցեալ, ոճիր ակներև յանդիմանեալ, եւ
« և նախամտածութիւն յանցանացն, — յանուն Սուրբ Եկեղե-
« ցւոյն Տիրամօր Կուսին Բարիզու, որ ստանձնեալ ունի օրինա-
« ւորապէս զամենայն պայմանս արդարութեան, զբարձրագունին և
« զխոնարհագունին, յանդրժելի կղզւոյս Միջնաքաղաքի, — յայտ
« առնեմք, ըստ զօրութեան պարունակութեան ճառիս, զպահան-
« ջել մեր, առաջին, հատուցումն ինչ դրամական. երկրորդ,
« հրապարակային խոստովանութիւն յանցանացն գործելոց հայց-
« մամբ թողութեան՝ առաջի մեծի դրան մայր եկեղեցւոյն Սրբոյ
« Աստուածածնայ. երրորդ, վճիռ մահու դատման վհկիս եւ և
« այծի նորա 'ի հրապարակին Կրէվ կոչեցելոյ սովորաբար, և
« կամ՝ 'ի գետն Սէնայ երևելոյ կղզւոջ, կից սահմանի արքա-
« յական բուրաստանաց »։

Եւ գդակը գլուխը դնելով նստաւ։

« Ո՛հ, սորին լատինականութեանս »։, հառաչեց Կրէնկուար 'ի խոր խոցուած։

Ուրիշ սևազգեստ մարդ մ'որ ամբաստանելոյն փաստաբանն էր՝ անոր քով ոտքի վրայ ելաւ։ Դատաւորները՝ մինչև այն ժամանակ անօթի մնացած՝ մրմռալու սկսան։

« Փաստաբա՛ն, կարճ անցի՛ր, ըսաւ նախագահը։

* Սուրբ ընագրին մէջ յիշուած՝ դատավճռին այս վերջին մասը Միջին դարու խանգարուած լատիներէնին և դատաստանական խառնակ լեզուի իբր օրինակ՝ այն աստիճան աղաւաղեալ ոճ մ'ունէր, որ Իգմիրի քանի մը լատինագէտներու՝ որոնց սովորաբար դիմած եմք՝ զայն ամբողջ և որոշակի բացատրել անկարելի ըլլալով՝ պարտաւորեցանք Նօդր-Տամի Անգղիերէն հրատարակութենէն մը քաղելով թարգմանել. հրատարակում՝ որ իր անկատարութիւններովն ու բազմաթիւ վրիպակներովն հանդերձ՝ այլ և այլ չգիտեմ ինչ լեզուով բառերու խուզարկութեանց մասին և ինչ ինչ դժուարութեանց մէջ՝ մեզ քիչ օգտակար չեղաւ...։

Ծ. Թ.

— Պարոն նախագահ, պատասխանեց փաստաբանը, ըստ որում ամբաստանեալն իր յանցանքը խոստովանած է՝ յարգապատիւ տեարց խօսք մը միայն ունիմ խօսելու։ Ահաւասիկ հատուած մը Սալեան օրէնքէն*. «Եթէ վհուկ մը մարդ մը կերած ըլլայ «ու յանցանքն ապացուցուի՝ ութ հազար դենիէ, որ երկու հա- «րիւր ոսկի — կ՚ընէ, տուգանք պիտի վճարէ»։

— Այդ հատուածը ջնջուած, խափանուած է, ըսաւ արքային արտաքոյ կարգի փաստաբանը։

— Կ՚ուրանամ այդպէս ըլլալը», պատասխանեց փաստաբանը։

Առանց սրահէն ելնելու՝ կարծիքներն առնուեցան, և դատաւորք՝ կորսնցընելու ժամանակ չունենալով ամէնքն ալ գլուխ օրէցին։ Նախագահին՝ մեղմաձայն իրենց ուղղած աղէտաւոր հարցումին վրայ՝ իրենց ծածկուած գլուխներուն մութին մէջ հետզհետէ բացուիլը կը տեսնուէր։ Հէք ամբաստանեալն անոնց նայելու պէս կ՚ընէր, այլ իր պղտոր աչքը բան չէր տեսներ ալ։

Ետքը ատենադպիրն երկար մագաղաթի մը վրայ բան մը գրի առնելով՝ նախագահին մատոյց, որու վրայ թշուառ պատանուհին ժողովրդեան շարժիլ, խլրտիլը և նիզակներու իրար բաղխուիլը լսեց և միանգամայն սառնաբեկ ձայն մ՚որ կ՚ըսէր.

«Դուստր Եգիպտոսի, Վեհափառ Տեառն մերոյ արքային հրամայած օրը, կէսօր ժամանակ, մէկ շապիկով, մերկոտն և վզէդ չուան մ՚անցուած՝ սայլի մը մէջ Նօդր-Տամի մեծ դրան առջև պիտի տարուիս, և հոն՝ ձեռքդ երկու լիտր ծանրութեամբ մոմեղէն ջահ մը բռնած՝ յանցանացդ հրապարակական խոստովանութիւնը պիտի ընես, որմէ վերջը Կրէվի հրապարակը պիտի տարուիս, ուր քաղաքին կախաղանին վրայ կախուելով պիտի խեղդուիս. Նոյնպէս սոյն այս քու այծդ։ Նաև եկեղեցական ատեանին երեք առիւծադրոշմ ոսկի դահեկան պիտի վճարես, ՚ի

* Այս օրէնքս իր անունը Ֆրան-Սալիէններէ առած է, որոնց մէջ կը գործադրուէր։ Կը կարծուի թէ Ֆարամոնի կամ Քլօվիսի գործն եղած ըլլայ այն։ Տ. Թ.

հատուցումն Ֆէպիւս տը Շադօբէրի անձին վրայ քեզմէ գործուած, ու նոյնպէս քեզմէ խոստովանուած կախարդութեան, մոգութեան, բղջախոհութեան և սպանութեան յանցանքներու։ Աստուած քու հոգւոյդ ողորմի։

— Ո՛հ, երազ մ՚է այս», մրմռաց կալանուհին, մինչդեռ կոշտ ձեռքեր զինք կը տանէին հրելով։

Դ

ԶԱՄԵՆԱՅՆ ՅՈՅՍ Ի ԲԱՑ ՄԵՐԿԱՑԻ՛Ր

LASCIATE OGNI SPERANZA

Միջին դարու մէջ, երբ շէնք մ՚ամբողջացած լմնցած էր՝ հողին տակ գրեթէ այնչափ կերտուած կը գտնուէր՝ որչափ դուրսը։ Պալատ մը, բերդ մը, եկեղեցի մը՝ եթէ Նօդր-Տամի նըման վարսեալ ցիցերու (pilotis) վրայ կառուցուած չըլլար՝ միշտ կրկնակի յատակ կ՚ունենար։ Մայր եկեղեցիներու մէջ՝ գիշեր ցորեկ երգեհոններով ու զանգակներով հնչուն և լուսով ողողուն վերին դահլիճին տակ՝ կերպիւ իմն ուրիշ մայր եկեղեցի մը կը գտնուէր՝ ստորերկրեայ, խոնարհ, խաւարչուտ, գաղտնի, կոյր և մունջ, երբեմն ալ գերեզման մը. իսկ պալատներու մէջ, պատուարներու մէջ՝ բանտ մը — մերթ նաև գերեզման մը — մերթ երկուքն ալ միանգամայն։ Այս հուժկու կառոյցները, որոնց կազմակերպութեան և ձևակերպութեան եղանակն այլուր բացատրած ենք, սոսկապէս հիմեր չէին ունենար, այլ որպէս թէ արմատներ՝ որք հողին մէջ՝ վերի շէնքին նման՝ ինչուան վերջը խուցերու, դալիճներու, սանդուղքներու կը բաժնուէին։ Այսպէս, եկեղեցի, պատուար, պալատ՝ կէս-մէջքերնին հողի մէջ ծածկուած էին։ Շէնքի մը ստորերկրեայ մասերն ուրիշ նոր շէնք մը կը ձևացընէին, ուր վեր ելնելու տեղ վար կ՚իջնուէր, և որ՝ շէնքին արտաքին յարկերու դէզին տակ՝ իր գետնափոր

՚յարկերը կը յարէր, ինչպէս այն անտառներն ու լեռները՝ ո-րոնք լճի մը հայելանման ջուրին մէջ՝ եզերքի անտառներուն ու լեռներուն ներքեւ՝ գլխիվայր շրջած կը տեսնուին:

Սէնդ Անդուանի պատուարը, Բարիզի Արդարութեան-Պալա-տը, Լուվրը՝ այս ստորերկրեայ շէնքերուն իւրաքանչիւրը մէյ մէկ բանտեր էին, որոնց յարկերը՝ քանի հողին մէջ սուզուէին՝ հետզհետէ այնչափ կը նեղնային ու կը մթագնէին իրարու վը-րայ կարգ կարգ շարուած սանդուխ այնպիսի գօտիներ ձեւացընե-լով՝ որ Տանդէ իր դժոխքին համար անոնցմէ յարմարագոյն բան մը կրցած չէ գտնել: Այս զնդանի ձագարները սովորաբար հնձանի տիպ ունեցող խոնարհ խուցով մը կը վերջանային. հոն Տանդէ դրեր զՍատանայն. հոն ընկերութիւնը մահապարտ յանցաւորը կը դնէր: Մէյ մ՚որ թշուառ էութիւն մը հոն թա-ղուէր՝ այլ եւ լոյս, օդ, կեանք, «ամենայն յոյս» (ogni speranza) կը լքանէին զինքը, եւ անկէ՝ կախաղանի կամ փայտակոյտի հա-մար միայն դուրս կ՚ելնէր. երբեմն ալ կը նեխէր, կը փտէր հոն, եւ այս բանս մարդկային արդարութենէ մոռնալ կ՚անուանուէր: Մարդիկներու եւ իր մէջ տեղ՝ դատապարտեալը գլխուն վերեւ վէմերու եւ բանտապահներու կուտակութիւն մը ծանրացած կ՚զ-գար. եւ բովանդակ բանտը, կուռ պատուարն ալ ուրիշ բան չէր դառնար բայց եթէ մանուածոյ ահագին փականք մը, որ զինքը աշխարհէ դուրս կը փակէր:

Այս տեսակ հնձանի յատակի մը մէջ, Սուրբ Լուիէ պեղուած անյուշ բանտերուն (oubliettes), Թուրնէլի վանական վիրապին (in-pace) մէջ ահա՝ անշուշտ որպէս զի չփախչի՝ մահապարտ Էզմերալտան դրած էին՝ գլխուն վրայ՝ հսկայաձեւ Արդարութեան -Պալատով: Խե՛ղճ ճանճիկ՝ անոր քարերէն ամենափոքրն իսկ թնդացընելու անկարող:

Ստուգիւ՝ նախախնամութիւն եւ ընկերութիւն՝ հաւասար անի-րաւութեամբ կը վարուէին անոր հետ, վասն զի այնպիսի տկար արարած մը ջախջախելու համար դժբաղդութեան եւ չարչարան-քի այս աստիճան յաճախութեան մը պէտք չկար: Հո՛ն կը դը-

նուէր թշուառ աղջիկը, մութին մէջ կորսուած, թաղուած, ծածկուած, որմուած: Արեւու տակ խնդալն եւ կաքաւելը տես-նելէ վերջը՝ այս վիճակին մէջ զինքը տեսնողը՝ յիրաւի սար-սուռ պիտի զգար: Ցուրտ՝ գիշերուան նման, ցուրտ՝ մահուան նման, ո՛չ մարդկային ձայն մը կու գայ ականջին, ո՛չ լուսոյ նշոյլ մ՚աչքերուն. երկուքի խորտակուած, շղթայներով ճմլուած, կտոր մը յարդի վրայ, կոյժի մ՚ու հացի մը քով կքած, այն ճա-հիճին մէջ՝ որ զնդանին ծորումներէն իր տակ կը ձեւանար, ա-ռանց շարժումի, գրեթէ առանց շունչի, այնպիսի կէտի մը հա-սած էր՝ որ ինքզինք չէր զգար ալ: Փէպիւս, արեւ, ցորեկ, ա-զատ օդ, Բարիզի գուեհները, ծափահարութեանց մէջ տեղ՝ իր կաքաւները, պաշտօնակալին հետ սիրային անոյշ զրոյցները. ետքը քահանայն, կաւատուհին, դաշոյնը, արիւնը, տանջանքը, կախաղանը. աս ամեն բանս՝ ստոյգ է որ մերթ ներդաշնակ եւ ոս-կեղէն տեսիլի մը պէս, մերթ անձեւ մղձաւանջի մը պէս, իր մըտ-քին մէջէն կ՚անցնէր տակաւին, այլ սակայն իր այս ամեն ըմ-բռնումն աղջամուղջին մէջ կորսուող տկար եւ տարտամ մա-քառում մ՚էր, կամ թէ հեռաւոր երաժշտութիւն մ՚որ վերը՝ երկրի վրայ կը նուագուէր, եւ զոր՝ հէք աղջկան ինկած մնա-յած խորութեան մէջ հնարին չէր լսել: Հոն դրուելէն 'ի վեր՝ ո՛չ քուն էր նա ո՛չ արթուն: Այս թշուառութեան մէջ, այս զնդանիս մէջ՝ ինչպէս օրը գիշերէն՝ նոյնպէս արթնութիւնը քու-նէն, երազն իրութենէն զանազանել չէր կարող, այնպէս որ այս ամեն բանս իր միտքին մէջ խառնուած, խորտակուած, ծփուն, եւ խառն 'ի խուռն սփռուած կը գտնուէր: Ո՛չ եւս կ՚զգար նա, ո՛չ գիտէր, ո՛չ կը մտածէր: Երբէք մարդկային արարած մը անէութեան մէջ այս աստիճան յառաջացած չէր:

Այսպէս թմբրած, սառած, քարացած՝ հազիւ հազ երկու կամ երեք տարբեր անգամներ՝ առանց թոյլ տալու որ կտոր մը լոյս անցնի, եւ սեւ հացի կեղեւ մը միայն նետելու համար՝ իր վրա-յովը՝ տեղէ մը կափարիչ-դուռի մը բացուելու ձայնն իմացած էր: Սակայն մարդիկներու հետ այս հաղորդակցութիւնը միայն

Մնացած էր իրեն — բանտապետին կանոնաւոր այցելութիւնը։ Բան մը միայն դեռ եւս իր ականջը մեքենայօրէն կ'զբաղեցընէր, խոնաւութիւնն իր գլխուն վրայովը կամարին բորբոսած քարերուն մէջէն մզելով՝ հաւասար միջոցներով շիթ առ շիթ այսպէս հաւաքուած՝ իր քովը գտնուող ջրոյ ճահիճին մէջ կ'իյնար այնպիսի ձայնով մ'որու՝ իր ափշութեան մէջ՝ միտ կը դնէր ակամայ։

Այս ճահիճին մէջ ընկնող այս ջրոյ շիթը, իր շուրջը խլրտող միակ շարժումն էր, ժամանակը նշանակող միակ ժամացոյցը, աշխարհի երեսին վրայ հանուած աղմուկներէն՝ իր ականջին հասնող միակ աղմուկը։

Ամէն բան զրուցած ըլլալու համար կը պարտաւորիմք աւելցընել թէ ատեն ատեն՝ տիղմի և մութի այս կոյանոցին մէջ՝ հոն հոն իր թեւին կամ ոտին վրայէն պաղ բանի մ'անցնիլը զգալով՝ բոլոր մարմնովը կը դողար, կը սարսէր թշուառ կալանուհին։

Թէ որչափ ժամանակէ 'ի վեր այս սոսկալի տեղը կը գտնուէր՝ ինքն ալ չէր գիտեր։ Շփոթիւ կը յիշէր տեղ մը՝ մէկու մը դէմ արտասանուած մահուան վճիռ մը, որմէ վերջը՝ այն տեղէն զինքը դուրս հանած առած տարած էին, և սառնաբեկ՝ գիշերի և լռութեան մէջ արթնցած ըլլալը։ Թէ՝ ձեռքերուն վրայ սողալով քալել ուզած ժամանակը՝ երկաթի օղակներ իր ոտքին կոճը (cheville) կտրած էին և շղթայի ձայներ լսած էր միանգամայն։ Կրցած էր հասկընալ թէ իր շուրջն ամէն բան պատ էր, թէ իր տակը՝ ջուրով ծածկուած սալաքար մը կը գտնուէր, նաև յարդի կոյտ մը. այլ սակայն ո՛չ կանթեղ, ո՛չ լուսանցոյց։ Այն ժամանակ՝ այն յարդի կոյտին վրայ բազմած էր, և երբեմն ալ՝ դիրքը փոխելու համար՝ զնդանին մէջ գտնուած քարեղէն աստիճանի մը յետին ոտքին վրայ։ Պահ մ'այն ջրոյ կաթիլին չափած սև սև վայրկեանները համրելու փորձ էր փորձեր, այլ սակայն հիւանդ ուղեղի մ'այս տխուր աշխատութիւնն ընդ փոյթ ընդհատուած էր ինքնին՝ զինքն ապշութեան մէջ թողլով։

Վերջապէս օր մը կամ գիշեր մը (վասն զի կէս օր և կէս

գիշեր համանման գոյն ունէին այս գերեզմանին մէջ) իր վրայովը ձայն մը լսեց, բայց սակայն իրեն հացն և կուժը բերած ժամանակ՝ սովորաբար բանտապանին հանածէն աւելի ուժգին ձայն մը։ Գլուխը վեր վերցընելով խոր-վերապին կամարին մէջ բացուած տեսակ մը դրան կամ կափարչին ճեղքուածներէն՝ կարմրագոյն ճառագայթի մ'անցնիլը տեսաւ։ Մի և նոյն ժամանակ խոշոր երկաթակապմածը ճչեց, կափարիչ-դուռն իր ժանգահար ծղխնիներուն վրայ ճռնչեց, դարձաւ, և կանթեղ մը, ձեռք մը, և երկու մարդերու մարմնոյն վարի մասը տեսնուեցաւ, դրան ցածութիւնն՝ անոնց գլուխները նշմարելու արգելք ըլլալով։ Լոյսն իր աչքերն այն աստիճան խոցոտեց՝ որ ստիպուեցաւ գոցել զանոնք, և երբ ժամանակէ մը վերջը բացաւ՝ դուռը վերըստին փակուած էր, լապտերը սանդուղին մէկ աստիճանին վրայ դրուած, և մարդ մը՝ մինակ՝ իր առջև յոտին կանգնած։ Եկեղեցական սեւ հագուստ մը (cagoule) այս մարդուն մինչև ոտքերը կ'իջնէր, համագոյն քուսիթայ մը (caffardum) անոր դէմքը կը ծածկէր, այնպէս որ անոր բովանդակ անձէն բան մը չէր տեսնուեր, ո՛չ երեսն և ո՛չ ձեռքերը։ Սեւ երկար պատանք մ'էր այն՝ որ կանգուն կեցած էր և որու տակէ բանի մը շարժիլը խլրտիլը կը տեսնուէր։ Կալանուհին քանի մը վայրկեան անթարթափ աչքերով նայեցաւ անոր. ո՛չ մին կը խօսէր ո՛չ միւսը. տեսնողը պիտի ըսէր թէ երկու արձաններ դիմացէ դիմաց եկած էին։ Նկուղին մէջ կարծես երկու բան միայն կ'ապրէր. կանթեղին պատրոյգը, որ հոն տեղի մթնոլորտին խոնաւութեան պատճառաւ կը ճարճատէր, և կամարէն ինկած ջրոյ շիթն որ իր միօրինակ շշուկովն այն անկանոն ճարճատիւնն ընդմիջելով կանթեղին լոյսը՝ ճահիճի իւղային ջրոյն վրայ համակեդրոն շրջանակներով դողդոջել կու տար։

Հուսկ ուրեմն բանտուհին լռութիւնը խզեց.

«Ո՞վ ես դու։

— Քահանայ մը»։

Բառը, հնչումը, ձայնը սարսուեցին զհէք աղջիկը։

Քահանայն խորունկ ձայնով մը շարունակեց.

«Պատրաստ ես։

— Ի՞նչ բանի։

— Մեռնելու։

— Ո՛հ, ըսաւ, շատ պիտի հաճիմ մահը։

— Վաղը»։

Գլուխը՝ որ ուրախութեամբ վեր բարձրացած էր՝ նորէն կուրծքին վրայ ինկաւ լքումով։

«Շատ ուշ է այդ, մրմռաց. իրենց համար ինչ կ՚ըլլար որ մահն այսօր ինձ ճաշակել տային։

— Կարի թշուառ ես որդեա՛կ, հարցուց քահանայն լռութենէ մը վերջը։

— Սաստիկ ցուրտ կ՚զգամ», պատասխանեց, և ձեռքերովը ոտքերը բռնեց. մօտ թշուառներու սովորական շարժում, զոր Ռօլանտ-Աշտարակի մենախուցոյն վրայ ևս նշմարեցինք. իր ակռաները կը կրճտէին։

Քահանայն՝ իր կնգուղին տակէն՝ աչքերը զնդանին չորս կողմը յածեց։

«Առանց լոյսի, առանց հուրի, ջուրի մէջ. սոսկալի բան է այս։

— Այո, պատասխանեց աղջիկն այն ապուշ կերպարանքով՝ զոր թշուառութիւնը տուած էր իրեն։ Լոյսն ամենուն համար է, ինչու համար ինծի միայն մութը կու տան։

— Գիտե՞ս, կրկնեց քահանայն նոր լռութենէ մը վերջը, գիտե՞ս թէ ինչ պատճառաւ հոս կը գտնուիս։

— Կարծեմ գիտէի, ըսաւ, որպէս թէ իր յիշողութեանը օգնելու համար՝ վտիտ մատերովը յօնքերը շփելով, բայց հիմա չեմ գիտեր ա՛լ»։

Յանկարծ մանկան մը նման լալ սկսելով «Կ՚ուզեմ աս տեղէն ելնել, պարոն։ Կը մսիմ, կը վախնամ հոս, և սոսկալի կենդանիներ մարմնէս դէպ ՚ի վեր կ՚ելնեն։

— Լա՛ւ որդեա՛կ, ետևէս եկո՛ւր»։

Այսպէս խօսելով՝ քահանայն անոր թևէն բռնեց։ Դժբաղդ աղջկան թէպէտև մինչև աղիքը սառած՝ այլ սակայն այս ձեռքը պաղի ներգործութիւն մ՚ըրաւ իրեն։

«Ո՛հ, մրմռաց, մահուան սառնասառոյց ձեռքն է այս. ըսէ ինձ, ո՞վ ես դու»։

Քահանայն՝ կնգուղը վեր վերցընելով՝ աղջիկն անոր նայեցաւ։ Այն չարագոյժ դէմքն էր տեսածն՝ որ այնչափ երկար ժամանակներէ ՚ի վեր զինքը կը հալածէր, այն դիւական գլուխը՝ որ Ֆալուրտել կնոջ տունը՝ Ֆէպիւսի պաշտելի գլխին վրայ երևցած էր իրեն, այն աչքը՝ զոր վերջին անգամ նշմարած էր դաշոյնի մը քով շողշողալով։

Իրեն համար յաւէտ աղէտալի այս երևոյթը, որ զինքն աղէտքէ աղէտք գլորելով՝ մինչև չարաչար մահուան մը դուռը բերած հասուցած էր, իր թմբրած միտքն արթնցուց, և իրեն այնպէս թուեցաւ թէ իր յիշողութեան վրայ թանձրացած տեսակ մը քօղ՝ կը խզուէր, կը պատռէր։ Բոլոր իր տխուր արկածին պարագաները, Ֆալուրտել կնոջ տան գիշերային տեսակցութենէն՝ մինչև եղեռնական ատեանին առջև իր դատապարտութիւնը՝ համանգամայն եկան ներկայացան իր յիշողութեան, ո՛չ այլ ևս յառաջուան նման շփոթ, տարտամ և անորոշ, այլ յայտնի, որոշ, կենդանի, բաբախող, ահագին։ Այս կիսովի ջնջուած և սոսկալի ցաւերէ ու տառապանքներէ գրեթէ խափանուած յիշատակները՝ իր առջև գտնուող տխրատեսիլ դէմքով արթնցան, կենդանացան, ինչպէս որ կրակին մերձումն՝ արուեստաւոր անգոյն մելանով (encre sympathique) ճերմակ թուղթի վրայ գրուած անտեսանելի տառերը՝ պայծառ կերպով մը դուրս կը ցատկեցընէ։ Եղկելին իր սրտին բոլոր վէրքերը վերստին բացուած և համանգամայն արիւնած զգաց։

«Ա՛հ, պոռաց ձեռքերն աչքերուն տանելով և ցնցական դողումով մը, քահանայն է»։ Եւ վհատութեամբ մը թողուց որ թևերը վար իյնան, և գլխակոր, աչքը գետին սևեռած, անմռունչ և շարունակ դողալով՝ եղած տեղը նստած մնաց։

Քահանայն կը դիտէր զանի ինչպէս ցին մ՚որ երկար ժամանակ երկնից ամենաբարձր մէկ կէտէն ցորեաններու մէջ ղօղուած խեղճ արտոյտի մը վրայ սաւառնելէ, երկար ժամանակ իր թռուչին ամէնի շրջանակները լռութեամբ նեղցընելէ վերջը՝ յանկարծ փայլականման՝ որսին վրայ նետուելով՝ զանիկա ողեսպառ իր ճիրաններուն մէջ կը բռնէ ։

Խեղճ աղջիկը ցած ձայնով մրմռալ, «Լմցուր, լմնցուր, վերջին հարուածը, աղէ՛» ։ Եւ գլուխը սարսափով դէպ 'ի ետեւ՝ ուսերուն մէջ տեղը՝ կը սուզէր, սպանդաւորին լախտի հարուածը սպասող ոչխարին նման ։

«Ուրեմն սոսկում կը պատճառեմ քեզ», ըսաւ վերջապէս քահանայն ։

Աղջիկը պատասխան չտուաւ ։

«Ըսէ, միթէ սոսկում կը պատճառեմ քեզ», կրկնեց վերստին այցելուն ։

Կալանաւորուհւոյն շուրթերը՝ որպէս թէ ժպտելու վրայ ըլլար նա՝ կարկամեցան ։

«Այո՛, ըսաւ, դահիճը զխեղճ դատապարտը կը հեգնէ ։ Երկար ամիսներէ 'ի վեր զիս կը հալածէ նա, կ՚սպառնայ, կ՚ահաբեկէ ։ Ո՜հ, եթէ նա չըլլար՝ քանի՜ երանելի էի ես. նա՛ է, նա՛ զիս այս անդունդիս մէջ գլորողը ։ Ո՜հ, Աստուած իմ, նա՛ սպաննեց... այո՛, նա՛ սպաննեց, իմ սիրականս, իմ Ֆէպիւսս։ Հոս հեծկլտուք մը զինքը բռնելով եւ աչքերը քահանային վրայ վերցընելով, ո՜հ, ապիրատ, ո՛վ ես դու, քեզ ինչ ըրած ունիմ. այսչափ կ՚ոխաս, կ՚ատես զիս ։ Բայց, ինչ ունիս ինծի դէմ ։

— Կը սիրեմ զքեզ», գոչեց քահանայն ։

Աղջկան արցունքները յանկարծուստ դադրելով ապուշի հայուածով մ՚անոր նայեցաւ ։ Քահանայն ծունր դրած՝ բոցավառ աչով մը կ՚ուտէր կը լափէր զանի ։

«Կը լսե՞ս, կը սիրեմ զքեզ, գոչեց վերստին ։

— Ի՞նչ սէր, ըսաւ սարսռալով չուառուհին ։

— Գեհենապարտի՜ մը սէր», կրկնեց մարդը ։

Երկուքնին ալ իրենց յուզմանց ճնշման տակ խորտակուած՝ քանի մը վայրկեան անմռունչ մնացին. քահանայն՝ խելաթափ, աղջիկը՝ ապուշ ։

«Մտի՛կ ըրէ, ըսաւ վերջապէս մարդը, և այս կէտիս՝ զարմանալի կերպով մը հանդարտած էր. ամեն բան պիտի լսես, հասկընաս հիմա ։ Քեզի այնպիսի բաներ պիտի խօսիմ, զորս գիշերուան խորունկ ժամերուն մէջ գաղտնապէս խղճմտանքս հարցափորձած ժամանակս՝ հազիւ հազ ինքզինքիս կը խոստովանէի. այնպիսի ժամեր՝ ուր այն աստիճան մութ խաւարը տիրած է՝ որ նոյն իսկ Աստուծմէ անտեսանելի մնալ կը կարծէ մարդ ։ Մտի՛կ ըրէ. քեզ հանդիպելէս յառաջ, դեռատի՜ աղջիկ, երջանի՜կ էի ես ։

— Հապա ե՛ս, հառաչեց նուաղուն ձայնով մը ։

— Խօսքս մի՜ կտրեր.... ։ Այո՛, երջանիկ էի ես. գէթ երջանիկ ըլլալ կը կարծէի ։ Մաքուր վարք մ՚ունէի, և հոգիս յստակ պայծառութեամբ մը կը փայլէր ։ Չկար գլուխ մ՚որ իմինէս աւելի խրոխտապանծ ու աւելի գոհունակ վեր բարձրանար ։ Քահանայք ողջախոհութեան վրայ խորհուրդ կը հարցընէին ինծ, վարդապետք՝ վարդապետութեան ։ Այո՛, գիտութիւնն ինծ համար ամեն բան էր. վասն զի քոյր մ՚էր այն, և քոյր մը կը բաւէր ինծ ։ Սակայն այս ըսել չէ թէ տարիքի հետ այլ և այլ ուրիշ տեսիլներ միտքիս մէջ չծնան. քանի՜ քանի՜ անգամներ կնոջ մը անցնիլը տեսնելով՝ մարմինս թունդ ելած կը յուզուէր ։ Սեռի և մարդկային արեան այս ուժը, զօրութիւնը, զոր՝ խօլ պատանեակս՝ յաւիտեանս խղդուած կը կարծէի, շատ և շատ անգամներ ջղաձգաբար ցնցած էր այն ուխտերու երկաթի շղթայն՝ որք զիս, կթշուառս, սեղանի ցուրտ քարերուն կը կապեն անքակտելի կերպով ։ Այլ պահքը, աղօթքը, ուսումը, մենաստանի խստամբերութիւնները՝ վերջապէս մարմնոյս վերստին տէր ըրած էին հոգիս, և միւս կողմէն ալ՝ կիներէն կը խորշէի, կը հեռանայի զգուշութեամբ ։ Ասկէ զատ՝ գիրք մը բանալով միայն՝

ուղեղիս բոլոր անմաքուր մուխերը գիտութեան ջինջ պայծառութեան առջև կը ցնդէին, կ՚անհետէին, և երկրի թանձր բաները քանի մը րոպէի մէջ ինձմէ հեռանալով՝ հանդարտութիւնս կը վերստանայի՝ յաւերժական ճշմարտութեան պայծառ ճառագայթումէն շլացած, զուարթացած։ Ո՛րչափ ատեն որ դեռ առաքինութեանս վրայ յարձակելու համար կնոջ տարտամ ստուերներ միայն ղրկեց՝ որոնք եկեղեցւոյ մէջ, գուհներու մէջ, դաշտերու մէջ՝ ցիր ու ցան՝ աչացս առջևէ կ՚անցնէին, և որոնք հազիւ երազներուս մէջ կրկին կ՚երևէին ինձ՝ հեշտեաւ յաղթեցի անոր։ Աւա՜ղ, եթէ յաղթութիւնը ձեռքս չմնաց՝ յանցանքն իմս չէ, Աստուծոյ է, որ զմարդ և զսատանայն հաւասար զօրութեամբ հաստած չէ․․․։ Մտի՛կ ըրէ։ Օր մը․․․»։

Հոս կանկ առաւ, և կալանուհին անոր հառաչանքները կը լսէր՝ որոնք հռնչիւնի աղաղակով իր սիրտը պատառելով դուրս կ՚ելնէին անկէ։

Քահանայն վերստին շարունակեց․

«․․․ Օր մը՝ խղիկիս պատուհանին կռթնած էի․․․։ Ի՛նչ գիրք կը կարդայի՝ չգիտեմ․ այս ամեն բաները գլխիս մէջ յորձանքի մը պէս են․․․։ Կը կարդայի։ Պատուհանը հրապարակին վրայ կը նայէր։ Թմբուկի և երաժշտութեան ձայն մը կը լսեմ։ Մտախոհութեանս մէջ վրդովուելուս դժկամակ՝ հրապարակը կը նայիմ։ Տեսածս՝ ինձմէ զատ ուրիշներ ալ կը տեսնէին, և սակայն մարդկային աչքերու համար եղած տեսարան մը չէր այս։ Հո՛ն, սալարկին մէջ տեղը․․․ կէս օր էր․․․ պայծառ արև մը․․․ աղջիկ մը կը պարէր։ Այն աստիճան հրաշագեղ աղջիկ մ՚որ Աստուած՝ զանիկա Աստուածածնայ կուսէն նախամեծար սեպելով՝ իրեն մայր պիտի ընտրէր և անկէ ծնել պիտի ուզէր՝ եթէ իր մարմին առած ժամանակը՝ աշխարհի վրայ գտնուած ըլլար նա։ Աչքերը սև էին և մեծապայծառ․ իր սև մազերուն մէջ՝ քանի մը վարսեր՝ ուր արևը կը թափանցէր՝ ոսկի թելերու նըման կը խարտեշանային։ Ոտքերը՝ արագ արագ դարձող անուի մը շառաւիղներուն նման՝ իրենց շարժման մէջ աներևոյթ կ՚ըլ-

լային։ Գլխոյն շուրջը՝ իր սև հիւսակներուն մէջ՝ մետաղաթիթեղներ կային՝ որոնք արևուն տակ շողալով, փողփողելով՝ ճակտին վրայ աստղերու թագ մը կը կազմէին։ Ոսկի վահանակներ ցանուած իր պատմուճանը՝ կապուտակ և հազար ու մէկ կայծերով վառ՝ ամառուան գիշերի մը պէս կը փայլփլէր։ Իր թուխ ու դիւրաշարժ թևերն երկու երիզներու (écharpes) նման մէջքին շուրջը կը կապուէին ու կ՚արձակուէին։ Մարմնոյն ձևը հիանալի գեղեցկութիւն մ՚ունէր։ Ո՛հ, ի՛նչ ակնախտիղ դէմք մ՚էր այն՝ որ նոյն իսկ արևու լոյսին մէջ՝ լուսազեղ բանի մը նման աչքի կը զարնէր․․․։ Բա՛րէ, աղջի՛կ, դո՛ւ էիր այս հիանալի արարածը․․․։ Զարմացած, զգլխած, զմայլած՝ թոյլ տուի ինքզինքիս որ քեզ նայելով կշտանայ, և այնչափ նայեցայ քեզի՝ որ յանկարծ ահաբեկ սարսռայի — զգացի որ բաղդը ձեռքակալ կ՚ընէր զիս»։

Քահանայն, շունչը բռնուած, նորէն պահ մը կանգ առնելէ վերջը՝ շարունակեց․

«Արդէն կիսովի հմայուած՝ բանի մը յարելու աշխատեցայ, որպէս զի մեղքի մէջ իյնալէ ազատիմ։ Յիշեցի մինչև այն օրը Սատանային ինձ լարած ամեն որոգայթները։ Իմ աչքիս տակ գտնուած գեղեցկութիւնն այնպիսի գերմարդկային բան մ՚ունէր՝ որ կամ երկինքէն կրնայ գալ կամ դժոխքէն։ Պարզ աղջիկ մը չէր այն մեր երկրին հողովը շինուած և կնոջ մը հոգիի դանդաչուն ճառագայթով մը ներսի կողմը խեղճօրէն լուսաւորուած։ Հրեշտակ մ՚էր այն արարածը, այլ խաւարի, այլ բոցի հրեշտակ մը, և ո՛չ թէ լուսոյ։ Այն պահուն որ աս բանս կը մտածէի՝ քովդ այծ մը տեսայ, մոգական ժողովի կենդանի մը, որ խնդալով ինձ կը նայէր։ Կէս օրուան արևն անոր հրեղէն եղջիւրներ կու տար։ Այն ժամանակ աղօտ իմն սատանային ծուղակը տեսայ, և տարակոյս չունեցայ որ դժոխքէն եկած և մի միայն իմ կորստեանս համար եկած ըլլաս դուն։ Ա՛յսպէս հաւատացի հաստատապէս»։

Հոս քահանայն երես առ երես կալանուհին դիտելով՝ ցրտութեամբ մ՚աւելցուց․

«Ես տակաւին կը հաւատամ․․․․։ Սակայն հմայքը տակաւ առ տակաւ իր ներգործութիւնը կ'ընէր․ պարպ գլուխս մէջ կը դառնար․ կ'զգայի թէ գիտութիւնը գաղտնապէս իմ ներսի դիս կը ներգործէր։ Ամեն ինչ որ արթուն հսկել պէտք էր հոգւոյս մէջ՝ կը քնանար, և ձիւներուն մէջ կորսուողներու նման՝ հաճութիւն կ'զգայի թողուլ որ այս քունը գայ և տիրէ ինձի։ Յանկարծ սկսար երգել։ Ի՞նչ կրնայի ընել, Թշուառս։ Երգդ ալ պարէդ աւելի զմայլելի էր։ Ուզեցի փախչիլ․ կարելի չէր։ Գետնին գամուած, արմատացած էի։ Ինձ այնպէս կը թուէր որ սալաքարին մարմարը մինչև ծունկերս եկած ըլլար։ Հարկ եղաւ որ մինչև վերջը մնամ։ Ոտքերս սառ կտրած ժամանակը՝ գլուխս կ'եռար։ Հուսկ ուրեմն, գթալով թերևս իմ վրայ, դադրեցար երգելէ և անյայտ եղար։ Ակնախտիղ տեսիլին ցոլումը, դիւթիչ, մոգիչ երաժշտութեան հնչիւնը՝ աստիճան աստիճան աչքերուս և ականջներուս մէջէ անհետ եղան։ Այն ժամանակ՝ տեղէն հանուած արձանէ մ'աւելի ուժգին և աւելի տկար՝ պատուհանի խորշին մէջ ինկայ։ Երեկոյեան աղօթքի զանգակն արթընցուց զիս։ Կանգնեցայ, խոյս տուի, այլ աւա՜ղ, ներսի կողմս ինկած բան մը կար որ չէր կրնար կանգնիլ, բան մը կար վրաս եկած՝ որմէ չէի կարող խոյս տալ»։

Նորէն քիչ մ'ատեն լռութիւն պահելէ վերջը՝ շարունակեց․

«Այո՛, այն օրէ 'ի վեր ներսի դիս նոր մարդ մը յառաջ եկած էր, զոր չէի ճանչնար։ Ուզեցի բոլոր դեղերս գործածել — մենարան, խորան, աշխատութիւն, գիրք։ Յիմարութիւնք։ Ո՜հ, գիտութիւնն որչափ դատարկ կը հնչէ երբ որ մարդ յուսահատօրէն կրքայոյզ գլուխ մը կու գայ անոր կը բաղխէ։ Գիտես միթէ, անտխական աղջիկ, թէ այն ատենէ 'ի վեր իմ ու գրքիս մէջ տեղն ինչ կը տեսնէի յարաժամ։ Զքեզ, քու շուքդ, այն լուսաճաճանչ երևոյթին պատկերը՝ որ օր մ'իմ դիմացս՝ օդը ճեղքած անցած էր։ Այլ այս պատկերն այլ ևս նոյն գոյնը չունէր․ նսեմ էր այն, սգացեալ և խաւարին՝ այն սեւ շրջանակին նման՝ որ երկար ժամանակ ակնապիշ արևը դիտող անխոհեմին աչքին առջև կու գայ։

«Այն տեսիլէն չկրնալով ազատիլ, երգիդ՝ միշտ գլխիս մէջ բզզալը լսելով, ոտքերուդ՝ միշտ աղօթագրքիս վրայ պարելը տեսնելով, գիշերն երազիս մէջ միշտ քու մարմնոյդ իմինիս վրայէն սողոսկիլը զգալով, ուզեցի քեզ նորէն տեսնել, քեզ հպիլ, ով ըլլալդ իմանալ, տեսնել՝ թէ քեզմէ մնացած տեսլական պատկերին համեմատ պիտի գտնէ՞ի արդեօք զքեզ, և իրականութեամբ թերևս իմ երազս խորտակել։ Զիարդ և իցէ՝ կը յուսայի թէ նոր տպաւորութիւն մը հինը պիտի ջնջէր, վասն զի այդ հինն անհամբերելի, անտանելի բան մ'եղած էր ինձ համար։ Քեզ փնտռեցի, նորէն տեսայ։ Ո՜հ, աղէտք․ զքեզ երկու անգամ տեսնելով բիւր անգամ, միշտ տեսնել ուզեցի։ Այն ժամանակ․․․ ինչպէս այս դժոխային զառ 'ի թափիս վրայ կանգ առնուլ․․․ այն ժամանակ, ինքզինքիս տէր ըլլալէ դադրեցայ։ Սատանան դերձանին մէկ ծայրն իմ թևերուս կապած էր, միւս ծայրը՝ իր ոտքերուն։ Տարտամ եղայ և քեզի պէս թափառական։ Նախադուռներու տակ քեզ կ'սպասէի, փողոցներու ծայր քեզ կը լրտեսէի, աշտարակիս բարձրութենէն քեզ կը դիտէի։ Ամեն իրիկուն ինքզինքս աւելի՛ զմայլած, աւելի՛ յուսահատած, աւելի՛ դիւթուած, աւելի՛ կորսուած կը գտնէի։

«Ո՞վ ըլլալդ իմացած էի․ գնչուհի, Եգիպտուհի, բոշայ, թափառականներու ցեղէ։ Ի՞նչպէս տակը կախարդութիւն մը գտնուելուն տարակոյս ունենայի։ Մտիկ ըրէ, յոյս ըրի որ դատ մը զիս հմայքէն պիտի ազատէր։ Վհուկին մէկը Պրիւնօ տ'Աստը հմայած ըլլալով՝ այս վերջինը զանիկա այրել տուաւ և բժշկուեցաւ։ Այս բանս գիտնալով՝ մի և նոյն դեղն ես ալ փորձել ուզեցի։ Նախ և յառաջ Նօթր-Տամի անդաստակը քեզ արգիլել տուի, յուսալով թէ չես վերադառնար հոն և կը մոռնամ զքեզ։ Արգելքը մտիկ չըրիր, նորէն եկար։ Յետոյ զքեզ առևանգելու գաղափարն ունեցայ։ Գիշեր մը զայս ալ փորձեցի։ Երկու հոգի էինք և արդէն բռնած էինք քեզ, երբ այն անզգամ պաշտօնակալը վրայ հասաւ և ազատեց զքեզ։ Այս կերպով՝ թէ քու դժբաղդութիւնդ կ'սկսէր անիկա, թէ իմս, թէ

փրը։ Հուսկ ուրեմն, ինչ ընելս և ինչ ըլլալս չգիտնալով զքեզ եկեղեցական դատաւորին ամբաստանեցի։ Կը յուսայի թէ այս միջոցավ Պրիւնօ տ'Աստի պէս բոյժ պիտի գտնէի. նոյնպէս տարտամ կերպով կը խորհէի թէ դատաստանն ինձ պիտի մատնէր զքեզ, թէ բանտի մը մէջ զքեզ ձեռքիս մէջ, իշխանութեանս տակ պիտի ունենայի. թէ հոն՝ ձեռքէս ազատիլ չպիտի կրնայիր, թէ ինձ բաւական երկար ժամանակ տէր եղած էիր՝ որպէս զի ատեն մ'ալ ես ըլլամ քեզ տէր։ Երբ որ մարդ չարիք մը կ'ընէ, պէտք է որ ամբողջապէս ընէ, և կէս-ճամբու մէջ մնալը յիմարութիւն մ'է, ոչ ուրիշ բան։ Վասն զի յանցանքի ծայրայեղութիւնն իր բերկրապատար և ծայրագոյն ուրախութիւններն ունի, և քահանայ մ'ու վհուկ մ'անոր ձեռքով ընդանի մը յարդեայ շեղջին վրայ իսկ՝ կրնան անհնարին հեշտութիւններ վայելել։

«Զքեզ ամբաստանեցի ուրեմն, և այն ժամանակներն ահա՛ հանդիպած ատենս՝ քեզ ահ ու սարսափ կը պատճառէի, և լարած դաւս և գլխուդ վրայ պատրաստած փոթորիկս սպառնալիքներով և ահագին նայուածքներով ակամայ յայտնի կ'ընէի։ Սակայն և այսպէս՝ տակաւին կը դեգերէի, կը վարանէի, քանզի խորհուրդս սոսկալի կողմեր ունէր՝ որք զիս կ'ընկրկէին։

«Թերևս հրաժարէի այդ խորհուրդէն. թերևս իմ ժանտ և վատշուէր մտածումս գործադրութիւն չգտած՝ չորնար ապարդիւն իմ ուղեղիս մէջ։ Կը կարծէի թէ նոյն դատը շարունակելը կամ խզելն ինձմէ կախեալ պիտի ըլլար միշտ։ Բայց սակայն ամեն վատ մտածում անողոք է և ամեն անգամ իրողութիւն կ'ուզէ ըլլալ. հետևաբար ուր որ ինքզինքս ամենազօրեղ կը կարծէի, ճակատագիրն ինձմէ զօրեղ եւ էր։ Աւա՜ղ, աւա՜ղ, այն է որ զքեզ բռնելով և մութին մէջ շինած մեքենայիս ամեհի ճախարակներուն մատնեց։ Մօտիկ ըրէ... պատմութիւնս ալ լմնալու վրայ է։

«Օր մը... դարձեալ արևափայլ ու պայծառ օր մը... առջևէս մարդ մը կ'անցնի, մարդ մ'որ անունդ արտասանած ատենը կը խնդայ, և որու վաւաշութիւնն աչքերուն մէջ կը փայլի։ Անէծք. եռեւէն ինկայ։ Մնացածը գիտես»։

Եւ լռեց։ Նորաբոյս աղջիկը մէկ բառ միայն գտաւ խօսելու.

«Ո՜հ, իմ Փէպիւսս։

— Մի այդ անունը, ըսաւ քահանայն սաստկութեամբ մ'անոր թեւը բռնելով։ Մի այդ անունն արտասաներ, ո՜հ, այդ անունն է զմեզ, զթշուառս, 'ի կորուստ մատնողը. կամ մանաւանդ ճակատագրին մէկ անբացատրելի խաղով երեքնիս ալ իրարու կորստեան պատճառ գտնուեցանք...։ Կը նեղուիս, կը տանջուիս, այնպէս չէ՞. կը սառիս պաղէն, մութն աչքերդ կը կուրացընէ, չորս կողմդ ընդան է, այլ սակայն թերևս ներսի դիդ լոյս մը ունիս տակաւին, գէթ այն տղայական սէրը՝ որ սրտիդ հետ զուարճացող այն անխրտ մարդուն վրայ կը տածես։ Մինչդեռ ես՝ ընդանն իմ ներսի կողմս կը կրեմ, ներսի կողմս ձմեռ, սառ, յուսահատութիւն է, և խաւարը հոգւոյս մէջ կը տիրէ։ Գիտես միթէ թէ ինչեր քաշեցի. դատաստանիդ ներկայ գտնուեցայ. եկեղեցական դատաւորին նստարանին վրայ կը գտնուէի։ Այո՛, այն քահանայական կնգուղներէն մէկուն ներքև՝ դժոխապարտի մը գելումները, գալարումները (contorsions) կը տեսնուէին։ Երբ զքեզ ատեան բերին՝ հոն էի. երբ զքեզ հարցափորձեցին՝ հոն էի միշտ...։ Որջ գայլերու։ Իմ յանցանքս, իմ կախաղանս կամաց կամաց ճակտիդ վրայ կանգնուած կը տեսնէի։ Ամեն մէկ վկայի, ամեն մէկ ապացոյցի, ամեն մէկ դատավարութեան՝ հոն էի, և այն վշտագին ճամբուն մէջ քու ամեն մէկ քայլափոխներդ համրելու կարող. նոյնպէս հոն էի երբ այն ամեհի գազանը...։ Ո՜հ, տանջանքը նախատեսած չէի...։ Մօտիկ ըրէ։ Վշտի սենեակն եռեւէդ եկայ։ Պատժատուին պիղծ ձեռքերուն հագուստներդ վրայէդ առնելն և կիսամերկ վիճակի մէջ զքեզ շօշափելը տեսայ։ Տեսայ ոտքդ, այն ոտքը՝ որու վրայ համբոյր մը դրոշմելու և մեռնելու համար՝ թագաւորութիւն մը կուտայի, այն ոտքը՝ որու ներքև այնչափ հեշտութեամբ գլուխս ճմլուիլը, ջախջախուիլը պիտի զգայի, տեսայ զայն, ո՜հ, տեսայ սոսկալի ոլորակոճղին մէջ սեղմուած, որ կենդանի արարածի մ'անդամներն արիւնաշաղաղ տիղմ մը կը դարձրնէ։ Ո՜հ,

թշուառս, զքեզ այսպէս տեսած ատենս՝ հագուստիս տակ դաշոյն մ'ունէի՝ որով կուրծքս հոն հոն կը խոցէի, կը վիրաւորէի. երբ ձայնդ լսեցի՝ մեխս մէջ խոթեցի զայն. իսկ երկրորդ ձայնդ լսելուս՝ սրտիս մէջ կը մխուէր։ Նայէ անգամ մը. կարծեմ թէ վէրքը սպիացած չէ տակաւին»։

Իր պճղնաւորը բացաւ։ Եւ ստուգիւ կուրծքը՝ որպէս թէ վագրի ճանկէ մը՝ չարաչար խղտուած էր, ու կողին վրայ մեծկակ ու չ ոցուած վէրք մ'ունէր։

Կայանուհին ետ ետ գնաց սոսկումով։

«Ո՜հ, բուռ քահանայն, գեղահամս աղջիկ, գութ ունեցիր վրաս։ Դու ինքզինքդ թշուառ կը կարծես, աւա՜ղ, աւա՜ղ, թըշուառութեան ինչ բան ըլլալը չես գիտեր։ Ո՜հ, կի՛ն մը սիրել, քահանայ ըլլալ ու ատուի՛լ. սիրել զան իր հոգւոյն բոլոր կարեօքն ու մոլեգնութեամբ. ինքզինքը պատրաստ զգալ ամենափոքր ժպիտի մը համար՝ իր բոլոր արիւնը, իր աղիքը, իր անունը, իր փրկութիւնը, անմահութիւնն ու յաւէրժութիւնը, ներկայ կեանքն և հանդերձեալը տալու, զոհելու. անոր ոտից գարշապարներուն տակ աւելի մեծ գերի մը դնելու համար՝ թագաւոր, ոգի, կայսր, հրեշտակապետ, աստուած չըլլալուն ցաւիլ. յարաժամ իր երազներուն ու մտածումներուն մէջ ունենալ՝ և մի և նոյն ժամանակ զինուորական նշանազգեստի մը սիրահար տեսնել զան, և ուրիշ բան չունենալ ընծայելու անոր՝ բայց եթէ քահանայի աղտոտ պճղնաւոր մ'որմէ պիտի սոսկայ ու զարշի, ու մինչեւ անխիղճ՝ անմիտ սնապարծի մը՝ սիրոյ և գեղութեան գանձեր կը շռայլէ՝ հո՛ն ներկայ գտնուիլ իր բոլոր նախանձով ու կատաղութեամբը, տեսնել այն մարմինն որու ձևը զինքը կ'այրէ կը տոչորէ, այն անհնարին հեշտութիւններ ընծայող կուրծքը, որ ուրիշի մը համբոյրներուն տակ՝ թունդ ելած կը բաբախէ։ Ո՜հ, Աստուած իմ, սիրե՛լ անոր ոտքը, անոր թեւը, անոր ուսը, անոր կապոյտ երակներուն, թուխ մորթի՛ն վրայ երազել՝ ամբողջ գիշերներ սենեկին տախտակամածին վըրայ գալարուած, ծամածուած մնալու չափ, և անոր համար ցնո-

րած բոլոր գգուանքը, բոլոր փաղաքշանքը՝ իր տանջանքո՛վը վերջացած տեսնել. կաշեայ անկողնի՛ն վրայ զանիկա պառկեցընելու միայն յաջողիլ։ Ո՜հ, դժոխքին հրովը կարմրցած իսկական աքցաններ են ասոնք։ Ո՜հ, երանելի՛ է այն՝ զոր երկու տախտակներու մէջ տեղ կը սղոցեն, և զոր չորս ձիով չորս մասի կը բաժնեն...։ Գիտե՞ս արդեօք թէ երկար երկար գիշերներ ինչ չարչարանքներու, ինչ տանջանքներու կ'ենթարկեն զքեզ. շնչերակներդ՝ որք կ'եռան, սիրտդ՝ որ կը ճայթի, կը պայթի, գլուխդ՝ որ կը խորտակուի, ակռաներդ՝ որ ձեռքերդ կը խածնեն. կատաղի տանջատուներ՝ որք զքեզ՝ իբր կիզիչ կասկարայի մը վրայ՝ սիրոյ, նախանձու և յուսահատութեան մտածումի մը վրայ կը դարձնեն անդուլ անդադար։ Նորահասակ աղջիկ, շնորհք, գթութիւն, պահ մը հանգիստ տուր ինծի. ո՜հ, աղէ՛, քի՛չ մը մոխիր այս վառ կրակիս վրայ։ Սրբէ, կը պաղատիմ, ճակտէս ոլոռն ոլոռն հոսող քրտինքը։ Մանկուհի՛դ, մէկ ձեռքով սանջէ զիս, այլ միւսովը գգուէ։ Գութ ունեցի՛ր, մատաղաշ աղջիկ, գութ ունեցի՛ր վրաս»։

Քահանայն սալաքարի ջուրին մէջ կը թաւալէր և գանկը քարեայ աստիճաններու անկիւններուն կը զարնէր չարաչար։ Մանկահաս աղջիկը մտիկ կ'ընէր ու կը դիտէր զինքը, ու երբ հիւծեալ ու ոգեսպառ լռեց նա՝ ցած ձայնով մը կրկնեց իր կողմէ. «Ո՜հ, իմ Փէպի՛ւս»։

Քահանայն երկու ծունկերուն վրայ դէպ 'ի անոր քաշքշուելով «Կը պաղատիմ քեզ, գոչեց, մի՛ մերժեր զիս եթէ կը կրես մարդկային սիրտ. ո՜հ, կը սիրեմ զքեզ, թշուառ մ'եմ ես։ Երբ այդ անունը կ'արտասանես, հէքդ, սրտիս բոլոր մանրաթելերն որպէս թէ ակռաներուդ մէջ տեղը կ'աղաս, կը լեռուս։ Գթութիւն. եթէ դժոխքէն կու գաս՝ ես ալ հետդ կերթամ հոն, վասն զի հոն երթալու համար բաւական բաներ ըրած եմ։ Դըժոխքը, ուր պիտի գտնուիս, իմ արքայութիւնս է. քու դէմքդ Աստուծոյ դէմքէն աւելի պայծառ ու չքնաղ է իմ առջև։ Ո՜հ, ըսէ, չե՞ս ուզեր զիս մէկ կերպով։ Այն օրն որ կին մ'այսպիսի

սէր մը պիտի մերժէ՝ պիտի կարծեմ թէ լեռները տեղերնէն պիտի շարժին։ Ո՛հ, եթէ ուզես, եթէ յօժարիս՝ քանի՜ երջանիկ կ՚ըլլայինք մենք։ Խոյս կու տայինք... փախուստիդ կ՚օգնէի ես... տեղ մը կ՚երթայինք, աշխարհի այն կտորը կ՚ընտրէինք՝ ուր աւելի արեւ կայ, աւելի ծառ կայ, աւելի կապոյտ երկինք կայ։ Զիրար պիտի սիրէինք, մեր երկու հոգիները մէկ մէկու մէջ պիտի վաղցընէինք, և մէկ մէկու համար անշիջանելի ծարաւ մը պիտի ունենայինք՝ զոր սիրոյ անսպառ բաժակով պիտի գոհացընէինք միատեղ և անդադար»։

Սոսկալի և որոտաձայն քրքիջով մ՚աղջիկը զանիկա ընդմիջեց.

«Տեսէք, հայր սուրբ, մատերնուդ ծայրն արիւն կը գտնուի»։

Քահանայն՝ աչքը ձեռքին վրայ սեւեռած և իբր քարացած՝ պահ մը մնաց։

«Աղէկ, աղէկ, թող այդպէս ըլլայ, կրկնեց վերջապէս անհնարին հեղութեամբ մը, սպաննէ զիս, ծաղրէ, ճնշէ քու խօսքերովդ, այլ եկո՛ւր, եկո՛ւր, աճապարենք, վասն զի վա՛ղն է օրը, վա՛ղը, կ՚ըսեմ։ Գիտե՞ս արդեօք թէ Կրէվի կախաղանն ամէն ատեն պատրաստ է։ Ո՛հ, սոսկալի բան է սայլով քու հոն տեսնել։ Ո՛հ, շնո՛րհք....։ Երբեք հիմակուան պէս զգացած չէի թէ ինչ աստիճան կը սիրէի զքեզ...։ Ո՛հ, ետեւէս եկո՛ւր։ Զքեզ փրկելէ վերջը՝ զիս սիրելու ժամանակ կրնաս ունենալ։ Ո՛րչափ ժամանակ որ ուզես՝ պիտի ատես զիս։ Այլ եկո՛ւր։ Վա՛ղը, վա՛ղը, կախաղա՛ն կայ, տանջա՛նք կայ քեզի համար։ Ո՛հ, ազատէ զիս, խնայէ զիս»։

Աղջկան թեւէն բռնեց — մոլորած էր ինքը — ուզեց բռնի տանել զանիկա։

Մանկամարդն իր անթարթ աչքն անոր վրայ յառեց։

«Ի՞նչ եղաւ Փէպիւս։

— Ո՛հ, ըսաւ քահանայն անոր թեւը թողլով, անագորո՛յն դու։

— Ի՞նչ եղաւ Փէպիւս, հարցուց պաղութեամբ։

— Մեռա՛ւ, գոչեց քահանայն։

— Մեռա՛ւ, ըսաւ միշտ սառնագին ու անշարժ. ուրեմն ինչ ապրելու խօսք կ՚ընես ինծի»։

Քահանայն՝ որ մտիկ չէր ըներ անոր՝

«Ո՛հ, այո՛, կ՚ըսէր ինքզինքին խօսելու պէս ընելով, հարկաւ մեռած է նա։ Երկաթը բոլորովին ներսը մխուեցաւ. կարծեմ թէ ծայրովը մինչև սրտին հասայ։ Ո՛հ, մինչև դաշոյնիս ծայրը կ՚ապրէի ես նոյն կէտին»։

Ծաղկահաս աղջիկն ամեհի վագրի մը նման վրան նետուելով գերմարդկային ուժով մը զանիկա սանդուղքին աստիճաններուն վրայ հրեց։

«Կորսուէ, հրէշ, կորսուէ, մարդասպա՛ն. թո՛ղ զիս որ մեռնիմ։ Մեր երկուքնուս արիւնը թո՛ղ ճակտիդ վրայ յաւիտենական բիծ մը, արատ մ՚ըլլայ։ Քո՞ւկդ ըլլամ, քահանա՛յ, ո՛հ. երբեք, երբեք։ Ու ո՛չ իսկ դժոխքը պիտի կրնայ միաւորել զմեզ։ Կորսուէ, անիծեա՛լդ, երբեք, երբեք»։

Քահանայն աստիճաններուն վրայէն գլթած էր։ Ոտքերը մէջին պատմուճանին ծալքերէն հանելով, և կանթեղը վերստին ձեռք առնելով դէպ 'ի դուռն առաջնորդող սանդղորշներէն (marches) սկսաւ վեր ելնել յամրաքայլ, և դուռը բանալով՝ դուրս ելաւ։

Յանկարծ իր գլուխը՝ որ սոսկալի բացատրութիւն մ՚առած էր՝ վերստին զնդանին մէջ տեսնուեցաւ, և կատղութեան ու յուսահատութեան հունչիւնով (râle) մը գոչեց.

«Մեռա՛ւ, մեռա՛ւ, կ՚ըսեմ քեզ»։

Թշուառ մանկամարդն ասոր վրայ երեսը դէպ 'ի գետին ինկաւ և զնդանին մէջ ուրիշ ձայն չլսուեցաւ ա՛լ՝ բայց եթէ՝ մութին մէջ ճահիճին մակերեւոյթը կնճռել տուող ջրոյ շիթին հառաչը։

Ե

ՄԱՅՐԸ

Աշխարհի վրայ չեմ կարծեր թէ աւելի գեղածիծաղ բան մը ըլլայ՝ քան իր զաւկին փոքր կօշիկը տեսնող մօր մը սրտին մէջ արթնցած անոյշ անոյշ տեսիլները. նա մանաւանդ՝ երբ մինչև

ներքանին տակ նկարակերտուած՝ տօնի, կիւրակէ օրերու, կնունքի կօշիկն է այն, կօշիկ մ'որով մանուկ մը տակաւին քայլ մը ըրած չէ։ Այս կօշիկն այնչափ սիրուն է ու այնչափ փոքր, այն աստիճան քալելն անհնարին բան մ'է իրեն համար՝ որ մայր մ'անով իր մանկիկը տեսածի չափ կ'ըլլայ։ Կը ժպտի, կը խօսի անոր, և զայն կը պագնէ. իւրովի կը հարցնէ թէ իրաւցնէ ըլլալու բան է միթէ որ ոտք մ'այն աստիճան փոքր ըլլայ, և զաւակը հոն չ'տնուի իսկ՝ այն անոյշ և դիւրաբեկ արարածն իր աչաց առջև բերելու համար՝ այն սիրուն կօշիկը բաւական կ'ըլլայ։ Իրեն այնպէս կը թուի թէ իր մանկիկը կը տեսնէ, և իրօք ալ ամբողջապէս կը տեսնէ զայն, կայտառ, զուարթ, իր քնքուշ ձեռքերովը, կլոր գլուխովը, ջինջ շրթներովը, պայծառ աչքերովը՝ որու ճերմակը կապուտակ կը տեսնուի։ Եթէ ձմեռ է՝ հոն՝ օթոցին վրայ կը սողայ, դժուարութեամբ աթոռակի մը վրայ կ'ելնէ, և մայրը կը դողայ որ կրակին չմօտենայ նա։ Եթէ ամառ է՝ բակին մէջ, պարտիզին մէջ քաշքշուելով կը քալէ, սալաքարերու մէջէն խոտերը կը խլէ, պարզօրէն՝ առանց վախի՝ մեծ շուները, մեծ ձիերը կը դիտէ, խեցիներու հետ կը խաղայ և սաստեր կը լսէ պարտիզպանէն՝ որ ծաղկազարդ եզրերուն վրայ (plate-bande) աւազ և ծառուղիներուն մէջ հող գտնելուն կը գանգատի։ Ամենայն ինչ կը ծիծաղի, ամենայն ինչ իր բոլորտիքը կը խաղայ իրեն պէս, մինչև հովին շունչը, մինչև արևուն ճառագայթը՝ որք զիրար գլելով իր վարսիցը նորաբոյս խոպոպներուն հետ կը զուարճանան։ Կօշիկն այս ամեն բաները մօր աչքին առջև կը բերէ, որու սիրտը կը թուլնայ, կը հալի անոնց առջև, ինչպէս մոմը՝ կրակին։

Այլ երբ մանկիկը մեռած է՝ այն փոքր կօշիկին շուրջը խմբուող խնդութեան, հմայից և խանդաղատանաց այն բիւրաւոր տեսիլները՝ սոսկալի բաներ կը դառնան։ Բանուած կօշիկը՝ մօր սիրտը յաւէրժաբար ճմլող տանջանաց գործի մը կ'ըլլայ։ Մի և նոյն մանրաթելն է այն որ կը թրթռայ, թուանդ կ'ելնէ, այսինքն՝ ամենախորունկ և ամենազգայուն մանրաթելը. այլ սակայն

հրեշտակ մը զայն գգուելու տեղ՝ սատանայ մը կը խայթէ զայն։

Առաւօտ մը, մինչդեռ արևը կը բարձրանայր մութ-կապուտակ երկնքի մը մէջ՝ ուր Կարոֆոլօ իր «Էջն 'ի խաչէ» պատկերները գնելը կը սիրէ, Րօլանտ-Աշտարակի մենուհին՝ Կրէվի հրապարակին մէջ ճախարակներու, ձիերու և երկաթ կազմածներու գղրդում մը լսելով՝ խիստ փոքր զարթում մ'ունեցաւ, և խուլնալու համար մազերն ականջներուն վրայ պնդելով, սկսաւ ծունկի վրայ՝ տասն և հինգ տարիէ 'ի վեր այսպէս պաշտած անկենդան առարկայն դիտել հոգեպէս։ Ըսած ենք ուրիշ տեղ որ այս փոքր կօշիկն իրեն համար տիեզերքն էր. ուստի և մտածումն անոր մէջ փակուած բանտարկուած՝ մինչև մահուան կէտը՝ չպիտի ելնէր անկէ։ Թէ այս վարդագոյն սնդուսեայ չքնաղ խաղալիկին առթիւ՝ ինչ դառնալի անէծքներ, ինչ աղիողորմ տրտունջներ, ինչ աղօթքներ և հառաչանքներ հանած, բարձրացուցած էր դէպ 'ի երկինք՝ Րօլանտ-Աշտարակի մթագին խուցը գիտէ միայն։ Երբէք աւելի սիրուն, աւելի գեղեցիկ բանի մը վրայ՝ ասկէ աւելի յուսահատութիւն թափուած չէ։ Այս ըսած առաւօտնիս՝ վիշտը, մորմոքը կարծես թէ սովորականէ աւելի սաստկութիւն առած կը խլուէր սրտէն, և աղէյօշ բարձր և միօրինակ ձայնով մը՝ թշուառ մենուհւոյն հեծել, կոծելը մինչև դուրսէն կը լսուէր։

«Ո՛հ, աղջիկս, կ'ըսէր, իմ սիրելի աղջիկս, իմ հէք սիրելի փոքր աղջիկս, ամենայն ինչ կատարեա՞լ է ուրեմն, և չե՞մ պիտի տեսնեմ ալ զքեզ։ Աստուած իմ, Աստուած իմ, աւելի լաւ էր որ զան չտայիր ինձ ամենևին՝ եթէ այսչափ շուտ պիտի առնուիր։ Չգիտե՞ս արդեօք թէ զաւակներս մեր որովայնէն ելած են, և թէ զաւակը կորսնցընող մայր մ'ոչ ևս Աստուծոյ կը հաւատայ...։ Ո՛հ, ինչ ապիրատ մ'եմ որ այն օրը դուրս ելայ...։ Տէր, Տէր, այսպէս զան ինձմէ առնես. և միթէ զիս անոր հետ եղած ատենս՝ դիտած չէի՞ր բնաւ, երբ ուրախութենէ խելքս թռցուցած զայն կրակին մօտ կը տաքցընէի, երբ կաթ ջամբած ատենս՝ ինձ նայելով կը խնդար, երբ իր փոքր ոտքերը

կուրծքիս վրայէն մինչև շրթունքներս կը բարձրացընէի ։ Ո՜հ, եթէ այս ամեն բանս նայած, գիտած ըլլայիր, Աստուած իմ, իմ վրաս պիտի գթայիր հարկաւ, և սրտիս մէջ մնացող միակ սէրն ինծմէ չպիտի առնուիր ։ Այն աստիճան անօրէն արարած մ՚էի, Տէր, որ զիս դատապարտելէ յառաջ՝ վրաս նայուած մը չձգէիր․․․ ։ Աւա՜ղ, աւա՜ղ, ահա՛ կօշիկը. և ո՞ւր է ոտքը, ո՞ւր է մնացածը, ո՞ւր է զաւակս ։ Աղջի՛կս, աղջիկս, ինչ ըրին զքեզ ։ Տէր, զան ետ դարձուր ինձ ։ Տասն և հինգ տարի ոտքերս խոցուեցան, կեղեքուեցան քեզ աղօթելով, Աստուած իմ, և այս բաւական չէ՞ միթէ ։ Ինձ ետ դարձուր զան, օր մը, ժամ մը, վայրկեան մը . ո՜հ, վայրկեա՛ն մը, Տէր իմ, և ետքը յաւիտեանս յաւիտենից սատանային մատնէ զիս ։ Ո՜հ, եթէ գիտնայի թէ պատմուճանիդ ծայրն ո՞ւր տեղ կը քսուի, երկու ձեռքերովս պիտի փաթթուէի անոր, և չպիտի թողուի զայն՝ մինչև որ զաւակս ինձ չդարձընէիր ։ Իր փոքր սիրուն կօշիկին գութ չունիս բնաւ, Տէր ։ Կրնաս միթէ եղկելի մայր մ՚այս տասն և հինգ տարուան տանջանաց դատապարտել ։ Սուրբ կոյս Մարիամ, սուրբ կոյս Աստուածածին, իմ Յիսուս-մանուկս առին ինծմէ, գողցան, թաւուտի մը վրայ կերան, անոր արիւնը խմեցին, ոսկրները կրծեցին ։ Սուրբ կոյս բարի Աստուածածինս, գթա՛ ինծի ։ Աղջի՛կս, աղջիկս կ՚ուզեմ, աղջիկս պէտք է ինձ ։ Ինծի ինչ որ արքայութեան մէջ գտնուի այն . քեզի հրեշտակ մ՚եղած ըլլալը չեմ ուզեր ես, ես զաւա՛կս կ՚ուզեմ ։ Ես առիւծուհի մ՚եմ, ու կորիւնս կ՚ուզեմ․․․ ։ Ո՜հ, երկրի՛ վրայ պիտի գելլում, գալարուիմ, և ճակատովս վէմը պիտի խորտակեմ, և զիս դժոխքի որդի՛ պիտի ընեմ, և պիտի անիծե՛մ զքեզ, եթէ զաւակս պահես ու չտաս ։ Կը տեսնես, Տէր, որ թևերս խածած, վիրաւորած եմ չարաչար, միթէ բարեգութն Աստուած գութ չունի՞ ինձի․․․ ։ Ո՜հ, միայն աղ ու չորաբեկ հաց տուր ինձ, միայն թէ զաւակս քո՛վս ունենամ, և արևու նման տաքցընէ զիս ։ Աւա՜ղ, Տէր իմ Աստուած, խոտան մեղուհի մ՚եմ ես. այլ սակայն աղջիկս ինձ բարեպաշտութիւն կը ներշնչէր ։ Անոր սիրովը սիրտս

լի էր կրօնքով, և անոր ժպիտին մէջէն, որպէս թէ երկնքի բացուածէ մը, զքեզ կը տեսնէի․․․․ ։ Ո՜հ, անգա՛մ մը, անգամ մը տակաւին, մի միայն անգամ մ՚ևս այս կօշիկս անոր սիրուն փոքրիկ վարդագոյն ոտքին հագցընեմ, և կը մեռնիմ, Տիրամայր սուրբ կոյս, կը մեռնիմ զքեզ օրհնելով․․․ ։ Ա՜հ, տասն և հի՛նգ տարի, հիմա մեծցա՛ծ պիտի ըլլար զաւակս․․․ ։ Զարաբա՛ստ աղջիկ, ինչ, իրաւ է, այլ ես չ՚պիտի տեսնեմ զան, և ո՛չ իսկ երկինքը, վասն զի ես երկինք չպիտի՛ երթամ ։ Ա՜հ, ինչ թշուառութիւն, իր կօշիկը հո՛ս ըլլայ, ու բոլոր ունեցածս ա՛յն եղած ըլլայ միայն » ։

Զուառուհին՝ այնչափ երկար տարիներէ 'ի վեր իր մխիթարութիւնն ու յուսահատութիւնն եղող այն կօշիկին վրայ ինկած՝ աղիքները՝ որպէս թէ առաջին օրն եղած ըլլար՝ հառաչանքներով կը պատռէին. վասն զի որդեկորոյս մօր մը համար՝ ցաւը միշտ նո՛ր է առջի օրուան պէս, ու երբէք չհիննար ։ Սուգի հագուստները կը մաշուին, կը ճերմկնան, այլ սիրտը սև կը մնայ միշտ ։

Այս միջոցիս՝ տղեկներու կայտառ և զուարթ ձայներ հիւղէն առջևէն անցան ։ Ամեն անգամ որ տղայ մը տեսնէր, կամ անոր ձայնն ականջին զարնէր՝ տառապեալ մայրն իր գերեզմանին ամենամթագին անկիւնը կը նետուէր՝ և ձայներնին չլսելու համար կարծես թէ գլուխը քարին մէջ մխել, ընկղմել կը ճըգնէր ։ Այս անգամ, ընդ հակառակն, իբր ընդոստ կանգնելով ուշի ուշով միտ դրաւ, և նոյն կէտին այն դեռատի մանուկներէն մէկուն սա խօսքերը լսեց. « Այսօր Եգիպտուհի մը պիտի կախեն » ։

Այն աղեկարծ ոստումով որ սարդը, ինչպէս տեսանք, ոստայնին ցնցուիլը զգալով՝ ճանճին վրայ նետուեր էր՝ մենուհին դէպ 'ի լուսանցոյցը վազեց, որ՝ գիտեն ընթերցողք՝ Կրէվի հրապարակին վրայ կը նայէր ։ Եւ ստուգիւ՝ տղեկին ըսածին պէս՝ մնայուն կախաղանին մօտ ելնարան մը կանգնուած էր, և դահիճին օգնականը՝ անոր՝ անձրևներէ ժանգոտած շղթաները շըտկըրտելու կ՚զբաղէր, գլուխը քիչ-շատ բազմութիւն հաւքելով ։

Մանկանց ծիծաղող խումբն արդէն հեռացած ըլլալով՝ քըրձուհին հարցուփորձ ընելու համար աչքերովն անցորդ մը փընտռեց, և իր խցկին անմիջապէս քովը՝ քահանայ մը տեսաւ, որ համարակալ ժամագրքին մէջ որպէս թէ կը կարդար, թէև ոչ այնչափ երկաթավանդակ գրակալին (lettrain) զբաղած ըլլար՝ որչափ կախաղանին՝ որու վրայ մերթ ընդ մերթ տխուր ու դաժան նայուած մը կը նետէր։ Մենուհին ճանչցաւ որ Ժօզասի նախասարկաւագն էր այն, սուրբ մարդ մը։

« Հա՛յր սուրբ, հարցուց, զո՞վ պիտի կախեն այսօր »։

Երէցն անոր նայեցաւ ու պատասխան մը չտուաւ, որու վրայ մենուհին իր հարցումն երկրորդեց։ Այն ժամանակ՝ « Չգիտեմ », ըսաւ։

« Քիչ մը յառաջ տղեկներ կ'անցնէին ասկէ՝ ըսելով թէ մահապարտն Եգիպտուհի մ'էր, կրկնեց մենուհին։

— կարծեմ թէ այդպէս պիտի ըլլայ », ըսաւ քահանայն։

Այն ժամանակ Բաքէդ լա Շանդֆլէօրի բորենիի խնդում մը ձգեց։

« Քո՛յր իմ, ըսաւ սարկաւագապետը, սաստիկ կ'ատե՞ս ուրեմն Եգիպտուհիները։

— Սաստիկ կ'ատեմ, գոչեց մենուհին. ատ ալ հարցընելու բան է. անոնք վհուկներ են, մանկագո՛ղ վհուկներ։ Իմ մատաղ աղջիկս, իմ զաւակս, իմ միածին զաւակս, կերան այն անզգութները։ Ա՛լ սիրտ չունիմ ես, անո՛նք կերան իմ սիրտս»։

Մենուհին սոսկալի էր։ Իսկ քահանայն պաղութեամբ մ'անոր կը նայէր։

« Մանաւանդ անոնցմէ աղջիկ մը կայ, զոր կ'ատեմ յոյժ, և զոր անիծեցի, կրկնեց Թշուառուհին. մանկահասակ աղջիկ մ'է, որ այն տարիքն ունի՝ զոր պիտի ունենար աղջիկս՝ եթէ անոր մայրն ինձմէ յափշտակելով զինքը կենդանւոյն կերած չըլլար։ Ամեն անգամ որ այս մատղաշ իժը խցկիս առջևէն կ'անցնի՝ արիւնս տակն ու վրայ կ'ընէ։

— Հրճուէ ուրեմն, քոյր իմ, ըսաւ քահանայն՝ գերեզմանի ար-

ձանի մը նման սառնաբեկ, այն ըսած աղջիկդ պիտի մեռնի, անոր մեռնիլը պիտի տեսնես »։

Այս ըսելով գլուխը կուրծքին վրայ ինկաւ, և հեռացաւ յամրաքայլ։

Մենուհին ուրախութեամբ բազուկները զալարեց. « Գուշակած էի ես իրեն թէ ի՛նքն ալ հո՛ն, կախաղանը, պիտի ելնէր։ Շնո՛րհ ունիմ, քահանայ », գոչեց։

Եւ հերարձակ ու բոցաճաճանչ աչքերով, և ուսովը պատին զարնելով՝ սկսաւ իր երդին ձողերուն առջև ճեմել մեծաքայլ, վանդակարգել գայլի մը վայրագ կերպարանքով՝ որ երկար ատենէ 'ի վեր անսուաղ մնացած՝ կերակուրի ժամին մերձենալը կ'զգայ։

Զ

ԵՐԵՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՅԼԱԶԱՆ ՍՐՏԵՐ

Ֆէպիւսը, սակայն, մեռած չէր. աս կարգէ մարդիկ չարքաշ և տոկուն կազմութիւն կ'ունենան։ Երբ վարպետ Ֆիլիբ Լէօլիէ, արքայի արտաքոյ կարգի փաստաբանը, Եղմերալտայի կ'ըսէր թէ Մեռնելու վրայ է նա, սխալմամբ էր կամ կատակով։ Նոյնպէս երբ նախասարկաւագը դատապարտելոյն կը կրկնէր թէ Մեռաւ, ստոյգն ան է թէ ինքն ալ բան մը չէր գիտեր, այլ այնպէս կը կարծէր, այնպէս կը հաշուէր, աներկմիտ էր այնպէս ըլլալուն, և այնպէս ըլլալը կը յուսար։ Իրեն կարի դժընդակ պիտի գար՝ այն կնկան զոր կը սիրէր՝ իր ոսոխին նկատմամբ աղէկ լուրեր տալ։ Իր տեղն ո՛ր և է մէկը մի և նոյն կերպով պիտի վարուէր։

Ըսել չենք ուզեր թէ Ֆէպիւսի վէրքը ծանր վէրք մ'եղած չըլլար, այլ սարկաւագապետին յոյս ըրածէն աւելի քիչ ծանրութիւն ունէր այն։ Գիշերապահ զինուորները՝ առջի պահուն՝ զինքը վիրաբոյժի մը (maitre-myrrhe այն ժամանակի լեզուով)

տուն տարած ըլլալով՝ ասիկա քննութիւններ ընելէ վերջը՝ ութ
օր կենացը համար վտանգ ըլլալը հասկցած՝ և նոյն իսկ լա-
տիներէն խօսեցած էր անոր։ Սակայն երիտասարդական ոյժը
յաղթանակը կանգնած էր, և՝ ինչպէս յոլովակի կը պատահի՝
նախ–ախտ–գատումներու և ախտ–որոշումներու (pronostics
et diagnostics) հակառակ՝ բնութիւնը բժիշկին երեսն 'ի վար
խնդալով հիւանդը փրկած ու զուարճացած։ Տակաւին մի-
բարոյժին խշտեակին վրայ կը գտնուէր Ֆէյլիս՝ և ահա մեծ
սրտնեղութեամբ Ֆիլիբ Լէօլիէի՝ ու եկեղեցական դատարանի քըն-
նիչներու առաջին հարցափորձներուն ենթարկուած՝ և օրին մէկն
ալ ինքզինքը լաւագոյն վիճակի մէջ զգալով, իր ոսկի խթան-
ներն իբր դեղավաճառին հատուցում ձգած ու կծիկը դրած
էր։ Սակայն այս բանս բնաւ ամենևին շփոթութիւն մը տուած
չէր դատին պատրաստութեան (instruction), ըստ որում այն
ժամանակներու արդարութիւնն եկեղեցական դատաստանի մը յըս-
տակութեան ու պատշաճութեան խիստ քիչ հոգ կը տանէր, և
բաւական էր որ ամբաստանեալը կախուի՝ անով գոհ կ'ըլլար՝
աւելի բան մը չփնտռելով։ Արդ, դատաւորք Էզմերալտայի դէմ
բաւական ապացոյցներ ունէին. Ֆէյլիսը մեռած կը կարծէին,
և ասիկա ըստ ինքեան վճռիչ, որոշիչ բան էր։

Ֆէյլիսն ալ, իր կողմէ, խիստ հեռուները չփախելով՝ դա-
ցած պարզապէս միացած էր իր զօրավաշտին, որ Բարիզէ քանի
մ'օթևան անդին՝ Քէօ–ան–Պրիի մէջ՝ որ Ժիլ–տը–Ֆրանս՝ պահ-
պանութեան պարաքի մէջ կը գտնուէր։

Տարտամ կերպով մը կ'զգար Ֆէյլիս թէ այս դատին մէջ
ծաղրելի դիրք մը պիտի ունենար, ուստի և անձամբ ատեանին
առջև երևելու բնաւ ամենևին փափաք մը չէր տածեր։ Ստոյգն
ան է որ բոլոր այս իրողութեան վրայ ինչ գաղափար ունենալն
ինքն ալ չէր գիտեր։ Ինչպէս ամեն զինուոր՝ որ զինուոր մ'է
միայն և ոչ աւելի՝ թուլահաւատ և սնոտիապաշտ՝ այս արկածիս
վրայ ինքզինքին հարցուփորձած ժամանակը միտքն այլ և այլ
կասկածներով կը պաշարուէր այծին վրայ, Էզմերալտան հան-

դիպելու տարօրինակ կերպին վրայ, աղջկան՝ իր բուն սէրը
յայտնելու ոչ նուազ տարօրինակ եղանակին վրայ, Եգիպտուհի
մ'ըլլալու հանգամանքին վրայ, վերջապէս ուրուական–կրօնա-
ւորին վրայ։ Այս բոլոր պարագաներուն մէջ յոյժ աւելի մոգու-
թիւն կ'ընդնշմարէր քան թէ սէր, վհուկ մը հաւանօրէն, թե-
րևս սատանան, թատերգութիւն մը վերջապէս, կամ՝ նոյն ժա-
մանակի լեզուն խօսելով՝ խորհուրդ (mystère) մը խիստ անհա-
ճոյ՝ ուր խիստ ձախող մաս մը կատարած ըլլար, այպանալի և
հարուածող մասը՝ որու համար հրամանատարն ինքզինքն ամօթա-
հար կ'զգար բոլորովին. այն տեսակ մ'ամօթով վարակուած էր
նա՝ զոր Լաֆոնդէն այնչափ հիանալի կերպով կը նկարագրէ.

Անկոր զերթ աղուէս ձերբակալ 'ի հաւէ։
Honteux comme un renard qu'une poule aurait pris.

Միւս կողմէ՝ կը յուսար թէ գործը չպիտի տարաձայնուէր,
թէ ինք տարակայ գտնուելով՝ անունը հազիւ պիտի արտասա-
նուէր, և թէ՝ ինչ ըլլար ըլլար՝ Թուրնելի եկեղեցական ատեա-
նէն (plaid) դուրս չպիտի ելնէր բնաւին։ Այս մասին կարծիքը
սխալ չէր. այն ժամանակներն Ատեաններու Լրագիր ըսուած բա-
նը չկար, և որովհետև շաբաթ չէր անցներ գոգցես՝ ուր Բարի-
զի արդարութեան անհամար կայաններէն (justices) մէկուն մէջ՝
դրամանենգ մը մեռնելու չափ չխաշուէր, կամ վհուկ մը չկա-
խուէր, կամ հերետիկոս մ'ի հուր չմատնուէր՝ ամեն հրապա-
րակներու մէջ այն աստիճան սովորած էին աւատական հին Թե-
միդին՝* բաղուկները մերկացուցած և թեզանիքը վեր սօթտած՝
կախաղաններու, ձաղանիներու և նշաւակարաններու վրայ իր
սովորելի գործը կատարելը տեսնել՝ որ ընդհանրապէս համարեա
թէ ուշադրութիւն իսկ չէին ըներ անոնց։ Այն դարերու բարձ-
ցած մասը փողոցին անկիւնը սպաննուող մահապարտին հազիւ
թէ անունը գիտէր, և մի միայն խաժամուժն այս շինական կե-

* Դիցուհի արդարութեան։

րակուրս կը վայելէր ։ Դատապարտելոյ մը սպանութիւնը առվորական դէպք մ՚էր Հասարակաց Ճամբուն վրայ, ինչպէս քաքարագործին (talmellier) եփանօթը, կամ մորթիչի զէնարանը ։ Դահիճն ուրիշ բան չէր, բայց եթէ ուրիշներէ աւելի վարպետ սպանդաւոր (boucher) մը ։

Ուստի Փէպլիս՝ դիւթիչ Էզմէրալտային կամ Սիմիլարին, ինչպէս կ՚ըսէր ինք, գնչուհւոյ կամ ուրուական-կրօնաւորի (այս կէտը փոյթ չէր իրեն) դաշոյնի հարուածին, ինչպէս նաև դատին ունենալիք վախճանին վրայ՝ միտքը շուտով հանդարտեցնելով՝ սիրոյն այս կողմէն դատարկ մնալուն պէս՝ Ֆլէօր-տը-Լիսի պատկերը ծնաւ հոն վերստին ։ Փէպլիս հրամանատարին սիրտը՝ այն ատենի բնագիտութեան պէս՝ դատարկութենէ խորշումով կը հեռանար ։

Անկէ զատ խիստ անհամ տեղ մ՚էր Քէօ-ան-Պրի, պայտաններու և կօշտաձեռնիկ անդէորդուհիներու գիւղ մը, փլփըլած տնակներու և հիւղերու երկար լար մը, որ կէս մղոնի չափ տեղ երկար ուղին երկուստեք կը լուէ ․ պոչ մը վերջապէս, ինչպէս իր անունը կը յայտնէ (Քէօ ֆրանսերէնի մէջ պոչ կը նշանակէ) ։

Ֆլէօր-տը-Լիսն իր վերջընթեր տարին էր, սիրուն աղջիկ մը, ընտիր օժիտ մը ․ ուստի առաւօտ մը՝ բոլորովին ապաքինած և ենթադրելով թէ երկու ամիսէ վերջ գնչուհւոյն դատը վերջացած, մոռցուած պիտի ըլլար՝ սիրատենչիկ հրամանատարն իր ձին խաղցընելով Կօնտըլօրիէ օթևանին դուռը հասաւ ։

Նոյն միջոցին՝ Նօթր-Տամի մեծ գրան առջև՝ Անդասաւելի հրապարակին մէջ դիզուող կուտակուող խուռներամ բազմութեան կարևորութիւն մը չտուաւ նա ․ յիշեց թէ մայիս ամսոյ մէջ էր ․ թափօր մը, Հոգեգալուստի տօն մը կամ ուրիշ հանդէս մը կարծեց, և ձին նախադաւթին օղակին կապելով և տան սանդուղքէն ուրախութեամբ մը վեր ելնելով ըստ որում նշանածը պիտի տեսնէր՝ զան մօրը հետ միակ միայնակ նստած գտաւ ։

Ֆլէօր-տը-Լիս՝ թէև վհուկի տեսպրանին, անոր այծին և

անիծեալ այբուբէնին, ու Փէպլիսի երկարատև բացակայութեանց համար սրդողած էր միշտ՝ այլ հրամանատարին ներս մտած ժամանակը՝ անոր կերպարանքն այնչափ աղուոր, տառատոլն այնչափ նոր, սրակամարն այնչափ փայլուն գտաւ, և այնպիսի խանդավառ հով մը տեսաւ անոր վրայ՝ որ զգացած բերկրութենէն երեսները կարմրեցան ։ Իր կողմէ՝ ազնիւ օրիորդն ամեն ատենէ աւելի չքնաղ ու զմայլելի էր այն օրը ․ իր շքեղ խարտեաշ վարսերը հիանալի կերպով մը հիւսուած էին, սպիտակաթոյր դեղուհիներու սաստիկ վայլող երկնակապոյտ հագուստ մը հագած էր (պչրանք՝ զոր Քօլօմպ օրիորդը սորվեցուցեր էր իրեն), և իր աչքին մէջ ալ՝ սիրային անոյշ նուաղութիւն (langueur) մը կը տեսնուէր՝ որ ալ աւելի կը վայլէ իրենց ։

Փէպլիս Քէօ-ան-Պրի երթալէն ՚ի վեր՝ հոն տեղի գիւղացի աղջիկներէն զատ գեղեցկութիւն մը տեսած չըլլալով՝ Ֆլէօր-տը-Լիսէն այն աստիճան հիացաւ, շլացաւ, և հետևաբար այն աստիճան տարփածու և փութկոտ (empressé) կերպ մ՚առաւ՝ որ իսկոյն և հեշտեաւ հաշտութիւնը ձեռք ձգեց ։ Նոյն իսկ տիկին Կօնտըլօրիէ՝ միշտ մայրական ծանրութեամբ իր մեծ թիկնաթոռին վրայ նստած՝ անոր դէմ մրմռալու սիրտ չըրաւ ։ Իսկ Ֆլէօր-տը-Լիսի կշտամբանքներն անոյշ մնջիւններու (roucoulements) մէջ կորսուեցան ։

Նորահաս աղջիկը պատուհանին քով նստած՝ միշտ իր Պիսիդոնի քարայրը կը նկարակերտէր ։ Հրամանատարն անոր աթոռի յենարանին կռթնած էր, մինչդեռ աղջիկը կէս-ձայնով մ՚իր փաղաքուշ սաստումները կ՚ուղղէր իրեն ․

« Երկու ահագին ամիսներէ ՚ի վեր ինչ եղար, ո՛ւր էիր, չարաճճի ։

— Կ՚երդնում քեզ, պատասխանեց Փէպլիս՝ այս հարցումէս դոյզն ինչ նեղուած, որ եպիսկոպոս մ՚երազել տալու չափ գեղանի ես » ։

Աղջիկը չկրցաւ ժպիտը զսպել ։

« Լա՛ւ, լա՛ւ, պարոն, այլ գեղութիւնս մէկ դի թող և պատասխանէ ինձ ։ Ի՞նչ գեղութիւն, յիրաւի ։

— Որովհետև կ'ուզես որ պատասխանեմ հարցումիդ՝ պահպանութեան պարտաց կանչուեցայ։

— Եւ ո՞ւր, կ'աղաչեմ, և ինչո՞ւ միսս բարև մ'ընելու իսկ չեկար։

— Քէօ-ան-Պրի»։

Ֆէլիքս խիստ գոհ եղաւ որ առաջին հարցումը՝ երկրորդէն խույս տալու օգնեց իրեն։

«Այլ առիկա բոլորովին մօտ տեղ մ'է, պարո՛ն, և ինչպէս կ'ըլլայ որ անգամ մ'իսկ զիս տեսնելու եկած չըլլաս»։

Հոս Ֆէլիքս բաւական ծանր կերպով մը նեղն ինկաւ։

«Ի՞նչ ըսեմ.... զինուորական ծառայութիւնը.... և անկէ զատ, չքնաղդ իմ զարմուհի, հիւանդ էի։

— Հիւա՞նդ, կրկնեց աղջիկն ահարեկ։

— Այո՛... վիրաւորուեցայ։

— Վիրաւորուեցա՞ր»։

Հէք օրիորդն անհնարին յուզման մէջ կը գտնուէր։

«Ո՛հ, հոգ մի ըներ, մի վախնար, բան մը չէր, ըսաւ Ֆէլիքս անփութօրէն։ Կռիւ մը, սուրի հարուած մը. քեզ ինչ փոյթ։

— Ինձ ի՞նչ փոյթ, գոչեց Ֆլէօր-տը-Լիս՝ արտասուալի աղուոր աչքերը վեր բարձրացնելով։ Ո՛հ, այդպէս խօսելով ըզգացածդ չես ցուցեր։ Ի՞նչ բան է այս սուրի հարուած ըսածդ։ Ամէն ինչ կ'ուզեմ գիտնալ։

— Ի՞նչ պիտի ըլլայ, սիրական գեղուհիդ, Մահէ Ֆէտիի հետ կռիւ մ'ունեցայ. գիտես, Սէն-Ժերմէն-ան-Լայի տեղակալը. և քանի մը թիզաչափ իրարու մորթը խզուեցինք. այսչափ միայն»։

Սուտղրուց հրամանատարը քաջ գիտէր որ մենամարտ մը (affaire d'honneur) զմարդ կնոջ մ'առջև բարձրացնելու զօրութիւն ունի։ Եւ սառողիւ Ֆլէօր-տը-Լիս՝ երկիւղի, բերկրութեան և հիացման զգացումներով երես առ երես կը նայէր անոր. և որովհետև սիրտը բոլորովին հանդարտած չէր տակաւին՝

«Հիմա ալ կատարելապէս առողջացած ես, այնպէս չէ՞, իմ Ֆէլիքս, ըսաւ։ Այդ քու Մահէ Ֆէտիդ ո՞վ է, չեմ ճանչնար, այլ անշուշտ անզգամ մէկն եղած ըլլալու է։ Եւ ինչ բանէ յառաջ եկաւ այդ կռիւը»։

Ֆէլիքս՝ որ բեղմնաւոր երևակայութիւն մը չունէր՝ իր քաջագործութենէն ինչպէս ինքզինքն ազատելուն վրայ սկսաւ շփոթիլ։

«Ո՛հ, ինչ գիտնամ... ոչ ինչ մը... ձի մը... խօսք մը.... Զքնաղ զարմուհիդ, գոչեց խօսակցութիւնը փոխելու համար, ինչ է այդ աղմուկը, աղաղակն Անդաստակին մէջ»։

Եւ պատուհանին մօտենալով

«Ո՛հ, սիրուն զարմուհիս, ըսաւ, ինչ պիտի ըլլայ հրապարակին վրայի այս բազմութիւնը։

— Չգիտեմ, ըսաւ Ֆլէօր-տը-լիս. կ'երևի թէ վհուկ մ'այս առաւօտ՝ կախուելէ յառաջ՝ եկեղեցւոյն առջև իր յանցանաց հրապարակական խոստովանութիւնն ընելով անոնց թողութիւնը պիտի հայցէ»։

Հրամանատարը՝ որ բացարձակապէս Էզմէրալտայի գործը լմընցած կը համարէր՝ թէև Ֆլէօր-տը-Լիսի խօսքերէն չյուզուեցաւ բնաւին՝ այլ սակայն անոր մէկ երկու հարցումներ ըրաւ.

«Այդ վհուկն ինչպէս կ'անուանուի։

— Չգիտեմ, պատասխանեց աղջիկը։

— Եւ ինչ կը զրուցեն թէ ըրած ըլլայ»։

Անգամ մ'ալ աղջիկն իր սպիտակաթոյր ուսերը վեր ընելով «Չգիտեմ։

— Ո՛հ, ողորմած Քրիստոս, ըսաւ մայրը, այսօրուան օրս կախարդներն այնչափ շատցած են՝ որ կարծեմ առանց անուննին գիտնալու՝ կ'այրեն զանոնք։ Անոնց անունները գիտնալու ելնելը՝ երկնքի ամէն մէկ ամպին անունը գիտնալ աշխատելու կը նմանի։ Թէև այս մասին մարդ սիրտը հանգիստ կրնայ բռնել, վասն զի բարերարն Աստուած վերէն ճշդապէս հաշիւը կը բռնէ»։

Այս տեղ մեծարելի բամբիշն ոտք ելնելով դէպ 'ի պատուհանն եկաւ և «Տէ՛ր Աստուած, ըսաւ, այս ինչ բան է. իրաւունք

տնկիս եղեր, Փէպիւս. իրաւցընէ մեծ ամբոխ, մեծ խառնաձա-
ղանձ կայ եղեր վարը. Աստուած իմ, մինչեւ իսկ յարկերուն վը-
րայ խուռն բազմութիւն կը տեսնուի....: Ո՛հ, Փէպիւս, ասիկա
երիտասարդութեան օրերս կը յիշեցընէ ինծի, Շարլ Է.ի մուտից
հանդէսը, ուր նոյնպէս մեծ բազմութիւն կը գտնուէր...: Թէ
ո՛ր տարին էր այն՝ մտքէս ելեր է: Երբ այս հանդիսիս վրայ խօ-
սիմ՝ ականջիդ՝ հին բանի մը պէս կու գայ, այնպէս չէ՞. իսկ
ինծի բոլորովին նոր կ'երեւի....: Ո՛հ, հիմակուանէ շատ աւելի
աղուոր ժողովուրդի բազմութիւն մ'էր այն, որ Սէնդ-Անդուան
դրան պատշգամածերպերուն (mâchicoulis) վրայ իսկ կ'երեւէր:
Թագաւորին ձիուն գաւակին վրայ թագուհին նստած էր, եւ ի-
րենց վսեմապատուութիւններէն վերջը բոլոր ազնուահի բամ-
բիշք կու գային՝ իշխանազուններու ձիու գաւակներուն վրայ: Կը
յիշեմ թէ հանդիսատեսք շատ կը խնդային, վասն զի Ամանիօն
տը Կարմանտին քով, որ կարճահասակ էր յոյժ, Մադիլօն սե-
պուհը (sire) կար, յաղթահասակ ասպետ մը՝ որ մէկ շատ Ան-
գղիացիներ սպաննած էր: Խիստ շքեղ հանդէս մ'էր այն ըն-
տուգիւ: Փրանսայի բոլոր ազատանւոյն թափօրն էր՝ աչքի չէկ
երեւցող իրենց ալքայադրօշներով (oriflammes): Իշխանադրօշ
(pennon) եւ աւատադրօշ (bannière) կրող ազատորեար եւս կար:
Ո՞ր մէկն ըսեմ. Քալանի սեպուհը, իշխանադրօշաւոր. Ժան տը
Շադօմօրան, աւատադրօշաւոր, եւ որու դրօշը Պուրպօնի դքսին
դրօշէն զատ՝ ամենէ աւելի շքեղն էր.....: Բայց, քանի՛ն
տխուր է մտածել թէ այս ամեն բաներս կային ժամանակաւ, եւ
թէ հիմա անցան գացին եւ հետքերնին անգամ չմնաց»:

Բարեմիտ մայրը՝ երկու նշանածներն այսպիսի անթերի ու մտե-
րիմ համամտութեան մը մէջ տեսնելով հրճուած ու բերկրած՝
տնական մանր գործի մը պատաղելու համար՝ նոյն միջոցին սե-
նեկէն դուրս ելաւ: Փէպիւս այս բանս գիտեց, եւ մենութիւնը
դիմաւորաւ հրամանատարին արիութիւն տալով մտքէն խիստ տար-
օրինակ խորհուրդներ անցնիլ սկսան: Ֆլէօր-տը-Լիս զինքը
կը սիրէր. ինք անոր նշանածն էր եւ առանձին կը գտնուէին.

նաեւ անոր համար ունեցած ախորժն՝ եթէ ո՛չ իր բոլոր թար-
մութեամբ՝ գէթ իր բոլոր սաստկութեամբ արթնցած կ'զգար.
վերջապէս՝ եկամուտը կանխաւ ուտելն այնչափ մեծ յանցանք մը
չէ. չգիտեմ թէ այս խորհուրդները ճշդիւ Փէպիւսի մտքէն անց-
ցա՞ն այս կէտիս, այլ ստոյգն աս է որ Ֆլէօր-տը-Լիս անոր
ակնարկէն յանկարծական բացատրութենէն զարհուրեցաւ, եւ չորս
կողմը նայելով ու մայրը չտեսնելով

«Ո՛հ, Տէր Աստուած, ըսաւ կարմրցած ու խռոված, ո՛րչափ
տաք կ'ընէ:

— Իրաւունք ունիս, ըսաւ Փէպիւս, վասն զի կարծեմ կէս
օր մօտ է, եւ արեւը կը նեղէ զմեզ՝ դէշ չէնք ընէր
վարագոյրները գոցելով:

— Ո՛չ, ո՛չ, գոչեց հէք աղջիկը. ընդ հակառակն օդ առնե-
լու պէտք ունիմ»:

Եւ վոհմակին (meute) շունչն առնող եղնիկի մը նման՝ ոտք
ելաւ եւ պատուհան վազելով՝ բացաւ զայն ու պատշգամին վրայ
ինկաւ գահավէժ:

Փէպիւս՝ դոյզն ինչ դժկամակ՝ ետեւէն գնաց:

Նօդր-Տամի Անդաստակին հրապարակը, որու վրայ պատշգա-
մը կը նայէր՝ ինչպէս գիտեն ընթերցողք, այս միջոցիս անսո-
վոր եւ չարագոյժ տեսարան մը կ'ընծայէր՝ որ վեհերոտ Ֆլէօր-
տը-Լիսի աչուդողին հանգամանքը փոխեց:

Բոլոր կից փողոցներուն մէջ զեղող, յորդող անբաւ բազմու-
թիւն մը բուն հրապարակը կը ծածկէր՝ ասեղ նետելու տեղ
չթող տալով հոն: Անդաստակը շրջապատող՝ կռթնելու չափ
բարձրութեամբ որմը՝ զայն բազմութենէ ազատ պահելու չպիտի
տուիկեր՝ եթէ ձեռքերնին օձաձեւ գնդընկէցներով (coulevrines)
Երկու հարիւր-քսանեան (onze-vingts) նուիրակներու եւ հրացանա-
կիրներու (hacquebutiers) կարգեր առջեւը խիտ առ խիտ շարուած
չըլլային: Իսկ դրան պահպանութիւնը եպիսկոպոսին զինանշան-
ները կրող բազմախումբ գեղարդաւորներ կ'ընէին: Եկեղեցւոյն
լայն դուները, հրապարակին անթիւ անհամար պատուհաններուն

հետ հակապատկեր մ'ընծայելով փակուած էին. պատուհանները՝ որք մինչև քիւերուն (pignons) վրայ բացուած՝ դէզդէզ բիւրաւոր գլուխներ 'ի հանդէս կը հանէին՝ համարեա թէ պատերազմական անօթներու մթերանոցի մը մէջ վրայէ վրայ շարուած գնտակներու նման։

Այս խուժանին մակերևոյթը գորշ էր, աղտոտ և փոշոտեալ։ Սպասած տեսարանը ճիշդ այն տեսարաններէ մէկն էր՝ որք ժողովրդեան ամենէ վարնոց ու անլիքոր մասն ոտք հանելու ու իրենց կոչելու արտօնութիւնն ունին։ Այս դեղնագոյն գլխանոցներուն և աղտոտ գլուխներուն խճողումէն ելած շշուկին նման պժգալի բան չէր կրնար ըլլալ։ Այս ամբոխին մէջ աւելի քրքջուկ կար քան թէ ձայն, աւելի կին՝ քան թէ այր։

Ատեն ատեն՝ ընդհանուր շշուկին մէջ՝ սուր ու ճօճուն ձայն մը կը լսուէր։

. . . .

«Ինձ նայէ, Մահիէ Պալիֆրը, հոս պիտի կախեն մահապարտը։

— Հոս՝ մէկ շապիկով Հրապարակական խոստովանութիւնը* (amende honorable) կ'ըլլայ, աւանակ. բարերարն Աստուած անոր երեսին լատիներէն պիտի հազայ։ Այս արարողութիւնս միշտ հոս կը կատարուի կէս օր ժամանակ։ Եթէ ուզածդ կախաղանն է՝ Կրէվ գնա։

* Այս խայտառակիչ պատիժը հին ատեններր խռովարարներու, սրբապիղծներու, հայրասպաններու, թղթանենգներու, խարդախ սնանկներու, հերետիկոսներու ու կախարդներու կու տային։ Ցանցաւորը կը պարտաւորէր իր ըրածները հրապարակաւ խոստովանիլ, անոր համար՝ Աստուծմէ, թագաւորէն և արդարութենէ թողութիւն խնդրելով։ Պարզ կամ լոկ Հրապարակական Խոստովանութիւնը գլխաբաց կ'ըլլար, ծունրի վրայ և առանց դահճի միջամտութեան. իսկ Հանդիսաւոր Հրապարակական Խոստովանութիւնը՝ ծունրի վրայ, մէկ շապիկով, բոկոտն, վիզը՝ չուան, ձեռքը ջահ մը, և դահիճն ետևէն, ու շատ անգամ մահուան կամ թիավարիկ պատժոյ պատրաստութիւն մ'էր։ Տ. Թ.

— Եօթը կ'երթամ։

. . . .

— Իրաւ է, լա Պուքանպրի, թէ անզգամուհին խոստովանահայրը մերժած ըլլայ։

— Այնպէս կ'երևի։

— Կը նայիս, ամբարիշտը։

. . . .

«Ո՛հ, թշուառ աղջիկ», կ'ըսէր Ֆլէօր-տը-Լիս։ Եւ այս մտածումով տխրագին նայուածք մը կը յածէր ամբոխին վրայ։ Իսկ հրամանատարը, շատ աւելի իր նշանածով զբաղած քան թէ այն խաժամուժով (quenaille), ձեռքով՝ անոր մէջքը՝ ետևէն՝ կը ճմլրտէր տարփողաբար։ Աղերսարկու կերպարանօք և ժպիտ 'ի բերան օրիորդն անոր դառնալով՝

«Ո՛հ, կ'աղաչեմ, թող զիս, Ֆէպիւս, ըսաւ. մտածէ անգամ մ'եթէ մայրս յանկարծ ներս մտնէր ու ձեռքդ տեսնէր»։

Այս միջոցին՝ կէս օրը Նօդր-Տամի մեծ ժամացոյցին վրայ կամաց կամաց զարնելով գոհունակութեան քրթմնջիւն մը խուժանին մէջ լսուեցաւ։ Երկոտասաներորդ հարուածին ձօձումը հազիւ թէ ականջներուն մէջ դադրած էր՝ որ ինչպէս կոհակները՝ յանկարծական բուռն հովի մը շունչէն՝ բոլոր գլուխները շարժեցան, ծփեցան, և անբաւ աղաղակ մը սալարկէն, պատուհաններէն և յարկերէն միանգամայն բարձրացաւ. «Ահա մեղուհին, ահա մեղուհին»։

Ֆլէօր-տը-Լիս ձեռքերն աչքերուն վրայ տարաւ չտեսնելու համար։

«Զքնաղդ, ըսաւ անոր Ֆէպիւս, կ'ուզես ներս մտնել։

— Ո՛չ», պատասխանեց օրիորդը. և ահով գոցած աչքերը՝ հետաքրքրութեամբ բացաւ։

Նորմանտական հուժկու ձիէ մը քաշուած և սպիտակ խաչերով մանիշակագոյն նշանազգեստներ հագած ձիաւորներէ պարուրուած սայլ մը ճիշդ նոյն կէտին Սէն-Բիէր-օ-Պէօֆ փողոցէն հրապարակին վրայ ելած էր։ Քաղաքապահութեան նուի-

բակները (sergents du guet) մորակի մեծ հարուածներով ժողովրդեան մէջէ անոր ճամբայ կը բանային։ Սայլին քովէն՝ արդարութեան ու ոստիկանութեան քանի մը պաշտօնակալներ կ'երթային, զորս իրենց սև հագուստէն ու ձիու վրայ անշնորհք նստուածքէն դիւրին էր ճանչնալ։ Վարպետ Յակոբ Շարմօլիւ անոնց գլուխն անցած կը շքայր։ Անախական աղջիկ մը մահաշունչ կառքին մէջ նստած էր, թևերը կռնակին վրայ կապուած ու քովը քահանայ մը չունենալով։ Մէկ շապիկով էր նա, և երկար սևաթոյր մազերը (այն ատենուան սովորութիւնը՝ զանոնք կախաղանին ոտքը կտրել էր) իր պարանոցին ու կէս-հոլանի ուսերուն վրայ ցիր ու ցան կ'իյնային։

Ագռաւի մը փետուրներէ աւելի գեղափայլ այս ալեծուփ մազերուն մէջէն գորշ և անհարթ հաստ չուանի մը գալարուիլն ու կապուիլը կը տեսնուէր, որ անոր քնքշիկ անրակները կը կեղեքէր և՝ ինչպէս որդ մը ծաղկի վրայ՝ հէք աղջկան չքնաղ պարանոցին շուրջը կը պատատէր։ Այս չուանին տակ կանանչ ապակիներով զարդարուած պզտիկ բժժանք մը կը շողշողար, զոր իր վրայ թողլու շնորհքն ըրած էին անտարակոյս սա պատճառով՝ որ օրհասականի մը բան մը չմերժուիր։ Պատուհաններու վրայ գտնող հանդիսականք՝ սայլին խորն անոր մերկ սրունքները կրնային տեսնել, զորս՝ իբր կանացի յետին բնազդումով մը՝ իր տակը պահել պարտկել կը ջանար. ոտիցը տակ կապուած կաշկանդուած այծ մը կը գտնուէր։ Ակռաներովը կիսաբաց շապիկը բռնելով՝ խեղճը կարծես թէ իր թշուառութեան մէջ՝ այսպէս գրեթէ մերկ՝ ամեն աչաց առջև հանուելուն՝ կը մորմոքէր տակաւին։ Բայց, պատկառանքը, ամօթխածութիւնն այս տեսակ սարսուռներու համար եղած չէ բնաւին։

«Ո՛հ, գեղեցիկ զաւակս, աշխուժիւ ըսաւ Ֆլէօր-տը-Լիս հրամանատարին, դիտէ, դիտէ, հետն այծ մ'ունեցող զարշելի գնչուհին է այն»։

Այսպէս խօսելով դէպ 'ի Ֆէպիւս դարձաւ՝ որ աչքերը սայլին վրայ սևեռած էր՝ գոյնը նետած։

— Ո՞ր այծ ունեցող գնչուհին, ըսաւ թոթովելով։

— Ի՞նչպէս, կրկնեց Ֆլէօր-տը-Լիս, չե՞ս յիշեր միթէ...»։

Ֆէպիւս օրիորդին խօսքն ընդմիջելով «Ըսածդ չեմ հասկընար», ըսաւ, և դէպ 'ի ներս մտնելու համար քայլ մ'առաւ. այլ Ֆլէօր-տը-Լիս՝ որուն այս մի և նոյն Եգիպտուհւոյն համար զգացած բուռն նախանձն արծարծուած էր վերստին՝ Ֆլէօր-տը-Լիս, կ'ըսեմ, թափանցող անվստահութեան ակնարկ մը ձգեց անոր վրայ՝ տարտամ կերպով մը յիշելով այս պահուս՝ թէ այս վհուկին դատին մէջ հրամանատարի մ'ալ խառնուած ըլլալը լսած էր։

«Ի՞նչ ունիս, ըսաւ Ֆէպիւսի, կարծես թէ այս գնչուհին զքեզ խռովեց, տակնուվրայ ըրաւ»։

Ֆէպիւս խնդալ աշխատելով «Ե՛ս խռովիմ, տակնուվրա՛յ ըլլամ, ըսաւ, ամենևի՛ն։ Հո՛գս էր։

— Ապա ուրեմն, կեցի՛ր հոս, ըսաւ աղջիկը հրամայաբար, և մինչև վերջը դիտենք»։

Ձախող հրամանատարը բռնադատուեցաւ հոն կենալու։ Իրեն սիրտ տուող կէտն այն էր որ դատապարտուհին՝ որ նոյն ինքն Էզմերալտան էր՝ նայուածքը սայլին տախտակամածէն չէր զատեր բնաւին։ Խայտառակութեան ու անբաղդութեան սանդուղի այս վերջին աստիճանիս վրայ՝ միշտ գեղանի մնացած էր նա, իր սևաւ մեծ աչքերը՝ իր այտերուն խորասուզութեան պատճառաւ ա՛լ աւելի մեծ կ'երևէին, և իր կապոյտ կիսադէմը ջինջ էր ու վըսեմ։ Իր առջի եղածին այնպէս կը նմանէր՝ ինչպէս կը նմանի Մազաքչիօյի Աստուածածին կոյս մը Րաֆայէլի Աստուածածին կոյսի. այսինքն աւելի տկար էր հիմա, աւելի նուրբ, աւելի վսեմ։

Բան մը չկար իր վրայ որ կերպիւ իւիք տատանման, երերման մէջ չըլլար, և պչրութեամբ և յուսահատութեամբ անհնարին խորտակուած՝ իր ամօթխածութենէն զատ՝ ամենայն ինչ ըստ բաղդի և ինքզինքին թողած էր։ Մարմինը՝ մեռած կամ ջախջախուած բանի մը պէս՝ սայլին ամեն մէկ երերումներուն՝ վեր

վեր կ'ոստոստէր. Հայուածքը տխուր՝ և խելագարի մը հայուածք էր։ Իր բիբին մէջ դեռ ևս արցունք մի կը տեսնուէր, այլ անշարժ և եթէ կրնայ ըսուիլ՝ սառած արցունք մը։

Մինչ այս մինչ այն, տխուր հեծելախումբը ցնծութեան ձայներու և հետաքրքիր գիրքերու մէջ տեղ՝ բազմութիւնը ճղքեց, անցաւ։ Նոյնպէս սայլն Անդաստակին մէջ մտնելով կեդրոնական մեծ դրան առջև կանգ առած ժամանակը՝ հաւատարիմ պատմիչ մ'ըլլալու համար կը պարտաւորիմք զրուցել՝ որ զինքն այնչափ դեղանի և այնչափ ընկճեալ վիճակի մէջ տեսնելով շատերն և ամենէն քարսիրտներն անգամ՝ գթութեամբ համակուած էին։

Յուղարկաւորք պատերազմի կարգաւ սայլին երկու կողմը շարուեցան. ամբոխը լռութիւն պահեց; և այս հանդիսաւոր լռութեան մէջ՝ աւագ դրան երկու թևերը՝ իբր ինքզինքնէն՝ իրենց ծղխնիներուն վրայ դարձան սրնգի մը ձայնի նման ճռնչելով։ Այն ժամանակ, հեռուն՝ աւագ խորանին վրայ փողփողող քանի մը մոմերով հազիւ թէ լուսաւորուած այն մթագին ու սևեր ձգուած խորունկ եկեղեցին՝ լուսաղեղ հրապարակին մէջ տեղը՝ քարանձաւի մը բերնին նման՝ իր բոլոր երկայնութեամբը բացուած տեսնուեցաւ։ Բոլորովին խորը՝ խորանավայրին մթութեան մէջ՝ կամարէն մինչև սալաքարն իջնող սև պաստառի մը վրայ պարզուած արծաթեայ վիթխարի խաչ մը կ'ընդնշմարուէր։ Թէև բոլոր դահլիճը թափուր՝ այլ սակայն դասին հեռաւոր բազմոցներուն վրայ քանի մը քահանաներու գլուխներուն խառն 'ի խուռն խլրտիլը կը տեսնուէր, և՝ մեծ դրան բացուած կէտին՝ եկեղեցիէն ծանր, որոտաձայն և միօրինակ երգ մը լսուեցաւ՝ որ դատապարտուհւոյն գլխուն վրայ՝ իբր հովի յաջորդական փչմամբ մը՝ լատիներէն տխուր սաղմոսերգութեանց հատակոտորներ կը նետէր.

«... Ոչ երկեայց ես 'ի բիւրուց զօրաց նոցա, որ շուրջանակի դատեալ պաշարեալ պահէին զիս։ Արի՛ Տէր՛ և փրկեա՛ զիս Աստուած իմ։

«... Կեցո՛ զիս Աստուած՝ զի հասին ջուրք յանձն իմ։

«... Ընկլայ ես 'ի խորս անդնդոց, ուր ո՛չ գոյ հանգիստ»։

Մի և նոյն ժամանակ, խումբէն զատուած ուրիշ ձայն մ'աւագ խորանին աստիճանին վրայ՝ նոյնպէս լատիներէն՝ այս տխուր պարբերութիւնս կը հնչէր.

«... Որ զբանն իմ լսէ և հաւատայ այնմ՝ որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս, և 'ի դատաստան ո՛չ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս»։

Այս երգը՝ զոր մութին մէջ կորսուած քանի մը ծերեր՝ հեռուանց՝ գարնան եղկ օդով զգուած և արևով ողողուած այն ծաղկահասակ ու առոյգ չքնաղ աղջկան վրայ կ'երգէին՝ մահուան պատարագն էր զոր ժողովուրդն երկիւղածութեամբ մըտիկ կ'ընէր։

Դժբաղդ աղջիկը խռոված, զարհուրած՝ կարծես թէ եկեղեցւոյն մութ խորութիւններուն մէջ իր միտքն ու աչքը կը կորսնցընէր։ Իր սպիտակ շրթերն աղօթք ընելու պէս՝ կը շարժէին, և՝ երբ դահճին արբանեակը զինքը սայլէն իջեցընելու համար իրեն մօտեցաւ՝ լսեց որ մեղմաձայն Փէպիւս բառը կը կրկնէր։

Ձեռքերը քակելով իր այծին հետ մէկ տեղ՝ զոր նոյնպէս քակած էին և որ ինքզինքն ազատ զգալով ուրախութենէ կը բառաչէր՝ վար իջեցուցին զինքն ու մինչև աւագ դրան աստիճաններուն վարը՝ կարծր սալայատակին վրայ բոկոտն քալեցուցին։ Վիզն ունեցած չուանն ետևէն գետին կը քսուէր՝ կարծես թէ անոր հետևող օձի մը պէս։

Այն ժամանակ երգն եկեղեցւոյն մէջ ընդմիջուելով ոսկի մեծ խաչն և մոմերու շար մը մութին մէջ շարժիլ սկսան։ Դրան երփնազգեստ պահապաններու գեղարդներուն գետին զարնուելու ձայնը լսուելով՝ քանի մը վայրկեան վերջը շուրջառաւոր քահանաներու և սպասահանդերձ սարկաւագներու երկար թափոր մ'որ ծանրութեամբ և սաղմոսերգութեամբ դէպ 'ի դատապարտուհին կը յառաջանար՝ իր և խուժանին աչաց առջև պարզուե-

ցաւ։ Այլ իր նայուածքը՝ խաչակրէն (porte-croix) անմիջապէս վերջը՝ Թափորին գլուխը գտնուողին վրայ կասեցաւ. «Ո՛հ, ըսաւ յուշիկ՝ սարսռալով, դարձեա՛լ այն է, դարձեա՛լ քահանայն»։ Իրօք նախասարկաւագն էր իսկ, ձախ կողմը փոխ-ձայնապետը (sous-chantre), իսկ աջ կողմը դասապետն* (chantre) ունենալով՝ որ իր պաշտօնին գաւազանը բռնած էր 'ի ձեռին։ Գլուխը դէպ 'ի ետին ձգած, աչքերը բաց և անթարթափ՝ կը յառաջանար նա հուժկու ձայնով մ'երգելով.

«Ի խորոց դժոխոց կարդացի և լուաւ աղաղակի իմում։ «Ընկեցեր զիս 'ի խորս սրտից ծովու և գետք պաշարեցին զիս»։

Այն պահուն որ վրան սև խաչ մը կրող մեծ արծաթի շուրջառով մը ծածկուած սրակամար բարձրաշէն մեծ դրան տակ երեցաւ նա՝ այնչափ գունատ էր որ բազմութեան մէջ շատերը կարծեցին թէ դասին գերեզմանական քարերուն վրայ ծնրադրած

* Այս պաշտօնս որ հիմա իր կարևորութիւնը մերկացած՝ պարզապէս Աստուծոյ տաճարին իր զօրեղ ձայնովը հնչեցընելու վրայ կը կայանայ՝ ժամանակաւ իբր սուրբ և նուիրական բան մը՝ քահանաներու և սարկաւագներու միայն կը յանձնուէր։ Մեծ ու պզտիկ մէկ շատ եկեղեցիներու մէջ, գլխաւոր դասապետը խիստ ընդարձակ իրաւասութիւններ ունէր, և Բարիզի մէջ՝ նոյն իսկ եպիսկոպոսին վրայ իշխանութիւններ կը բանեցընէր շատ անգամ։ Մինչև անգամ եպիսկոպոսութեան հասնող դասապետներ կամ [illegible] եղած են։ — Նախասարկաւագի կամ արքիդիակոնի (archidiacre) տիտղոսն ալ որ այս գրքիս մէջ շատ անգամ յիշուած է՝ բարձր պատուանուն մ'էր ու եպիսկոպոսին առաջին պաշտօնէին կը տրուէր՝ մանաւանդ կղերիկոսական հասոյթներու մատակարարութեան մասին։ Նախասարկաւագը պատարագի օրինաւորապէս կատարուելուն, եկեղեցւոյն գանձուց ու զարդուց պահպանութեան կը հսկէր, և մեծ իշխանութիւն մ'ի գործ կը դնէր։ — Ընթերցողայ յայտնի է թէ վիպասանութեանս դիւցազուններէն մին ինչպիսի մեծ պատուով այս պաշտօնս կը վարէ, ինչ յարգ ու վարկ գտած է անով կանոնիկոսական ժողովոյն առջև, և թէ ինչ ընդարձակ ազդեցութիւն մ'ի գործ կը դնէ անոր զօրութեամբ։ Ծ. Թ.

մարմարեայ եպիսկոպոսներէն մէկն էր՝ որ ոտք ելնելով օրհասական դատապարտուհին գերեզմանին սեամին վրայ ընդունելու կու գար։

Աղջիկը՝ ո՛չ նուազ տմոյն, ո՛չ նուազ արձան՝ իր ձեռքը դեղնագոյն մոմէ վառուած ծանր ջահ մը դրած ըլլալնին հազիւ թէ գիտած էր։ Իր յանցանացը հրապարակական խոստովանութեան չարաշուք վճիռն և ո՛չ իսկ մտիկ ըրաւ նա՝ զոր ատենադպիրը ճչող ձայնով մ'իր առջև կարդաց, այլ միայն ամէն անգամ որ իրեն իմացուցին որպէս զի Ամէն պատասխանէ, ինքն ալ Ամէն պատասխանեց։ Անոր կտոր մ'ոյժ և կենդանութիւն տալու համար՝ հարկ եղաւ որ քահանայն պահապաններու նշան ընէ որ հեռանան և դէպ 'ի անոր յառաջանայ առանձին։

Այն ժամանակ արիւնը դատապարտուհւոյն գլխուն մէջ եռաց և սրտմտութեան մնացորդ մ'այն արդէն թմրած և սառնահար հոգիին մէջ վերստին արծարծեցաւ։

Նախասարկաւագը յամրաքայլ դէպ 'ի իրեն մօտեցած ժամանակը՝ հէք աղջիկը դիտեց որ նոյն իսկ այս ծայրագոյն կէտին մէջ՝ բղջախոհութեամբ, նախանձոտութեամբ և վաւաշութեամբ կայծակնացայտ աչք մ'իր մերկութեան վրայ կը յածէ. ետքն անոր ձայնը լսեց որ կ'ըսէր. «Նորահա՛ս աղջիկ, յանցանացդ և մոլորութեանցդ համար Աստուծմէ թողութիւն խնդրեցի՞ր»։ Եւ անոր ականջն 'ի վար ծռելով՝ աւելցուց (հանդիսականք կը կարծէին թէ դատապարտուհւոյն վերջին խոստովանանքը կ'ընդունէր). «Կ'ուզե՞ս զիս, դեռ ես կրնամ զքեզ ազատել»։

Աղջիկն ակնայեւ նայեցաւ անոր. «Գնա՛ առջևէս, սատանայ, եթէ ո՛չ՝ կը մատնեմ զքեզ»։

Քահանայն ահռելի ժպիտով մը ժպտեցաւ. «Քեզ հաւատացող չպիտի ըլլայ, ոճիրիդ վրայ գայթակղութիւն մ'աւելցուցած պիտի ըլլաս, այնչափ միայն։ Շո՛ւտ, պատասխանէ, կ'ուզե՞ս զիս։

— Ֆէպիւսս ի՞նչ ըրիր։

— Ֆէպիւսը մեռաւ, ըսաւ քահանայն»։

Այս պահուս եղկելի նախասարկաւագը գլուխը մեքենայօրէն

վեր վերցընելով հրապարակին միւս ծայրը Կօնտըլօրիէ օթևանին պատշգամին վրայ՝ Ֆլէօր-տը-Լիսի մօտ՝ հրամանատարը կանգնած տեսաւ : Ցատանեցաւ, ձեռքովն աչքերը շփեց, նորէն նայեցաւ, չարամաղթութիւն մը մրմռաց, և նոյն միջոցին դէմքին բոլոր գծերը կարկամեցան սաստկապէս :

«Լաւ ուրեմն, մեռիր, ըսաւ ակռաներուն մէջէն, գոնէ ո՛չ ոք պիտի վայելէ զքեզ : Այն ժամանակ ձեռքն Եգիպտուհւոյն վրայ վերցընելով չարագոյժ ձայնով մը գոչեց. «Ե՛րթ արդ, ով կասկածաւոր, և ողորմեսցի քեզ Աստուած» . I nunc, anima anceps, et sit tibi Deus misericors!

Ասիկա այն ահարկու զրուցածն (formule) էր՝ որով այն տըխուր արարողութեանց վերջ կը տրուէր այն ժամանակ : Քահանայէն դահճին տրուած որոշ նշանն էր այն :

Ժողովուրդը ծունր դրաւ :

Քիրիէ Էլէյիսօն (Տէր ողորմեա՛), ըսին քահանաներն որք մեծ դրան սրակամարին տակ մնացած էին :

Քիրիէ Էլէյիսօն, կրկնեց խուժանն այն քրթմնջիւնով՝ որ յուզեալ ծովի մը ծփանքին նման՝ բոլոր գլուխներուն վրայէն կը սրանայ :

Ամէն, ըսաւ նախասարկաւագը, և կռնակը դատապարտուհւոյն դարձընելով՝ գլուխը կուրծքին վրայ ինկաւ, ձեռքերը խաչաձև իրար միացան, և քահանաներու խումբին խառնուելով՝ վայրկեան մը վերջը՝ խաչով մոմերով և շուրջառներով մայր եկեղեցւոյն մթագին կամարներուն տակն աներևոյթ ըլլալէ վերջը՝ իր հնչական ձայնը՝ յուսահատութեան այս տունն երգելով աստիճան առ աստիճան մարեցաւ :

«Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին 'ի վերայ իմ» :

Մի և նոյն ժամանակ՝ դահլճի սինամէջերուն մէջ տակաւ առ տակաւ մարող, սպառող՝ գեղարդաւոր պահապաններու գեղարդի երկաթապատ կոթին ընդմիջահատ թնդիւնը՝ դատապարտուհւոյն վերջին ժամը զարնող մեծ ժամացոյցի ուռան մ'ազդեցութիւնը կ'ընէր :

Միւս կողմէն՝ Նօդր-Տամի դուռերը բաց մնացած՝ եկեղեցին՝ թափուր, սխուր, սգաւոր, անլոյս և անձայն կ'երևէր :

Դատապարտուհին եղած տեղն արձանացած կը մնար սպասելով որ զինքը տրամադրեն : Հարկ եղաւ որ մորակաւոր նուիրակներէն մէկն իրաց վիճակը վարպետ Շարմօլիւի իմաց տայ՝ որ բոլոր այս տեսարանիս միջոցին՝ աւագ դրան խորաքանդակը զննելու քննելու եռանդ ինկած էր. խորաքանդակ՝ որ ըստ ոմանց՝ Աբրահամու զոհագործութիւնը կը ներկայացընէ, և ըստ այլոց՝ ալքիմիական մեծ գործողութիւնը՝ արևը՝ հրեշտակով, կրակը՝ խուրձով և ոսկեգործը՝ Աբրահամով խորհրդանկարելով :

Այս հոգեպիշ հայեցողութենէ զինքը խլելու համար բաւական դժուարութիւն քաշեցին. բայց հուսկ ուրեմն երեսը դարձընելով՝ ըրած մէկ նշանին վրայ՝ երկու դեղնազգեստ մարդեր որք դահճին արբանեակներն էին՝ ձեռքերը վերստին կապելու նպատակաւ Եգիպտուհւոյն մօտեցան :

Թշուառ աղջիկը մահաշուք սայլն ելած և իր վերջին կայանն առաջնորդուած միջոցին՝ թերևս կեանքէն զրկուելուն պատճառաւ աղէխօշ մորմոքով մը համակուեցաւ : Իւր չոր և կարմրցած աչքերը դէպ 'ի երկինք, դէպ 'ի արև բարձրացուց, նաև դէպ 'ի արծաթագեղ ամպերը՝ որք հոս հոն կապոյտ եռանկիւններով և երկկողմահաւասար քառակուսիներով կտրատուած էին, յետոյ հայուածքն իջեցուց չորս կողմը, երկրի վրայ, ամբոխին վրայ, տուներուն վրայ . . . : Ցանկարծ՝ մինչդեռ դեղնազգեստ մարդն անոր արմուկները կը կապէր՝ ահագին ճիչ մը, խնդութեան ճիչ մը արձակեց : Հո՛ն, փողոցին անկիւնը, պատշգամին վրայ՝ նոյն ինքն իր բարեկամը, իր տէրը, Ֆէպիւսը, իր կենաց միւս երեւոյթն այն ինչ նշմարած էր : Դատաւորը ստա՛ծ էր, քահանան ստա՛ծ էր ուրեմն. ա՛ն էր, ճիշդ ա՛ն էր աներկուանալի կերպով. հո՛ն էր նա անձամբ, գեղադէմ, կենդանի, իր շքեղ նշանազգեստը հագած, փետուր 'ի գլուխ և թուրն առ երի :

«Ֆէպիւս, գոչեց, իմ Ֆէպիւսս», և սիրով և հիացմամբ դողդոջուն իր բազուկները դէպ 'ի անոր կարկառել ուզեց, այլ կապուած էին :

Այն ժամանակ հրամանատարին յօնքերը պռստելն և անոր վրայ կոթնած ծաղկահաս գեղանի օրիորդի մ'անարգու շուրթով և զայրագին աչօք անոր նայելը տեսաւ. յետոյ Ֆէպիւս քանի մը խօսք ըսաւ՝ որ մինչև իրեն չհասան, և երկուքնին 'ի միասին պատշգամին վանդակափեղկին ետևն աներևոյթ եղան շտապաւ և պատշգամը վրանէն գոցուեցաւ։

«Ֆէպի՛ւս, գոչեց հէք դատապարտուհին խռովուած, կը հաւատա՞ս միթէ»։

Սոսկալի խորհուրդ մ'աննսեհ աղջկան միտքը ծագած էր նոյն կէտին։ Ֆէպիւս տը Շադօբերի անձին վրայ սպանութեան պատճառաւ դատապարտուած ըլլալը կը յիշէր, և թէև մինչ ցայն կէտ ամեն բանի տարած էր համբերութեամբ՝ այլ այս վերջին հարուածն այնչափ բուռն էր և ուժգին՝ որ սալայատակին վրայ ինկաւ անշարժ։

«Օ՛ն, ըսաւ Շարմօլիւ, սայլին վրայ հանեցէք զինքն և լմնցընե՛նք ամեն բան»։

Մեծ դրան սրակամարներուն անմիջապէս վրայօքը քանդակուած արքայանդրիներու գաւիթին մէջ՝ տակաւին ո՛չ ոք նշմարած էր անսովոր հանդիսական մ'որ այն աստիճան անխռովութեամբ, այնպիսի կարկառեալ պարանոցով, այնպիսի տձև երեսով ամեն ինչ դիտած էր՝ որ եթէ իր վրայի կէս-կարմիր կէս-մանիշակագոյն հագուստը չըլլար՝ տեսնողը զինքն այն քարեղէն հրեշներէն մին պիտի համարէր, որոնց կոկորդէն վեց հարիւր տարիէ 'ի վեր մայր եկեղեցւոյն երկար խողովակներուն ջուրերը կը պարպուին։ Այս հանդիսականս կէս օրէն 'ի վեր Նօդր-Տամի մեծ դրան առջև անցած դարձածէն բան մը չէր փախցուցած, և 'ի սկզբան մինչդեռ ո՛չ ոք կը դիտէր զինքը՝ սրահին սիւնակներէն մէկուն հանգուցաւոր խոշոր չուան մը կապած էր՝ որուն ծայրը՝ վարը, դրան սանդուղին վրայ կը քսուէր։ Ասիկա մէջ մ'ընելէն վերջը՝ հանդարտ հանդարտ դիտելու սկսած էր, և մերթ ընդ մերթ կեռնեխ (merle) մ'անցած ատեն կը սուլէր։ Ցանկարծ այն կէտին՝ որ դահճի սպասաւորները Շարմօլիւի ան-

տարբեր հրամանը գործադրելու կը պատրաստուէին, գաւիթի խաղխամքէն ցատկելով՝ ոտքերով, ծունկերով և ձեռքերով չուանը բռնեց. ետքն ապակիի մ'երկայնութեամբը սահող անձրևի շիթի մը նման՝ եկեղեցւոյն ճակատի վրայէն սահելով՝ բարձր յարկէ մ'ինկած կատուի մ'երագութեամբ դէպ 'ի երկու դահիճները վազելը, իր երկու ահագին բուռին տակ զանոնք ընկճելը և ինչպէս մանուկ մ'իր պաճուճապատանքը՝ մէկ ձեռքով Եգիպտուհին վերցընելն և մէկ ոստումով մինչև եկեղեցւոյն մէջ նետուիլը տեսնուեցաւ՝ նորատի աղջիկը գլխուն վրայօքը բռնելով և զարհուրելի ձայնով մ'աղաղակելով. «Ապաւէ՛ն*» (Asile)։

Այս ամեն բանս այնպիսի արագութեամբ մը կատարուեցաւ՝ որ եթէ գիշեր ըլլար՝ միայն մէկ փայլակի լուսով ամեն բան պիտի տեսնուէր։

«Ապաւէ՛ն, ապաւէ՛ն», գոչեց խուժանն և բիւրաւոր ծափահարութիւններ Քուազիմօտօյի միակ աչքն ուրախութեամբ և խրոխտանօք փայլատակել տուին։

Այս ցնցումն ուշաբերելով զդատապարտուհին՝ կոպերը մէյ մը վերցուց, և Քուազիմօտօն տեսնելով՝ յանկարծակի գոցեց զանոնք՝ իբր իր փրկիչէն ահաբեկած։ Շարմօլիւ ապշած մնաց, նաև դահիճները, նաև յուղարկաւոր բոլոր խումբը, վասն զի Նօդր-Տամի շրջապատին մէջ՝ դատապարտուհին անբռնաբարելի էր։ Մայր եկեղեցին ապաւինավայր մ'էր՝ որու սեամին վրայ ամենայն մարդկային արդարութիւն կը շիջանէր, կը նուաղէր։

---

* Ապաւէնները կամ ապաւինավայրերը ոճրագործներու համար ապաստանելու տեղեր էին, ուսկից ներելի չէր բռնութեամբ և ուժով առնուլ զանոնք։ Հին հեթանոսներու ժամանակ՝ տաճարները, գերեզմանները, խորաններն ապաւէնի իրաւունք կը վայելէին։ Միջին դարու մէջ այս սովորութիւնս ընդունուեցաւ քրիստոնէութենէ, ու ամեն եկեղեցիները մէկ մէկ ապաւէններ էին։ Այս իրաւունքս 1500ին Լուի ԺԲ.է և 1539ին ալ Ֆրանսուա Ա.է ջնջուեցաւ։ Ծ. Թ.

Քուազիմոտօ մեծ դրան տակ կանգ առնելով՝ իր հաստ ոտքերը՝ եկեղեցւոյն սալայատակին վրայ՝ ռոմանական թանձր մարդակներուն պէս հաստատուն կ'երևէին ։ Իր հերաշատ ահագին գլուխն ուսերուն մէջ կը խորասուզէր՝ առիւծներու գլուխի նման՝ որք բաշ մ'ունին և ոչ վիզ ։ Ինչպէս ճերմակ կտաւ մը՝ այնպէս մանկահասակ աղջիկը՝ բոլորովին դողդոջուն վիճակի մէջ՝ իր կոշտացեալ ձեռքերուն վրայէն կախուած կը բռնէր ․ այլ սակայն այնչափ զգուշութեամբ կը վերցընէր զանի՝ որ կարծես թէ կոտրելէն կամ թառամեցընելէն կը վախնար ։ Որպէս թէ կ'զգար թէ քնքուշ, ազնիւ և թանկագին բան մ'էր այն՝ իրեններէն զատ ուրիշ ձեռքերու համար եղած ․ ուստի և առեն առեն և ոչ իսկ իր շնչով անոր դպնալու կ'իշխէր ։ Ետքը յանկարծ իր բազուկներուն մէջ, իր անկիւնաւոր կուրծքին վրայ իբրև իր ինչքը, իբրև իր գանձը՝ պնդովի կը սեղմէր զայն այնպէս՝ ինչպէս այն աղջկան մայրը պիտի ընէր ։ Իր պարկի աչքը՝ անոր վրայ խոնարհած՝ զորովանօք, թախծութեամբ և գթութեամբ կ'ողողէր զայն, և յանկարծուստ կայծակնացայտ վեր կը բարձրանար ։ Այն ժամանակ կիները կը խնդային և կու լային, ամբոխն եռանդագին կը դոփէր, քանզի այն պահուն իրօք Քուազիմոտօ իր գեղեցկութիւնն ունէր ։ Այո՛, գեղեցիկ էր այն որբը, այն ընկեցիկը, այն մարդերու մրուրը ։ Ինքզինքը հուժկու և վսեմ կ'զգար նա այս միջոցիս, դէմ առ դէմ կը նայէր այն ընկերութիւնը՝ որմէ տարագրուած էր, և որու մէջ այնպիսի զօրեղ կերպով մը կը միջամտէր, այն մարդկային արդարութիւնը՝ որմէ իր որսը կորզած էր, 'ի նանիր ծռելու բռնադատուած բոլոր այն վարերը, այն կալանաւորակապերը, այն դատաւորները, այն դահիճները, արքային բոլոր այն զօրութիւնը՝ զոր ինքը, այն տրուպ էութիւնը, Աստուծոյ ուժովը խորտակած, ջախջախած էր ։

Եւ ասկէ զատ այնչափ սխուր էակէ մ'այնչափ աննահ էակի մը վրայ ինկած այս պաշտպանութիւնը, Քուազիմոտօյի ձեռքով փրկուած մահապարտուհի մը՝ սրտառուչ բան էր ըստ ինքեան.

բնութեան և ընկերութեան երկու ծայրագոյն թշուառութիւններն իրարու կը հպէին և ձեռնտու կ'ըլլային ։

Քանի մը վայրկեան յաղթանակէ վերջը՝ Քուազիմոտօ իր բեռովը խստութեամբ մ'եկեղեցւոյն մէջ մտաւ ։ Ժողովուրդը՝ որ ամեն շահատակութիւններու սիրահարն է միշտ՝ մթագին դահլճին տակէն աչքերովը կը փնտռէր զանի՝ իր կայթիւններեն այսչափ արագօրէն խոյս տուած ըլլալուն ցաւելով ։ Յանկարծ՝ Ֆրանսայի թագաւորներու գաւթին մէկ ծայրը կրկին երևցաւ նա․ խելայորի մը նման վազելով ճղքեց անցաւ այն գաւիթը՝ իր յաղթանակը բազուկներուն մէջ բարձրացընելով և «Ապաւէն» գոչելով ։ Ժողովուրդը վերստին ծափահարութիւններով օդը կը թընդացընէր ։ Բոլոր գաւթին վրայէն անցնելէն վերջը՝ նորէն եկեղեցւոյն ներսի կողմը կորսուեցաւ, և վայրկեան մ'ետքը՝ վերին տանեստանին վրայ միւսանգամ երևցաւ՝ միշտ Եգիպտուհին բազուկներուն մէջ, միշտ մոլեգին վազվռտելով և միշտ «Ապաւէն» պոռալով ։ Իսկ բազմութիւնն եռանդագին կը ծափահարէր ։ Վերջապէս մեծ զանգակի աշտարակի կատարին վրայ երևցաւ՝ երրորդ անգամ․ անկից պարծանօք մը կարծես թէ իր փրկածը բոլոր քաղաքին կը ցուցընէր և իւր որոտընդոստ ձայնն որ հազիւ ուրեմն ուրիշ անգամներ կը լսուէր՝ և զոր ինքն երբեք չէր լսեր՝ երեք անգամ մինչև ամպերուն մէջ կրկնեց մոլեգին․ «Ապաւէ՜ն, ապաւէ՜ն, ապաւէ՜ն» ։

«Նեցցէ, նեցցէ» (Noël! Noël!), կը գոչէր ժողովուրդն իր կողմէն, և այս անբաւ կայթիւնը գնաց միւս գետեզրին վրայ՝ Գրէվի բազմութիւնը զարմացուց, ինչպէս նաև զճգնուհին՝ որ աչքը կախաղանին վրայ սևեռած՝ կ'սպասէր միշտ ։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ՑԱՆԿ

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Երես

Ա. ՔՐԱՆՍԱՑԻ ՀԻՆ ԴԱՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԱՆԱՉԱՌ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ . . . 5
Բ. ՄԿԱՆՑ-ԾԱԿ . . . 20
Գ. ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԽՄՈՐՈՎ ՊԱՔՍԱՄԱՏԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . . . 25
Դ. ԿԱԹԻԼ ՄԸ ՋՈՒՐԻ ՓՈԽԱՐԷՆ՝ ԱՐՑՈՒՆՔ ՄԸ . . . 52
Ե. ՎԵՐՋ ՊԱՔՍԱՄԱՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ . . . 65

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ա. ԳԱՂՏՆԻՔՆ ԱՅԾԻ ՄԸ ՎՍՏԱՀԵԼՈՒՆ ՎՏԱՆԳԸ . . . 66
Բ. ԹԷ ՓԻԼԻՍՈՓԱՅ Մ'ՈՒ ՔԱՀԱՆԱՅ ՄԸ ՏԱՐԲԵՐ ԲԱՆԵՐ ԵՆ . . . 85
Գ. ՋԱՆԳԱԿՆԵՐԸ . . . 97
Դ. ΑΝΑΓΚΗ . . . 100
Ե. ԵՐԿՈՒ ՍԵՒԱԶԳԵՍՏ ՄԱՐԴԵՐԸ . . . 118
Զ. ԲԱՑ ՕԴԻ ՄԸ ՄԷՋ ԵՕԹ ՀԱՅՀՈՅՈՒԹԻՒՆՔ Ի՛ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԿՐՆԱՆ ՈՒՆԵՆԱԼ . . . 126
Է. ՈՒՐՈՒԱԿԱՆ-ԿՐՕՆԱՒՈՐԸ . . . 132
Ը. ԳԵՏԻՆ ՎՐԱՅ ԲԱՑՈՒՈՂ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՈՒ ՊԻՏԱՆՈՒԹԻՒՆԸ . . . 142

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Ա. ՉՈՐ ՏԵՐԵՒԻ ՓՈԽՈՒԱԾ ՍԿՈՒԴԸ . . . 154
Բ. ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՉՈՐ ՏԵՐԵՒԻ ՓՈԽՈՒԱԾ ԸՍԿՈՒԴԻՆ . . . 166
Գ. ՎԵՐՋ ՉՈՐ ՏԵՐԵՒԻ ՓՈԽՈՒԱԾ ՍԿՈՒԴԻՆ . . . 173
Դ. ԶԱՄԵՆԱՅՆ ՅՈՅՍ Ի ԲԱՑ ՄԵՐԿԱՑԻ՛Ր . . . 177
Ե. ՄԱՅՐԸ . . . 195
Զ. ԵՐԵՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՅԼԱԶԱՆ ՍՐՏԵՐ . . . 201